ՍՈՒՐՉ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 9 1890 — ՍԵՊՏԵՄԲԵՐ — 1890 № 9

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

		Երես	
1	ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ ԱԻԵՏԻՔ. . . .	1183	Հողային խնդիրը Անդրկովկ. III.
2	ՄԱՐԻՍԵԱՆ, Մ	1197	Հեղինէ (վէպ. շարունակ.)։
3	ԱՐԾԻՒԵԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐ . . .	1253	Մանուկ (բանաստ.)։
4	» » . .	1254	*** (բանաստ.)։
5	» » . .	1255	Աղօթիր (բանաստ.)։
6	ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ.	1256	Խաթ-Սարա (պատկեր)։
7	ՀԱՅՆԷՅ-ԻՑ Զ. ԲԱԼՈՒՂԵԱՆ. .	1238	Երկք բանաստեղծութիւններ։
8	ՂԱԶԱՐԵԱՆ ԵՐՈՒԱՆԴ	1291	Դասաւ. մոլորութիւններ։ Աղալեանց։
9	ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ, ՅՈՎՀ. . .	1303	Գերման. համալսար. ոգին։
10	Ա. Ա., Ա. Ա.	1313	«Ակրարատ», «Հայոց Պատմութիւն»։
11	Z..	1320	Քաղաք. Տես.. Աֆրիկայի բաժանումը։
12	ԹՄԲ..	1325	Խմբագրութեան կողմից։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԹԻՖԼԻՍ

Մ. Դ. ՌՈՏԻՆԵԱՆՑ։ ՏՊԱՐԱՆ

Типографія М. Д. Ротиніанца, на Гол. просп. соб. д. № 41.

1890

ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 9 1890 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1890 № 9

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՈՍԻՆԵԱՆՑԻ
1890

Дозволено цензурою, Тифлисъ, 30 Августа 1890 г.

Типографія М. Д. Ротиніанца, на Голов. просп. соб. д. № 41.

ՀՈՂԱՅԻՆ ԽՆԴԻՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

III [1])

Մեր անցեալ յօդուածում հողային խնդրի մասին տեսանք, որ ռուսաց կառավարութիւնը գտաւ մեր երկիրը անորոշ դրութեան մէջ երկրիս հողի տիրապետութեան, սեպհականութեան և հողից օգտուելու կարգ ու կանոնների նկատմամբ, որովհետև այդ բոլորը կատարւում էր ոչ գրաւոր օրէնքների հիման վերայ։ Ռուսաց կառավարութիւնը գտաւ մեր Թրքա-հայկական գաւառներում գիւղական դասակարգ; գտաւ նաև հողերի բերքերից օգտուող արտօնատէր դասակարգ՝ յանձին խաների, բէգերի, աղալարների, միւլքադարների, թիուլի տէրերի։ Բայց որովհետև դոցա ամէնքի իսկական նշանակութիւնը նախկին խանութիւններում որոշուած չէր և չեղաւ ոչ մի գիտական ուսումնասիրութիւն դասակարգերի յարաբերութիւնների մասին դէպի հողը,—այդ պատճառով ռուսաց կառավարութիւնը, երկրիս տիրապետութեան սկզբնական տարիներում, աշխատեց մի կերպ պահպանել եղած դրութիւնը, թոյլ տուեց, որ բէգերը և աղալարները շարունակեն ոստիկանական դեր կատարել գիւղերում և ստանալ գիւղացիների մշակած հողերից՝ արդիւնքի որոշ մասը և վայելել գիւղացիների մի քանի անվարձ ծառայութիւնները։ Այն բոլոր գաւառների համար, որոնք այժմ մտնում են Բօրչալուի և Ղազախի գաւառների ու Գանձակի և Բաքուի նահանգների սահմանների մէջ,—բէգերի և աղալարների այդ արտօնութիւնները սրբագործեցին կառավարչապետ գեներալ Երմոլօվի 1818 և 1824 թուականներին տուած կանոնադրութիւններով, իսկ Երևանի նահանգի

[1]) Ցօդուած I «Մուրճ», 1889, № 9, յօդուած II «Մուրճ» 1890 № 7.

կալուածատէրների նկատմամբ, Պասկևիչի անունով բարձրագոյն տուած բէսկրիպտով առ 13 յուլ. 1830 թ.։

Նկաւ այնուհետ 1841 թուականը, երբ երկրիս այժմեայ հինգ նահանգների մէջ մտցուեց քաղաքացիական կառավարչութիւնը 10 ապր. 1840 թ. օրէնքի զօրութեամբ և որի պատճառով կատարուեց քաղաքացիական հիմնարկութիւնների բէւիզիան սենատոր բարոն Դանի կողմից։ Մենք տեսանք, թէ սենատոր Դանի հայեացքները որքան ընդդէմ էին բէգերին, բայց մանաւանդ աղալարներին, կարծիքներ, որոնք հիմք ծառայեցին 28 մայիսի 1841 թ. օրէնքի, որով աղալարական դասակարգը իսպառ վերացուեց, և զրկուեց այն արտօնութիւններից, որ նոքա վայելում էին 1818 թուականի կանոնադրութեան համաձայն, իբր վարձատրութիւն ստանալով տարեկան պենսիա մինչ ցմահ, իսկ 11 հայկական գիւղերի մելիքներին և աղալարներին զրկելով նաև այդ ապահովութիւնից։—Աւելի նեղողամիտ գտնուեց Դանը բէգերի դիմաց, որոնց իրաւունքները սակայն նա չընդունեց իբր ժառանգական, այլ պէտք է վերջանային իրանց մահով։

Այսպիսով մենք տեսանք, որ 1841 թուականի օրէնքով հիմնովին փոխուում էր կալուածատէր և գիւղացի դասակարգերի յարաբերութիւնները այս մտքով, որ արտօնաւոր կալուածատէր դասակարգերը մնա ապագայի համար իսպառ վերացուում էին Թրքա-հայկական նահանգներում, կալուածատիրական (բայց ոչ կալուածատէր) գիւղացիները դառնում էին պետական գիւղացիներ որովհետև բէգերի և աղալարների հողերը դառան պետական կալուածներ։

Եւ որքան տևեց այդ հայեացքը և դրանից բղխած 1841 թուականի օրէնքը? Որպէս տեսանք միմիայն և այն ոչ լրիւ վեց տարի, քանի որ իշխան Վորոնցովի փոխարքայ նշանակելովը, 1846 թուականին, հիմն ի վեր փոխուեցին հայեացքները այդ խնդրի մասին, և նոյն 1846 թուականի օրէնքով ոչ միայն բէգերը և աղալարները վերահաստատուեցին իրանց նախկին իրաւունքների մէջ, այլ և նոցա օգտին գիւղական ազգաբնակութիւնը ստորացուեց մինչ Ռուսաստանում այն ժամանակ գոյութիւն ունեցող ճորտութեան աստիճանը։ Անցեալ անգամ մենք առաջ բերինք 2 ապրիլի 1846 թուականի օրէնքի կարևոր կէտերը, խոստանալով վերադառնալ այդ օրէնքի

առիթով ծագած տարաձայնութիւններին, որ տեղի ունեցան Կովկասեան Կոմիտեի անդամների, իշխան Վ.օրոնցօվի և մինիստրական շրջանների մէջ, տարաձայնութիւններ, որ երկար գրագրութիւնների տեղիք տուին պաշտօնական մարմինների մէջը։ Այդ առիթով յայտնած կարծիքների ամփոփումը մենք գտնում ենք մի պաշտօնական անձի աշխատութեան մէջ [1])։

Այն ժամանակուայ պաշտօնական բարձր շրջանների կարծիքները այդ խնդրի մասին չափազանց հետաքրքրական են և կարևոր, նախ որպէս մի կտոր մեր ազրարական օրէնսդրութեան պատմութեան, երկրորդ, որ նոցանով փոխուեց 2 ապրիլի 1846 թուականի օրէնքը, որով մեր կալուածատիրական գիւղացիների համար, որպէս տեսանք, ստեղծուեց ճորտութեան նման դրութիւն։

Կենտրոնակէտը այդ բոլոր խօսակցութիւնների և գրագրութիւնների մէջ կազմում էր իշխան Վ.օրոնցօվը, որը մեծ ներգործութիւն ունէր կայսերութեան ներքին խնդիրների վերայ առհասարակ և, որը իւր այդ անձնական մեծ հեղինակութիւնը, ևս առաւել ուժեղացրած իւր բարձր պաշտօնական դիրքով, իբր Կովկասի փոխարքայ, գործադրեց որպէս զի մեր խաների, բէգերի և աղալարների համար ստեղծուի բարձր արիստոկրատական և գիւղացիների վերայ իշխող դիրք, և որի համար մեր համապատասխան գիւղական դասակարգը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի ստոր դասակարգ, այն՝ ինչ այնքան բնորոշ կերպով արտայայտուում է ռուսերէն չէրն խօսքով։ Այս տեսութիւնից մեր ընթերցողները կը տեսնեն, որ մեր գիւղական դասակարգի քաղաքացիական զարգացմանը այս դարում ոչ ոք այնքան ընդդիմադրութիւն չի ցոյց տուել, որքան իշխան Վ.օրոնցօվը, բայց որ բարեբաղտաբար Վ.օրոնցօվի ազդեցութեան հակակշիռը կազմող նոյն ժամանակուայ Պետերբուրգի մինիստրական շրջանների ընդդիմադրութիւնը բաւականի զօրեղ էր, որ օրէնսդրութեան մէջ, մեր կալուածատիրական գիւղացիների համար, մոցնուէր ազատութեան սկզբունքը, որով 2 ապրիլի 1846 թուականի օրէնքով ճորտ ճանաչուածը 6-ին դեկտեմբերի նոյն 1846

---

[1]) Մ. Ն. Կուչան, կալուածատէրների հողերում հաստատուած պետական գիւղացիների հողային սահմանադրութիւնը.

թեականի նոր օրէնքով պետական ազատ գիւղացի յայտարարուէր։ Այդ մանաւանդ գնահատելի էր, որ Վ.օրենցօւի հայեացքներին յարած էր նաև պատերազմական մինիստր իշխան Զերնիշևը, այնպէս որ ներքին գործերի մինիստր կոմս Բլուդօւի, արդարադատութեան մինիստր կոմս Պանինի և պետական կալուածների մինիստր կոմս Կիսելեօւի համար դա մեծ և նշանաւոր յաղթութիւն պէտք է համարել։ Դոցա բռնած դիրքին ենք պարտական որ ճորտութեան սկզբունքը և ոգին չը յարատևեց մեր թրքա-հայկական նահանգների ագրարական օրէնսդրութեան մէջ։

Մինիստրների նկատողութիւնների էութիւնը կայանում էր նորանում, որ Ասիայում հողը ամեն տեղ կազմում է Տէրութեան սեպհականութիւնը, որ մահմեդական պրօւինցիաներում չի եղած և չը կայ ճորտութիւն և որ, անհրաժեշտ է սահմանափակել կալուածատէրերի իրաւունքը գիւղացիների վերայ, որոնց պէտք է յատկացնել ազատ գիւղական բնակիչների բոլոր իրաւունքները, իսկ բէգերի նախկին ստորադրեալներին, որոնք այլ ևս չեն օգտւում կալուածատէրերի հողերից, այլ բնակւում են քաղաքներում, աւաններում և տէրունական հողերի վերայ, իսպառ ազատել ամեն տեսակ տուրքերից։

Այդ նկատողութիւնների վերայ իշխան Վ.օրենցօւը, 31 օգոստ. 1846 թեականի յայտնեց Կովկասեան Կոմիտետի նախագահին, թէ Ասիայում, որպէս և Եւրոպայում գոյութիւն ունի և միշտ էլ գոյութիւն է ունեցել անհատական հողային սեպհականութիւնը, որ և հաստատւում է մի քանի պատմական օրինակներով։ Գտնելով այդ օրինակները բաւականին համոզեցուցիչ, իշխ. Վ.օրենցօւը գտնում էր, որ ներկայ օրէնքով իսկապէս հաստատւում են բէգերի վերայ նրանց տւած հողերը և ոչ թէ այդ նրանց պարգևւում է բաձրագոյն կամքով։ Շնորհել իսօսքը Վ.օրենցօւը թոյլ էր տալիս միայն այն բէգերի և աղալարների համար, որոնց հողերը այս կամ այն պատճառով գրաււած էին յարքունիս։ Իսկ ինչ վերաբերում է մինիստրների կարծիքին՝ գիւղացիների յարաբերութիւնների մասին դէպի կալուածատէրերը՝ Վ.օրենցօւը գտնում էր, որ 1841 թ. օրէնքը հիմնւած էր այն համոզմունքի վերայ, թէ մահմեդական օրէնքը թոյլ չի տալիս ճորտութիւնը, բայց նա, Վ.օրենցօւը գտնում էր որ այդ կարծիքը չի կարող վերաբերել Անդր-

կովկասին, թէ սորա քաղաքական և թէ բարոյական դրութեան և թէ վերջապէս մահմեդական օրէնքների էութեանպատճառով։ «Ղորանը, այտնում էր իշխ. Վ.օրոնցօւը, արգելում է միայն մահմեդականների անձնական սարկութիւնը, որը ճորտութեան (կապուած դրութեան) ամենաբարձր աստիճանն է, բայց այդ օրէնքը չի հերքում հպատակութիւնը։ Թէ չէ ինչպէս կարող էին ծագել ռեշպարների, ռայաթների, նօքարների և այլ դասակարգերը, որոնք պարտական են կալուածատէրերին ոչ միայն տուրքերով հողից օգուտելու համար, այլ անձնական ծառայութիւններով։ Ռէչպարների անձնական կախումը բէգերից ապացուցւում է նորանով, որ նոքա բաժանւում են ժառանգների մէջ և, դէպքը ընկած տեղը իրանք աշխատում են ազատուել ռէչպարութիւնից։ Նոցանից կազմուել է ծառաների դասակարգը շատ բէգերի մօտ, որ բնակւում են թէ քաղաքներում, աւաններում և թէ տէրունական հողերի վերայ։ Հպատակութիւն (подвластный) խօսքը, որ վաղուց և շատ յաջողակ կերպով գործ է ածւում գիւղացիների յարաբերութիւնների մասին դէպի կալուածատէրերը մահմեդական պրօվինցիաներում, պարզ ցոյց է տալիս թէ մէկերի և թէ միւսների պարտականութիւնները։ Թողնել անխախտ այդ պարտականութիւնները, չը մտնեցնելով սոցա սակայն անպայման ճորտային դրութեան և միայն աւելի ճշդօրէն որոշելով նոցա չափը՝ միակ նպատակն էր երկրի գլխաւոր վարչութեան, երբ սա գծագրում էր իւր օրինագիծը, և դորանում նա ղեկավարւում էր թէ այն համոզմունքներով, որ կառավարութեան արժանապատուութիւնը թոյլ չը պիտի տայ խախտել մասնաւոր անձերի իրաւունքները, որ օրբագործուած են ժամանակով և բարձրագոյն մանիֆեստներով հանդիսաւոր կերպով հաստատուած են և թէ ցանկութիւնով շուտով վերջ տալ երկրի այն յուզուած դրութեանը, որի մէջ նորան գցեցին 1841 թուականի կարգադրութիւնները։ Կալուածատիրական հողերից չ՚օգտուող գիւղացիների մասին, որ քաղաքներում, աւաններում և տէրունական հողերի վերայ էին կենում, իշխ. Վ.օրոնցօվը յայտնեց, թէ այդպիսիների թիւը փոքր է. նոքա կազմուել են կամ բէգերի մօտ ծառայութիւն (նօքարութիւն) անող ընտանիքներից և այդ պատճառով հողից չ՚օգտուողներից և կամ այն ընտանիքներից, որ նախկին խաների

կողմից տրված են եղել ծառայութեան բեգերի մօտ, և որոնք այդ իսկ պատճառով պահպանել են իրանց նախկին կախումը բեգերից, չը նայած որ նոքա խանական հողերի վերայ են այժմ բնակւում. կամ նոքա կազմւած են այն անձերից, որոնք, կալւածատէրերի թոյլտւութեամբ, կին առնելով կամ այլ դէպքով անցել են տէրունական հողի վերայ և կամ վերջապէս կազմւել են նոքա բէշպարներից և նոքէրներից։ Այս բոլոր մարդիկ տւել են և շարունակում են տալ կալւածատէրերին իրանց տուրքերը առանց որ և է տրտունջի։ Ինչ հարկաւոր է, հարցնում է իշխան Վորոնցովը, փոխել այն, ինչին որ ժողովուրդը պինդ սովորել է և ինչ նա իւր համար ծանրութիւն չի համարում։ Ցեռոյ իշխան Վորոնցովը յայտնում է, թէ իւր ծրագիրը կազմելիս նա խոյս է տւել դրամական հարկեր բարդելու գիւղացիների վերայ յօգուտ կալւածատէրերի, բացի անհրաժեշտ դէպքերից, որպէս զի դորանով բեգերին տեղիք տրված չը լինի կարծելու, թէ այստեղ ճորտութիւն (կրէպօստնոե պրաւօ) կայ այն չափով, որ չափով նա կայ կայսերութեան մէջ, իսկ միւս կողմից գիւղացիներին չը ծանրաբեռնելու համար վերջին ծայր ծանր դրամական տուրքերով, որ մինչ այժմ բեգերը բարձրացնում էին չափից դուրս, կամայական կերպով։ Այդ պատճառով նա անչարմար է համարում ազատել քրիստոնէական ազգութիւնները բնութեան տուրքերից յօգուտ մահմեդականների, փոխելով այն դրամական տուրքի, և նա գտնում է այդ նոյն իսկ անկարելի այն բեգական կալւածներում, ուր ազգաբնակութիւնը լոկ քրիստոնեաներից է բաղկացած։ Եվ որտեղ, հարցնում է իշխ. Վորոնցովը, պէտք է վերցնի բեգը իւր տան համար հարկաւոր ծառաներ?

Այս բոլորից յետ իշխ. Վորոնցովը անցնում է աղալարների մասին, որոնց մասին նա յայտնում է, թէ աղալարների իրաւունքները ոչ միայն բեգերից ստոր չեն, այլ անգամ աւելի, և որ նոցանից 1841 թւականին հողեր խլելը կատարւել է ոչ այն պատճառով, որ նոցա իրաւունքները անորոշ են եղած, այլ միմիայն այն սխալ ենթադրութիւնից է առաջացած, իբր թէ Ասիայում հողերը տէրութեան են պատկանում և իբր թէ աղալարները, նոցա կառավարած գիւղերի վերաբերմամբ, ուրիշ իրաւունք չեն ունեցած, քան ոստիկանական վերահսկողութեան պարտականութիւնները։ Նաև այդ պարտականու-

թիւնները ի հարկէ բարձած էին նոցա վերայ, ասում է իշխան Վօրոնցօւը, բայց միայն այնքանով, որքանով որ ամէն մի կալւածատէր (պօմեշչիկ) Ռուսիայում պարտական է հսկել իւր գիւղացիների վերայ, կամ աւելի լաւն ասած, այն չափով, որքան ֆէօդալական կանոններով վասսալները, որ ստացած են ինւեստիտուր թագաւորներից, դուքսերից և այլ իշխող անձերից, պարտաւոր էին դատաստան անել իրանց կալւածներում։ Ընդհանրապէս, բացատրում է իշխ. Վօրոնցօւը, պէտք է նկատել, որ սխալ կը լինէր նայել Անդրկովկասի այժմեայ ազգաբնակութեան վերայ այն տեսակէտից, որից մենք սովոր ենք նայելու Եւրոպայի լուսաւորւած երկիրների վերայ, որոնք դարերով միայն հասել են իրանց այժմեայ քաղաքական դրութեան. այստեղ քաղաքացիական դրութիւնը ներկայանում է համարեա նոյն կերպարանքով, ինչպէս նա կար Եւրոպայում XIII և XIV դարերում։ Ֆէօդալական ձևերը Անդրկովկասի մի քանի մասերում և առաւելապէս Իմերէթիայում, Մինգրէլիայում և Գուրիայում պահպանւել են իրանց ամբողջութեամբ. միւս մասներում նոքա մի փոքր փոփոխւել են հանգամանքների շնորհիւ, իսկ մահմեդական պրօւինցիաներում—շնորհիւ արևելեան դեսպօտութեան և Մահմէդի կրօնի։ Բայց ֆէօդալական իրաւունքի գլխաւոր գծերը մեծ մասամբ պահպանւել են. և հենց այդ իրաւունքի մէջ ու նորա աստիճանաբար հասնելում մինչ Եւրոպայի այժմեայ ժողովրդական իրաւունքը (նարօդնոյէ պրաւօ) պէտք էր որոնել այն միջոցները, որ կարող են բարերար կերպով ազդել Անդրկովկասի ազգաբնակութեան վերայ և պատրաստել նորա համար այն ապագան, որ թէ նորա համար փայլուն լինի, և թէ սերտ կապւած Ռուսիայի շահերի հետ։ Մահմեդական բարձր դասակարգի կալւածական իրաւունքների հաստատումը այն ձևով, ինչպէս նոցա դատաւ ռուսաց տէրութիւնը և ինչ ձևով որ նոքա գրեթէ ամէն տեղ այժմ էլ դոյութիւն ունին, իշխ. Վօրոնցօւի կարծիքով, միակ միջոցն է հաստատելու ամուր և անխախտելի հիմքերի վերայ երկրի բարգաւաճումը և պատրաստելու նորա բարոյական, առևտրական և արդիւնագործական ոյժերի զարգացումը։ Յայտնի է, որ ամէն տեղ, ուր ժողովուրդը դատանում է քաղաքացիութեան ստոր աստիճանի վերայ, կառավարութեանը անհամեմատ աւելի դժւար է ներգործել ամբողջ

մասսաների վերայ, քան միմիակ դասակարգի վերայ, որը աւելի լուսաւորուած է և որը, այդ իսկ պատճառով, աւելի ազդեցութիւն ունի։ Իսկ այստեղ, երկրի քաղաքական դրութեան շնորհիւ, դժուարութիւնը աւելի ևս շօշափելի է, և այդ պատճառով պէտք է ոչ միայն ձեռք տալ բարձր դասակարգի իրաւունքներին, այլ դեռ բոլոր ոյժերով և միջոցներով աշխատել որ նոքա պաշտպանուեն և հաստատուեն, որովհետև միմիայն արիստոկրատական սկզբունքը կարող է յաղթել այն դեմոկրատիական ուղղութիւնը, որ զարգացել և այնքան խոր արմատներ է գցել Դաղեստանում և որի դէմ, ցաւօք սրտի պէտք է ասած, մինչ այժմ, բացի զէնքից, չը կար մի ուրիշ ընդդիմադրական ոյժ»։

Ընթերցողները, ուշի ուշով կարդալով իշխան Վորոնցովի այդ գրութիւնը, կը գան անշուշտ այս համոզմունքին, որ այն, ինչ ստիպել է նրան այնքան յամառութեամբ պաշտպան հանդիսանալ մեզանում տիրապետած հին թրքական կարգերին, նորա այս քաղաքական հայեացքն է եղած՝ շահելով մահմեդական բարձր դասակարգի (խաների, բէգերի ու աղալարների) սիրտը՝ նորա միջոցով հնազանդութեան մէջ պահպանել մահմեդական ազգաբնակութեան մասսան, այն մասսան, որը դեռ ևս մատչելի չէր համարւում ռուսաց կառավարիչների անմիջական ազդեցութեանը։ Մեր ընթերցողները յիշում կը լինեն մեր անցեալ երկրորդ յօդուածում առաջ բերած կայսր Նիկողայոսի խօսքերը, ուղղած իշխ. Վորոնցովին՝ թէ «աղալարներից հողեր խլելը (1841-ին) սխալ գործ էր և որ այն պէտք է վերադարձնել նրանց». այդ «սխալ գործը» պէտք է այն մտքով հասկանալ, ինչպէս այդ երևում է վերը առաջ բերած իշխ. Վորոնցովի խօսքերից, այսինքն որ նա հակա-քաղաքական էր համարւում։ Եւ ահա ինչու մենք մեր յօդուածում մի քանի տեղ արդէն յայտնեցինք, որ մեր ագրարական օրէնսդրութիւնը իւր շատ մասերում կրում է լոկ քաղաքական բնաւորութիւն և ոչ թէ հիմնուած է ազգաբնակութեան այն շահերի վերայ, որոնք պէտք է տանեն դէպի քաղաքացիական բարձր զարգացումը և տնտեսական ու սոցիալական բարգաւաճումը, չը նայած որ իշխ. Վորոնցովի գրութեան մէջ նոյնպէս խոստացուած է մի ըստ ամենայնի փայլուն ապագա՛յ։ Եւ եթէ մենք այդքան կանգ ենք առանում իշխ. Վորոնցովի հա-

յեացքների վերայ, այդ նորանից է, որ նորա ազրարական ծրագրի մի մասը այնուամենայնիւ իրագործուեց. խաները, բէգերը և աղալարները եթէ միայն ժամանակաւորապէս վայելեցին նրանց յատկացրած ֆէօդալական կալուածատէր ազնուականների իրաւունքները, բայց առ միշտ ճանաչուեցին որպէս սեպհականատէրեր բնակեցրած և չը բնակեցրած ընդարձակ հողերի, այնքան ընդարձակ, որ Գանձակի և Բաքուայ նահանգներում, որպէս նաև Թիֆլիսի Թրքա-հայկական մասերում ամբողջ գաւառներ կան, ուր խաները, բէգերը և աղալարները ահագին ոյժ են ներկայացնում լոկ որպէս կալուածատէրեր։ Բաւական է ասել, որ Գանձակի նահանգում, իւր ութ (Գանձակի, Արէշի, Ջեբրայիլի, Ջիւանշիրի, Ղազախի, Նուխուայ և Շուշուայ) գաւառներով, 625.129 գիւղացիներից՝ տէրունական հողերի վերայ են 362.499, կալուածատիրական հողերի վերայ՝ 255.556, և սեպհականատէր գիւղացիներ միմիայն 7.074 հոգի են։ [1]) Իսկ նոյն նահանգի Ջեբրայիլի, Ջիւանշիրի և Շուշուայ գաւառներում՝ բարձր Թրքական դասակարգի հողերի վերայ բնակիչ գիւղացիների Թիւը գերազանց է քան տէրունական հողերի վերայ բնակող գիւղացիների Թիւը [2])։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ որքան էլ փոփոխուեց 1846 Թ. ապրիլի 2-ին բարձրագոյն հաստատուած օրէնքը, այնուամենայնիւ այսպէս ասած նիւթական տիրապետութիւնը հողերի վերայ ապահովուեց Թրքական բարձր դասակարգին, որի համար ոչ մի մարդ դեռ ևս չի վկայել, Թէ նորա այդ տիրապետութիւնը ծառայած լինի որ և է գործի յառաջադիմութեանը։

---

[1]) Տես «Մուրճ», 1889, № 3. Գրախօսութիւն, երես 513։

[2]) Առաջինների Թիւն է՝

Ջեբրայիլի գաւառում	25.906
Ջիւանշիրի	33.884
Շուշուայ	63.153

Երկրորդների Թիւն է միայն՝

Ջիբրայ. գաւառում	18.423
Ջիւանշ.	18.334
Շուշուայ	30.428

Տեսէք Сводъ статист. данныхъ Елисаветоп. губ., հրատարակ. Կովկասեան ստատիստ. կոմիտետի։ Թիֆլիս, 1888, երես XIV և XV.

Իշխան Վաղոնցովի բերած հիմունքների ջրելը դժուար չէր աւելի ժողովրդասէր և, աւելացնենք, աւելի քաղաքագէտ մարդկանց համար, եթէ միայն քաղաքագիտութեան լուծելի խնդիրներից մէկն էլ համարուի ժողովրդական առաջադիմութիւնը։

Մենք հարկաւոր չենք համարում Իշխան Վաղոնցովի կարծիքները չընդունող կոմս Բլուդով, կոմս Պանին և կոմս Կիսելեւ մինիստրների ընդդիմախօսութիւնները բառ առ բառ առաջ բերել։ Բաւական է նոցա խօսքերից միայն հետևեալների վերայ ուշադրութիւն դարձնել։ Կոմս Բլուդովը, ցոյց տալու համար թէ գիւղերի կառավարութիւնը որ աստիճանի ճնշող է եղած գիւղացիների համար, առաջ է բերում այս նշանաւոր իրողութիւնը, որ Վրաստանի թրքական գիստանցիաներից մէկի հայերը, իբր վարձատրութիւն նոցա առ ռուսաց տէրութիւնը ցոյց տուած եռանդի, պարսիկների ռուսաց սահմանները արշաւելու ժամանակ՝ ազատեցին թուրք աղալարների կառավարութիւնից. «բայց ի հարկէ, աւելացնում է կոմս Բլուդովը, այդ կախումը չէր կարող այնքան մեծ եղած լինել որքան այժմ, որովհետև առաջւանը դրական օրէնքով չէր սահմանուած»։ Այդ պատճառով կոմս Բլուդովը կարծում էր, թէ որքան բարերար է եղած բէգերին և աղալարներին հողով ապահովացնելու միտքը, նոյնքան տէրութեանը վնասակար է և ժողովրդի համար ծանր՝ գիւղացիներին դնել բէգերի և աղալարների դրեթէ ինքնիշխան կարգադրութեան ներքոյ։

Կոմս Պանին հակառակ էր, որ բէգերին և աղալարներին տրուն և կամ նոցա վերայ հաստատուն բոլոր նոցա ձեռքում եղած հողերը առանց դատաստանական քննութեան։

Դեռ աւելի էլ հարուստ է տեսակէտներով կոմս Կիսելեւի յայտնած կարծիքը։ Նա գտնում էր որ գծագրուած հողային սահմանադրութեան (պոլօժէնիե) կանոններով գիւղացին զրկում է ազատ դասակարգի բոլոր իրաւունքներից և պահանջում էր, որ նաև կալուածատիրական հողերի վերայ բնակող-գիւղացիները ճանաչուին որպէս տէրունական և ուրեմն պատկանող գիւղական ազատ բնակիչների դասակարգին։ Այդ պահանջում էր նա, թէ պնդելով որ մահմեդական օրէնքը ճորտութիւն չի թոյլ տալիս և թէ հիմնուելով ռուսաց օրէնսդրութեան վերայ (յօդ. 628 և 632, հատոր IX

Օրէնքների ժողովածուի, հրատարակ. 1842 թ.)։ Անձնական ծառայութեան վերաբերեալ, որին գիւղացիներին պարտաւորացնում էին բէգերի, և աղալարների օգտին, կոմը յամենայն դէպս չէր կամենում, որ քրիստոնեա-գիւղացիները նոյն պարտաւորութիւնները ունենային թուրք կալւածատէրերի նկատմամբ, որպիսիք են բէգեր և աղալարները։ Այդ պատճառով նա պահանջում էր, որ անձնական ծառայութեան փոխարէն դրամական տուրք նշանակուի քրիստոնեաների համար։ Նա այդ պահանջում էր թէ հայերի համար և թէ մանաւանդ այն ռուսների համար, որոնք գաղթած էին Անդրկովկաս այն նախկին տէրունական հողերի վերայ, որոնք այժմ յետ տրուեցան բէգերին և աղալարներին։ Պետական կալւածների մինիստրը առաջարկում էր նաև որ կալւածատիրական գիւղացիների թէ տէրունական հարկերը և թէ կալւածատէրերին տրուելիք տուրքերը միասին առած և դրամով գնահատած աւելի չը լինէին քան պետական գիւղացիների հարկը։ Նա գտնում էր, որ «հանգստացնելով կալւածատէրերին, չը պէտք է վրդովեցնել գիւղացիներին»։-Քաղաքներում և առհասարակ ոչ կալւածատէրերի հողերի վերայ բնակուող գիւղացիների համար կոմս Կիսելեւը, բնականաբար, պահանջում էր, որ ոչ մի տուրք չը վճարեն իրանց նախկին կալւածատէրերին, քանի որ նոքա ևս ազատ գիւղացիներ են և ոչ կալւածատէրերի հպատակ։ Ընդունելով գիւղացիներին ազատ դասակարգ, նա առաջարկում էր, որ կալւածատիրական գիւղացին իրաւունք ունենայ թողնել իւր բնակատեղին և անցնել օրինական կերպով ձեռք բերած իւր սեպհական հողի վերայ։

Իշխան Վ.օրոնցօւի ծրագրին հակառակ այս բոլոր հայեացքները իրանց ոյժը ունեցան Կովկասեան Կոմիտեի վերայ, որը իւր 30 նոյ. 1846 թուականի վճռով որոշեց Իշխան Վ.օրոնցօւին վերադարձնել իւր ծրագիրը՝ այդ մտքով փոփոխութիւններ մտցնելու համար նորա մէջ։ Եւ ահա այդ, արդէն գիւղացիներին ազատ դասակարգ ճանաչող ծրագիրն է, որ արժանացաւ բարձրագոյն հաստատութեան, ըստ կրիպտով առ 6-ն դեկտեմբերի 1846 թուականի, ուղղած Կովկասի փոխարքայ Իշխան Վ.օրոնցօւին, օրէնք, որի որոշումները հիմք ծառայեցին 20 ապրիլի 1847 թ. և 28 դեկտեմբերի 1847 թուականի հողային օրէնքների՝ գիւղացիների և կալւածատէրերի փոխա-

դարձ յարաբերութիւնների վերաբերեալ [1]) այն բոլոր գաւառներում, որոնք այժմ գրեթէ ամբողջապէս ամփոփուած են այժմեայ Գանձակի և Բաքուայ նահանգների սահմաններում։ Այդ 6-ն դեկտեմբերի 1846 թուականի բէսկրիպտը պարունակում է տասներկու կէտ, որոնցից 1-ին կէտում հաստատուում են խաների, բէգերի և հայերից մելիքների ժառանգական իրաւունքի մէջ այն բոլոր հողերը, որ ունեցած են նոցա տոհմերը մահմեդական պրովինցիաները Ռուսիայի հետ միացնելու ժամանակ և որ նոքա այժմ անվիճելի կերպով իրանց ձեռքումն ունին։

2-դ կէտ՝ բնակուած և ոչ բնակուած հողերը, որ 1840 թուականից յետ խլուած էին նոցա տէրերից ոչ յանցանքների պատճառով և ոչ դատաստանական այլ միայն վարչական ճանապարհով, վերադարձնում են այն անձերին, ումից նոքա խլուած էին կամ նոցա ժառանգներին։

3-դ կէտ՝ Վրաստանի նախկին թրքական դիստանցիաների աղալարներին և նոցա ժառանգներին, իբր առանձին ողորմածութիւն, պարգևում են բնակուած և ոչ բնակուած հողերը, որ նոցա տիրապետութեան տակ էին և որ նոցանից խլեցին 1841 թուականին. հետևաբար դրամական վարձատրութիւնը որ տրուում էր նրանց 1841 թուականից, դադարեցնել։

Բէսկրիպտի հետևեալ կէտերից կարևորագոյնն են 7 և 8-դը՝

7-րդ կէտ՝ այն գիւղացիներին, որոնք կենում են կալուածատէրերի հողերի վերայ, թողնել իրանց այժմեայ բնակատեղերում, հաշուելով նոցա Օրէնքների համագումարի յօդուած 628—632 հատոր IX,

---

[1]) Высочайше утвержденное 20 апрѣля 1847 года Положеніе Кавказскаго Комитета о взаимныхъ отношеніяхъ поселянъ, живущихъ на владѣльческихъ земляхъ, и владѣльцевъ тѣхъ земель, въ Шемахинской и Дербентской губерніяхъ.

Высочайше утвержд. 28 декабря 1847 г. Положеніе о взаимныхъ отношеніяхъ агаларовъ и поселянъ, живущихъ на земляхъ, возвращенныхъ агаларамъ и утвержденныхъ за ними на основаніи Высочайшаго рескрипта 6 декабря 1847 года. Այս վերջինը կազմում է հատոր IX Օրէնքների համագումարի 1097-դ յօդուածի երկրորդ լաւելուածը։

հրատար. 1842 թուականի հիման վերայ՝ պետական գիւղացիների [1]) դասակարգին։

8-րդ կէտ՝ Այս գիւղացիները պարտաւոր են տալ հողի տէրերին զանազան տեսակ տուրքեր իբր վարձատրութիւն նոցա հողերից օգտուելու համար։

Բացի դորանից, հողատիրոջ է թողնւում հսկել գիւղացիների կարգ ու կանոնով վարք վարելու վերայ և կառավարել նոցա ոստիկանապէս։

Որոշել գիւղացիների և հողատէրերի փոխադարձ յարաբերութիւնները մանրամասնօրէն՝ թողնւում է յետովայ օրէնքներին։

Բարձրագոյն տուած բէսկրիպտի այդ բովանդակութիւնից ուղղակի դուրս է գալիս այս եզրակացութիւնը՝

1. Անդրկովկասի Արևելեան նահանգների հողատիրութեան խնդրին ուղղութիւն տուող հայեցակէտներից քաղաքականը դրականապէս յաղթող հանդիսացաւ, բարձր մահմեդական դասակարգին շնորհելով ընդարձակ հողեր իբր տոհմական ժառանգութիւն։

2. Դորա հակառակ՝ կալւածատիրական հողերի վերայ բնակւող գիւղացիների անձնական դիրքի նկատմամբ՝ յաղթող հանդիսացաւ բարձր կառավարչական շրջանների ազատամիտ կուսակցութիւնը, քանի որ օրէնքի խօսքով յայտարարւեց, որ կալւածատիրական գիւղացիները կապւած չեն հողի և հողատիրոջ հետ, ուրեմն որ նոքա ճորտեր չեն, այլ ազատ գիւղացիներ են և կարող են ձեռք բերել հողի սեպհականութիւն, հետևապէս պատկանում են պետական գիւղացիների դասակարգին [1])։

3. Նոր օրէնքը, լինելով մի կոմպրոմիս երկու տարբեր և իրար հակասող կուսակցութիւնների, ստեղծեց խան, բէգ, մելիք և աղալար կալւածատէրերի համար մի միջին դիրք՝ ճորտեր ունեցող ռուս կալւածատէրերի և պետական չինովնիկութեան մէջ, յատկացնելով գիւղացիների ոստիկանական կառավարութիւնը նոյն կալւածատէրերին, մի կարգ, որը, որպէս դեռ կը տեսնենք, վերացւեց միայն 1861 թուականին։

---

[1]) «Պետական գիւղացիներ» (գոսուդարստուեննիէ կրեստեանէ կամ պոսելեանէ) գործ է ածւած «ազատ», այսինքն ոչ-ճորտ, ոչ-ստրուկ խօսքերի մտքով։

4. Կալուածատիրական գիւղացիների նիւթական ապահովութիւնը ի նկատի առնուեց նորանով, որ կալուածատէրերի վերայ պարտականութիւն դրուեց ամեն մի աշխատաւորի հասակն առած գիւղացուն հողաբաժին տալ, մի սկզբունք, որը յարատեւեց նաև յետոյ օրէնքների մէջ։

Այս օրէնքը 6-ն դեկտ. 1846 թուականի շատ կարևոր է իւր սկզբունքների շնորհիւ միայն, բայց նորա գործադրութիւնը հանդիպեց ամենամեծ դժուարութիւնների և արգելքների. իրանց բէգ և աղալար կոչողներից ումն ընդունել իբր հողային սեպհականութիւն ունեցող, ինչպէս վարուել վիճելի հողերի հետ, ինչպէս ապահովել հող չունեցող, այլ միայն իրանց առաջուայ հպատակ գիւղացիների տուրքերով ապրող բէգերին, գիւղացիների, որոնք այժմ քաղաքներումն են, ազատ են յայտարարուած և տուրքերից ազատուած են. ինչպէս վարուել Երևանեան նահանգի միւլքադարերի և թիուլի տէրերի հետ, որոնք սեպհական հող չունէին, այլ միայն հողի արդիւնքի մէջ մաս ունէին. ինչպէս վարուել Ախալցխայի և Ախալքալաքի բնակուած տեղերի հետ, որ ձեռք էին բերել բէգեր և հասարակ դասակարգի անձեր։

6-ն դեկտ. 1846 թուականի բէսկրիպտը, որպէս ասացինք, հիմք ծառայեց 1847 թուականի հողատիրական պոլոժէնիէների, որոնց առանձին յօդուածների մէջ իշխան Վ.որոնցօւը աշխատեց որքան կարելի է իւր համակրութիւնները կալուածատէրերի օգտին ներմուծել, նոյն իսկ հակառակ վերոյիշեալ բէսկրիպտի ոգուն։ 1847 թուականի հողատիրական սահմանադրութիւնը, որի գործադրութիւնը, բազմազան դժուարութիւնների պատճառով, թերի կերպով կատարուեց, ընդհանուր առմամբ իւր զօրութիւնը պահպանեց մինչ 1870 թուականը, երբ հրատարակուեց «Գիւղացիական սահմանադրութիւնը» (Պօսելեանսկօե պոլոժենիե), որը այժմ իշխող օրէնքն է կալուածատիրական հողերի և գիւղացիների համար։ Եւ նախ քան առաջ տանենք հողային խնդրի ուսումնասիրութիւնը մեր երկրում, մեզ հարկաւոր է դեռ ընթերցողների առաջը դնել այդ երկու (1847 և 1870) հողատիրական օրէնքների բովանդակութիւնը։

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

ՀԵՂԻՆԷ

Վ. Է Պ

Տ-ին Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

(Շարունակութիւն [1])

X

Մօտ երկու տարի էր անցել Ամիրանովների պատկի օրից։ Հեղինէի համար օրէցօր աւելի ու աւելի զգալի էր լինում, որ իւր և մարդու մէջ համերաշխութիւն չը կայ. նորա հոգու պահանջները բաւարարութիւն չէին ստանում. նա փափագում էր կատարեալ զիտակցական սէրի, իսկ, ինչպէս տեսնում էր, Ամիրանովը այդպիսի սէր չէր զգում դէպի ինքը։ Բայց Հեղինէն դեռ այնքան սէր ու հաւատ ունէր դէպի բարին, որ չէր յուսահատւում և կեանքից աւելի բախտաւոր օրեր էր սպասում։

Իսկ Ամիրանովը քանի գնում աւելի էր համոզւում, որ պէտք է հաշուել Ռաբարովի հետ, բայց երբէք կնոջ ներկայութեամբ այդ հարցի մասին չէր խօսում։

—Հը՞, հիմայ ինչպէս էք քեռու հետ, մի օր սովորականից լուրջ կերպով հարցրեց Ամիրանովը քոյրերին։

—Ոչինչ, քիչ-քիչ յարաբերութիւններս լաւանում են, ուրախացրեց նորան այրին։ Ամիրանովը աչքերը չռեց։

[1] Տե՛ս «Մուրճ»-ի № 6, 7.

Հա՛, շարունակեց Եփեմիան մոախոհ կերպով, վերջին անգամ ինձ այնպէս թւաց, թէ մեզ սիրով ընդունեց։ Այնպէս չէ՞, Թամար։

—Խա՛չը, չը դիտեմ։ Ես որ բան չը նկատեցի։

—Դու քթիցդ հեռու բան նկատում ես ո՛ր։

—Աւելի լաւ կը լինէր ծեր մարդու գնացած լինէի ու նորա անտանելի փնթփնթոցը լսէի, կիսաձայն ասաց Թամարը ու այնպէս իրար չխփկացրեց գուլպա գործելու միլերը, կարծես թէ նրանց վերայ էր ուզում թափել իւր սրտի դառնութիւնը։

Ամիրանովը նորա վերայ ստուգ, խիստ հայեացք ձգեց։ Թամարի սիրտը միշտ դող էր ընկնում երբ որ եղբայրը այդպէս նայում էր իւր վերայ։ Նա խսկոյն սկսեց ու խորասուզուեց իւր աշխատանքի մէջ։

—Աշխարհիս երեսին մի քեռի ունենք, այն էլ առանց մի պատճառի չարացել է մեր վերայ։ Դու, Տէր Աստուած, լուսաւորես նորա միտքը, ասաց Եփեմիան աչքերը ջերմեռանդութեամբ երկինքը բարձրացնելով և երեսը խաչակնքելով։

Այդ ժամանակ ներս մտաւ Հեղինէն։

—Այդ ո՞ւմ համար էք այդպէս ջերմեռանդութեամբ աղօթում։

Եփեմիային թւաց, թէ հարսը իրան ծաղրում է. նա խէթ-խէթ նայեց Հեղինէին։

—Նրանց համար, սիրելիս, որոնք ճշմարտութեան ճանապարհից շեղել են, պաս չեն պահում, եկեղեցի չեն գնում, իրանցից մեծերին չեն պատուում, էլ ինչ ասեմ՝ որոնք մարդկանցից չեն ամաչում ու Աստուծուց չեն վախենում։

Հեղինէն տալի ձայնիցն ու հայեացքիցը հասկացաւ, որ նա իրան էլ նոցա շարքն է դասում։

Զարմանալի բան է, խա՛չը, մտածեց նա, այս Եփեմիան որ մէկին չը կծի, հողին դուրս կը դայ։ Էհ, ինքը իւր Աստուածը, ինչ ուզում է թող ասի։

—Միշէլ, ասենից որ դուրս գաս, մոիր փոստը, տես „Учитель“ ամսագրի վերջին համարը պէտք է որ վաղուց եկած լինի, դիմեց նա մարդուն փոքր ինչ յետոյ։

Հեղինէն հաստատ միտքը դրել էր պատրաստելու մանկավարժական գործունէութեան համար։ Նա գրել էր մանկավարժական ամսա-

գիրների և կարդում էր համարեա բոլոր նոր հրատարակուող փոքր ի շատ աչքի ընկնող մանկավարժական գրքերը։

—Գիտես, Միշէլ, զգում եմ, որ շուտով կը կարողանամ աշխատակցել այն ամսագրին...

—Հեղիկ, անհամբերութեամբ կտրեց նորա խօսքը Ամիրանօվը, գլխիցդ հանի, Աստծու սիրուն, աշխատաւոր կեանք վարելու ձգտումը։ Թող խեղճ, չքաւոր կանայք մտածեն այդ կեանքի մասին։ Դու, փառք Աստծու, ապահովուած ես, մարդ ունես, որ հոգում է քո ապագայի մասին։

—Ի հարկէ։ Դուք առանց այն էլ շատ գործ ունէք տանը. կինը որ մարդու վաստակածը չը պահի, տուն ու տեղը չը սարքի, տնարարութիւն չանի, էլ ով պէտք է անի. ձեր մատները մինչև օրս ասեղի երես չեն տեսել, մէջ ընկաւ այրին։ Կինարմատին ինչ կը սազի տանից դուրս աշխատել. ո՞ր կարգին կինը տունը թողած դուրսը կ՚աշխատի, մարդուն խաղք ու խայտառակ կանի։

—Ինչ երկար ու բարակ խօսելու բան կայ, յանկարծ վճիռ տուեց Ամիրանօվը։ Ապրիր ու քէֆ քաշիր, ահա քեզ ինչ է վիճակուած։

—Կատակ ես անում ինչ է, Միշէլ, մի՞թէ դու իսկապէս կ՚ուզես, որ մարդկային ցեղի կէսը, կանայք, միայն զարմանալու համար ապրեն, տաքացած ընդհատեց նորա խօսքը Հեղինէն։ Այն ժամանակ էլ ինչի ենք ապրում աշխարհիս երեսին, էլ ում պէտք է օգուտ լինի մեր կեանքից։

Վերջին նախադասութիւնը Եփեմիան լաւ չը հասկացաւ, որովհետև ռուսերէն վատ գիտէր։ Նա նստած տեղումը անհամբերութեամբ շարժուեց և մատը բերանը տանելով մի քանի խօսք ասաց։ Հեղինէի հետ Եփեմիան ռուսերէն էր կոտրտում. իսկ եղբօր հետ միշտ վրացերէն էր խօսում։ Միւս քոյրը, Թամարը ռուսերէն կարդին գիտէր և շատ էր սիրում, ինչպէս առհասարակ բոլոր հայ կանայք, ռուսերէն խօսել։ Նա ձեռի գործը մի կողմը դրած ուշադրութեամբ լսում էր քրոջ, եղբօր ու հարսի խօսակցութիւնը։

—Որտեղից դուրս բերեցիր, խելօքս, որ իմ ասելով դու աւելորդ ես աշխարհիս երեսին, ասաց Ամիրանօվը։ Կինը մարդու կեանքի քաղցրութիւնն ու ուրախութիւնն է, նորա օգնականն է, նորա տան տնարարն է, իսկ եթէ երեխաներ ունին՝ նոցա կրթիչն ու դաստիա-

բակին է։ Այդքան գործ ունեցողի համար պարապ ժամանակ չի մնայ։

—Ի հարկէ, խելօք կինը երբէք առանց գործի չի մնայ, կծու հեգնութեամբ ասաց այրին։ Ով որ իւր տանը գործ չի գտնում անելու, դրսէը հօ՛ սկի չի գտնի։ Ես միշտ այնքան գործ եմ ունենում, որ աչք բաց անելու ժամանակ չի լինում։

—Հօ չես ասի թէ ով է քո տեղ այդ բոլոր գործերը կատարում, աշխատում, շարչարում, կիսաձայն ասաց Թամարը։

Հեղինէն ուշք չը դարձրեց այրիի կծու ակնարկութիւններին ու նորից դիմեց իւր ամուսնուն.

—Ես դեռ երեխայ չ՚ունիմ. տանու գործերը օրը ընդամենը մէկ-երկու ժամ հազիւ խլեն. մնացած ժամանակը պարապ եմ։

—Պա՛րապ ես, հա՞, հապա ինչո՞ւ ժամանակ չես ունենում քեզ համար մի քանի շնորհքին շոր շինելու ու երկու-երեք այցելութիւն անելու, որոնց մասին քանի ժամանակ է քեզ ասում եմ։

—Որովհետև այդ շատ ձանձրալի բան է, էլ սիրտ չի մնացել դորանով պարապելու։

—Ճիշտն ասած, իմ գլուխն էլ քո տուտուց խօսքերն են տարել, էլ սիրտ չի մնացել լսելու, համբերութիւնը հատած ընդհատեց Ամիրանովը։

—Դարդ մի արա, էլ այդպիսի տուտուց հարցերով չեմ դիմի քեզ, պատասխանեց Հեղինէն վիրաւորուելով ու շուռ եկաւ դէպի դուռը։

—Ու շատ լաւ կանես։ Հա՛, մոռացայ քեզ ասեմ, որ Կատարինէն հիւանդ է ու ուզում է քեզ տեսնել։

—Միթէ՞. ի՞նչ է, մտահոգ կերպով հարցրեց Հեղինէն ու Թամարի հետ սենեակից դուրս եկաւ։

Ամիրանովը նոցա յետևից դուռը պինդ փակեց ու նստեց այրիի կողքին։

—Ասո՞ւմ ես քեռին հիմա աւելի լաւ է վերաբերւում ձեզ։

Քոյրը գլխով դրական նշան արեց։

—Հը՛մ... խորհրդաւոր կերպով արտասանեց Ամիրանովը ու աթոռը մօտեցրեց քրոջը։ Սկսեցին կամաց խօսել։

Այդ ժամանակ Հեղինէն ու Թամարը տանից դուրս եկան Կատարինէի մօտ գնալու համար։ Ճանապարհին Թամարը, որ ծած-

կամիա և առհասարակ սակաւախօս աղջիկ էր, յանկարծ սկսեց խօսել։

—Երանի՛ նրանց, որոնք իրա՛նց աշխատանքով կարողանում են հաց վաստակել։

Կարծես այդ խօսքերը Թամարի կամքի հակառակ նորա բերանից դուրս թռան։

Թէև Հեղինէն գիտէր, որ տալը իրան շատ էլ չի սիրում, բայց այն տօնը, այն եղանակը, որով Թամարը արտասանեց այդ խօսքերը, նորան սաստիկ ներգործեց։

—Է՛հ, Թամար ջան, չարժի դորա համար դարդ անել, ասաց Հեղինէն կարեկցաբար բռնելով նորա ձեռքից։ Միթէ՞ Միքայելը թողնում է, որ դու կարօտութեան մէջ մնաս։

—Զէ՛, ընդհատեց նորա խօսքը Թամարը, երբ որ հասկացաւ հարսի խօսքերի միտքը, որ կարծես նորան վախի մէջ գցեց։ Զէ՛, ես այդ մտքով չէի ասում...

—Ասա տեսնենք, ինչո՞ւ ես այդպէս տխուր—տրտում, ի՞նչ դարդ ունես, կարելի է ես քո դարդիդ ճար կարողանամ անել։

Թամարը շատ քիչ էր լսել այդպիսի բարեկամական խօսքեր, չէր տեսել այդպիսի անկեղծ սրտացաւութիւն դէպի ինքը։ Հարսի վարմունքը այնքան սաստիկ ներգործեց նորան, որ նա սիրտը բաց արեց նորա առաջ։

—Ի՞նչ ունեմ ուրախանալու, Հեղինէ ջան, որ տխուր չը լինեմ։ Ոչ անհոգ մանկութիւն եմ տեսել, ոչ ուրախ ջահելութիւն, իսկ բախտաւորութիւն ասած բանի մասին միայն լսովի հասկացողութիւն ունեմ. ամբողջ կեանքումս մի բախտաւոր օր չի տեսել ինձ Աստուած։

—Խե՛ղճ Թամար, հիմա հասկանում եմ, թէ ինչու ես տխուր. բայց միթէ՞ Միքայելը չէր կարող դրութիւնդ լաւացնել։

—Նորան քեռին փոքրուց տարաւ Մոսկւա ուսում տալու. իսկ ես, վեց տարեկան հասակումս, դրկելով հօրս ու մօրս գգւանքներից, մնացի որբ. Եփեմիան ինձ վերցրեց իւր մօտ։ Նա հոգս չը տարաւ ինձ ուսում տալու. ինչ որ կիսատ-պռատ ռուսերէն ու վրացերէն կարդում—գրում եմ, այն էլ ինձ ու ինձ եմ սովորել։ Փեսաս մի դաժան ու ժլատ մարդ էր. ի՞նչ ես նրանից քաշեցի, Աստուած թշնամուս առաջը չը բերի։ Առաւօտից մինչև երեկոյ ոտիս վերայ

բան էլ անում, էլի իրանց տուած մի կտոր հացը երեսովս էին տալիս։

—Ինչո՞ւ ոչինչ չէիր գրում եղբօրդ կամ քեռուդ։ Նոքա որ իմանային, քեզ այդ գրութեան մէջ չէին թողնի։

—Ուզում էի գրել, բայց սիրտս չէի անում։ Մինչև վճռելս էլ վեսաս մեռաւ։ Նորա մահից մի տարի յետոյ եղբայրս եկաւ. այնուհետև նա էր մեզ պահում։ Եղբօրս գալուց յետոյ վիճակս ի հարկէ լաւացաւ, բայց էլի կեանքս ինձ ծանր է թւում։

Թամարը խոր հոգոց քաշեց։ Հեղինէն նորա ձեռքից բռնած սրտացաւութեամբ նայում էր նորան։

—Ա՛յ, այժմ էլ, նորից սկսեց խօսել Թամարը, ես ստիպուած եմ զգուելի գեր կատարել քեռու վերաբերութեամբ, որին մենք մինչև այժմ մարդու տեղ չէինք դնում։ Այժմ որ հարստացել է, մենք աշխատում ենք նորա սիրտը գրաւել. բայց ինձ միշտ թւում է, որ այդպէս վարելով, մենք մեղք ենք գործում նորա աղջկայ դէմ, թէև նա ապօրինի է...

Նկատելով որ իւր խօսքերը վատ տպաւորութիւն գործեցին հարսի վերայ, Թամարը սաստիկ զղջաց, որ նրան ասաց այն, ինչ որ նա չը պէտք է իմանար։

—Հեղինէ ջան, դու լինես քո Աստուածը, Միքայէլին բան չասես այս խօսակցութեան մասին, աղաչելով դիմեց նա հարսին, վախվըխելով չորս կողմը նայելով։

- Միթէ՞ իմ մարդը...

—Չէ՛, չէ՛... նա բանից տեղեակ չէ, կմկմալով ասաց Թամարը։ Նա մինչև անգամ չը գիտէ... թէ մենք գնում ենք քեռու մօտ... այդ Եփեմիայի բաներն են...

Թամարի ձայնը դողում էր։ Տալի վախ ու շփոթութիւնը Հեղինէի սիրտը կասկած գցեցին, թէ իւր մարդն էլ խառն է այդ գործում։

Մի քիչ առաջ ինչպէս անհաշտ թշնամի էր ցոյց տալիս նա իրան դէպի քեռին, իսկ այժմ աշխատում է աչքը մոնել, որ այդ պիսով կարողանայ նորա հարստութիւնը ժառանգել։ Այդ միտքը շատ ցաւացրեց Հեղինէի սիրտը, բայց նա այդ թաղցնում էր Թամարից, որ առանց այն էլ վախիցը չէր իմանում ինչ անի։

—Հանգիստ եղիր, Թամար, քո ասածդ ոչ ոք չի իմանայ։

Հեղինէն շատ էր աշխատում հանգիստ երևալ, բայց էլի ձայնը տխուր էր։ Երկուսն էլ մտածմունքի մէջ ընկան ու այդպէս լուռ ու մունջ հասան Սահառունիների բնակարանին. Հեղինէն առաջարկեց Թամարին, որ նա էլ մնայի Կատարինէի մօտ, բայց նա չ'ուզեց։ Մի քառորդ ժամ ընկերուհու մօտ մնալուց յետոյ, Հեղինէն գնաց առանց տանտիրոջ հետ մինչև անգամ մնաս բարև անելու։ Ակի խօսելու սիրտ չ'ունէր. նա ուզում էր որքան կարելի է շուտով մենակ մնայ, որ կարողանայ ազատ միտք անել։

Մինչդեռ Հեղինէն կառք նստած վերադառնում էր տուն, Սահառունու ընկերները նստած նորա առանձնասենեակում խօսում էին։ Նստ խօսելուց յետոյ սկսեցին սորա-նորա վերայ կարծիք յայտնել. վերջապէս հերթն եկաւ Ամիրանովին. Թոմասեանը հեգնօրէն հարցրեց Սուրենուն։

—Հը՞, Ալեքսանդր, դիմեցիր նորան, որ միջնորդի այն պաշտօնի համար, որ դու ուզում ես ստանալ։

—Դեռ չէ, բայց Գէորգը խոստացաւ խօսել նորա հետ դորա մասին այսօր։

—Դեռ շատ՞կը սպասես, բարեկամ, որ Ամիրանովը քեզ համար մի խօսք ասի։

—Ինչո՞ւ, ահաճուելամբ հարցրեց Սահառունին։

—Որովհետև Ամիրանովը չի ուզենալ իւր ազդեցութիւնը ուրիշի օգտին գործ դնել, քանի որ իրան կարող է պէտք գալ, վստահաբար պատասխանեց Թոմասեանը։ Եթէ դու լաւ դիտող լինէիր, Գէորգ, կը նկատէիր, որ այժմ Ամիրանովը աչքը դրել է Ն-ձէի պաշտօնին. Ն-ձէն իւր մեծաւորի աչքից ընկել է, Ամիրանովը այդ իմանալով, առամները սրել է, աշխատում է ձեռից առնել պաշտօնը. նորա ինչ հոգն է, որ խեղճը ահագին ընտանիքի տէր է։

Սահառունին ասաց, որ դժուար է, հաւատալ, թէ Ամիրանովը այդպիսի բան կարող է անել։ Նա այն դիւրահաւատ մարդկանցից էր, որոնք շատ հեշտ են խաբւում մարդ ճանաչելում։ Նա գիտէր, որ Ամիրանովը շատ անհամակրելի յատկութիւններ ունի, բայց չէր կարծում, որ նա անպիտան մարդ է։

—Իմ կարծիքով, Ամիրանովը իւր շահերի համար հանգիստ

սրաով մեզ բոլորիս կը ծախի տեղն. ընկած ժամանակը, ասաց Պետրոսեանցը։

Երկու ամիս կը լինէր, որ Պետրոսեանը հեռացել էր իւր ծնընդավայրից, ուր միշտ անբաւականութիւններ էր ունենում ծառայութեան մէջ։ Զրկւելով մօրից ու մարդու տալով քրոջը, նա ազատւեց այն պարտականութիւններից, որ նորան տիպում էին մինչև այդ ժամանակ մնալ Ե-ում և պատրաստ էր ամենաչնչին վարձատրութիւն տուող գործ գտնելիս տեղափոխւել Թ-ս, Անդրիովկասի մտաւոր և տնտեսական կեդրոնը։ Սահառունին այդ իմանալով աշխատեց նորա համար տեղ գտնել թեմական դպրանոցում։ Նուտով տեղ բացւեց և Պետրոսեանին հրաւիրեցին ուսուցիչ, խոստանալով նորան ապագայում տեսչի պաշտօն նոյն դպրանոցում. Պետրոսեանը ուրախութեամբ համաձայնեց և սկսեց եռանդով պարապել իւր նոր գործով։

—Սատիս հաւատացէք, պարոններ, շարունակեց Պետրոսեանը փոքր ինչ լռութիւնից յետոյ, ես նորան լաւ եմ ճանաչում. երկու տարի մենք միասին ծառայել ենք։

—Իսկ այն, որ լաքէի նման կատարում է Ելիզաւետա Բօգդանովնայի բոլոր պատուէրները ու քաշալերում նորա բոլոր կեղտոտութիւնները, այդ ձեր կարծիքով ազնուութի՞ւն է նորա կողմից։ Նորա խորհրդով չէ՞ որ քոյրերը հարստացած Ուբարովի տները լիզում են. դորանից էլ կեղտոտ զզւելի բան ի՞նչ էք ուզում, զայրացած ասաց Թոմաեւը։

—Լաւ, պարոններ, ասենք Ամիրանովը ձեր ասածի պէս կեղտոտ մարդ է. հապա ինչո՞ւ էք դուք կպել նորա տանից ու չէք պոկ գալիս, հարցրեց Ասունին ու սկսեց կամաց երգել իւր սիրած եղանակը Տրաւիատայից։

—Նորա համար, կը պատասխանեմ քեզ Համլէտի խօսքերով, որ նորա տանը մադնիս կայ, որ ձգում է իրան, ասաց Թոմաեւը։

—Հա՛մա քէֆեր էր անում Ուբարովը, հա՛, խօսքը փոխեց Ասունին. եթէ այն փողերը չը տանէր, բանը բուրդ էր։

—Մարդը իւր համար քէֆ է քաշել, ո՞ւմ է վնաս տւել, շատ էլ լաւ է արել, ասաց Թոմաեւը։

—Յիշո՞ւմ ես, Պետրոսեան, Ուբարովի փոքր աղջկան, որ ամեն

բոլէ կը վազէր, կը զար մեզ մօտ։ Նա ու Գէորգը նոր էինք համալսարան մտել, իսկ դու չորրորդ կուրսումն էիր։ Ի՜նչ հրաշալի երեխայ էր։

—Պետրոսեա՞նը չը յիշի, ծիծաղելով ասաց Սահառունին։ Դու մոռացել ես, Ալեքսանդը, որ Պետրոսեանը այդ երեխայի մօր երկրորդաղուն էր։ Խեղճ կինը, ասում են, խաբեբայութեան զոհ է դարձել։ Ուբարովը խոստացել է պսակուել հետը, բայց խոստումը չի կատարել և այդպիսով նորա մահուան պատճառ է դարձել։

Պետրոսեանի վերայ տխրութիւն եկաւ. նա լուռ գլխով արեց։

—Մարդ իմանայ, թէ ինչ է եղել այդ աղջիկը. նա այժմ պէտք է մօտ տասնեօթ տարեկան լինի։

—Ճիշտ է, Գէորգ. նա հազիւ վեց տարեկան կը լինէր, երբոր մայրը մեռաւ և անխիղճ Ուբարովը անտէր թողեց նորան, մաղձոտութեամբ ասաց Պետրոսեանը։

Մի քիչ հանգստանալով, նա ուզում էր շարունակել, բայց յետոյ վճռեց, որ աւելի լաւ է լռել։

Զէ՛, ինչ էլ լինի, ոչ ոքի չեմ ասի, թէ ով է աղջիկը և որտեղ է այժմ։ Թող ոչ ոք չ՝իմանայ, որ նա ապօրինի զաւակ է...

Մինչդեռ նա զբաղուած էր այդ մտածմունքներով, եկաւ հրաւիրուած բժիշկը և խօսակցութեան նիւթը փոխուեց։

—Կատեա, ո՞ւր է տիկին Հեղինէն, հարցրեց Սահառունին բժշկի դնալուց յետոյ։

—Նա վաղուց է տուն դնացել։ Զգիտեմ ինչ է պատահել նորան. շատ վատ տրամադրութեան մէջ էր։ Իրիկնապահին դնա՝ նոցա մօտ ու նորան հետդ բեր, հա՞։

—Ուրախութեամբ, մանաւանդ որ Ասունուն էլ խոստացել եմ այսօր Միքայէլի հետ խօսել նորա գործի մասին։

Սահառունին համբուրեց կնոջը ու դուրս եկաւ իւր ընկերների մօտ։

Թամարի հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ Հեղինէն սկսեց ուշադրութեամբ դիտել մարդուն և կարծես սկսում էր նորա բնաւորութեան մէջ նկատել իրան մինչև այժմ անյայտ յատկութիւններ։

Ինչո՞ւ են պատէպատ ընկնում Թամարն ու Միքայէլը, երբ ես հարցնում եմ նոցա, թէ ինչու են խուսվել իրանց քեռուց, ու ուղիղ չեն պատասխանում հարցիս. վերջապէս ինչո՞ւ պէտք է հէնց այն ժամանակը խուսվէին, երբ որ քեռին մնանկացել էր։ Արդեօք քեռորդին, ևս աւելի քեռու սանը, որ առանց նորա օգնութեան ու փողերի չէր կարող ուսում ստանալ, չը պիտի ընդհակառակը մխիթարէր իւր ազգականին ու բարերարին՝ նորա հետ պատահած անբախտութեան ժամանակ,—յաճախ ինքն իրան հարցնում էր Հեղինէն։

Այդ դէպքից յետոյ Հեղինէն որքան աշխատում էր ինքն իրան համոզել, որ իւր Միքայէլը աղնիւ մարդ է, չէր լինում. մի անգամ կասկածն ընկել էր սիրտը և նորա կասկածոտ հայեացքը յաճախ կանգ էր առնում իւր մարդու անըմբռնելի դէմքի վերայ։ Միևնոյն ժամանակը նա նկատում էր, որ մարդը ամեն կերպ աշխատում է իրան հեռու պահել և չը խառնուել նորա, ինչպէս ինքն անուանում էր, երևակայական, ֆանտատիկական ծրագիրներին։

Հեղինէն սկսեց հետզհետէ աւելի ու աւելի յաճախ խորհրդակցել Սահառունու հետ, որ աշխատումէր վառ պահել նորա մէջ հարցասիրութիւնը։ Շատ բան ինչ որ առաջ մութն էր թւում Հեղինէին, հետզհետէ պարզւում էր նորա համար. շատ բան, որ առաջ անյայտ էր նորան, նա լսում և իւրացնում էր։ Շատ չանցած Սահառունին զարմանալով նկատեց, որ Հեղինէն այնքան արդէն զարգացել է, որ նորա հետ կարելի է խօսել այն բոլոր հարցերի մասին, որոնց մասին առհասարակ խօսում են համալսարանաւարտ երիտասարդների շրջանում։ Յաճախ Հեղինէի հետ խօսելիս, նա մոռանում էր որ հետի խօսողը իւր ընկերը չէ, վիճում էր, տաքանում էր, առանց աշխատելու խօսակցութեան մէջ գործ դնելու այն կոպտած արհեստական ոճը, որով առհասարակ խօսում են տիկինների հետ։

Հեղինէի Թամարի հետ ունեցած խօսակցութիւնից մօտ երկու շաբաթ անցած Սահառունին սովորականից վաղ այցելեց նորան։ Զմեռային արեգակը ուրախ լուսաւորում էր ամբողջ սենեակը. Հեղինէն նստած էր դրասեղանի մօտ և նորա հայեացքը բոպէ առ բոպէ կանգ էր առնում մէկ ձիւնապատ հորիզոնի, մէկ դէմուդէմի բուխարու բոցավառ կրակի վերայ։

—Ներեցէք, կարծեմ ես խանգարեցի. դուք այսօր ինչպէս երևում է քաղցր ցնորքներով զբաղուելու տրամադրութեան մէջ էք, ասաց Սահառունին նստելով բազմոցի վերայ։

—Ընդհակառակը, ինձ միշտ ուրախութիւն է պատճառում ձեր գալուստը։

Ո՛րքան փոխուել է այս քանի օրուայ մէջ, մտածեց Սահառունին նայելով նորա աչքերի տխուր արտայայտութեանը և փոքր ինչ գունատուած դէմքին։

—Կարելի՞ է հարցնել, թէ ում նամակի վերայ էք այդպէս մտածմունքի մէջ ընկել։

—Ինչու չէ. գաղտնիք չէ։ Ճանաչո՞ւմ էք իմ մօրաքրոջ որդի Նիկողայոսին։ Ախ, մոռացել էի, որ դուք նորան միայն իմ պատմածովն էք ճանաչում։ Զարմանալի բան է, նա ամենևին չի փոխուել այս երեք տարուայ ընթացքում, որ իրարից բաժանուել ենք. նոյն յափշտակող բնաւորութիւնը, նոյն հաւատը դէպի լաւը, դէպի բարին։ Կուզէ՛ք կարդալ նորա նամակը։

—Ուրախութեամբ։

—Դիտէք, Դէօրգի Ալէքսանդրովիչ, ձեր ու նորա մէջ շատ նմանութիւն կայ, յանկարծ դուրս թռաւ Հեղինէի բերնից։

—Ձի՞շտ, ժպտալով հարցրեց Սահառունին աչքը նամակից բարձրացնելով։ Օ՛հ, Վրթանէսեանը արդէն արտասահմանում է։

—Դիտէք, Նիկողայոսն ու Կատեան իմ միակ բարեկամներն էին։ Բայց միշտ բախտաւոր ու ուրախ Կատեան, չը նայելով իւր անգին սրտին, չէր կարող մնալ վաղաժամանակ դարդոտած որբի դրութեան մէջ։

Վերջին խօսքերը Հեղինէն արտասանեց տխուր ձայնով. նորա գեղեցիկ, սև աչքերը ջրակալեցին և իրանց տխուր արտայայտութեամբ աւելի գեղեցիկ էին երևում երկայն արտևանունքների տակից։

Ո՛րքան գեղեցիկ է տխուր ժամանակը, մտածեց Սահառունին աչքերը գցելով նորա վերայ և նորից խորասուզուեց նամակի ընթերցանութեան մէջ։

—Շատ ճիշտ է գրում նամակի վերջում, թէ երջանիկ են այն բոպէները, երբ որ մարդս ինքն իրան է պատկանում, բայց դժբախտաբար չափազանց հազւադէպ են այդպիսի բոպէները։

—Ինչու որ, Գէօրգի Ալէքսանդրովիչ։

—Որովհետև հանգամանքները, հասարակութիւնը, կեանքի պայմանները քիչ քիչ գերի են դարձնում մեզ, խլում են մեզանից մեր բոլոր ոյժերը, այնպէս որ վերջ ի վերջոյ մեզ զննելով զարմանում ենք տեսնելով, որ մեր առաջուայ բարոյական ոյժերից, մնաւոր հարստութիւնից համարեա ոչինչ չի մնացել, որ մենք առաջուայ համեմատութեամբ բարոյապէս սնանկացել ենք, դառնութեամբ ասաց Սահառունին։

—Ի՞նչ է եղել այսօր ձեզ, Գէօրգի Ալէքսանդրովիչ, դուք, որ երբէք չէք թուլանում, այսօր վերին աստիճանի հիասթափուած էք երևում, իսկ ես մի քիչ առաջ վճռել էի ձեզնից խորհուրդ հարցնել։

Սահառունին մտայոյզ նայում էր կրակին և մի քանի բոպէ անցնելուց յետոյ միայն յիշեց, որ Հեղինէն իրանից ինչ-որ խորհուրդ էր ուզում հարցնել։

—Ներողութիւն, տիկին Հեղինէ, ձեր տխրութիւնը ինձ էլ տխուր մտածմունքների մէջ գցեց... բայց ո՛չինչ, շուտով տխրութիւնս կանցնի... ի՞նչ էիք ուզում ինձնից հարցնել, ես, ինչ որ ձեռիցս գայ, պատրաստ եմ ձեզ համար անելու։

Հեղինէն միանգամից չը պատասխանեց։ Լռութեան մի քանի բոպէում նորա գլխովը հազար ու մի միտք անցաւ, իսկ երբ որ նորա մտայոյզ հայեացքը կանգ առաւ Սահառունու վերայ, որ անթարթ նայում էր իրան, նա ասաց։

—Ես նկատում եմ, տիկին Հեղինէ, որ վերջերքս դուք ձգտում էք գործունեայ կեանքի։ Ես գիտեմ, որ աննպատակ կեանքը ձեզ գոհացնել չի կարող, որ ինչ-որ ձգտում է դէպի առաջ, բայց դուք այնքան համարձակութիւն չունէք, որ յայտնէք այդ. այնպէս չէ՞։

Հեղինէն մտերմաբար ժպտաց և գլխով արեց ի նշան հաստատութեան։

—Միայն մի բանում էք սխալւում, Գէօրգի Ալէքսանդրովիչ. ես չէի ծածկում իմ ձգտումը, չէի լռում, է՛, դորա մասին չարժի երկար խօսել։ Մի բան է ինձ շատ զարմացնում, ինչո՞ւ են տղամարդիկ վերին աստիճանի թշնամաբար վարւում կանանց բարձր ուսում ստանալուն։ Լաւ է, որ բարի մարդիկ դանւեցին, որոնք ինձ իրանց ինամքի տակ առան, բայց քանի-քանիսը գլուխ զնելու ուզ

չունին և չեն կարողանում իրանց համար մի որ և է ապրուստի դուռ գտնել, որովհետև ամեն բան սովորել են ու ոչինչ չեն սովորել: Այ, մեր աշակերտուհիների ամենալաւերից մէկը, որին մի ազգական կին էր պահում, այնքան նեղութիւն է քաշել նորանից, որ վերջապէս նորանից ազատուելու համար պսակուել է մի մարդու հետ, որին նա համարեա ատում է: Խեղճ աղջիկ, գիտէ՞ք... ինչ տանջանքների է մատնել նա իրան...

—Շատ էք յուզուած, տիկին Հեղինէ, մի՛ շարունակէք, հասկանում եմ ինչ էք ուզում ասել: Այո՛, հասարակական իրաւազուրկութիւնը, կնոջ ճնշող սովորութեան լուծը աներևակայելի չարիքներ են ծնում: Այժմ Եւրոպայում շատ են խօսում, գրում այդ հասարակական չարիքի մասին:

—Երևի, մեր հասարակութիւնն էլ անտարբեր չի մնայ դէպի այդ չարիքը, աւելացրեց Հեղինէն:

—Բայց ամենից առաջ, տիկին Հեղինէ, պէտք է հասարակութիւնը պատրաստուած լինի նոր գաղափարներ իւրացնելու: Իսկ մեզնում կրթուած կոչուող կանանց մեծամասնութիւնը, վայր ի վերոյ զարգացումն ունենալով, ինչպէս ամեն մի նոր գաղափարի, նոյնպէս և կնոջ հասարակական դրութեան բարեփոխութեան վերայ նայում է իբրև մի նորութեան վերայ, որով չաշխատում են աչք շլացնել այնպէս ինչպէս նոր գլխարկներով:

—Այնու ամենայնիւ, Գէօրգի Ալեքսանդրովիչ, իմ համոզմունքով, ձեզ նման մարդիկ նորա համար չեն ստեղծուած որ անտարբեր հանդիսականների դեր կատարեն, ոգևորուած ընդհատեց նորա խօսքը Հեղինէն:

Կարծես նորա արտասանած ամեն մի խօսքը խորը զգացմունքից էր ծնուած:

—Ես էլ ձեզ նման, տիկին Հեղինէ, կարծում էի, որ արդարութիւնը միշտ պէտք է յաղթահարի, բայց մի շարք դառն փորձերից յետոյ եկայ այն համոզմանը, որ ընդհակառակն արդարը միշտ ընկնում է, զոնէ այժմ: Մեր հասարակական կազմակերպութիւնը այն աստիճանի խմորուած է հին աւանդութիւններով, որ ոչ մի նոր սկզբունք, ոչ մի լուսաւոր գաղափար չի կարողանում մուտք գործել նորա մէջ:

—Նստա ցաւալի բան է, ասաց Հեղինէն մտահոգութեամբ։

—Օհո՞, ժամի երկուսին քիչ է մնացել, շուտով վերջացրէք ձեր նամակը, հապիր ես էլ փօստան եմ գնալու։

Մինչդեռ Հեղինէն գրում էր, Սահառունին լրագիր էր կարդում և երբեմն աչքը գցում էր նորա արագաշարժ գրչին։

—Ահա վերջացրեցի, ասաց նա, գրելով հասցէն։

—Այսօր էլ չէ՞ք գալ գնանք Սօլօլակի սարը, հարցրեց Սահառունին վերցնելով նորանից նամակը։

—Ուրախութեամբ, ես շատ եմ սիրում այնտեղ զբօսնել։ Ի հարկէ Կատեան էլ մեզ հետ կը գայ։

—Նա տանը չէ. չեմ իմանում մինչև այն ժամանակ կը վերադառնայ թէ չէ։

—Հրէ՛ս Միքայէլն էլ եկաւ. հը՞, կը գաս երթանք սարը զբօսնելու։

—Է՛հ, բան չունե՞ք, մարդ էլ աննպատակ մեն կը գայ. ես որ այդպիսի բանի գլուխ չունեմ, քեզ էլ խորհուրդ կը տամ այսօր չը գնալ, մեզ մօտ գուցէ հիւրեր գան։

Սահառունուն խնդրեցին մնալ ճաշի, բայց նա չը մնաց։

Ամբողջ օրը Սահառունին զբաղուում էր առաւօտեան անցրած քաղցր ժամերի տպաւորութեան տակ։

Ի՞նչ հիանալի կին է Հեղինէն. այդ տեսակ կինս լինէր, էլ ինչ դարդ ունէի, էլ այդպէս ոտ ու ձեռս կապած նստած չէի մնայ։ Է՛յ այդպիսի վառ ձգտումներով կին որ ունենայի, հապար անգամ աւելի ուժեղ, եռանդոտ կը լինէի, մտածում էր նա ինքն իրան՝ նստած իւր առանձնասենեակում։ Պատի ժամացոյցը խփեց գիշերուայ ժամի տասներկուսը։ Մոմը պրծնելու վերայ էր։ Սենեակի մութ պատուհանները ճրագի աղօտ լուսով աւելի մռայլ էին երևում, ձեռան խոշոր փաթիլները ծեծում էին պատուհանը, բայց Սահառունին խորասուզուած մտածմունքների մէջ ոչինչ չէր նկատում, նա մինչև անգամ չը նկատեց որ բաւական ժամանակ, մոմի պրծնելուց յետոյ, սենեակը բոլորովին մթնել էր։

Կառքի դղրդոցը, որ կանգ առաւ նոցա տան առաջ, կարծես յետ բերեց նորան «այն աշխարհից»։

Նոտարով վատեց ճրագը և գնաց կնոջ դէմ։

—Վերջապէս եկար, Կատեա, երեք ժամից աւելի է քեզ սպասում եմ։ Կա՛ց, կառապանին փողը տամ։

—Ինչ արած, Գէորգ, չէին թողնում գամ։

Ինչո՞ւ ես այդքան տալիս կառապանին։

—Չէ՞ որ ժամի տասից կանգնած սպասել է քեզ, Կատեա։

—Ա՛խ, բոլորովին մոռացել էի։ Ի՞նչպէս ուրախ ժամանակ անցրինք. էլ ասել չի լինի։ Զուր չեկար, Գէորգ։ Այդպէս բան կը լինի՞, հոգիս. չէ՞ քեզ վայրենի կ՝անուանեն, լաւ կը լինի՞։ Ա՛յ թէ կը քնեմ, հա, սատիկ յոգնել եմ, ասում էր Կատարինէն վռազ-վռազ հանելով վրայից զուքսեղէնը։ Այդ ժամանակ նա գրպանից ինչ-որ մի թուղթ վայր գցեց։

Սահառունին վերցրեց թուղթը ու տուեց կնոջը։

—Սիս, խանութի հաշիւն է, ասաց նա ցոյց տալով մարդուն գրուած ամբողջ թերթը։ Ի՞նչպէս է եղել, որ գրպանս է ընկել։

—Այդ ե՞րբ ես այդքանը ծախսել, զարմանալով բացականչեց Սահառունին։

—Մի թէ՞ շատ է։

—Ի հարկէ. այդ իմ երկու ամսուայ ռոճիկի չափ է։ Զարմ դիր, Կատեա, պահանջներիդ, տեսնում ես որ չեմ կարողանում լրացնել։ Ե՞րբ պէտք է վերջապէս հասկանաս, որ ես հարուստ չեմ։

Կինը սկզբում յօնքերը կիտեց, բայց երբ որ մարդը խոստացաւ նորա արած պարտքերը տալ այն պայմանով որ էլ նա պարտքով բան չ՝առնի, էլի ուրախացաւ։

—Թէ չէ, Գէորգ, ես ու դու կոտոր ընկած պարտապանների բաժանմունքը կ՝ընկնենք, կատակի զցեց կինը և ընկաւ մարդու վզովը։

Մի քանի քաղցր խօսք ասելուց յետոյ, նա պատկեց քնի։

Սահառունին երկար ժամանակ մնաց նստած և նայելով կնոջ անվրդով քնած դէմքին մտածում էր ինքն իրան.—երջանի՛կ ես։ Կեանքը քեզ ժպտում է, օրերը շարքով իրար յետևից գլորւում են քեզ համար իբրև մի անընդհատ բարիկենդան, գլուխդ չես ցաւացնում զանազան հարցերով։ Ասենք ամեն տեղ էլ նոյնն է, ամենքն էլ իրանց վիճակից գոհ են, ձգտում են որոշ նպատակների, մենակ ես եմ միշտ տժգոհ, միշտ ձգտում եմ ինչ-որ ցնորքի յետևից և կեանքս դատարկ է թւում ին

Փորձերից խրատուելով, Սահատունին օրէցօր աւելի ու աւելի էր սովորում կեանքի պայմաններին և սկսում էր կորցնել իւր առաջուայ հաւատը դէպի մարդիկ։ Հետզհետէ նորա եռանդը սառչում էր և նա համոզւում էր, որ եռանդով չի կարելի այն անել, ինչ որ կարելի է կատարել համբերութեամբ ու զգոյշ գործելով։

XI

Ասունին, Թոմաևն ու Պետրոսեանը նշանակուած ժամին տանից դուրս եկան Սահատունու տունը գնալու, ուր նոքա պէտք է միասին խորհուրդ անէին մի արդիւնագործական ձեռնարկութեան մասին։

Փողոցը դուրս գալու պէս նոքա տեսան մի խումբ օրիորդների, որոնք բարձր-բարձր ծիծաղելով արագ գալիս էին նոցա կողմը։ Ասունին նկատելով նոցա մէջ Միհրանովայի աղջիկներին քայլերն արագացրեց։ Թոմասեանը գնում էր նորա յետևից ուշադրութեամբ նայելով օրիորդներին. իսկ Պետրոսեանցը մնաց տեղումը և ձեռները գրպանը դրած, յօնքերը կիտած գետին էր նայում։

—Ինչի՛ նման է Պետրոսեանը, բարձր ասաց Նադեա Միհրանովան։

—Քա՛հ, քա՛հ, քա՛հ, կչկչացին միւսները։

Նոյայ տարուայ սիւրտուկն էլ որ հագել է, էլ պակաս բան չի մնացել, աւելցրեց նա։

—Գիտես, Նադեա, Պետրոսեանը ում նման է, ծամծմացրեց նոցանից մէկը և ինչ որ քչփչալով ասաց կողքին կանգնած ընկերուհիներին ու սկսեցին հռհռալ։

Օրիորդներից երկուսը, որոնք միւսներից մի քիչ հեռու էին կանգնած, ինչպէս երևում էր, չէին մասնակցում նոցա անքաղաքավարի խօսակցութեանը։ Նոցանից մէկը, փոքրիկ, սիրուն Աննա Գուրգենեանը թէև փոքր ինչ տհաճութեամբ, բայց լուռ ու համեստ նայում էր միւսներին. իսկ միւսը, Սոֆիա Միհրանովան արհամարհական հայեացք էր գցում մէկ այս, մէկ այն օրիորդի վերայ։ Վերջը համբերութիւնը հատնելով, նա մօտեցաւ միւսներին ու խրատելու ձևով սկսեց խօսել.

—Բաւական չէ՞ ծիծաղէք, mesdames, չէ՞ ուրիշներն էլ ձեզ վրայ կը ծիծաղեն։ Այս վերջինը լինի որ ես ձեզ հետ մի տեղ եմ

գնում, ձեզ խայտառակում էք բաւական չէ, հետներդ ման եկողներին էլ էք խայտառակում։

—Քա՛հ, քա՛հ, քա՛հ։ Սորա՛ն տեսէք. մեզ հետ տեղ չի գնա՛յ. ով է իմանում սև հագնենք, ա՛յ, վրայ ուեցին չորս կողմից։

—Զեզպէսների հետ չ՚արժի խօսել։ Աննա, ինչ ենք կանգնել, գնանք։

—Ճիշտ որ, գնանք, mesdames, թէ չէ առաջին ժամին կ՚ուշանանք, մեղմ ձայնով ասաց Գուրգենեանը մօտենալով ընկերուհիներին։

—Անօն էլ նորանից պակաս սուրբը չէ, փէշերքին ծունր պէտք է գնել, ասաց Նադեա Միհրանովան, գիրքը բերնին դրեց քրքիջը պահելու համար ու առաջ գնաց. բոլորն էլ հետևեցին նորա օրինակին։

—Այդ ո՞ւր էք այդպէս շտապում, հարցրեց Թոմաեանը մօտենալով նրանց։

—Դասախօսութիւն լսելու, ասաց Սոֆիան։

Էլ ուրիշ ուր կարող էին գնալ մեր օրիորդները, հեգնեց Ասունին։

—Վաղը կը գա՞ք մեզ մօտ։

—Ի հարկէ, ի հարկէ, Նադեժդա Գրիգորիեւնա։

—Հետներդ Պետրոսեանցին էլ բերէք, նա շատ խելօք մարդ է երևում, ասաց Սոֆիա Միհրանովան։

—Դժւար թէ նա ընդունի ձեր սիրալիր հրաւէրը, պատասխանեց Ասունին։

—Ինչ է, էլի ամբողջ օրը աշխատում է, հարցրեց Սոֆիան։

—Նա լոսաւորում է մեր ազգը իւր յօդւածներով, ծաղրելով աւելցրեց Նադեան։

—Բայց նորա քարոզը մնում է «ձայն բարբառոյ յանապատիս», որովհետև մեզնում դեղեցիկ սեռը հայ լրագիրներ չի կարդում, նկատեց Թոմաեանը։

—Իսկ եթէ իմանային, որքան կը քաջալերէր և աշխոյժ կը տար նորան ձեր համակրութիւնը, ասաց Ասունին։

—Զարմանում եմ, թէ ինչու մեր կանայք անտարբերութեամբ են վերաբերւում ամեն վեմ ու օգտակար բանի։ Նրանցը միայն պարելն ու զուքեւելն է, լուրջ կերպով ասաց Սոֆիան։

Նա բաւական ժամանակից ի վեր լուրջ ու զարդացած օրիորդ էր աշխատում ձեւանալ և այնքան զոհ էր այդ դերից, որ ուշադրութիւն չը դարձրեց իւր վերջին խօսքերից յետոյ ընկերուհիների բարձրացած քրքիջին։

—Դասախօսութեան գնալո՞ւ ենք թէ չէ, տհաճութեամբ հարցրեց Գուրգենեանը։

—Գնում ենք, գնում, պատասխանեցին մի քանիսը։

—Մեզ չը սպասէք, մենք տեղ ունենք գնալու, աղաղակեց Նադեան ու ուրիշ երեք օրիորդների հետ, բարձրաձայն խօսելով ու ծիծաղելով, ճանապարհը ծռեց դէպի Ալեքսանդրեան այգին։

—Ա՛յ թէ ինչումն է կայանում դոցա դասախօսութիւնը, վիճեցաց Պետրոսեանցը հասնելով ընկերներին։

—Միթէ չէիր իմանում, Տիգրան, որ կանանց բարձրագոյն կուրսերի գրաւիչ կողմն այդ է։

—Բայց հօ՛ չես կարող հերքել, Թոմաեւ, որ այժմ մեր օրիորդները աւելի են ձգտում ուսում ստանալու քան թէ առաջ։

—Ճիշտ է, Ալեքսանդր, կասկած չը կայ, որ այդպէս է, բայց ես էլի կ՚ասեմ, որ մեծամասնութիւնը ամենևին ձգտումն չ՚ունի սովորելու, այլ ցուցամոլութիւնից է այդ անում և ի չարն է գործ դնում ծնողների վստահութիւնը, որոնք աղջիկներին իրաւունք են տալիս տանից դուրս գալու, հաւատացած լինելով, թէ նոքա գնում են դասախօսութիւն լսելու և ոչ թէ գժի նման Ալեքսանդրեան այգում վազվզելու։

—Է՛հ, ինչի նման է կանանց այժմեան ուղղութիւնը, բարկացած ասաց Պետրոսեանցը։ Աւելի լաւ է նոքա նահապետական բնական վիճակի մէջ մնացած լինէին։ Ինձ այդպիսի կանայք աւելի են դուր գալիս քան այժմեան իբր թէ կրթուած կանայք, խելքիս էլ որ գցում եմ, էլի այն եզրակացութեան եմ գալիս, որ կեղծ կրթուածները չկրթուածներից աւելի վատ են։

—Այդ օրիորդների մէջ մի շատ համակրելին կար, չե՞ս իմանում ով է, Ալեքսանդր, ես նորան սկի մինչև այժմ չէի տեսել, հետաքրքրութեամբ հարցրեց Թոմաեւը։

—Այն Գուրգենեանի աղջիկն է, որ հերու մեռաւ։ Ռուսաց ամենալաւ պանսիոններից մէկումն է ուսում առել։ Մայրը մի ամիս

կը լինի ինչ Մոսկուայից ամբողջ ընտանիքով եկել է Թիֆլիս։

Պետրոսեանցը ուշադրութեամբ ականջ էր դնում և փոքր ինչ այլայլուեց։

—Ը՛, մտածեց նա, ուրեմն արդէն հեռացել են Ռուսաստանից... ինչպէս է եղել, որ ես չեմ իմացել. հէնց այսօր կերթամ մօտները։

Այսպէս խօսելով նոքա աննկատելի կերպով մօտեցան Սահառունիների տանը։

Սահառունու առանձնասենեակում մի քանի տղամարդիկ նըստած նոցա սպասում էին։ Սկսեցին խորհուրդ անել։ Ինչպէս առհասարակ լինում էր, այս անգամ էլ երկար ու տաք-տաք խօսելուց յետոյ, առանց մի բան վճռելու, ցրուեցին։

Մի քանի ամիս շարունակ Սահառունուն հանգստութիւն չէր տալիս արդիւնագործական ձեռնարկութեան ծրագրի իրագործելու միտքը։ Ծամերով նա զբաղուում էր տեղային անմշակ նիւթերի, նրանց մշակելու ու տեղափոխելու միջոցների ուսումնասիրութեամբ, ամբողջ երեկոներ խորհրդակցում էր ընկերների հետ, բերել էր տալիս այդ հարցին վերաբերեալ գրքեր, մի խօսքով աշխատում էր հարցը ամեն կողմից և հիմնաւորապէս ուսումնասիրել։

Սեփական դրամագլխի պակասութեան պատճառով Սահառունին ուզում էր ընկերութեամբ սկսել գործը, նա ուզում էր հիմնել ակցիոներական ընկերութիւն։ Երբոր նա յայտնում ու մանրամասն բացատրում էր իւր ծրագիրը ընկերներին, նոքա ոչ միայն համաձայնում էին, թէ ձեռնարկութիւնը շահաւէտ է, այլ և ցանկութիւն էին յայտնում մասնակցելու գործին, բայց երբոր Սահառունին բաւական համարելով դատողութիւններով ու խորհրդակցութիւններով զբաղուել ուզում էր դիմել կառավարութեանը նոր ակցիոներական ընկերութիւն հիմնելու թոյլատրութիւն խնդրելու, որի նմանը դեռ չը կար Անդրկովկասում, ընկերները հեռացան նորանից, գործը շատ բիսկի ենթարկուած համարելով։ Գործի մեծութիւնը սկսել էր վախ ազդել նրանց. նոքա երկար ժամանակ տատանուում էին այո-ի և ոչ-ի մէջ. նոցա անվճռականութիւնը պարզ ցոյց էր տալիս, որ նոքա ուզում էին սկզբում հեռուից նայել, տեսնել,

թէ ինչ դուրս կը գայ այդ ձեռնարկութիւնից ու յետոյ, եթէ գործը շահաբեր լինէր, մտնել մէջը։

Տեսնելով որ յոյս չը կայ ընկերների վերայ, Սահառունին աշխատում էր հասկացնել այդ ձեռնարկութեան օգուտը և համոզել մասնակցելու տեղացի դրամատէրներին։

Այդ նպատակով նա լրագրում տպեց մի շարք յօդուածներ տեղային արդիւնագործութեան զարգացման մասին, բայց նորա գրածոր քարոզը բերանացի յորդորներից աւելի յաջողութիւն չ'ունեցաւ։

Սահառունու համար շատ դժուար էր ձեռք վերցնել իւր ծրագրից, որի վերայ այնքան ժամանակ էր կորցրել և որի շահաւէտութիւնը նորա համար ակներև էր, բայց յոյս ունենալով, որ մօտիկ ապագայում կը կարողանայ իրագործել այդ ծրագիրը, նա առ ժամանակ մոռացութեան տուեց այդ և սկսեց զբաղուել աւելի համեստ ձեռնարկութիւնների ծրագիրներով, սակայն համեստ ծրագիրները պակաս դժուարութիւններ չէին ներկայացնում նորան։

Ձեռնհաս մարդիկ տեսականի նկատմամբ գովում էին նորա ծրագիրների մեծ մասը, բայց գործադրութեան տեսակէտից այդ ծրագիրները շատ անյարմարութիւններ ունէին այնպիսի երկրի համար, որ զուրկ էր հաղորդակցութեան յարմար ճանապարհներից։

Սահառունին չը նայելով բոլոր գործ դրած ջանքերին չը կարողացաւ իւր մասնագիտութեան համապատասխան գործ գտնել։ Նա տեսնում էր, որ իւր շրջապատողները չեն հասկանում, թէ մարդ ամեն գործով զբաղուել չի կարող, որ նոցա ծիծաղելի են թւում կոչումն, մասնագիտութիւն բառերը։ Այդ բոլորը ի հարկէ շատ մխիթարական չէր կարող լինել Սահառունու համար։ Անկասկած նա չէր կարող անմտութեան հասցնել իւր համոզմունքը և այն աստիճանի յամառութեամբ գերադասել իւր մասնագիտութեան համապատասխան գործը ուրիշ գործերից, որ համաձայնէր ապարդիւն կերպով գործ դնել իւր աշխատանքը, բայց այն աստիճանի էլ ոսկէ հորթի երկրպագու չէր դարձել, որ հեշտութեամբ, առանց կուի հրաժարուէր այն մասնագիտութիւնից, որին գիտակցաբար և լուրջ կերպով նուիրել էր իւր երիտասարդութեան ամենալաւ տարիները։ Նա երկար ժամանակ կուեց, նորանոր փորձեր արեց և բոլոր փորձերի անյաջողութիւնը միայն կարողացաւ համոզել նորան, որ

կամայ—ակամայ պէտք է թողնել մասնագիտութիւնը և դիմել ուրիշ գործի։ Երկար ու բարակ մտածելուց յետոյ, նա վճռեց մտնել արքունական ծառայութեան, որ գոնէ ժամանակաւորապէս կարողանայ ընտանեկան պահանջները լրացնել։ Նա պաշտօն գտաւ վարչական մասում։

Այդ բոլոր անյաջողութիւնները անշուշտ պէտք է ազդեցութիւն գործէին Սահառունու բնաւորութեան վերայ. նա շատ դիւրագրգիռ դարձաւ, խօսակցութեան եղանակի մէջ նկատւում էր կծու դառնութիւն, շատ անգամ այնպիսի բոպէներ էին լինում, որ նա քիչ էր մնում ինքն իրան վերայ ծիծաղէր։

Որքան ուրախացաւ Կատարինէն իմանալով, որ մարդը արքունական ծառայութեան է մտել, էլ ասել չի լինի։ Նա իսկոյն հագնուեց ու տանից դուրս եկաւ, որ գնայ Ամիրանոֆներին սւ մի քանի ուրիշ ծանօթների յայտնի իւր բախտաւորութիւնը։ Տանից դուրս գալով նա հազիւ թէ մէկ—երկու քայլ էր արել, որ լսեց Տրունիցկու ձայնը և սաստիկ ուրախացաւ։

—Եկատերինա Իւանոֆնա, այդ ո՞ւր էք գնում այսպիսի ժամանակ ու մենակ։

Այդ ասելով Տրունիցկին իջաւ շքեղ շարաբանից և վազեց դէպի Կատարինէն։

—Ախ, ինչպէս վախեցայ, ասաց Կատարինէն կարմրելով։ Երբ էք եկել։

—Երէկ դիշեր։ Ումից վախենաք, ինձնից չը պէտք է վախենաք, Եկատերինա Իւանոֆնա. թոյլ տուէք ինձ ձեզ տեղ հասցնել, ասաց Տրունիցկին շողոմքոր ձայնով ու պինդ սեղմեց Կատարինէի փոքրիկ դեղեցիկ ձեռքը։

—Շնորհակալ եմ, Աղօրֆ Անդրէիչ, զուր էք նեղութիւն կրում, ես մենակ կերթամ, շատ մօտ է։

—Զարմանում եմ, թէ ինչպէս է ձեր ամուսինը ձեզ թողնում, որ տանից մենակ դուրս գաք, ես չէի սիրտ անի։ Նա, ինչպէս երևում է, շատ չի հոգս քաշում ձեր վերայ։

—Սխալւում էք։ Առաջինը, որ նա տանը չէր, երբ որ ես դուրս եկայ, երկրորդ՝ ինչ՞ կարող է պատահել ինձ, միամտաբար հարցրեց Կատարինէն։ Ես ապահովւած եմ, վճռաբար աւելացրեց նա ու ծիծաղեց։

—Գեղեցկութիւնն ու ջահելութիւնը ապահովութեան վատ գրաւականներ են, ասաց Տրունիցկին լուրջ սրտացաւութեան եղանակով։

—Ճիշտն ասած, չեմ հասկանում ձեր ասածը, պատասխանեց Կատարինէն աչքերը կոկէ՛ատաբար ոլորելով։

—Իբր թէ չը գիտէք, որ հեշտութեամբ կարող են սիրահարուել ձեր վերայ, կէս քնքշաբար, կէս խարդախ եղանակով հարցրեց Տրունիցկին։

—Զէ մի ի՛նչ։ Ո՞վ պէտք է սիրահարուի։

—Ո՞վ.—գեղեցկութեան իսկական երկրպագուները, ոգևորուած ասաց Տրունիցկին կուանալով դէպի Կատարինէն։

Նա ուրախ նայեց Տրունիցկուն, յետոյ յանկարծ շփոթուեց, որի վերայ ինքն էլ զարմացաւ, երեսը ծածկեց հովանոցով ու արագացրեց քայլերը։

—Դուք, երևի, կը մասնակցէք ներկայացման, հարցրեց Կատարինէն փոքր ինչ յետոյ ազատուելու շփոթութիւնից։

—Միայն մի դէպքում։

—Ի՞նչ դէպքում, կարելի՞ է հարցնել։

—Եթէ դուք էլ մասնակցէք։

—Ա՛յ քեզ բա՛ն. ե՞ս ինչացու եմ։ Ես ամենևին բեմական ընդունակութիւն չունեմ։

—Ինչ անենք, որ չունէք։ Ինձ միայն ձեր ներկայութիւնն է պէտք, որ միշտ ինձ ոգևորում է։ Կը մասնակցէք, չէ՞։

—Զգիտեմ, խա՛չը, մարդուս հետ խօսեմ, տեսնեմ։

—Միթէ չէք կարող ինքներդ վճռել։ Սարսափելի՛ բան է։

Վերջին խօսքը Տրունիցկին սաստիկ շեշտեց. Կատարինէն ցնցուեց, բայց շուտով հանգստացաւ և կանգ առնելով Ամիրանովների դրան մօտ սկսեց անհամբերութեամբ զանգահարել։ Մնաք բարև ասելիս Կատարինէն սովորականից աւելի պինդ սեղմեց Տրունիցկու ձեռքը։

—Գնանք, Հեղիկ, շուտ արա դլխարկդ դիր, սովորականից դուրս յուզուած ձայնով ասաց Կատարինէն մտնելով սենեակը։ Ը՛հը՛, Գէորգ, դու այստեղ ես, իսկ ես ուզում էի մի դէպքի առիթով փոքրիկ ընտանեկան քէֆ սարքել։

—Հա, ի հարկէ, այնպիսի նշանաւոր դէպք է, որ պէտք է պատշաճաւոր կերպով տօնել, հեգնօրէն ասաց Սահառունին։ Էլ զանազան Նադեա, Զիզի ու Միմիները չեն ծիծաղիլ քո վերայ։ Նոքա աւելի պատուով ու յարգանքով կը վերաբերուեն քեզ իբրև ապագայ գեներ ալշայի։ Ինչ բան է, ինչ։

—Պատիւ ունինք շնորհաւորելու ապագայ գեներ ալշային, աղաղակեցին միւս սենեակից Ասունին ու Թոմաեանը։

—Ա՛յ, սեւերեսներ, դուք էլ էք այստեղ, հա՞. մա՛ր շ, բոլորդ էլ մեզ մօտ։

—Կատեա, դուրսը սարսափելի քամի է, աւելի լաւ չի լինի այստեղ մնանք, ասաց տանտիկինը։

—Ի հարկէ, հաստատեց կնոջ խօսքը Ամիրանովը։

—Լաւ, բայց ես պէտք է մտնեմ կօնդիտերի մօտ, զանազան խմորեղէններ ու քաղցրեղէններ եմ պատուիրել. որ կշռեն պատրաստեն ինձ համար, պէտք է վերցնել։ Ես այս րոպէիս կը վերադառնամ։

Կատարինէն ասաց ու դուրս թռաւ. Ասունին վազեց նորա յետևից։

—Ինչ էք անում դուք ու ձեր գիւղատնտես ընկերը, հարցրեց Ամիրանովը Թոմաեանին։

—Ոչինչ, գործի ենք սպասում։

—Էլի ձեր մասնագիտութեան համապատասխան գործ էք փնտռում, հա՞։

—Այո, անհոգութեամբ պատասխանեց Թոմաեանը, շարունակելով թերթել պատկերազարդ շաբաթաթերթը։

—Իսկ մարդկային ցեղը ուղղելով դեռ չէ՞ք զբաղուել։ Այդ շատ վսեմ զբաղմունք է, ա՞յ հարցրէք Գէորգին, նա գիտի։

Սահառունին ծաղրական ժպիտով նայեց Ամիրանովին. նորա համար այնքան սովորական էին դարձել այդպիսի կծու ակնարկութիւնները, որ աւելորդ համարեց պատասխանել։

—Մինչև մի կարգին գործ գտնելս մասնաւոր դասերով եմ կառավարում, նոյն անհոգութեամբ պատասխանեց Թոմաեանը։

Թոմաեանը մի քանի անգամ ուր հարկն է խնդիրք էր տուել, խնդրելով դիմնազիայում մաթեմատիկայի կամ բնական գիտութիւն-

ների ուսուցչի պաշտօն, բայց անորոշ պատասխան էին տալիս, մէկ խոստանում էին տեղ տալ Նորան երբոր պաշտօն ազատուի, մէկ էլ բոլորովին մերժում էին Նորա խնդիրքը։

—Որ ասում եմ ծառայութեան մտէք, չէք լսում. առաջ մի ծառայեցէք, յետոյ երբ որ յարմար դէպք կը պատահի, էլի կարող էք ուսուցիչ դառնալ, ասաց Ամիրանովը։

—Այդ է էլի. լաւ օգուտ կը տանք հասարակութեանը, եթէ հացթուխը սկսի կօշիկ կարել, իսկ կօշկակարը—հաց թխել, և դեռ զարմանում են, որ մեզնում աչքի ընկնող մարդիկ չը կան, պատասխանեց Սահառունին։

—Ասա խնդրեմ, Գէորգ, աւելի լաւ չէր լինի որ դու սկզբում անէիր այն ինչ որ վերջը ստիպւած եղար անելու։ Եթէ հենց սկզբում մտած լինէիր ծառայութեան լաւ ասպարէզ կ'ունենայիր առաջիդ։

—Ինչի՞ս է պէտք ասպարէզը. եթէ պսակւած չը լինէի, այժմ էլ ծառայութեան չէի մտնի, քչով կը բաւականանայի, ասաց Սահառունին ու նորից մտքումը ղղջաց, թէ ինչու էր այնքան շուտով պսակւում։

Հեղինէն ուշադրութեամբ նայում էր Նորան ու հասկանում էր նրա մէջ կատարւող ներքին կռիւը։ Նա ուզում էր հանգստացնել, մխիթարել Նորան, նա աչքով էր անում Նորան, որ հետը գնայ միւս սենեակը, բայց Սահառունին չէր հասկանում, այն ժամանակ Հեղինէն ձեռքը կպցնելով Նորա ուսին ասաց.

—Գնանք, մի քիչ մեզ դանք դահլիճում, այստեղ շատ են ծխել։

Սահառունին ուրախութեամբ կատարեց Նորա ասածը։

—Գէորգի Ալեքսանդրովիչ, անկեղծ կը պատասխանէք, եթէ մի բան հարցնեմ։

—Ի հարկէ, եթէ հարցը անձնապէս ինձ կը վերաբերի։

—Այո, այո, ձեզ։ Ասացէք խնդրեմ, դուք շատ տժգոհ էք, որ ծառայութեան էք մտել, չէ՞։

Սահառունին լուռ գլխով արեց։

—Դուք գիտէք, տիկին Հեղինէ, որ իմ այժմեան դրութեան մէջ այդ միակ ելքն էր։

—Ուրեմն էլ ինչու էք յուսահատւում։ Ձեզ այդ սկի չի սազում։ Դուք չէիք ասողը, թէ մարդ եթէ լաւ հասկանայ իւր պար-

տականութիւնը, ամէն գործում կարող է բաւարարութիւն գտնել։

Հեղինէն այնպիսի ջերմ սրտացաւութեամբ նայեց Սահառունուն, որ նա ակամայ բռնեց նորա ձեռքը և զգացած ասաց.

—Շնորհակալ եմ, տիկին Հեղինէ. դուք իրաւունք ունէք ինձ յանդիմանելու։ Ով որ վայելում է ձեզ պէս կնոջ համակրութիւնը, նորան աններելի է տժգոհ լինել իւր վիճակից։

—Ճի՞շտ, ժպտալով հարցրեց Հեղիրէն, ձեռքը կամաց ազատելով նորա ձեռքի միջից։

Մի քանի րոպէ նոքա լուռ քայլում էին։

—Տեսէք, Գէօրգի Ալեքսանդրովիչ, կատակով ասաց Հեղինէն, եթէ մէկ էլ ձեզ տեսել են այդպէս մթնոգած, կարող էք այդ համակրութիւնից զրկուել։ Կ'ուզէք ձեզ յիշեցնեմ ձեր ասածներից շատերը, աւելի լրջօրէն աւելցրեց նա։

—Ի՞նչ, օրինակ։

—Շատ բան. երբ որ տեղը գայ կ'ասեմ, իսկ այժմ մի ուրիշ բանի վերայ խօսենք։

—Ոչ, տիկին Հեղինէ, ես չեմ ուզում, որ դուք սխալ կարծիք ունենաք. թող ուրիշները իմ մասին ինչ ուզում են կարծեն, բայց դուք... դուք պէտք է հասկանաք ինձ։ Ճիշտ է, ես շատ բան էի ասում, երբ որ յոյս ունէի կրթուած փոքրամասնութեան հաստատակամութեան ու պարտաճանաչութեան վերայ։ Իսկ այժմ ես համոզուեցի, որ այդ փոքրամասնութիւնը վախենում է կռուից, հեշտութեամբ հաշտւում է կեանքի ներկայ պայմանների հետ ու բողոքելու ամենևին ցանկութիւն չունի։

—Ուզում էք ասել, թէ քանի որ այդ այդպէս կը շարունակուի չի կարելի յուսալ, որ արդարութիւնն ու ճշմարտութիւնը յաղթանակ տանեն։

—Նա՛տ պիտի սպասենք դորան։ Հին հասարակութիւնը զգալով, որ իւր ոյժի հիմքը ստութիւնն է սիստեմաբար հալածում է ճշմարտութիւնը իբրև իւր բնական թշնամուն։ Ահա, տիկին Հեղինէ, թէ ինչով պէտք է դլխաւորապէս բացատրել այն բոլոր ապօրինութիւններն ու անարդարութիւնները, որոնք ամէն ժամ, ամէն րոպէ վրդովում, զայրացնում են մեր բարոյական զգացմունքը։

Սահառունին զարմանալով նկատում էր, որ ինքը ոչ մի ժա-

մանակ նոյնպէս պերճախօս չի լինում ինչպէս տիկին Ամիրանեանի հետ մենակ մնացած ժամանակ։

Նոքա այնքան գրաւուել էին խօսակցութեամբ, որ չը նկատեցին Կատարինէի ու Ասունու ներս գալը։

—Դուք, երևի, կնոջ աշխատանքի մասին էք խօսում, ծիծաղելով նկատեց Ասունին։

Գիտէք, Եկատերինա Իւանովնա, ձեր ամուսինը ձեզ համար գործ է գտել։

—Շատ շնորհակալ եմ, ես առանց այն էլ շատ գործ ունեմ. վաղը երկու-երեք այցելութիւն պէտք է անել, վաղը չէ միւս օր մի փունջ պատրաստել տիկին Ն-ի տօնին ընծայելու համար...

—Ո՛րքան գործ է, երբ պէտք է այդքանը պրծնես, կծու հեգնութեամբ ասաց Սահառունին կտրելով կնոջ խօսքը։

Կատարինէն նեղացաւ ու դուրս գնաց դահլիճից։ Ասունին իսկոյն դուրս պրծաւ նորա յետևից ու կատակներով ուրախացրեց նորան։

Թէյից յետոյ Ասունին առաջարկեց տիկիններին գնալ թատրոն։ Մարդիկը մի մի պատճառ գտան ու չը գնացին հետները։

—Էլի տրամադրութիւններդ տեղը չէ, Եկատերինա Իւանովնա, ճանապարհին դիմեց նորան Ասունին։ Ձեր սրտի բաղձանքը, փառք Աստծու, կատարուեց, Գէորգը մնաւ ծառայութեան, էլ ի՞նչ էք ուզում։ Ապագայում դուք ինձ համար հովանաւորութիւն, պրոտէկցիա կը կազմէք ու կը տեսնէք, թէ ես ինչ օրինակելի առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ կը լինեմ իմ գեներալշայի մօտ։

—Թողէք, թէ Աստուած կը սիրէք, ձեր կատակները։ Չը գիտէք ի՞նչ է, որ Գէորգը, իւր տարօրինակ բնաւորութեան պատճառով, յաւիտեանս յաւիտենից միևնոյն պաշտօնում բանդ կը լինի։ Ա՛յ ինչ եմ ասել Միխայիլ Պետրովիչին, յետևիցը որ ընկնես չես հասնի, այնպէս է առաջ գնում։ Գիտես, Հեղինէ, այս քանի օրս լսեցի, որ Միխայիլ Պետրովիչը շուտով կը ստանայ համարեա գեներալական պաշտօն, Ն-ձէի պաշտօնը։ Այդ բոպէին Կատարինէն նախանձի նման մի բան զգաց դէպի Հեղինէն։ Շատերը յարձակւում են Միխայիլ Պետրովիչի վերայ նորա համար, որ նա աշխատում է ստանալ այդ պաշ-

ոնը, իսկ ես ընդհակառակը կարծում եմ, որ շատ լաւ է անում. Նա գիտի, որ իշխանութիւնը ուժգոհ է Ն-ձէից. միւնոյնն է նա վաղ թէ ուշ պէտք է զրկուի այդ պաշտօնից, և շատ խելօքութիւն է անում, որ օր առաջ աշխատում է իւր գլխի ճարը տեսնելու ամէն միջոց գործ դնել իւր նպատակին հասնելու համար։ Երանի՛ քեզ, Հեղինէ։

—Դու էլ բան գտար նախանձելու, տհաճութեամբ պատասխանեց Հեղինէն ու մտածմունքի մէջ ընկաւ։

—Ի հարկէ, քո մարդը բոլորի հետ լաւ է, դու չես զգում այն բոլոր անբաւականութիւնները, որոնց ես եմ ենթարկւում։

Այդ բոպէին Կատարինէի սրտում զայրոյթ խաղաց դէպի իւր մարդը և ցանկութիւն ծագեց կծելու ընկերուհուն։

Մի մարդու հետ Գէորգը գործ չի ունեցել, որ մէջները անբաւականութիւն չը ծագի. քէֆ է էլի։ Այ, այժմ էլ, եթէ նա լինէր, անպատճառ կ'ասէր, որ նա չի վերցնի ահագին ընտանիքով ծանրաբեռնւած ու աղքատ մարդու ձեռքից խլած պաշտօնը։

—Շատ էլ ճիշտ կասէր, տխրութեամբ նկատեց Հեղինէն։

—Զարմանալի կերպով ես դատում, բարկացած կտրեց նորա խօսքը Կատարինէն։ Ն-ձէն վաղ թէ ուշ պաշտօնից զրկւելու է, մէկն ու մէկը պէտք է ստանայ նորա պաշտօնը, միւնոյնը չէ թէ ով կը ստանայ, Ալեքսանդր Վասիլիչ։

—Երկուսդ էլ ճիշտ էք ասում, ամենքդ ձեր տեսակէտից, ծիծաղելով պատասխանեց Ասունին։ Այ հասանք թատրոնին։

Թատրոնում Կատարինէի տրամադրութիւնը շատ շուտով փոխուեց. մուզիկան և բազմութիւնը միշտ նորա վերայ լաւ էին ազդում, բացի դորանից նա այնտեղ պատահեց Տրունիցկուն։ Իսկ Հեղինէն շատ տխուր էր։ Կատարինէն այն աստիճան գրաւուել էր զարմութեամբ, որ երեկոյթի վերջում միայն նկատեց իւր ընկերուհու տխրութիւնը և շատ զղջաց, որ նորա սիրտը կոտրել էր։

XII

Սահառունու ծառայութիւն մտնելուց երեք-չորս շաբաթ յետոյ իշխան Նակունին նոր պաշտօն ստանալով պատրաստւում էր գնալ Ս. Նահանգը։

—Հեղինէ, շուտ արա, հագնուիր, բայց որքան կարող ես լաւ հանգնուիր, քեռոնց մօտ երեւի շատ հիւրեր կը լինին, լսեց առանձնասենեակից Ամիրանովի ձայնը։

—Այս բոպէին, Միշէլ։

Քառորդ ժամից յետոյ նա հագնուած պատրաստ էր։ Սև մետաքսեայ հագուստը շատ սազում էր Հեղինէին. նորա գեղեցկակազմ իրանը մետաքսեայ քիփ շրջապատի մէջ աւելի նազելի էր երեւում, իսկ շորի սև դոյնից աւելի աչքի էր ընկնում նորա կաշու սպիտակութիւնն ու թարմութիւնը։ Ամիրանովը չը կարողացաւ իրան պահել և պարզ ցոյց տուեց իւր յափշտակութիւնը ու ինքնագոհ սրտով կնոջը նստացրեց կառքը։

Հեղինէն վազեց ուղղակի քեռու առանձնասենեակը։

—Գնա, Մայիկօյին զարթեցրու ու ասա, որ շուտով կառքը կը բերեն, ուրախ-ուրախ ասաց Եակունին համբուրելով քրոջ աղջկայ ճակատը։ Թշնամիս կնոջ հետ ճանապարհ չը գնայ, «մինչև Նուշանը զարդարուի ժամը կ'արձակուի»։ Ա՛յ ինչ եմ ասել քեզ, Հեղիկ, դու քո հանգուցեալ մարդ նման կորիճ ես, իսկոյն երեւում է, որ իմ արիւնից ես։

Երբ որ Հեղինէն գնաց, Ամիրանովը ակնածութեամբ մօտեցաւ Եակունուն, հարցրեց թէ ինչպէս է նորա առողջութիւնը և քաղաքավարի կերպով միաքը գցեց իւր խնդրածը։

—Հա, Ելիզաւետա Բօգդանովնային ասացի. նա խոստացաւ ի նկատի ունենալ այդ տեղը քեզ համար։ Հէ՛յ գիտի ժամանակ, կէկէլօների թագաւորութիւնն է, բացականչեց գեներալը ու որքան ուժումը կար քրքջաց։ Այս էլ Մայիկօն։ Հը՞, գնո՞ւմ ենք, ամեն բան պատրա՞ստ է։

—Պատրաստ է, պատրաստ, հոգիս, պատասխանեց իշխանուհին յոգնած ձեւացնելով իրան և մոերմաբար մեկնեց ձեռքը Ամիրանովին, որ նա ակնածութեամբ համբուրեց։

—Ես բոլորովին զոհ եմ իմ Հեղինէիս վիճակից։ Ես «պատեղից հանգիստ սրտով եմ հեռանում, Միխայէլ Պետրովիչ, Հեղինէիս բախտը ձեզ նման վստահելի մարդու ձեռքում տեսնելով։ Մեզանում այժմ կարգին երիտասարդների ճրագով պէտք էման գալ։

Ամիրանովը երախտագէտ սրտով գլուխ տուեց և սեպհական արժանապատուութեան զգացմունքով նայեց շորս կողմը։

Կէս ժամում դահլիճն ու ընդունարանը լցուեցին Շակունու բարեկամներով ու ծանօթներով։ Շատ չ'անցած Ելիզաւետա Բօգդանօվնա Միհրանօվան էլ եկաւ։ Տեսնելով Ամիրանօվներին, նա մօտեցաւ նրանց ու մի կողմը քաշեց։

—Լսե՞լ էք, Միխայիլ Պետրովիչ, որ ձեր քեռին՝ Ուբարովը գնում է արտասահման բժշկուելու։

—Միթէ՞։

—Ձեռքիցս եկածն արեցի, որ ձեզ հետ հաշտուի, բայց չը կարողացայ նորան կոտրել։ Միակ յոյսս Հեղինէի վերայ է։

—Ի՞նչ, համարեա կոպտութեամբ հարցրեց Հեղինէն ու այլայլուեց։

—Հա, հոգիս, վատ չէր լինի եթէ դուք գնայիք Ուբարովի մօտ։

—Որ սպանեն էլ, նորա մօտ չեմ երթայ։

Մարդը խստութեամբ նայեց նորա վերայ։

—Շատ զուր, ասաց Միհրանովան սրտացաւութիւն արտայայտող ձայնով։ Դուցէ վախենում էք ուրիշները կարծեն, թէ ժառանգութիւնը ստանալու համար շողոքորթում էք նորան, բայց սխալւում էք։ Դուք գիտէք որ նա հիւանդոտ մարդ է, ունեցածն էլ այնքան է, որ հազիւ իրան զլուխը պահի ու բժշկութեան վերայ ծախսի։ Ինչու էք այդպէս միամիտ-միամիտ գործ բռնում։ Մենք բոլորս էլ մի օր պէտք է մեռնենք, ոչ մէկս էլ չենք իմանում թէ գլխներովս ինչ է գալու, ինչու պէտք է խռով սրտով մեռնենք։ Մի թարսուէք, Հեղինէ, հոգուդ մեղք մի արէք։

Հեղինէն, Միհրանովայի վերայ կասկածոտ ու արհամարհական հայեացք գցելով, վերկացաւ ու գնաց իշխանուհու մօտ։

—Ես ձեզ չէի ասում, Ելիզաւետա Բօգդանօվնա, որ դորա վերայ յոյս դնել չի կարելի, ասաց Ամիրանովը բարկութիւնից շրթունքները կրծելով։

—Հա, գիտեմ, ձեր կինը շատ տարօրինակ մարդ է... գիտէք, ձեր քեռին իւր տարած դրամագլուխը շահացրել է, այնպէս որ համարեա երեք անգամ շատացել է, դարձել է մօտ երկու հարիւր հազար։

—Հ'ըմ... գիտեմ, մտահոգութեամբ արտասանեց Ամիրանովը։ Ուրեմն մարդս իսկապէս աչք ունի քեռու ժառանգութեան

վերայ, մոռացում էր Հեղինէն այն ժամանակ, երբոր Ամիրանովը քչփչում էր Միհրանովայի հետ, և հազիւ էր կարողանում երեսանց իրան հանգիստ ցոյց տալ։

Փիչ քիչ յիշում էր Հեղինէն Թամարայի խօսքերը, այրու ու Ամիրանովի դաղտնի քչփչոցներն ու խորհրդաւոր լռութիւնը, նոր հասկանալով այդ բոլորի իսկական նշանակութիւնը։ Էլ կասկած չը կար, որ նորա մարդը ստորանալ էր ուզում քեռու առաջ նորա հարստութիւնը ստանալու համար... Հեղինէի արիւնը խփեց գլխին, սիրտն այրւում էր ամօթից ու զայրոյթից... Զորս կողմը խօսում ծիծաղում էին, բայց նա ոչինչ չէր լսում և անհամբեր սպասում էր այն բոպէին, երբոր մարդու հետ մենակ կը մնայ։ Վերջապէս իշխանն ու կինը նստեցին կառքը և ճանապարհ դցողների կառքերը, սլացան նոցա կառքի յետևից։

Առաջին կայարանում բոլորը իջան կառքերից։ Սեղանը ծածկուեց շիշերով ու քաղցրեղէնով. շամպայն գինու շիշեր էր որ բաց էին անում, «կենաց» էր որ առաջարկում էին, բարեմաղթութիւններ էր, որ անում էին։ Բոլորն էլ ցաւելով էին բաժանւում իշխանի ու իշխանուհու հետ հաւատացած լինելով, որ նոցա գնալովը իրանք զրկւում են Թ-սի ամենահիւրասէր ընտանիքներից մէկից։

Հեղինէի հետ մնաս բարև անելիս իշխանուհին հարկաւոր համարեց մի քանի կաթիլ արտասուք թափել և հաւատացնել ներկայ եղողներին, որ իւր համար շատ ծանր է բաժանւել Հեղինէից, որին ինքը այնքան սիրել ու փայփայել է։ Հեղինէի մարդու գնալուց յետոյ քեռակինը սկսել էր աւելի սէր ու գորով արտայայտել դէպի նա։ Հեղինէն, որ առաջ նորա համար բեռն էր, այժմ բացի ուրախութիւնից նորան ուրիշ ոչինչ չէր պատճառում։ Իշխանուհին այնպիսի զարմութեամբ էր լսում երբ որ ծանօթները գովում էին իւր արած ընտրութիւնը ու գովաբանում էին Ամիրանեաններին, կարծես նոցա բարօրութիւնը ինքն էր ստեղծել։

Կէս օրւայ արեգակը ցրւեց ամպերը և պայծառ ճառագայթներով լուսաւորեց սարերը, գետն ու այգիները։ Ուրախ էր բնութիւնը ուրախ էին մարդիկ, մինչև անգամ Հեղինէի դարդոտ սիրտն էլ մի քիչ բացւեց։ Մի ժամ առաջ եկած գարնանային անձրև ջրջնքել էր գետինը, մաքրել ու հովացրել օդը։ Եկաւ հրաժեշտի

ժամը, սլացաւ իշխանի ու իշխանուհու կառքը։ Հեղինէն մտայոյզ նայում էր նոցա յետևից մինչև որ բոլորովին ծածկուեցին ճանապարհի ոլորանների յետևը։ Այն ժամանակ միայն նա աչքերը շուռ տուեց դէպի մարդը այնպիսի հայեացքով, կարծես ուզում էր թափանցել նորա հոգու խորքը։

Ճանապարհ գցողները վերադառնում էին կայարանից։ Մի քանի րոպէ Ամիրանեանները լուռ էին. վերջապէս Հեղինէն, որ մինչև այն ժամանակ հազիւ էր կարողացել իրան զսպել, ընդհատեց լռութիւնը և յայտնեց մարդուն իրան տանջող մտքերը։

Ամիրանովը նորա վրայ սառը հայեացք գցեց։

—Միշէլ, ոչինչ չես պատասխանում, այդ ի՞նչ կը նշանակի, սաստիկ յուզած սրտով հարցրեց Հեղինէն ու բռնեց մարդու ձեռքը։

Անկեղծ ասա, աչք ունե՞ս քեռուդ հարստութեան վերայ։

Կնոջ տօնը և դէմքի արտայայտութիւնը համոզեցին Ամիրանովին, որ նա անպատճառ պէտք է իրան արդարացնի նոցա առաջ։

—Ախ, հոգիս, միթէ՞ ես պէտք է երդում ուտեմ, որ դու ասածիս հաւատաս. այդ էր պակաս, զգացուած ձայնով ասաց Ամիրանովը ու ձեռքը դրեց սրտին։

—Դու, ի հարկէ, ձեռնամուխ չես լինի Ուբարովի աղջկայ իրաւունքներին, չէ՞։

—Ի՞նչ աղջկայ, ինչե՞ր ես ասում, ես քո ասածիցը գլուխ չեմ հանում, քեռին երբ է պսակուել, որ աղջիկ ունենայ։ Ա՛խ, հա՛, յիշեցի... բայց զարմանում եմ, թէ ինչպէս ես դու իմացել այդ։

Հեղինէն ասաց, որ չէ յիշում թէ ով է իրան այդ ասել։

—Էհ, հոգիս, ով է այդպիսիներին զաւակ համարում։ Ով է իմանում Ուբարովը էլ վաղուց մոռացած լինի, որ աշխարհիս երեսին այդպիսի մի աղջիկ կայ։ Իսկ ես ինդրում եմ, որ երբէք այդ հարցի մասին չը խօսես։ Հիմիկուայ ժամանակները այդպիսի յարաբերութիւնները խայտառակ բան են։ Պաշտպանել ապօրինի զաւակներին կը նշանակի քաջալերել անառակներին և զրկել մարդկանց ամենամեծ բարիքից—ընտանեկան կեանքի սրբութիւնից։ Ասենք ես ինձ համար սուրբ պարտականութիւն եմ համարում դէպքը եկած ժամանակը հովանաւորել, պաշտպանել այդ խեղճ աղջկան։ Եթէ ես խիստ մ օ ր ա լ ի ս տ լինէի այդպէս չէի վար-

ուիլ, բայց դժբախտաբար սիրոս խելքիս չի լսում։ Զարմանում եմ, թէ ինչպէս դու մինչև այժմ չես կարողացել ինձ ճանաչել։

Ամիրանովի տօնը, ըստ երևոյթին, այնքան վճռական և անկեղծ էր, որ կնոջ բոլոր կասկածները փարատեցին։ Նա հանգստացաւ և բռնեց մարդու ձեռքը։

—Ներիր, Միշէլ, որ սիրոս կասկած էր ընկել։

Ամիրանովը լուռ սեղմեց նորա ձեռքը և պինդ փաթաթուեց վերարկուի մէջ։ Խորասուզուած իւր մտածմունքների մէջ, նա անշարժ նայում էր հեռու տարածութեանը։ Իսկ Հեղինէն գրաւուած զարնանային բնութեան գեղեցկութեամբ, մէկ՝ նայում էր աղմկալից գետին, մէկ՝ նորա ափերի այգիներին, որոնց նորափթիթ ծառերը զարդարուած էին հազար ու մի գունաւոր ծաղիկներով, մէկ՝ թարմ դալարով ծածկուած սար ու ձորին։

Տուն եկան։ Հեղինէն նստեց պատշգամբում, իսկ Ամիրանովը գնաց իւր առանձնասենեակը, ուր մի քանի բոպէից յետոյ մտաւ Սահառունին։

—Վերջապէս դու տանն ես, Միքայէլ։ Այս երրորդ անգամն եղաւ, որ քո մօտ եմ գալիս։

—Դիտեմ ինչու եկած կը լինիս, անհոգութեամբ ասաց Ամիրանովը։ Ձեռք քաշիր ինձանից, եղբայր. ախր ի՞նչ էք իմ օձիքս բռնել, բացի ինձանից ուրիշ մարդ չը կայ ի՞նչ է, չարացած աւելցրեց նա։

—Է՛, ում դիմենք, դու ասա։ Ասունին անընդունակ է երկար ու բարակ, լուրջ բացատրութիւններ տալու, հասկացնելու ես էլ յաջողութիւն չեմ ունենայ, որովհետև, ինչպէս քեզ լաւ յայտնի է, ինձ խառվարար են համարում. էլ իմ ճանաչածներից ուրիշ ոչ ոք չի մնում, որ կարողանար գլուխս բերել այդ գործը։

—Ա՛յ Թոմաևը շատ յարմար է, նա խելքը գլխին տղայ է, փոքր ինչ մտածելուց յետոյ առաջարկեց Ամիրանովը։ Ճիշտ է, նա շատ չի հետաքրքրուում մեր հասարակական գործերով, բայց դժուար չէ նորան գործի հետ ծանօթացնել։

Սահառունին գիտէր, որ Թոմաևը ընկերների խաթիր ամեն բան կանի, բայց անյարմար էր համարում այդ գործը կատարել տալ նորան, որովհետև նա դեռ քիչ էր յայտնի հասարակութեանը։

—Չէ, նա էլ չի կարող։ Բացի քեզանից, Միքայէլ, էլի կրկնում եմ, ոչ ոք չի կարող յուսալ, որ հաստատ կը յաջողեցնի։ Դու լաւ ծանօթ ես մեր գործի հետ, զգոյշ ես, խօսելում վարպետ ես, հասարակական դիրք ունիս և որ գլխաւորն է իշխանութիւնը քեզ սիրում է։ Գնա, ի սէր Աստուծոյ, մեր բոլորի յոյսը քո վերայ է։

Ամիրանովը վարանում էր և երկար ժամանակ հաւանութիւն չէր տալիս։

Սահառունին ու Ամիրանովը այնքան տաք վիճում էին, որ չը նկատեցին Հեղինէի ներս մտնելը։ Նա չ'ուզելով խանգարել նոցա վէճը, կամաց մօտեցաւ բազմոցին ու նստեց։ Երբ որ Սահառունին վերկացաւ գնալու, ասելով որ միւս առաւօտ կը մտնի իմանալու Ամիրանովի վճիռը, նա մօտեցաւ նորան։

—Ո՞ւր, Գէօրգի Ալէքսանդրովիչ, նստեցէք մի քիչ։

Սահառունին զարմացաւ և ուզում էր ասել՝ ես կարծում էի թէ դուք տանը չէք։

Երբոր գնացին դահլիճը, Սահառունին աչքերը յառեց նորա տխուր դէմքին և կարծես հասկանալով նորա մտախոհութեան պատճառը, մի կողմ քաշեց նորան ու կամաց ասաց։

—Մի վրդովուէք, Միքայէլը այժմ բացառեց, բայց վաղը կը համաձայնի. մենք էլ եթէ նորա տեղը լինէինք դժուար թէ մի անգամից համաձայնէինք։

- Ճի՞շտ, հարցրեց Հեղինէն մի քիչ ուրախանալով և մտերմաբար սեղմեց նորա ձեռքը։

—Հաւատացնում եմ ձեզ, տիկին Հեղինէ, որ նա կը կատարէ մեր խնդիրքը։

—Ես միշտ հաւատում եմ ձեզ, Գէօրգի Ալէքսանդրովիչ։

Հեղինէն մինչև դուռը ճանապարհ դրեց Սահառունուն ու գնաց մարդու մօտ առանձնասենեակը։

Սահառունին չէր սխալւում հաւատացած լինելով որ Ամիրանովը կը կատարի իրանց խնդիրքը։ Նա համոզւած էր, որ նա չափազանց ինքնասէր լինելով և մեծ նշանակութիւն տալով հասարակական կարծիքին, չի ուզիլ պարզ ցոյց տալ, որ անտարբեր է դէպի հասարակական շահերը։

Ամիրանովների տանից Սահառունին գնաց «Եւրոպա» հիւրա-

նոցը, որտեղ նորա ընկերները հաւաքուած անհամբեր սպասում էին նորան։

Մի քանի ժամ ընկերները խօսում ու վիճում էին այդ գործի մասին։ Այնտեղից դուրս գալով Սահառունին մէկ—երկու տեղ էլ մտաւ նոյն գործի պատճառով և վերջապէս յոգնած ժամի տասին վերադարձաւ տուն։

—Վերջապէս երկար, յանդիմանութեամբ հանդիպեց նորան կինը սրահում։

—Այդ ո՞ւր այդպէս զուքուած։

—Մոռացե՞լ ես՝ որ խոստացար ինձ հետ կրուժոկ գնալ։ Ես գիտէի, որ մոռացած կը լինես։

—Հոգիս, յետաձգենք միւս անգամուան, ես այսօր շատ եմ յոգնել։

—Ա՛յ քեզ բա՛ն, չէ, ես անպատճառ պէտք է գնամ։

Կարո՞ղ էր միթէ Կատարինէն չը գնալ այդ երեկոյ, երբ որ արդէն մի քանի օր առաջ Տրունիցկու հետ իրար խօսք էին տուել գնալ։

—Ձեռ ուզում՝ մի գայ, ես մենակ կերթամ, վճռեց Կատարինէն ու շուռ գալով մէջքն արեց մարդուն։

—Է՛յ, Աննա, ձայն տուեց նա աղախնին, պատուիրիր թող ֆայէտոն բերեն։

—Սպասիր, ես այս բոպէին կը պատրաստուեմ, ասաց նորան Սահառունին։

—Ի՛նչ լաւ մարդ ես եղել, սկսեց համբուրել նորան Կատարինէն։ Խօսք եմ տալիս քեզ մի ժամից յետոյ տուն վերադառնալ, իսկ եթէ Ասունին այնտեղ լինի, դու կարող ես իսկոյն տուն գալ։

Կէս ժամ անցած նոքա արդէն կրուժոկումն էին։

—Ա՛, վերջապէս եկաք, դիմաւորեց. Կատարինէին Տրունիցկին ու հրաւիրեց կադրիլի։

—Միթէ՞ դուք դեռ դատա չունէք, հարցրեց Կատարինէն զարմանալով և ուրախանալով։

—Զարմանում եմ, թէ որքան քիչ էք ճանաչում դուք ինձ, ճարպիկ շարժմունքով կուանալով դէպի նորա կողմը կիսաձայն ասաց Տրունիցկին։ Աստուած վկայ, խորհրդաւոր կերպով աւելացրեց նա, ձեզ սպասելով այնքան ձանձրանում ու տանջւում էի, որ չէի իմանում ո՛ր դժոխքը գնամ, իսկ այժմ ..

—Իսկ ա՞յժմ, խորամանկ ժպիտով հարցրեց Կատարինէն։

—Օ՛, այժմ ես եօթներորդ երկնքումն եմ. կարծես հրաշքով չորս կողմն լոյս սփռուեց։

Կատարինէն դէմքը ուրախութիւնից փայլեց և նա շփոթուած, թեւն անցնելով կաւալերի կուռը հարցրեց։

—Զը գնա՞նք ապակիապատ սենեակը։

—Ուրախութեամբ. քաղցր tête á tête-ը հազար պարից լաւ է։

Նոքա գնացին արևելեան ճաշակով սարքուած շքեղ առանձնասենեակը. այնտեղ ոչ ոք չը կար։

—Ինչի՞ վրայ էք միտք անում, Ադոլֆ Անդրէիչ։

—Սիրահարուածները միշտ այսպէս են լինում, մանաւանդ երբ որ խիստ ամուսինները նայում են նոցա վրայ պատի տակերից, թեթև հոգոց քաշելով ասաց Տրունիցկին։

Ընդհակառակը, իմ ամուսինը շատ բարի մարդ է։

—Դուք ինքներդ էիք միշտ զարմանալով ասում, որ ես շատ լաւ եմ կարողանում հասկանալ մարդու հոգին, նորա աչքերին նայելով։ Իմ կարծիքով ձեր մարդը ընդունակ չէ ոչ ոքի սիրելու։

—Օ՛հ, այդպէս մի խօսէք նորա մասին, աղաչելով ու կարմրելով ընդհատեց նորա խօսքը Կատարինէն։

Տրունիցկին շնորհալի կերպով կուացաւ դէպի նա և ոգևորուած ասաց.

—Իմ սուր դիտողութեան առաջ թագուն բան չի կարող մնալ. դուք ի՞նչ կարող էք բախտաւոր լինել այդպիսի անսիրտ մարդու հետ. նա՛ չը պիտի լինի ձեզ նման գանձի տէրը։ Ձեր սուր խելքը, ձեր գեղեցկութիւնն ու հրեշտակային բարութիւնը ո՛ւմ ասես կը գժացնեն, իսկ նա միշտ թթուած, միշտ տխուր է, այդ նորա աչքին չի երևում, նորա համար քիչ է։

Կատարինէն տարակուսած և աւելի ու աւելի յուզելով, ականջ էր դնում նորան, ուզում էր պատասխանել, բայց ոչինչ չը գտաւ ասելու։

Նա չէր հասկանում թէ ինչ է եղել իրան, սիրտը սաստիկ խփում էր. զգալով, որ Տրունիցկու ասածները ճիշտ են, նա շփոթուած գլուխը կախ զցեց։

Տրունիցկին ուրախանում էր տեսնելով Կատարինէի շփոթու-

թիւնը. անառակ կեանքի բազմաթիւ փորձերից նա գիտէր, որ այդ լաւ նշան է։

—Ներեցէք, սիրելի Եկատերինա Իւանովնա, նկատելի յուզմունքով շշնջեց նա, եթէ ես մի քիչ վշտացրեցի ձեզ, բայց ինձ համար այնքան թանկ է ձեր բախտաւորութիւնը, որ ես հոգով սրտով կուզէի ձեզ յաւիտեանս բախտաւոր տեսնել։ Տեսնում էք որքան անշահասէր եմ ես, ամեն բան ձեզ համար, և ոչինչ ինձ համար։

Թեթևամիտ Կատարինէն գրաւուեց այդ խօսքերով, նորա աչքերում արտայայտուեց ուրախութիւն և երախտագիտութիւն։ Տրունիցկին այդ երեկոյ ոչ մի ժամանակ այնքան գեղեցիկ չէր երևել Նորան ինչպէս այդ րոպէին։

Կադրիլից յետոյ շատերն եկան ապակիապատ սենեակը, այնպէս որ էլ անյարմար էր այնտեղ շատ մտերմաբար խօսել։ Կատարինէն վերկացաւ ու մօտեցաւ մի քանի ծանօթ կանանց, բայց չէր կարողանում նոցա հետ խօսել, ձանձրանում էր։ Իսկ Տրունիցկին, պատահելով իւր ընկերներից մի քանիսին, հետները գնաց սեղանատուն, նա կարողանում էր իւր նման ընկերներ ջոկել և մարդկանց վերայ մի անգամ նայելով վճռել, թէ իւր հաւատիցն են թէ ոչ։ Մեծ հարստութեան տէր չը լինելով նա մի անգին ընդունակութիւն ունէր,—հեշտ բարեկամանում էր հարուստ ֆրանտների հետ ու միշտ քէֆ անում նրանց հաշուով։

—Հը՞, Ագոլֆ, ինչպէս տեսնում եմ գործներս յաջող է գնում la belle Cathèrine-ի մօտ, նկատեց ընկերներից մէկը հրաւիրելով բոլորին նստել սեղանի շուրջը։

—Օ՛, certainement, նա արդէն ինքն է սկսում սիրաքտիկ գալ։ Որ յաղթութիւնը տարել եմ, կասկած չը կայ։ Ուզում էք գրազ գանք, ասաց Տրունիցկին իրար յետևից մի քանի գաւաթ թունդ խերես կոնծելով։

Հը՞, բարեկամ, այս ամիս քէֆ ենք անում քո հաշուով, էհ, ուրախ—ուրախ գիմեց նա իւր կողքի նստողին։ Դու երէկ շտօսում չորս հազար ռուբլի ես տարել։

—Պարտք շատ ունեմ. պէտք է պարտքերս տամ։

—Է՛հ, բարեկամ, ամօթ չի՞ այդպիսի չիմար բաների վերայ ուշադրութիւն ես դարձնում։ Ո՞ր կարգին մարդը հիմիկուայ ժամա-

նակները պարտք չունի։ Քէֆ արա, զարմացիր քանի ողջ ես, կը մեռնես, թող այն ժամանակ ժառանգներդ վճարեն։

Սեղանակիցները բարձր քրքիջ արձակեցին։

Վճռելով թէ որտեղ և ինչպէս պէտք է վերջացնեն երեկոն ուրախ երիտասարդները ամենալաւ տրամադրութեան մէջ վերկացան սեղանից։

Այդ ժամանակ Կատարինէն մի տեսակ քաղցր ինքնամոռացութեան մէջ սենեակից սենեակ էր թափառում, կարծես բան կորցրած լինէր։

—Գէորգ, գնանք տուն, սաստիկ յոգնել եմ, ասաց նա պատահելով մարդուն։

Մարդը իսկոյն կատարեց նորա խնդիրքը։

Մարդու հետ մենակ մնալով Կատարինէն իրան վատ էր զգում, նա կարծես մի բանից քաշւում էր, ամաչում էր և խուսափելով նորա հայեացքից, այնպէս արագացրեց քայլերը, որ նա հազիւ էր կարողանում նորա յետևից հասնել։ Բայց երբոր նստեցին կառքը, շրջապատող խաւարը նորան մի քիչ հանգստացրեց և նա սկսեց մտածել կատարւած գէպքի մասին։ Մի ժամ առաջ նորա լսած խօսքերը մի առ մի զարթնում էին նորա յիշողութեան մէջ և նորա սրտում ծնում էին մինչև այն ժամանակ չը զգացւած յուզմունքներ։

Իսկ Սահառունին ուրիշ կերպ էր մեկնում նորա տրամադրութիւնը։

—Շատ ուրախ եմ, սիրելիս, որ այս զարմանութիւնները սկսում են քեզ ձանձրացնել, երկար լռութիւնից յետոյ քաղցրութեամբ ասաց նա բռնելով կնոջ ձեռքը, որ նա իսկոյն հեռացրեց նրանից։

Շատ չեմ ասում, մի շաբաթ խաղաղ կեանք վարիր տանը և կը տեսնես, թէ որքան քեզ անյայտ քաղցրութիւն ունի այդ կեանքը։

Կատարինէն իւր մտքի հետ ընկած անուշադիր թողեց մարդու խօսքերը։

Այո, ճիշտ էր ասում, որ սա անսիրտ է, մտածում էր նա կուչ գալով կառքի մի անկիւնում։

—Ինչու ոչինչ չես պատասխանում, Կատեա։

Կինը կարծես բարկանալով որ մարդը ձեռք չի քաշում իրանից, երբ որ ինքը ամենևին տրամադրութիւն չունէր խօսելու զայրացած ասաց.

—Ինձ մնում է միայն մեծահոգութեամբ քեզ թողնել վայելել այդ քաղցրութիւնը, իսկ ես միտք չունիմ վաղաժամանակ պառաւել։

—Բայց գիտես, Կատեա, որ եթէ միայն զարմուհիների յեսուից ընկնելու լինենք, երիտասարդ հասակն անցնելուց յետոյ կեանքներս շատ դատարկ ու անտանելի կը լինի։

—Զեռք քաշիր ինձանից քո գուժկան մարդարէութիւններով, ասաց Կատեան այնպիսի թշնամական տօնով, որ մինչև այդ ժամանակ երբեք չէր լսել նորա ձայնում։ Դու ինքդ ճգնաւորի նման ես ապրում, ուզում ես բոլորն էլ քեզ նման լինեն, բայց, կը նեբես, ես չեմ ուզում քո օրինակին հետևել։

—Ներիր, հոգիս, ես քեզ բարկացնելու համար չասացի։ Իմ ուզածս միայն այն է, որ դու այդպիսի կանխակալ կարծիքով չը վերաբերուես կեանքի այն կողմին, որ դու ճգնաւորական ես անուանում։ Բաւական է որ ուզես...

—Հերի՞ք է, Գէորգ, բարկացած կարեց նորա խօսքը կինը աւելի կուչ գալով անկիւնում։

Կնոջ այդ օրւայ խօսակցութեան ձևը, որ առաջին անգամն էր տեսնում Սահաւունին, շատ վատ տպաւորութիւն գործեց նորա վերայ։ Բազմաթիւ փորձերից համոզուելով, որ իւր քարոզները քամու նման կնոջ մի ականջովը մտնում են միւս ականջովը դուրս գալիս, նա աւելի լաւ համարեց լռել և նոքա երկուսով փոխադարձաբար իրարից դժգոհ և ամենավատ տրամադրութեան մէջ հասան տուն։

XIII

Միւս օրը առաւօտեան վաղ Սահաւունին ստացաւ Ամիրանովից այս բովանդակութեամբ մի տոմսակ. «Կը կատարեմ խնդիրքդ միայն այն պայմանով, որ էլ այսուհետև ինձ այդպիսի դժուար գործեր չը յանձնէք»։

—Կինն է ազդել, ուրախացաւ մտածելով Սահաւունին ու գնաց Ամիրանովների մօտ։

Հեղինէն ուրախ-ուրախ դիմաւորեց նորան։

—Միքայէլը շուտով տուն կը գայ։

—Գիտեմ որտեղ է։ Տեսաք, ճիշտ էի ասում, տիկին Հեղինէ։

—Ես էլ հաւատացած էի, ժպտալով պատասխանեց նա և իւր ծով աչքերով մտերմաբար նայեց Սահառունուն։

Նորա լաւ տրամադրութիւնը ազդեց Սահառունու վրայ, նորա տրամադրութիւնն էլ լաւացաւ։ Կարծես Սահառունու համար Հեղինէին ուրախ ու երջանիկ տեսնելուց մեծ զւարճութիւն չը կար աշխարհումն։ Նա ուրախութեամբ գործ կը դնէր ձեռքից եկած ամեն հնարք, որ Հեղինէն իւր կեանքումը դարդ ու կսկիծ չը տեսնէր։ Ի՛նչ քիչ բան է հարկաւոր, որ սա ուրախանայ, մտածում էր Սահառունին նայելով նորա վերայ։

—Գէօրգի Ալէքսանդրովիչ, գնացէք Կատեային բերէք մեզ մօտ ճաշի, սթափեցրեց նորան մտախոհութիւնից Հեղինէի ձայնը։

Սահառունին գնաց կնոջը բերելու։ Սահառունին դուրս եկաւ թէ չէ, մտաւ Պետրոսեանը, որ Ամիրանովի Ն-ի հետ ունեցած տեսակցութեան հետևանքն իմանալու համար արդէն երկու անգամ այդ օրը եկել հարցրել էր։ Հեղինէն շատ համակրում էր Պետրոսեանին իբրև հասարակական շահերի անձնուէր մարդու, չը նայելով որ մի քանի առիթ էր ունեցել համոզւելու, որ նա իւր մարդուն չի սիրում։ Հազիւ կարողացաւ նորան համաձայնեցնել, որ մնայ ճաշելու։ Շատ չ'անցած Սահառունին ու կինն էլ եկան։ Ամիրանովը սովորականից ուշ տուն վերադառնալով, սաստիկ վատ տրամադրութեան մէջ, պատմեց թէ որքան ծիգ է թափել գործին լաւ ելք տալու համար։

—Փառք Աստծու. բացականչեց Պետրոսեանը չափազանց ուրախանալով և մոռանալով այդ բոպէին Ամիրանովի բոլոր պակասութիւնները։ Իսկ ես քիչ էր մնացել յուսահատւէի. կարծում էի որ էլ ճար չը կայ, դպրանոցի բարեփոխութեան համար մեր գործ դրած բոլոր ջանքերը զուր կանցնեն։

—Որ այդպէս է, Միխայիլ Պետրովիչին պէտք է վարձատրել, շուտով ճաշ տալ ուտի, նկատեց Կատարինէն։

—Շնորհակալ եմ, Եկատերինա Իւանովնա, որ կնոջս միտքը գցեցիք. ես սաստիկ յոգնել եմ ու սովածացել։

Հեղինէն ուրախ-ուրախ վազեց կարգադրութիւն անելու և մի քանի բոպէից յետոյ եկաւ նրանց խնդրելու, որ նստեն ճաշի։ Ճաշը շատ ուրախ անցաւ։

Միայն Ամիրանովի քէֆը տեղը չէր։ Ճաշը վերջանալիս տանտիկինը առաջարկեց Կովկասում լուսաւորութեան գործի ծաղկման համար խմել և երգել վրացերէն «մրավալժամիէ», որ բոլորն էլ ուրախութեամբ ընդունեցին։ Սուրճից յետոյ նա նստեց դաշնամուր ածելու. իսկ Ամիրանովը յարմար բոպէից օգուտելով աննկատելի կերպով քաշուեց իւր առանձնասենեակը։ Նա սաստիկ մտատանջութեան մէջ էր։ Մի ժամի չափ հանգստանալուց յետոյ, նա դուրս եկաւ տանից ու երկար ման գալուց յետոյ մտաւ մէկ—երկու այնպիսի ծանօթների մօտ։

Ամբողջ երեկոն Հեղինէն սաստիկ լաւ տրամադրութեան մէջ էր. երեսից սկի վայր չէր գալիս հրեշտակային ժպիտը, աչքերը փայլում էին անհուն բարութեամբ. գուցէ երբէք նորա դէմքը այնքան գեղեցիկ չէր եղել ինչպէս այդ երեկոյ։

Սահառունին լուռ, զմայլած նայում էր նորան ու մտածում. ա՛յ կատարեալ և անապատ էակ, և ո՛րքան հիանալի է այսօր։ Յետոյ նորա հայեացքը կանգ առաւ կնոջ վերայ, որ կանգնած պատուհանի մօտ մտքամոլոր նայում էր կառքով անց ու դարձ անողներին, և մտքումը համեմատեց նրանց.—այն ամենը ինչոր մէկի համար մխիթարութիւն և, կարելի է ասել, կեանքի նպատակն է միւսի համար կօպէկի նշանակութիւն չունի։

—Գէօրգի Ալէքսանդրովիչ, ասացէք Կատարինէին մի բան երգի, սթափեցրեց նորան մտախոհութիւնից տանտիկնոջ ձայնը։ Այսօր սիրուս շատ է ուզում երաժշտութիւն լսել։

—Ինչ երգեմ, անսովոր մտախոհութեամբ հարցրեց Կատարինէն անհոգութեամբ հնչեցնելով մի քանի ակկորդներ։

—Իմ սիրած ռոմանսը, որ դու այս քանի օրերս սովորեցիր ածել, ասաց մարդը մօտենալով դաշնամուրին։

—Տիգրան Աւետիչ, բաւական է կարդաք, եկէք դուք էլ լսէք Կատեայի երգելը, ձայն տուեց Հեղինէն Պետրոսեանցին, որ խորասուզուել էր լրագիրների ընթերցանութեան մէջ։

—Այս բոպէին, տիկին Հեղինէ, քիչ է մնում վերջացնեմ. մի հետաքրքրական յօդուած եմ կարդում։

—Հէրի՛ք է, հէրի՛ք, Տիգրան Աւետիչ, հաղիւ էինք այսօր ձեզ ուրախ տրամադրութեան մէջ տեսել, իսկ դուք էլի ուզում էք

մթնդել, մատը թափ տուեց նորա վերայ Հեղինէն ու զօռով մօտ բերեց դաշնամուրին։

Դա հօ՛ էլ բան ու գործ չունի, հազիւ սորան նորան հայհոյի, վերայ բերեց Կատարինէն, Գէորգի սիրտն էլ դա է միշտ կոտորում։ Նեղութիւն կրէք, պարոն, նստեցէք կողքիս, այդ թող լինի ձեր պատիժը։

Պետրոսեանցը դեռ բերանը չէր բաց արել պատասխանելու, որ դահլիճը թնդաց Կատարինէի քաղցր ձայնից։

Կատարինէի երգեցողութիւնը նորա հոգու ճիշտ պատկերն էր։ Նորա ձայնը շատ նուրբ ու քնքոյշ չէր, չէր թափանցում մարդու հոգու խորքը, չէր դողում երգողի զսպուած յուզմունքից։ Նորա ձայնը զանգակի նման էր հնչում, նորա երգեցողութեան թեթև ելևէջները նման էին թիթեռնիկի շնորհալի ու չարաճճի թռիչքներին։

Երգեցողութիւնը վերջացաւ։ Հեղինէն հիացած էր։

—Վաղուց, Կատեա, դու այսօրուայ նման լաւ չէիր երգել, ասաց Սահառունին ու պատուհանից նայեց դուրս։

Ահա Ալեքսանդրն ու Թոմասեան էլ երկու օրիորդների հետ գալիս են այստեղ։

Տանտիկինը դուրս վազեց սրահը հիւրերին դիմաւորելու,

—Տանից դուրս եկայ մանգալու, մի երկու ժամ չափեցի-չափչըփեցի փողոցները, տեսայ որ բան չի դուրս գալիս, ձանձրութիւնս չի անցնում, վճռեցի գալ ձեզ մօտ, տիկին Հեղինէ, ուրախ-ուրախ ասաց Ասունին։

—Ինչ խորամանկն է. ինչո՞ւ չէք ասում, որ Կատարինէի գեղեցիկ ձայնն է ձեզ բերել այստեղ, ծիծաղելով վրայ բերեց Աննա Գուրգենեանը և արագութեամբ հանելով գլխարկն ու ձեռնոցները գրկեց Հեղինէին, յետոյ էլ Կատարինէին։

—Թէկուզ հենց ձեր ասածը լինի. Եկատերինա Իւանովնան գիտի, որ ես Նորա տաղանդի ամենաթունդ երկրպագուներիցն եմ։

—Դու այն պատմիր, Ալեքսանդր, թէ ինչպէս մենք գալիս ճշմարտութեան շաւղից հանեցինք երկու օրիորդի, անսովոր ոգևորութեամբ ասաց Թոմասեանը հիացած նայելով օրիորդի շնորհալի շարժմունքներին։

—Պատմէ՛ք, տեսնենք, շատ հետաքրքրական է, բացականչեցին բոլորը միաձայն։

—Դէ լսէ՞ք։ Տեսնեմ երկու ջահել օրիորդ երկու կապոց զիրք ձեռներին, լուրջ դէմքով ուր-որ վազ-վազ գնում են։ Հազիւ հազ յեռեւներիցը հասնելով, հարցնում եմ, «ո՞ւր»։ «Օ՛ֆ, թողէք, գնում ենք դրադարան, գործ ունենք, յետոյ էլ պէտք է գնանք դասախօսութիւն լսելու», պատասխանեց նոցանից մէկը։ (Այդ ասելով Սուսնին աչքի տակով նայեց Սօֆիա Միհրանօվնային)։ Ես ի հարկ է ձեռք չը քաշեցի նրանցից, ընկայ յետեւներիցը, նրանք աւելի թունդ կրկնեցին, ես Ղոյնպէս. սկսեցի դէսից-դէնից խօսել, անցայ կանանց հարցին, ճաւեր էր որ ասում էի. չէ՛, տեսնեմ օրիորդներս քայլերը մի քիչ կամացացրին և վերջապէս, իրանք էլ չը նկատեցին թէ ինչպէս ճանապարհները ծռեցին ու այստեղ դուրս եկան։

—Ընդունեցէք ուրեմն շնորհակալութիւնս, ասաց տանտիկինը։

Սօֆիա Միհրանօվան բռնկեց ու զայրացած նայեց Սուսնուն։

Իսկ Աննան որ շարունակ ծիծաղում էր, պատասխանեց.

—Դուք ուզում էիք մեզ ամաչացնել, Ալեքսանդր Վասիլիչ, մինչեւ ես պէտք է ասեմ, որ շատ ուրախ եմ այստեղ գալուս համար։ Հեղինէն դիտի, որ ինձ համար նորա մօտ գալուց մեծ զարճութիւն չը կայ։

—Աւելորդ եմ համարում հաւատացնել տիկնոջը, որ ինձ համար թանկ է նորա բարեկամութիւնը, բայց պէտք է խոստովանեմ, որ ես մի բոպէով եմ եկել։ Ես եկայ ձեզնից վերցնելու ձեր խոստացած գիրքը։ Իսկ դուք, պարոն Սուսնի, աշխատում էք ձեր օգին բացատրել...

—Լա՛ւ, լա՛ւ, ինչու ես բարկանում, Սօֆիա, Ալեքսանդր Վասիլիչը կատակ է անում, ինչպէս առհասարակ, քաղցրութեամբ կտրեց նորա խօսքը Կատարինէն բռնելով նորա ձեռքը։

Պետրոսեանցը, որ միւս սենեակից դիտում էր այդ բոլորը, մտածում էր նայելով Աննա Դուրգենեանին. «Զարմանալի նմանութիւն, մանաւանդ երբ որ ծիծաղում է»։ Ինչպէս երեւում էր ինչ-որ մի յիշողութիւն նորան տխուր մտածմունքների մէջ գցեց, որ ընդհատեցին Սահառունին ու Կատարինէն հրաւիրելով նորան ընդունարանը ընդհանուր ուրախ զրոյցին մասնակցելու։

Մտնելով ընդունարանը Պետրոսեանցը մօտեցաւ օրիորդ Գուրգենեանին և իրան յատուկ անշնորհքութեամբ ողջունեց նրան քթի տակին ինչ-որ փնթփնթացնելով։

—Դուք մեզ բոլորովին մոռհան էք արել, մտերմաբար ասաց օրիորդը։ Մայրիկը նեղացել է ձեզանից։

—Չեմ հաւատում. նա այնքան բարի է, որ դորա համար չի նեղանայ մարդուց։

—Իսկ ձեզ էլ հենց այդ է պէտք, որ բարի է, ուրեմն պէտք է ի չարը գործ դնէ՞ք նորա բարութիւնը։ Իսկ հայերէնի դասերը, ե՞րբ ենք սկսելու։

Երբ որ ուզէք, Աննա Արտեմիևնա, որքան շուտ սկսենք այնքան լաւ կը լինի, ի հարկէ։

—Լա՛ւ, ուրեմն վաղը կսկսենք, համաձա՞յն էք։

—Ամենամեծ ուրախութեամբ, շա՛տ լաւ, շա՛տ լաւ... ուրախանալով մրթմրթացրեց Պետրոսեանցը ու գնաց միւս սենեակը, որտեղ Սահառունին ու Ասունին տաք—տաք խօսում էին դպրանոցի բարեփոխութիւնների մասին, որոնք շուտով պէտք է հաստատութիւն ստանային։

Դահլիճից լսւում էր դաշնամուրի ձայնը. Կատարինէն ու Աննան չորս ձեռքով ածում էին ինչ-որ օպերայի ուվերտիւրա։ Թոմաևը որ բաւական լաւ հասկանում էր երաժշտութիւնը և սաստիկ սիրում, ուշադրութեամբ լսում էր յենւած բազկաթոռի մէջքին։ Ցանկարծ ուվերտիւրայի կէսին Կատարինէն կանգ առաւ ասելով որ էլ մատները չեն շարժւում։

—Եկատերինա Իւանովնա, ինչ էք անում, այդպէս բան կը լինի՞, ամենալաւ տեղումը կանգ առաք, շարունակեցէք, խնդրում եմ, աղաչում էր Թոմաևը։ Ես չէի իմանում, Աննա Արտեմիևնա, որ դուք այդպէս հիանալի ածել գիտէք, դարձաւ նա օրիորդին։

—Զարմանում եմ, իսա՛չը, թէ ինչպէս է Աննան ամեն բան անելու ժամանակ գտնում, ասաց Կատարինէն։ Դասախօսութիւններ է լսում, եղբայրների դասերը սերտացնում է...

Աննան կարմրեց ու ձեռքը դրեց Կատարինէի բերնին, բայց նա չարչարելով ազատւեց ու շարունակեց.—պարապում է երաժշտութեամբ, կար ու գործով, դասերով, և որ գլխաւորն է չը նայելով դորան էլի միշտ ուրախ, միշտ զւարթ է։

Այդ ասելով Կատարինէն վեր թռաւ տեղիցը ու գնաց Միհրանովայի մօտ, որ թերթում էր պատկերազարդ հանդէսները։

—Ախ, ինչ տեսակ մարդ է Կատարինէն, բարկացած ու ամբիծ կարմրած ասաց Գուրգենեանը և երեսը ձեռքերով ծածկելով ուզում էր փախչել սենեակից։

—Ո՞ւր, ո՞ւր, ծիծաղելով ճանապարհը կտրեց Թոմաևը։ Ես առանց Եկատերինա Իւանովնայի ասելու էլ ճանաչում եմ ձեզ այդ կողմից։ Դուք, կարծեմ, այստեղ շուտ-շուտ էք գալիս, չէ՞, Աննա Արտեմիևնա։

—Այո։ Ոչ մի տեղ այնքան ուրախ չեմ լինում որքան այստեղ ու Սահառունիների տանը. թէ այստեղ թէ այնտեղ ինձ միշտ ուրախութեամբ ու սիրով են ընդունում։ Ես շատ սիրում եմ թէ Կատարինէին, թէ Հեղինէին, երկուսն էլ ամեն կողմից հիանալի կին են։

Այդ ասելիս Գուրգենեանի դէմքը փայլում էր անկեղծութեամբ ու բարութեամբ։

—Ի՞նչ համակրելի օրիորդ է ձեր Աննան, շշնջեց Թոմաևը Կատարինէին, երբ որ նա մօտեցաւ իրան։

Նա խորամանկ ժպիտով թափ տուեց մատը Թոմաևի վերայ։

—Ես վաղուց եմ նկատել, որ ձեր սիրտը անզգայ չի դէպի օրիորդը։

—Բան չունէ՛ք, աւելի լաւ է գնանք լսենք պարոնների փիլիսոփայութիւնները։

Այդ ասելով Թոմաևը բաց արեց դուռը և բոլորը մտան առանձնասենեակը։

Սոֆիա Միհրանովան վերկացաւ գնալու։

—Կացէք, ո՞ւր էք շտապում, շուտով մարդս կը գայ, ձեզ ճանապարհ կը դցի, կը հասցնի տուն։

—Խաչը, չեմ կարող մնալ։

—Ի հարկէ, մայրիկը կը բարկանայ, մէջ ընկաւ Սասունին։

—Հա՛, հա՛, հա՛։ Մայրս սկի չի էլ իմանում թէ ուր եմ գնում, ուր չեմ գնում։ Իմացած կացէք, որ ինձ ազատութիւն է տուած։ Սկզբում ճիշտ է մի քիչ ճնշում էի զանազան նախապաշարմունքների շնորհիւ, բայց այժմ արդէն մայրս իմ ազդեցութեան տակ է գտնուում։

—Որքան բախտաւոր էք դուք, ասաց Սահառունին հեգնութեամբ, քանի՛ քանի՛ կանայք ու աղջիկներ նախանձելիս կը լինեն ձեր բախտին։

—Այդ բախտաւորութիւնը ձեռք բերելուց հեշտ բան չը կայ, Գէորգի Սլէքսանդրովիչ, պէտք է միայն հաստատ բնաւորութիւն ունենալ. հաստատակամութեամբ մարդ կեանքում շատ արգելքներ է յաղթում, ասաց Միհրանովան խօսքը բացառապէս Սահառունուն ուղղելով և աշխատելով որքան կարելի է լուրջ տօնով արտասանել իւր փիլիսոփայական նախադասութիւնները։ Ձեզ ի հարկէ՛ պէտք է յայտնի լինի, որ մարդկային յառաջադիմութեան ասպարէզում բոլոր մեծ և փառաւոր գործերը կատարուել են հաստատակամութեան շնորհիւ, որ արհամարհելով ամէն տեսակ խոչընդոտներ անյողդողդ դիմել է իւր ընտրած նպատակին։ Վերցնենք օրինակի համար Կոլումբին, Կոպէրնիկին, Գալիլէյին, Հուսին և այլն և այլն։

—Զրաղացի ոտը վերկալան, ալիւր է որ կ'աղայ, կամաց ասաց Թոմաեւը կողքի նստած կանանց։

—Դո՞ւք էլ, մատը թափ տուեց նորա վերայ Գուրգենեանը։

—Իսկ քո մայրը քո իշխանութեան տակ չէ՞, Աննա, հարցրեց Հեղինէն բռնելով նորա ձեռքը։

—Դժբախտաբար, ո՛չ։

—Զարմանալի է, ի՛նչպէս է որ ձեր ընկերուհին իւր հաստատակամութեան մի մասը ձեզ չի տուել, կամաց հարցրեց նորան Թոմաեւը։

Սոֆիան գրաւած խօսակցութեամբ և զբաղուած փքոցուուցց դարձուածքներ փնտրելով, չէր նկատում ոչ ներկայ եղողների ծաղրը, ոչ էլ իւր խօսակցի, Սահառունու, հեգնական տօնն ու երկդիմի ժպիտը։ Կատարինէն, որ խօսակցութեանը համարեա չէր մասնակցում, երևակայութեամբ տեղափոխուեց Միհրանովների երեկոյթը։

Պատրաստուելու ժամանակն է, մտածեց նա նայելով իւր փոքրիկ ժամացոյցին և մօտեցաւ մարդուն։

—Գէորգ, ես պէտք է տուն գնամ, կ'ուզես դու մի քիչ էլ մնայ այստեղ։

—Չէ՛, ինչու, ես էլ կը գամ։

—Ախ, քիչ էր մնում յետ ընկնէի դասախօսութիւնից, բաց-

կանչեց Միհրանովան։ Զորս կողմդ ուր որ նայում ես, Գէորգ Ալեքսանդրովիչ. տգիտութեան խաւարով է պատած. դասախօսութեան անունը լսելիս մարդ ծարաւի նման վրայ է պրծնում։

—Ի հարկէ, ի հարկէ, մանաւանդ որ մեր նիւթապաշտ դարում այդ շատ հազւադէպ է, կօմիկական լրջութեամբ նկատեց Ասունին։ Մոռացե՞լ էք, Սօֆիա Գրիգորիևնա, որ այսօր ձեր jour fixe-ն է։

—Այդ ինձ շատ քիչ է հետաքրքրում, արհամարհանքով պատասխանեց Միհրանովան։ Ա՛յ ես ուզում եմ շուտով գրականական երեկոներ սարքել, այն ժամանակ հետաքրքիր կը լինի։ Յոյս ունեմ, պարոններ, որ դուք չէք հրաժարւի ինձ օգնելուց.

Ասունին ու Հեղինէն իրար նայեցին ծաղրական հայեացքով։ Եթէ ուրիշները զարմանում էին տեսնելով որ Սօֆիան, որ առաջ ուրախ ժամանակ անցկացնելու ու լաւ հաղնուելու համար մեռած էր, այդպէս սաստիկ փոխուել է, Ասունին ու Հեղինէն հեշտ բացատրում էին այդ փոփոխութեան պատճառը։ Նոքա գիտէին, որ Սօֆիան տեսնելով, որ իւր քոյրը Նադեան իրանից աւելի գեղեցիկ ու ճարպիկ լինելով աւելի յաջողութիւն ունի հասարակութեան մէջ, աւելի է գրաւում կաւալերների ուշադրութիւնը ու համակրութիւնը, վճռել է ուսումնական և նոր ուղղութիւն ունեցող օրիորդ ձևանալ, որ գոնէ դորանով գրաւի ուրիշների ուշադրութիւնը։

—Կրկին ձեզ շնորհակալութիւն եմ, յայտնում, Եկատերինա Իւանովնա, որ միտքս գցեցիք թէ պէտք է գնալ, ասաց Միհրանովան գլխարկը վերցնելով։

Ես չէի ուզում ոչոքի միտքը դցել, ինձ պէտք էր գնալ, ես էլ ասացի, պարզասրտութեամբ ծիծաղեց Կատարինէն։ Կուզէք ձեզ կառքով տեղ հասցնեմ։

—Մեծ ուրախութեամբ։ Միթէ՞ դուք մնում էք, Աննա։

—Նա, կմկմացրեց Գուրգենեանը։

Միհրանովան կարեկցաբար նայեց ընկերուհուն և ուսերը վեր քաշելով գնաց Կատարինէի հետ։

—Ա՛յ, որքան համբերութեան պաշար ունէք հիմա դուրս հանէք, ասաց Թոմաևը Կատարինէի ականջին։

Սահմանուն գնալիս սովորականից մտերմաբար մնաս բարև

արեց Հեղինէին. բայց իսկոյն զղջաց, որ չը կարողացաւ զսպել իրան։

Ամբողջ ճանապարհին Կատարինէն կարծես մոքով վերացել, երազում էր, մարդու բոլոր հարցերին այնպէս էր պատասխանում, որ երևում էր թէ ուշքը գլխին չէր։

Տուն գնալով Կատարինէն սկսեց զբաղուել զգեստաւորութեամբ, տուալետով, այս անգամ կարծես նա սովորականից աւելի ուշադրութեամբ ու ջանքով էր հագնուում։ Յետոյ նստեց պատուհանի մօտ անհամբեր, սպասելով Ասունուն։

—Ահա վերջապէս եկաւ։

Այդ ասելով նա ճնաս բարև արեց մարդուն, մեքենայաբար համբուրեց նորա ճակատը և վազեց դուրս։

—Կատեա, ժամի քանիսին գամ քեզ բերելու։

—Չի ուզի, ձայն տուեց նա սանդուղքների վրայից, Ամիրանովենք երևի այնտեղ կը լինեն, իսկ եթէ նրանք էլ չը լինեն Ալէքսանդր Վասիլիչի հետ կը գամ։

Տրունիցկին Կատարինէի դէմքից ու քաղցր հայեացքներից հասկացաւ, որ նորա սիրտը արդէն գրաւուած է։

Նա տարաւ նրան մի հեռու սենեակ, որտեղ ոչ ոք չը կար, բռնեց ձեռքը և ոգևորուած ասաց.

Որքան հրաշալի, սքանչելի էք դուք այսօր, ma belle Catherine կեանքս կը զոհէի եթէ Դուք ինձ պատկանէիք։

Կատարինէն չը թողեց. որ Տրունիցկին ձեռքը տանի շրթունքներին, զօռով դուրս քաշեց նորա ձեռքից և վազեց դահլիճը ու սկսեց վալս պար գալ.—վալսի պտոյտներով կարծես ուզելիս լինէր խեղդել սիրտը յուզող զգացմունքները։

—Սաստիկ գունատուել էք, Եկատերինա Իւանովնա, մի քիչ հանգստացէք, չէ՞ որ ձեզ արգելուած է շատ պար գալ, սրտացաւութեամբ նկատեց Ասունին։

—Բոլորովին մտքից ընկել էր, Ալէքսանդր Վասիլիչ, գնանք տուն, գլուխս սաստիկ պտոյտ է գալիս...

Կէս ժամից յետոյ Կատարինէն արդէն տանն էր։ Մարդը սաստիկ զարմացաւ և ուրախացաւ տեսնելով նորան։

—Ինչո՞ւ այսքան շուտ վերադարձար, Կատեա։

—Էհ, դու այնտեղ չէիր, սիրտս տխրեց, վերկացայ եկայ, բոլորովին հանգիստ կերպով պատասխանեց Կատարինէն ու ընկաւ մտածմունքի մէջ։

Տեսար, ես սկի չէի էլ կարող երևակայել, որ կարող եմ այդքան լաւ զսպել ինձ, մտածեց Կատարինէն և նորա դէմքի վերայ երևաց մի տարօրինակ ժպիտ։

Կատարինէի վարմունքի և խօսքերի մէջ էլ առաջւայ պարզասրտութիւնն ու անկեղծութիւնը չէր նկատւում։ Նորա համար սովորական բան էր դարձել իւր մտածածն ու զգացածը ծածկել, կեղծել, մանր բաներում սուտ ասել, խաբել։

XIV

Միհրանօվների վերջին երեկոյթից յետոյ մի քանի օր անցած, Սահառունին ծառայութիւնից յոգնած վերադարձաւ տուն։ Աղախինը յայտնեց, որ տիկինը տանը չէ ճաշելու։ Լուռ գլխով արեց Սահառունին աղախնին, նստեց ճաշի՝ տխուր ակնարկ գցելով դատարկ սենեակին։

Օրէցօր Սահառունու համար աւելի ու աւելի զգալի էր լինում, որ զուրկ է ընտանեկան կեանքի քաղցրութիւնից, զուրկ սիրող սրտից. տանից դուրս էլ գործերը լաւ չէին գնում։ Ծառայութիւնը մի անհրաժեշտ չարիք էր նորա համար։ Առաջուց շատ էր լսել նա ծառայողների կեանքի, փոխադարձ յարաբերութիւնների մասին, շատ բան էլ տեսել էր իբրև կողմնակի հանդիսատես, բայց լսելն ու հեռւից նայելը և անձնական փորձով իմանալը մեծ տարբերութիւն ունին իրարից։ Նա չէր կարող իւր բնաւորութիւնը փոխել և եթէ մի որ և է ելք գտնէր անպատճառ կը թողնէր ծառայութիւնը ու կը հեռանար, բայց ցաւն էլ հէնց այն էր, որ ելք չը կարդառն իրականութիւնը անողոք կերպով հալածում էր Սահառունուն։

Բարեբախտաբար ծառայութիւնը նորանից օրը չորս-հինգ ժամ հաշիւ էր խլում, մնացած ժամանակը նա ազատ էր։

Մինչև կէս գիշեր Սահառունին սպասեց կնոջը։ Վերջապէս եկաւ։ Սահառունին սկսեց յանդիմանել նորան, որ նա շատ քիչ ժամանակ է անցկացնում իւր հետ։

—Զարմանալի մարդ ես, խա՛չը, Գէորգ, ինչու՞ ուր որ գնում եմ հետս չես գալիս, այն ժամանակ միշտ միասին կը լինէինք։

—Ի՞նչ նշանակութիւն ունի ուրիշ տեղ միասին լինելը. տանը միասին նստել-խօսելը, ժամանակ անցկացնելը ուրիշ բան է։ Հիւր որ գնում է մարդ ուրիշին է պատկանում, տանն է միայն մարդ իւր գլխի տէրը։

—Քանի քանի անգամ փորձել եմ տանը նստել, բայց դու այնքան լուրջ ու տխուր ես լինում, որ իմ սիրտս էլ տխրում է, մանաւանդ երբ որ ընկերներդ հաւաքւում են քո մօտ ու սկսում էք զանազան լուրջ, անհետաքրքիր հարցերի վերայ խօսել։

—Կը նշանակի լաւ ես անում, որ տանը չես նստում, Կատեա, դառնութեամբ ասաց Սահառունին ու ինքն իրան մտածեց,—էլ ինձ չի սիրում, առաջւայ սէրն էլ ինստիտուտի աշակերտուհու թեթև սիրահարութիւն է եղել։

Բարեսիրտ և փոփոխական Կատարինէն զգացւեց մարդու խօսքերը լսելով. նա սրտանց խղճում էր նորան. ոչ մի ժամանակ նա այնպէս սաստիկ չէր զգացել խղճի խայթը, ինչպէս այդ րոպէին։ Մի քանի վայրկեան երկուսն էլ լուռ մնացին։

Ինչքան ժամանակ է, ես նորա հետ անկեղծօրէն չեմ վարւում, էլ ինչո՞ւ այսօր զուր տեղը պարզ ասացի ու վշտացրի նորան... Արի ամէն բան պարզ ասեմ, բաց անեմ. այս անբնական յարաբերութիւնները անտանելի են դառնում հետզհետէ. ինձ թւում էր, թէ շուտով կը սովորեմ այդ յարաբերութիւններին, բայց ինչպէս երևում է չեմ կարողանալու սովորել։

Մի րոպէ անցած բոլորովին փոխեց միտքը.—Չէ՛, նա ոչինչ չը պէտք է իմանայ, ինչու զուր տեղը տանջւի, քանի կարող եմ կը ծածկեմ; վճռեց նա վերջապէս, ճշմարտախօսութեան բնածին զգացմունքի հետ երկար կռւելուց յետոյ։

Կատարինէի գլուխը ծանրացաւ այդ մտածմունքներից։ Անսովոր լինելով երկար ու բարակ մտածելու մի որ և է հարցի վերայ, նա աշխատում էր մի կերպ ազատւել այդ մտածմունքներից, որ նորան կարծես հալածում էին։ Նա մօտեցաւ մարդուն և փայփայելով խոստացաւ այնուհետև տանը նստել։

Եւ իրաւ մօտ երեք շաբաթ Կատարինէն տանը նստեց.—ժա-

մանակը անց էր կացնում բոմաններ կարդալով, որ մարդն էր ընտրում նորա համար, և դաշնամուր ածելով ու երգելով։

Սահառունին գլխովը պտույտ էր գալիս, ամեն միջոց գործ էր դնում, որ տանու կեանքը նրան տխուր չերևի։

Բայց բոլոր նորա ջանքերը զուր էին. Կատարինէի սիրտը չէր կպչում տանը, փափագում էր ուրիշ կեանքի, որին սովոր էր, թէև տանից դուրս էլ կեանքը այդ ժամանակ այնքան հրապուրիչ չէր երևում Կատարինէին, որովհետև Տրունիցկին քաղաքից մի քանի շաբաթով հեռացել էր։

Մի ոմն օր Կատարինէն մարդու հետ ինչ-որ մի վէճ էր կարդում։

—Ինչպէս պէտք է դուրս գաս իմ լաւութեան, զոհաբերութեան տակից, Դէորգ, տեսնում ես ինչքան ժամանակ է տանից դուրս չեմ գալիս, յանկարծ դիմեց նա մարդուն։

—Ուրեմն այդ քո կողմից զոհաբերութիւն է, հա՞։ Զուր է, Կատեա, ես զոհաբերութիւններ չեմ սիրում։

—Դէ լաւ, լաւ, մի բարկանայ, զոհաբերութիւն չէ, ուրիշ բան է, չեմ կարողանում ասել թէ ինչ է...

Այդ թողնենք, Դէորգ, բայց պէտք է մի օր հրաւէրք սարքենք, ամենքը մեզ հրաւիրում են, սիրով ընդունում, չի կարելի որ մենք չը հրաւիրենք։

—Իմ մտքովս էլ շատ անգամ անցել է, Կատեա, մոռացել եմ քեզ ասել. ճիշտ է, պէտք է հրաւիրել, ոչոքի աղ ու հացը վրաներս չը պէտք է թողնենք։ Երբ ես ուզում հրաւէրք սարքել։

—Իմ սիրո՛ւնս, հոգիս, բացականչեց Կատարինէն վեր թռչելով տեղից ու փաթաթուեց մարդու վզովը։

—Այս երեք տարուց աւել է, ինչ պսակուել եմ, ու չի եղել, որ մի օրէց մի՞ օր մի ուրիշ ցանկութիւն յայտնած լինի, մոռածեց նա ինքն իրան պատասխանելով նորա փաղաքշանքին։

Այդ բոպէին դուռը կամաց բացուեց. մոտաւ աղախինը ձեռին բռնած մի նամակ։ Կատարինէն իսկոյն վերթռաւ ու ձեռիցն առաւ նամակը, որ բուրում էր անուշահոտութիւններով։

Ահա նամակի բովանդակութիւնը։

«Սիրելի Կատեա, ինչու ոչ մի տեղ չէք երևում։ Կը հաւատաք, որ ձեր բացակայութեամբ չենք կարողանում մի կարգին ուրախ ժա-

մանակ անցկացնել։ Cousin—վերադարձել է և առաջւայ պէս գժւած է ձեզ վերայ։ Սաստիկ յուսահատւում է, չի իմանում ինչու չէք երևում, ճգնելու միտք ունէ՞ք թէ գուցէ բռնակալ ամուսինը իրաւունք չի տալիս։ Խե՛ղճ Ադոլֆ, բացի ձեր համակրութիւնից ուրիշ բան աչքովը չի գալիս, միայն դորանով է ապրում, գիշեր ցերեկ հանգստութիւն չունի։ Խնդրեմ այսօր եկէք ինձ մօտ թէյի։

Ձեր Սոֆի Տրունիցկայա»։

Նոյն ծրարում մի ուրիշ տոմսակ էլ կար. «Ma belle Catherine! Մօտ մի ամիս է որ ձեզ չեմ տեսել։ Անհամբեր սպասում եմ այն րոպէն, երբ կը կարողանամ սեղմել ձեր դեղեցիկ ձեռքը։ Ե՞րբ կարող եմ ձեզ տանը մենակ գտնել։

Ձեր առաջ չոքած՝ Ա. Տրունիցկիյ։»

Այդ երեկոյ Կատարինէն չը գնաց, մնաց տանը, որ մարդը ոչինչ կասկած չը տանի. բայց միւս օրը երբոր կրկին հրաւէր ստացաւ, նա չը կարողացաւ դիմանալ ու գնաց, մանաւանդ որ մարդը նիստից ուշ պէտք է վերադառնար։

Երկար ու բարակ հագնուելուց, զուքուելուց յետոյ, Կատարինէն ժամի 8-ին կառք բերել տուեց ու գնաց Տրունիցկու ազգական Սոֆիայի մօտ։ Մի քանի ուրիշ հիւրեր էլ կային։ Թէյից յետոյ, Կատարինէն ասելով որ սենեակում տօթէ և գլուխը սաստիկ ցաւում է, դուրս գնաց պատշգամբը։ Տրունիցկին էլ գնաց նորա յետևից. նա նստեց Կատարինէի կողքին բազմոցի վերայ, սկսեց այնպէս նայել նորան, կարծես ուզում էր աչքերով ուտել ու յանկարծ գրկեց նորա իրանը։

—Էլի արժանացայ քո տեսութեանը, հոգիս։ Եթէ իմանայիր, թէ որքան սիրում եմ քեզ։

Կատարինէն կարծես երազի մէջ էր լսում այդ խօսքերը և անգիտակցաբար նայում էր խաւար տարածութեանը։

Տրունիցկին պաչպչում էր նորա ձեռները և նա չէր աշխատում հեռացնել ձեռները նորանից։ Մտերմական դու... քո... քեզ... խօսքերը լսելիս Կատարինէի հոգին փաւաւորւում էր։ Մի վայրկեանից յետոյ նա արդէն Տրունիցկու գրկումն էր։ Տրունիցկին վավաշոտութեամբ պաչպչում էր նորա դէմքն ու վիզը։

Կատարինէն շուտով ուշքի եկաւ վերկացաւ և հաստատ քայլերով գնաց դահլիճը։

—Ախ, Աստուած, այս ինչ եկաւ գլխիս, կրկնում էր ինքն իրան Կատարինէն սաստիկ յուզմունքի մէջ, սառը ձեռները բորբոքուած երեսին դնելով։ Նրան թւում էր, թէ բոլորը նորա երեսին են նայում, տեսնում են ու նորա ամօթն ու խաբէութիւնը, և նա մտամոլոր ու շփոթուած աչքերը ման էր ածում չորս կողմը։ Ինչքան աշխատում էր հանգիստ ձևանալ, չէր լինում։ Նստում էր դաշնամուր ածելու, մատները չէին շարժւում, սկսում էր պատկերազարդ թերթեր նայել—աչքերը շաղւում էին, ուզում էր ուրիշների խօսակցութեանը մասնակցել—լեզուն էր շաղւում։ Վերջապէս տեսնելով, որ բոլոր ջանքը զուր է, նա մի պատճառ բերեց ու գնաց տուն։ Քանի մօտենում էր տանը՝ շփոթութիւնը հետզհետէ աւելանում էր։

—Ախ, Աստուած, ինչ կը լինի իմ օրս, եթէ Գէորգը բոլորն իմանայ. չէ՛, այսպէս չի լինի, պէտք է որքան կարելի է շուտով մոռանալ նորան, մտածում էր Կատարինէն ու սիրտը աւելի ու աւելի սաստիկ էր բաբախում։ Նորա բախտիցը մարդը դեռ տուն չէր եկել։ Սեղանի վերայ դրած էր մի տոմսակ. Կատարինէն վերցրեց, Ելիզաւետա Բոգդանովնայիցն էր. խնդրում էր մասնակցել բարեգործական նպատակով տրւող նւագահանդէսին. Կատարինէն սկսեց մտածել նւագահանդէսի մասին ու քիչ—քիչ սիրտը հանգստացաւ։

Մի քանի օր անցած Սահառունին ծառայութեան գնալուց մի քանի րոպէ առաջ պատահաբար Կատարինէի դրասեղանի աչքում երկու տոմսակ գտաւ. այդ այն տոմսակներն էին, որ աղախինը իւր ներկայութեամբ տւեց Կատարինէին։ Յիշեց թէ ինչպէս կինը շփոթուած խլեց աղախնի ձեռքից այդ տոմսակները ու դուրս փախաւ առանձնասենեակից. նորա յիշողութեան մէջ այնպէս լաւ մնացել էր այդ պատկերը, որ կարծես այս րոպէին աչքի առաջին կատարւելիս լինէր։ Սահառունին այնքան էլ չէր սիրում կնոջը, որ գժւէր տոմսակները տեսնելիս, բայց նա բոլորովին համոզւած էր որ կինը ընդունակ չէ կեղծելու, իսկ այժմ տեսաւ, որ ինքը չարաչար սխալւել է. այդ էր որ կսկծացրեց նորա սիրտը։ Մէկ՝ ուզեց կնոջ զար-

թեցնի ու խորհուրդ տայ, որ գաղտնի նամակները աւելի լաւ պահի, բայց երկու-երեք քայլ անելուց յետոյ կանգ առաւ մտահոգութեան մէջ և քիչ-քիչ իրան զսպեց։

Ես գիտէի, որ Տրունիցկին կնոջս դուր է գալիս, որ նա հասարակութեան մէջ կնոջս բոլոր միւս տիկիններից գերադասելով շոյում էր նորա ինքնասիրութիւնը, բայց սկի մտքովս էլ չէր կարող անցնել, որ կինս կարող է սիրահարուել նորա վերայ։ Եւ յիշեց Սահառունին թէ ինչպէս չարանում ու ժժգոհ էր լինում կինը, երբ որ ինքը նորա մօտ Տրունիցկուն յիմար ֆատ էր անուանում ու խորհուրդ էր տալիս նորանից որքան կարելի է հեռու կենալ։

Այդ մտածմունքները սաստիկ զրգռեցին Սահառունուն. դժուար է ասել՝ խանդոտութիւնը շարժուեց, թէ վիրաւորուած ինքնասիրութիւնն էր, որ նորան տանջում էր։ Սկսեց բարկութիւնիցը քայլել ամենակում։

Իսկապէս զուր եմ մեղադրում նորան. նա վաղուց պէտք է ուրիշին սիրած լինէր, կարող էր միթէ՞ նա ինձ սիրել։ Ես ինքս զգում եմ, որ իմ մէջ չը կան այն փայլուն արժանաւորութիւնները, որ դուր են գալիս կանանց։

Ինչքան աշխատում էր Սահառունին սիրտը հանգստացնել այդտեսակ դատողութիւններով, բայց չէր լինում, բարկութիւնը չէր նստում։

—Մարդ կարող է խեղդուել այս կեղծութեամբ վարակուած մթնոլորտում, ատամները կրճտացնելով ասաց Սահառունին ու դուրս եկաւ փողոցը։

Առաւօտեան թարմ օդը մի քիչ հանգստացրեց նորան։ Երկար ժամանակ թափառում էր Սահառունին փողոցէ փողոց, վերջապէս մեքենայաբար հասաւ դիւանատուն։ Չը կարողանալով երկար ժամանակ մի տեղ հանգիստ նստել, նա սովորականից շատ վաղ դուրս եկաւ դիւանատանից ու տխուր գնաց դէպի տուն. սիրտը կարծես վկայում էր, որ մի բան պէտք է պատահի։ Հասնելով տան դրանը, նա պատահեց Տրունիցկուն, որ կանգնած զանգը խփում էր։ Հազիւ հազ կարողացաւ զսպել նա իւր զգւանքն ու հանգիստ ձեւանալ։

Տրունիցկին սկզբում շփոթուեց, բայց շուտով իրան զսպեց ու, ոգատ համարձակ ձեռք տալով նրան, ասաց,—մենք վաղուց ծանօթ ենք, չեմ կարողանում ինձ ներել, որ մինչև ձեզ մօտ չէի եղել։

Սահառունին ոչինչ չը պատասխանեց, բայց երեսին նայողը կը հասկանար, որ սիրտը տակն ու վերայ էր լինում զայրոյթից։

—Սկի չէիր սպասում ինձ, չէ՞, կծու հեգնութեամբ ասաց նա մոնելով կնոջ սենեակը։ Դարդ մի անիլ, գահլիճում քեզ աւելի ցանկալի հիւր է սպասում, աւելացրեց նա գոյնը գցելով։

Կատարինէն վախեցաւ նայելով մարդու դունատ դէմքին։

Դահլիճում մի հինգ րոպէ նստելուց յետոյ Սահառունին վեր կացաւ ու գնաց իւր առանձնասենեակը։ Կատարինէն ու Տրունիցկին կարծես փշի վերայ նստած լինէին։ Քառորդ ժամից յետոյ Տրունիցկին գնաց։

Կատարինէն սկսեց մարդուն նախատել Տրունիցկու հետ անքաղաքավարի վարուելու համար։

—Անունը լսելիս դողդողում ես, այդ էլ բաւական է նրան։

—Ինչեր ե՛ս ասում, Գէորգ. ինչ զարմանալու բան կայ որ ծանօթ մարդը այցելութիւն է անում. քի՞չ մարդ են գալիս-գնում մեզ մօտ, մէկն էլ թող նա լինի։

—Այս նորա առաջի՛ն այցելութիւնն էր, հարցրեց Սահառունին խստութեամբ ու անթարթ նայելով կնոջը։

Կատարինէն շփոթուեց, չը կարողանալով սուտ ասել և մարդու աչքերին նայել, նա կարմրեց ու աչքերը կախ գցեց։

—Մի քաշուիր, ասա, ես արդէն մասամբ գիտեմ, զայրացած ասաց Սահառունին ու սեղանի տակից հանած նամակը մօտեցրեց երեսին։ Կատեան շփոթուած նայեց թղթին ու ծածկելով երեսը սկսեց լալ։

—Ներիր, սիրելիս, ես բացի քեզանից ոչ ոքի չեմ սիրում։

Այդ րոպէին Կատարինէն ինքն էլ հաւատում էր, որ ոչ ոքի չի սիրում բացի մարդուց։

—Ասենք, ես արժան չէի քո սէրին և մի որ և է Տրունիցկի աւելի արժանաւոր գտնուեց, Տէր ընդ քեզ, սիրիր ում որ սիրտդ ուզում է... Մի վայրկեան Սահառունին կանգ առաւ և շունչ քաշելով, սաստիկ յուզուած շարունակեց. բայց ինչո՞ւ էիր ինձ ծիծաղատեղ դարձնում, յիմարի տեղ դնում... այդ ես քեզ երբէք թոյլ չեմ տալ։ Քո արածդ կարդին կնոջ վարմունք չէ։

—Ի՞նչ ես ասում, Գէորգ, ո՞վ է քեզ յիմարի տեղ դրել, ծիծաղատեղ շինել։

Սահառունին այնքան յուզված ու վրդովված էր, որ ոչինչ չը պատասխանեց։ Յանդիմանական մի հայեացք գցելով կնոջ վերայ, նա դուրս եկաւ սենեակից։ Կատարինէն վազեց յետևիցը ու աղաչելով ասաց, — Գէորգ... ներիր, մեղաւոր եմ։

Մարդը ոչինչ չը պատասխանեց և խնդրեց, որ հեռանայ ու իրան մենակ թողնի։

Երեք օր ամուսինները իրար հետ համարեա չէին խօսում։ Կատարինէն տանից դուրս չէր գալիս ու մոլորուած մնացել էր, չէր իմանում ինչ անի.

Սահառունու խեղճը գալիս էր, տեսնելով կնոջ դրութիւնը. նա մի քիչ մեղմացաւ և մինչև անգամ սկսեց իրան մեղադրել։

— Եթէ ես նորան այնպէս սիրէի այժմ, ինչպէս երեք տարի սորանից առաջ էի սիրում, նա ինձնից երբէք չէր սառիլ ու ուրիշին չէր սիրի, օրը մի քսան անգամ կանցնէր նորա մօտով։

Խռովելու չորորդ օրն էր։

— Գէորգ, միթէ մենք էլ չենք հաշտուելու. այս ինչ է, կեանք հօ չէ, դժոխք է, կամաց ասաց Կատարինէն մոնելով մարդու առանձնասենեակը։

— Դու ինքդ ես մեղաւոր։ Սիրտս մղկտում է, որ քեզ այդպէս տխուր եմ տեսնում։ Ես սրտանց ուզում եմ, որ դու բախտաւոր լինես. բայց մենք այնքան բարձր պէտք է լինենք բարոյապէս, որ դու բախտաւորութեան հասնելու համար ոչ ծուռ ճանապարհներ պէտք է ընտրես, ոչ էլ ինձ խաբես։ Համաձա՞յն ես։

— Օ՛ֆ, դու մարդ չես, չէ՛, մարդը այնքան բարի չի կարող լինել, դու երկնքից իջած հրեշտակ ես։ Խօսք եմ տալիս քեզ, որ էլ նորա երեսը չեմ տեսնի, բացականչեց Կատարինէն համբուրելով մարդուն։

— Ի հարկէ, չի կարելի պատուիրել թէ սորան սիրիր, նորան մի սիրիլ, բայց իմ կարծիքով Ցրունիցկուն անհնար է սիրել, բառի իսկական նշանակութեամբ։ Նա հօ՛ անկեղծ սիրել ամենևին չի կարող. ես նորա կեանքից մի քանի դէպքեր գիտեմ. նա իրան սիրահարուած է ձևացնում, որ քեզ նման միամիտ կանանց գլխահան անի։

Կատարինէն լուռ լսում էր մարդուն ու ծածուկ սրբում էր աչքերի արտասուքը։ Մարդու խօսքերը միմիայն նախանձից յառաջա-

ցած համարելով, նա աչքերը բարձրացրեց ու նայեց Նորա վերայ՝ կասկածի՞ թէ աղաչանքի արտայայտութեամբ. ոչ այն էր, ոչ այս։ Մի կողմից Նորա սիրտը չէր ուզում մարդուն ցաւ պատճառել, միւս կողմից սիրտը կսկծում էր մտածելով, որ դորա համար նա պէտք է մոռանայ Տրունիցկուն։

Սահառունին նկատում էր կնոջ մէջ կատարուող ներքին կռիւը և աւելի լաւ համարեց է՛լ այդ հարցի մասին չը խօսել։

Անցաւ խղճահարութեան առաջին վայրկեանը. Կատարինէն թիկն տուած իւր սենեակում ինքն իրան միտք էր անում։

—Չէ՛, մարդս ինձ չի սիրում. եթէ նա ինձ սիրելիս լինէր, միթէ այնպէս կը վերաբերուէր ինձ, չէ՞ր կատաղիլ նախանձից։

Զարմանում եմ, խա՛չը, ասում էր նա ինքն իրան, իրանց խօսակցութիւնից մի քանի օր անցած, նա կարծես այդ դէպքից յետոյ աւելի լաւ է վերաբերում ինձ, միթէ այդպէս կը լինի սիրող մարդը։ Չէ՛, Աղօլֆը անպատճառ մենամարտութեան կը կանչէր, իսկ սա...

—Ինչու այնպէս խիստ վերաբերուեցի Նորա սիրահարութեանը, քանի որ Նրան բաւարարութիւն չի տալիս իմ սէրը,—վերջապէս ես միթէ՞ այնքան սիրում եմ Նորան, որ Նորանից հաւատարմութիւն պահանջելու իրաւունք ունենամ, մտածում էր նոյն րոպէին Սահառունին իւր առանձնասենեակում և սկսեց խղճահարուել. խիղճը խայթում էր...

Նորա երևակայութեան առաջ պատկերացաւ Հեղինէն... ինչքան աշխատում էր նա ինքն իրան հաւատացնել, որ իւր զգացածը դէպի նա պարզ բարեկամական զգացմունք է, բայց մի ներքին ձայն կարծես ասելիս լինէր, որ այդ մի ուրիշ, աւելի զօրեղ զգացմունք էր...

Այդ մտածմունքների մէջ Սահառունին չը նկատեց Կատարինէին, որ դուռը պինդ բաց արեց ու ուրախ-ուրախ ներս մտաւ։

—Հը՛, Գէորգ, բարկութիւնդ անցել է բոլորովին։

—Հա, պատասխանեց Գէորգը անուշադիր։

(Կը շարունակուի)

ՄԱՆՈՒԿ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՐԾԻԵԱՆԻ

Մանուկ նազելի, մանուկ գեղեցիկ,
Որքան մաքուր ես, որքան անարատ.
Հայեացքդ պայծառ, ժպիտդ քաղցրիկ,
Փթթում ես որպէս հրապուրիչ մի վարդ։

Ազատ առօրեայ դառը՝ն հոգսերից,
Հանգիստ ես առնում դու մօրդ կրծքին.
Ձեն յուզում սիրտդ կրքեր թունալից.
Պարզ ու պայծառ ես նայում դու կեանքին։

Կեղծ զգացմունքներ օտար քո սրտին,
Անկեղծ խնդրում ես և անկեղծ տխրում.
Անկեղծութիւնը քո չքնաղ դէմքին
Շողում է որպէս աստղը երկնքում։

Օ՛հ, մանուկ սիրուն, մանուկ նազելի,
Անմեղ, անբիծ ես, որպէս հլրեշտակ.
Դու կախարդում ես մարդու միտք, հոգի։
Դու լքեալ սրտին և՛ սէր ես, և՛ կեանք։

Անսահման սիրով նայում եմ վերադ,
Եւ ինձ այրում է մի ջերմ զգացմունք—
Ա՛խ, երանի՜ չէ այդպէս անարատ
Մընայիր դու միշտ, սիրասուն մանուկ։

Մոսկվա. 23 յուլիսի, 1890 թ.

*
* *

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՐԾԻԵԱՆԻ

Հերիք է որքան բաղդը խաբուսիկ
Զքնաղ վարդերով սփռեց իմ ուղին.
Որքան վառ սիրոյ երազներ գողտրիկ
Անյոյս յուզեցին իմ մատաղ հոգին։

Նոցա ծաղկալից, անհոգ վայելքին
Ահա ալիս եմ իմ վերջին բարև,
Եւ նոր ողջոյնով՝ փշալից կեանքին
Իմ երգն ու սիրտը բերում եմ պարգև

20 յուլիսի, 1890 թ. Մոսկվա։

ԱՂՕԹԻՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՐԾԻԵԱՆԻ

Երբ խռովայոյզ, դառըն մտքեր վրդովում են քո հոգին,
Եւ զզւանքով սկսում ես նայել մարդկանց ու կեանքին.
Երբ ընկղմւած դու վշտերի անհուն, անեզր ովկեանում,
Տառապում ես և յուսահատ մահւան հանգիստ աղերսում.
Երբ յանկարծ մի հոգեմաշ ցաւ ծանրանալով քո վերայ,
Քեզ թւում է՝ թէ այդ ցաւից էլ փրկւելու յոյս չը կայ...
Դու անվհատ, ծունկ խոնարհած, աչքդ երկինք ամբարձիր
Եւ լի յուսով, վառ հաւատով Տիրոջ անուանն աղօթիր...

Աղօթքի մէջ, հաւատա՛ ինձ, դու կը գտնես ցանկալի
Անդորրութիւն, քաղցր հանգիստ յուզւած սրտի ու մտքի.
Աղօթքի մէջ քեզ կը ժպտան, որպէս աստղեր լուսավառ
Ե՛ւ սև, մռայլ կեանքը մարդկան, և՛ դառնալից այս աշխարհ.
Ջերմ աղօթքը որպէս աղբիւր պայծառ յուսով լի կեանքի,
Այլւած սիրտդ կը զովացնէ, կը տայ նոր ոյժ, նոր հոգի.
Ջերմ աղօթքը որպէս երկնից անմահ նւադ քաղցրալիր,
Քեզ կախարդած՝ կը վերացնէ մի այլ աշխարհ... Աղօթիր...

Մոսկւա. 11 յուլիսի, 1890 թ.

ԽԱԹ-ՍԱԲԱ

(ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ)

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑԻ

Ա.

ԶԻՒԻՆԻ ԴԻՒԶԸ

Զանգաղ գիւղից մի քանի ժամ հեռաւորութեամբ, Զիւլինի լեռների [1]) մէջ գտնւում է մի հրաշալի սարահարթ, որտեղից Զանգաղի փոքրիկ գետը ցատկռտելով լերկ ժայռերի վրայից, սողալով ապառաժների բացւածքների միջից, իւր փրփուրով ծածկում է լեռնադաշտը կտրող գիներբուկների գիծը և գնում գահավիժում է Զանգաղի հովիտը, ուր նա ոռոգում է պարարտ ծաղկալից դաշտեր։

Այնտեղ-բարձրում սարահարթը մի ծայրով միանում է բլրակների, որոնք ծածկւած են երփներանգ ծաղիկներով և որոնք թիկն են տւել աւելի բարձր, լերկ ժայռերով հարուստ և խոր ծործորներով ակոսւած լեռների. իսկ սոցա ետևից, Զիւլինի լեռնաշղթան տեղ տեղ դուրս է պարզում իւր ձիւնապատ բարձր գագաթները։

Սարահարթի միւս ծայրը գալիս հանգում է դէպի ձորակը և այդտեղ կազմում է մի ահեղ գահաւանդ, որտեղից տեսնւում է դէպի ցած վիժող գետակի փրփուրը, իսկ հեռու-ցածում՝ օձա-

---

[1]) Այդ լեռները գտնւում են Կարսի և Էրզրումի միջավայրում և կազմում են ռուսաց և տաճկաց սահմանը։

պտոյտ արծաթափայլ գետակներ և վտակներ, որոնք միմեանց կըտրում և թաղնուում են պարարտ արտերի, կոյտ կոյտ օրաների և ամրութիւններով զինուած բլրակների մէջ...

Սարահարթը շատ մեծ չէ, բայց բնութիւնը իւր բոլոր գեղեցկութիւններով զարդարել է նորան. այդտեղ կարելի է տեսնել ապառաժների վայրենի շեղջեր, միմեանց վերայ կարծես մաղով կոթնեցրած հսկայական ժայռեր. փոքր ինչ հեռու մի վճիտ վտակ, որը կիսալուսնաձև սողում-անհետանում է շուշանների, կակաչների, անթառամների միջով։ Մի կողմում ամպի պէս սփռուած զանազան բարձրութեամբ բլրակներ ալեձև գնում են դէպի խորը, բարձրանում դէպի լեռները, յետոյ նորէն դէպի աջ են ծռւում և հետզհետէ մանրանալով հաւասարուում են դաշտի հետ... մի այլ կողմում երկու վերևից հոսող ջրվէժներ եռանկիւնաձև միմեանց կտրում՝ գոյացնում են փրփրադէզ շաղրուան, որոյ ցատկռտող կաթիլները թրջում-ողողում են չորս կողմը վիտացող անուշահոտ ծաղիկների թերթիկները...

Այդ սարահարթը կոչուում է «Զիւինի դիւզ»։

Շատ քիչ անգամ շրջակայ կանայք մտնում են հաւաքելու Զիւինի դիւզի առատ խինձը, սիբեղը, կովու ճակտեկը... հովիւը իսկ դժւարութեամբ է համաձայնուում նախիրը այն կողմ քաշելու, թէև հօտը մեծ ճարակ կը գտնի այնտեղ... Որովհետև Զիւինի դիւզը բնակութիւններից բաւական հեռու է և եթէ շրջակայ լեռների մէջ թափառող քիւրդ կամ աջէմ աւազակները իմանան, որ նախիրը կամ կանայք այցելում են Զիւինի դիւզին՝ մի բոպէ չեն վարանիլ խումբերով յարձակում գործելու։

Բայց, ամառնամուտի մի գեղեցիկ երեկոյ, դաշտից կարելի էր տեսնել սարահարթից բարձրացող ծուխի սիւնակներ և փալփլող լոյսեր...

Այդ օրը հեռու տեղերից գալով, մի թափառական ժողովուրդ իջևանել էր սարահարթում, կառուցել էր քսանի չափ վրան և աւելի քան յիսուն զանազան տաւարներ բաց էր թողել արածելու բլրակների մէջ։

Վրանները կառուցած էին միմեանցից հինգ քայլ հեռու։ Նոցա առջևում խոտերի մէջ թաւալում էին կեղտոտ կիսամերկ մանուկներ,

մի այլ կողմում տղեղ և սև դէմքով կանայք կրակը վառել՝ կերակուր էին պատրաստում, իսկ այդ աղօտ լոյսի տակ վտակի եզերքին մի փոքրիկ պառեկի [1]) վերայ թիկն տուել, մէջքի վերայ պառկել և նստել էին 10—15 զանազան հասակի տղամարդիկ։

Ամենքն էլ կիսամերկ էին, պատառոտուն հագուստներով, սևացած դէմքով և համարեա բոբիկ ոտներով։ Ոչ մէկը նոցանից չունէր կարկատանի վերարկու, կանոնաւոր տրեխ կամ գոնէ զլխարկ. մազերը խուխ զիզացած զլխների վերայ, մօրուքները թանձր և կոշտ կամ խանձուած մազերի պէս եկած. նոյն իսկ կանայք և մանուկները բոբիկ, անլուայ, երկար մազերով և իրանց մարմնի մի մասը քուրջերով միայն փաթաթած...

Բոշաների մի խումբ էր, որ Թորթումից գալով, իրանց ճանապարհորդութեան տասներրորդ զիշերը անցկացնել էին ուզում Զիւինի զիւղի վերայ. ամբողջ խումբի մէջ պառեկի վերայ նստոտած տղամարդիկը միայն ներկայ էին. մնացածները կամ յետ էին մնացել կամ քաղաքումն և կամ շրջակայքներում պահպանութիւն էին անում։

Այն պառեկը, որի վերայ հաւաքուել էին տղամարդիկ՝ նայում էր դէպի դաշտը և վտակը փալփլելով լուսնի լոյսի տակ՝ գալիս շօշափում էր նորան ու ցած վազում։ Մի քանի քայլ հեռու մի տղամարդ յենել մի հին հրացանի վերայ լուռ խօսողներին էր լսում, նորա ոտների մօտ, թաթերի վերայ գլուխը դրել նստել էր մի ահագին գամփռ, որը ականջները սրել, աչքերը պլշել՝ չորս կողմն էր դիտում։

Միւսները ևս լսում էին իրանց միջից յաղթանդամ և կոշտ գծագրութեամբ հասակաւոր մէկին, որը խօսում էր յուզմամբ, անդադար ցուպը և ձեռքերը շարժում էր և երբեմն իսկ ցուպով ճղփացնում էր ջուրը կամ դէպի օդը թռցնում արմատախիլ արած խոտերի մի փունջ...

Մի զով քամի գալիս շարժում էր խոտերի և ծաղիկների ծայրերը, օրօրում էր պատմողի թանձր մազերը և գնում սփռւում էր դէպի դաշտը...

---

[1]) Սարի կամ բլուրի կուրծք։

Բ.

ԼՈՄ-ՀԱՍԱՆ

Բոշան պատմում էր։

«Հեռու-միւսիլմանների երկրում, պատմում էր նա—այնտեղ, ուր արևի մէջ հաւկիթը խսկոյն եփւում է, ուր մի ընդարձակ աւազի անապատ բռնել է երկրի կէսը, ուր մարդիկ բոլորը արևից սևացել են և ուր բուսնում է արմաւը և ձիթենին՝ կայ մի գեղեցիկ միւսիլմանի քաղաք, որից անապատը շատ մօտ է։

Այդ քաղաքում ապրում էր Շէյխ Սաղօն, որին բոլորը ճանաչում էին, որովհետև նորա պալատի մէջ ոսկին քարի կտորների պէս սփռուած էր ամեն կողմ, հուրիները աւելի շատ և աւելի գեղեցիկ էին, քան նոյն ինքն Խըդիւի հարէմի կանայք. նորա պալատը բռնում էր քաղաքի կէս մասը, նորա պարտէզների պէս պարտէզներ չը կային և Շէյխը վայելում էր այս աշխարհում ա՛յն բոլորը, ինչ որ խոստացել է մարգարէն միայն միւս աշխարհում...

Փող ունէր և նորա զօրութեամբ կարողանում էր անել ցանկացածը, վայելել այնպիսի հաճոյքներ, որոնցից Աստուած զրկել է մեզ և շատերին։ Օրւայ ամեն ժամերին լսւում էր նորա շքեղ պալատի աշտարակներից նւագածուների ձայները. երգում էին ամենից լաւ երգողները. նորա դրան էր մօտենում ամենից առաջ դէրուիշը և խփում էր վրանը [1]). նորա մօտ էին գնում ամենից քաղցր ածողները, շէյխին էին պատկանում անապատի զաւակների բոլոր գեղեցիկները, նորան էին օրհնում բոլոր մոլլաները և սէյիդները... բայց կար մի դաս և այդ խեղճ մարդիկն էին, որոնք միայն վախենում էին նրանից...

Եւ այդ բոլորը նա վայելում էր անհոգ, զւարթ և ուրախ, նա սկի չը գիտէր էլ թէ իւր ծառաները ինչպէս քերթում էին խեղճ մարդկանց, կողոպտում էին նրանց, ծանր հարկերի տակ ճնշում, միայն

---

[1]) Արաբիայում և Պարսկաստանում դէրվիշները մի փոքրիկ վրան են խփում մի հարուստի դրան առջև և նորա տակը նստած այնքան աղօթում են, մինչև որ հարուստը մի պատկառելի ընծայ տայ և խնդրէ վրանը վերցնել։

թէ շէյխի գանձարանից ոսկին չը պակսէր, հարէմից կինը, մառանից գինին և ճաշը զարմալի անող երաժիշտները...
բերում լցնում էին գանձարանը... Թող աշխարհք քանդուէր, միայն Շէյխի եկամուտների աղբիւրը քաղաքից երկու փարսախ հեռու գտնուող չորս-հինգ գիւղերն էին։

Այդ գիւղերը լիքն էին բազմաթիւ մերկ, կեղտոտ և գժերի պէս գիւղացիներով, որոնք օրը մինչև երեկոյեան աշխատում էին, նրանց արտերը տալիս էր առատ ցորեն. Նեղոսը ողողում էր հանդերը, ցորենը մէկին 100 էր տալիս և սակայն իրանք գիւղացիք ուտում էին այն բոյսերը, որոնցից շատ են բուսնում Երջանիկ երկրի դաշտերում... Ինչպէ՛ս կարելի է, որ կոպիտ գիւղացին ցորենի պէս ազնիւ հացով կերակրուէ. Շէյխի մարդիկը խլում էին նրանց ձեռքից բոլոր ցորենը, և թողնում էին նրանց խոտ ուտելու, լսո՞ւմ էք, լոմե՛ր [1]), Երջանիկ երկրում կային գիւղեր, որոնք խոտով միայն կերակրուում էին... և լցուում էր Շէյխի գանձարանը ոսկիով, հարեմը գեղեցիկներով և հնչում երաժշտութիւնը պալատի սրահների մէջ և ողողում էր գինին և զարմանում էր Շէյխը իւր շքեղութեան մէջ...

Բայց բաւական է Շէյխի մասին. լոմը այդպէս Շէյխեր շա՛տ է տեսել, նա ինքը խոտ է կերել, իսկ իւր քրտինքը կերցրել է աղաների, նա ինքը ծնել է գեղեցիկները և տուել է Շէյխերի հարեմներին... Նրան զարմանալի չէ այդ...

Եւ նստած էր մի օր Շէյխը իւր պալատի աշտարակներից մէկում, ծխում էր ներդիլէն, իւր սիրուն կանանցից մէկը գրել էր բամբիռը լուսամուտի առջև, իւր քնքոյշ մատներով դողացնում էր նորա մազանման թելերը և քամին տարածում էր նորա հրեշտակային ձայնը դէպի հեռու անապատը...

Անապատում մի ծառախումբի տակ այդ օրը իջևանել էր մի խումբ, նա՝ կտրել էր ամբողջ անապատը, իւր անդամներից մեռած թողել էր աւազների մէջ, կոտրուել ծարաւութիւնից, ջարդուել բէդուիններից և եկել ընկնել հանգստանում էր բէն-էլ-մաար Օազիսի արմաւենեաց տակ...

---

[1]) Թիւրքիայի հայ բոչանները իրանք իրանց լոմ են անուանում։

Նոցա մօտ այլ ևս չէր մնացել մի բուռ ալիւր, մի հատ ցորեն կամ մի կոտոր հաց... պէտք էր հաց գտնել։

Եւ հրամայեց խմբապետը խմբի երգեցող կանանց՝ քաղաքն իջնել, դռների մօտ հնչեցնել գնչուական երգեր, բաց կուրծքով պարել տաք երկրի միւսիլմանների պակշոտ աչքերի առջև և անել ամէն ինչ՝ միայն թէ հաց բերել խմբին, որին անօթութիւնից մահ էր սպասում...

Ահա Օազիսից ելան չորս կանայք՝ Նազին, Գիւլին, Օդիշուն և Բահարը, հագնուեցան իրանց փոքրիկ բոժոժներով զարդարուած թմբուկները, մատերնին անցկացրին ծնծղաները և մտան քաղաք...

Նազին և Գիւլին երգում էին, Օդիշուն պարում և Բահարը հաւաքում էր բնակիչների տուած հաց կամ փողը։ Անտառի եղնիկը, Սուլթանի ռախկասը [1]), խոտի պարողը չունէին այն թեթև և արագ ոտերի շարժումը, մարմնի այն հաճելի դիւրաթեքութիւնը, աչքերի այն մեռցնող ոլորուածքը, ձեռքերի այն գողտրիկ պտոյտները, ինչ որ Օդիշուն, որ երբ պարում էր, հրեշտակի էր նմանում, որ սաւառնում է օդի մէջ, երբ ժպտում էր՝ մեռցնում էր և երբ խօսում էր, անապատի տաքութիւնից յետոյ հանդիպած ջուրը նորա ձայնի քաղցրութիւնը չունէր... գեղեցիկ է լուսինը իւր ամբողջ ժամանակը՝ երբ լողում է երկնակամարի վերայ, հիանալի են աստղերը, պայծառ խոտոտեցնող է արևի լոյսը. բայց Օդիշուի աչքերը, նորա դեր թշերը, գունաթափ տամուկ ճակատը, քնքոյշ իրանը, վայելուչ հասակը և գողտրիկ բերանը աւելի գեղեցիկ, աւելի հիանալի, աւելի պայծառ և աւելի խոտոտեցնող էին... մանաւանդ, երբ նա պարում էր և պարելու ժամանակ իւր աչքերով նայում մէկին և իւր երկնային ժպիտով ժպտում...

Երգեցին, պարեցին և հաւաքեցին ամբողջ օրը և երեկոյեան Շէյխ Սատոի պալատի առջև կանգ առին.

— Օդիշո՛ւ, ասաց նրան Նազին— այս տանտէրը մեծ հարուստ է երևում, բանեցուր քո բոլոր ճարպիկութիւնդ, այնտեղ մերոնք հացի են սպասում։

Եւ երգեցին. Օդիշուն մատերին անց կացրեց ծնծղաները, Նա-

---

[1]) Պարող։

զին դողդողացնելով հնչեցրեց թմբուկը և Բահարը պալատի դրան մօտ կանգնած՝ սպասեց որ հաց կամ փող բերեն իրան...

Լռեց բամբիռը, շարժուեց շէյխը, գլուխը լուսամուտից դուրս հանեց և լսում էր... լսում էին բոլոր կանայք, լսում բոլոր պալատը, լսում և նայում էր ամբողջ թաղը... ամենքը լռել էին, Օղիշուն կարմրել էր նոր բացուած վարդի պէս, նա կոտրտուում էր, ոլորում էր աչքերը, գալարում թեւերը, սահում էր գետնի վերայ, անհաւատալի արագութեամբ փոխում էր սիրուն ոտները, ծռմռում քնքոյշ մէջքը, իսկ Նազին և Գիւլին երգում էին։

Նոքա երգում էին լոմերի սիրելի երգը...

Թռի՛ր Բահար [1]), անցի՛ր լուսին,
Օգուտ չունիք խեղճ լոմին,
Լուսին լինի և կամ ձմեռ՝
Լոմը ե՞րբ է կեանք տեսեր.
Թռի՛ր Բահար, անցի՛ր լուսին
Օգուտ չունիք խեղճ լոմին...
Դաշտը իւր տուն, լեռը իւր բուն
Տանջւի լոմն օրն 'ի բուն
Փոքրիկ կարպետ իւր անկողին
Կուց մի դաւը ջուր իւր բաժին...
Թռի՛ր Բահար, ծածկւիր լուսին
Ի՞նչ օգուտ դուք խեղճ լոմին...

Շէյխը մի ոսկի ձգեց աշտարակից ցած և բարեհաճեց հարցնել Օղիշուի անունը, յետոյ երկու ծառայ մօտեցան նրանց և յայտնեցին որ «մեծանուն շէյխը» կամենում էր, որ բոշաները պալատ մտնէին և իւր ներկայութեամբ պարէին և երգէին։

Օղիշուն, Նազին և Գիւլին Բահարին խնդրեցին որ հաւաքածները Օազիսում սպասող խմբին տանէ, իսկ իրանք աւելի մեծ վարձատրութեան յոյսով՝ պալատը մտան...

Միւս օրը օազիսում յայտնուեցան միայն Նազին և Գիւլին, Օղիշուն չը կար...

Շէյխը իւր մօտ էր պահել երիտասարդին Օղիշուին... Բոշաների

---

[1]) Գարուն։

խումբը երդուեց չը հեռանալ օազիսից, իսկ Օդիշուի հայրը գաւառ մի ատրճանակ, հագուստների մէջ թաղցրեց մի թիւնաւոր դաշոյն և քաղաք մտաւ։

Անցան օրեր, ոչ Օդիշունի և ոչ էլ նորա հօր մասին լսում էին լուրեր. վերջապէս մի օր օազիսը եկան երկուսն էլ. Օդիշուն յղի և ոգեղացած, իսկ հայրը արիւնոտ. նա սպանել էր Շէյխ Սաոսին...

Մի քանի օրից յետոյ միւսիլմանները բռնեցին Օդիշուի հօրը և կախեցին քաղաքի դրան մօտ, իսկ բոշաների խումբը նորէն կարեց անապատը և երբ հասել էին Աջէմի երկիրը, Օդիշուն ծնեց մի զաւակ, որի անունը դրեց Հասան»...

Գ.

ԷԼ-ՄՈՒԻՆ

«Այդ միջոցին Սպահանում ապրում էր մի արաբ իշխան. նա կոչւում էր Էլ-Մուին. նորան պատւում և սիրում էին բոլորը, նա 60 տարեկան էր, երեք կին ունէր, բայց և ոչ մի զաւակ չունէր. ունէր ահագին հարստութիւն, մեծամեծ շէնքեր, հողեր, պարտէզներ, հայերի թաղերի մեծ մասը Էլ-Մուինին էին պատկանում և հայերի Խոջա-Աւագ իշխանը Էլ-Մուինի սիրելի բարեկամն էր։

Լոմերի խումբը իւր կէսը թողնելով անապատում, ձմեռ էր, երբ հասաւ Սպահան և հայերի վանքի մօտ կանգ առաւ հանգըստանալու։

Էլ-Մուինը և Խոջա-Աւագը վանքից ելան և երբ տեսան լոմերին, խղճացին, հրամայեցին վանքումը տեղ տալ նրանց և հաց տալ, իսկ Էլ-Մուինը տեսաւ փոքրիկ Հասանին, գրաւեց նորա գեղեցկութիւնով և նորա մօր հետ միասին առաւ իւր մօտ. Օդիշուն նրանից հայրութիւն տեսաւ և Հասանին Էլ-Մուինը մեծացրեց իւր թոռան պէս։

Մեծացաւ Հասանը, կարդաց ամբողջ Ղուրանը, տեղեկացաւ իմաստունների դիտութեանը, կռւի մէջ մտաւ և սարթիփ [1]) եղաւ և երբ Օդիշուն մեռել էր, Հասանը այլ ևս իրան պարսիկ էր

---

[1]) Պարսկական գեներալ։

կարծում, սկի մոքին չէր գալիս թէ ինքը լոմ է և լոմի զաւակ...

Այդ տարին շատ վատ տարի եղաւ Աջէմիստանի բոմերի [1]) համար. ամենքը կողոպտում, ամենքը վռնդում էին նրանց, կողոպտում, և նախատում էին, որովհետև բոմերից մէկը մի օր սիրեց մի պարսիկ աղջիկ, առաւ նորան և փախցրեց օսմանցւոց երկիրը... այդպէս բոմերի պատիւը ընկաւ, ամենքը սկսեցին կասկած տանել նրանց վրայ...

Բոմերը ժողովեցան, մի քանի մեծ խմբեր կազմեցին և վճռեցին գաղթելու օսմանցւոց երկիրը...

Բայց գաղթելուց առաջ ուղարկեցին երկու ծերունիների Հասանի մօտ։

Հասանը զարմացմամբ լսեց որ իւր հետ ուզում են խօսել երկու «մթրբբ ծերունիներ»... կարծեց թէ ողորմութիւն էին ուզում և հրամայեց նրանց փող տալ, բայց ծերունիները յայտնեցին, որ փող չեն ուզում, այլ նոյն իսկ իրան—Հասանի հետ խօսել։

Հասանը չուզեց ընդունել նրանց, բայց Էլ-Մուինը, որ մի խելօք և փորձուած իշխան էր, համոզեց Նրան լսելու մթրբբների խօսքերը։

Երկու ծերունիները դիւանխանէն մտան և չոգեցին դուռան մօտ. վերի կողմը նստել էր Էլ-Մուինը զունաթափ և Հասանը նրանից փոքր ինչ ցած՝ դէմքը կնճռած և զղւանօք ծերունիներին էր նայում...

Երկու լոմերը փոքր ինչ լռեցին, յետոյ նրանցից մէկը շփեց մորուքը և ասաց խուլ ձայնով Հասանին.

—Լոմ-Հասա՛ն, քո ցեղիդ ծերունիները քեզ են եկել ամբողջ ցեղի կողմից.

Հասանը զարմացած նրանց նայեց։

—Ես Լոմ-Հասանը չեմ, գոչեց նա—ես կոչւում եմ Հասան վէլէդը Էլ-Մուինի... ի՞նչ էք ուզում ինձնից։

—Մենք, ասաց ծերունիներից երկրորդը—լոմերի իշխաններից ենք և եկել ենք Լոմ-Օղիշուի որդի Լոմ-Հասանի մօտ... արդեօք Հասանը չի՞ իմանում, որ ինքը լոմի զաւակ է և իրաւունք չունի իւր

---

[1]) Այդպէս են կոչում իրանց Պարսկաստանի «մթրբբ»-ները։ (բոչաներ)։

ցեղի մասին վատ մտածելու... Լոմերին պարսիկները հանգիստ չեն թողնում, այլ և ոչ հաց չը կայ նրանց այս երկրի մէջ, լոմերը գաղթում են, ուստի և մեզ ուղարկեցին Հասանի մօտ պահանջելու, որ Լոմ-Հասանը գայ և առաջնորդէ իրանց, Լոմ-Հասանը անգիր գիտէ ղուրանը, իմաստուններից լսել է նրանց գիտութիւնը, խելօք է, Իբն-Հասանը [1]) տուել է նրան իւր զօրութիւնը և լոմերը ցանկանում են, որ Հասանը իւր գիտցածներով օգնէ իւր ցեղին և իշխէ նրանց վերայ, ազատէ նրանց նեղութիւններից և իմաստուն անէ... Լոմ կադիրը ասաց, ինչ որ խնդրել էին իրան լոմերը...

Լոմ-Կադիրը լռեց, Հասանը ապշել էր, բայց Էլ-Մուինը շարժուեց և դառնալով Հասանին, ասաց։

—Հասա՛ն, լսիր թէ քո պապը Էլ-Մուինը ի՞նչ կասէ, ո՛չ մի ժամանակ Էլ-Մուինի բերանը չի ստիլ, նա վատ չի խօսիլ, նորա գլուխը միշտ լաւ է մտածել և փա՛ռք Ալլահին և իւր մարգարէին... նա դեռ այնչափ չի ծերացել, որ ցանցառ բաներ խօսէ... թող իմանայ Հասանը, որ Էլ-Մուինը իւր կեանքը դրել է Հասանի համար, աշխատել է նորան իմաստուն դարձնել. Էլ-Մուինի գանձարանը միշտ բաց է նորա համար... թող իմանայ Հասանը, որ իւր մայր Օդիշուն մըթրբի աղջիկ էր և Էլ-Մուինը թէև ցաւելով, բայց ճշմարտութեամբ ասում է, որ Հասանը իւր ո՛չ թէ հարազատ, այլ որդեգիր թոռն է... Հասանը այդ ծերունիների ցեղին է պատկանում...

Հասանը լուռ էր. նա շփոթուել էր. մտածեց երկար, յետոյ յանկարծ ոտքի ելաւ և մտաւ միւս սենեակը, որտեղից նա փոքր ինչ յետոյ դուրս եկաւ հասարակ հագուստ հագած, տրեխները ոտքերին, մի գիրք թևի տակը, միւս ձեռքին հրացանը և դառնալով ծերունիներին ասաց։

—Իմ ազգը ինձ պէ՞տք ունի... գնա՛նք, ծերունիներ...։ Էլ-Մուինը վեր թռաւ տեղից, գրկեց Հասանին, համբուրեց նորա ճակատը, օրհնեց և ասաց։

—Գնա՛, որդեա՛կ, Էլ-Մուինը օրհնում է քեզ նման իմաստուն որդուն... նորա գանձը առջևդ բաց է, օգտուիր որչափ կ՚ուզես...

---

[1]) Պարսկաց մի առասպելական կախարդ-իմաստուն։

Հասանը եկաւ լոմերի մօտ և երկու օրից յետոյ լոմերի ցեղերը նորա աւաջնորդութեամբ օսմանցւոց հողն էին անցնում...

Հասանը հրամայեց որ այնուհետև իրան ո՛չ թէ Հասան էլ Մուինի, այլ միայն Լոմ-Հասան կոչեն։

Լոմ-Հասանը խմաստուն էր Իբն-Հասանի պէս, քաջ էր Ռիւստէմզալի նման և անվախ, ազնիւ էր և բարի, նորան ամենքը սիրում էին։

Օսմանցու հողերի մէջ լոմերը հանդիպեցին իրանց ցեղակից-ներին, Լոմ-Հասանը բարեկամացաւ նրանց մեծաւորի հետ և նորա Սաբա աղջիկը իրան կին առաւ։

Սաբան մի շատ սիրուն աղջիկ էր, քաջ էր ինչպէս աւիւծ, նա քանի անգամ քիչ մնաց ցած գլորէր Լոմ-Հասանին... Սաբան Օգիշուից գեղեցիկ էր, բայց պարելու փոխարէն նա գիտէր կուռել—և լա՛ կուռել...

Լոմ-Հասանը սիրեց նորան, իրան կին առաւ. Լոմ-Հասանը սովորեցրեց նորան խմաստութիւն... Լոմ-Հասանը...»

Յանկարծ խշխշացին խոտերը, դամփուը վեր թռնելով, փոքր ինչ մռմռաց, յետոյ մի ոտիւն գործեց և մնաւ խոտերի մէջ և երբ ամենքը ետև էին նայում, լսեց մի խռպոտ ձայն, որը գոչում էր...

—Նորէն ո՞վ է այն, որ իմ մարդուս անունը իւր բերանն է առել...

Դ.

ԽԱԹ-ՍԱՌԱ

Բոշաները բոլորը վեր թռան, պատմութիւնը կիսատ մնաց, և խոտերի միջից դուրս գալով նրանց առջև կանգնեց մի երկարահասակ խոշոր կին ցնցոտիներով, ձեռքին ահագին մի ցուպ, ոտերին տրեխ, գլուխը փաթաթած մի մեծ կարմիր թաշկինակով, իսկ մէջքին փաթաթուած դօտի մէջ երևում էին երկու սարճանակների և մի կեռ դաշոյնի կոթեր։

Երկարահասակ, պառաւ, սակայն խիստ ատոյդ կազմուածքով միանգամայն կին էր, չէչոտ, խիստ ագեղ դէմքով, խորշոմած ճակատով և այտերով, աստամները կիսովին թափուած, իսկ իւր միակ մեծ աչքը

այնպէս փայլում էր, որ տեսնողը կը վախենար. այնչափ երկարահասակ էր, որ մէջքը փոքր ինչ ծռւել էր. ձայնը խռպոտ առնական ձայն, ջլապինդ սոթոտած բազուկներ, կոշտ-ահագին խոշոր մատներով ձեռքեր, երկար ոտներ, լայն կուրծք, թիկնաւէտ մէջք, երկար լիքը վիզ. երկար դիզացած մազերը՝ ալեխառն...

Նա մի քայլ յառաջացաւ, ահագին հաստ ցուպը շիւղի պէս բարձրացնելով ուսի վերայ դրաւ, ոտովը խփեց հեռու շպրտեց իւր ոտների մօտ քծնող գամփռին, մի շանթահար ակնարկ ձգեց բոլորի վերայ և դուռաց նորէն։

—Ո՞վ էր այն, որ իմ մարդուս մասին էր խօսում... բոլորը ետ ետ քաշուեցին, իսկ պատմողը ժպտեց և ասաց.

—Ես էի, Խաթ-Սաբա՛, մի՞թէ վատ եմ անում, որ լոմերին անդադար յիշեցնում եմ քո իմաստուն և քաջ երիկդ...

—Հը՛մ... մռմռաց Խաթ-Սաբան հանդարտելով. վատ չես անում, Մուրա՛դ, բայց չէ՞ որ ես նորա մասին կամ նորա անունը երբ լսում եմ, յիշում եմ որ կին եմ և լաց չեմ կարողանում զսպել... ինձնից հեռու, միշտ հեռու խօսեցէք... Լոմ-Հասանս առիւծ էր, լոմերը և նորա կինը կորցրին շատ բան...

Միւս բոշաները հետզհետէ մօտենում էին։

—Տղե՛րք, գոչեց Խաթ-Սաբան, փոքր ինչ լռութիւնից յետոյ—ես դաշտիցն եմ գալիս և նոր լուրեր եմ բերում...

—Էլի մենա՞կ էիր գնացել, հարցրին մի քանիսը։

—Այստեղ զգուշացիր Խաթ-Սաբա՛—ասաց մի ծերունի—Զիւինի մէջ աւազակ հարէմ իներ [1]) շատ կան։

—Էհէ՛, գոչեց պառաւը—խրա՞տ էք տալիս Սաբային, ոչ ոք նորան չի կարող դիպչել առանց մահը աչք առնելու։

—Հեռուից կարող են խփել, քիւրդերը բոլորն էլ հրացաններ ունին այժմ, որ կէս ժամ հեռուից մարդ է գլորում.

—Դատարկ բաներ, ժպտեց Խաթ-Սաբան—ինձ գլորելու մէջ շահ չը կայ... լսեցէ՛ք, ձեզ լուրեր տամ... Դաշտը առանց էն էլ զինուորներով լցուել է, Զանզաղի մէջ վրան խփել նստել են հարկահաններ և զինուորներ. Հասան-Ղալայի բէգը հրամայել է հարկ հա-

---

[1]) Թաթար աւազակներ։

ւաքել... Զանգաղցւոց կաշին քերթել են սկսել, Արտօսցիները գիւղը թողել՝ սարերն են փախչում, զինւորները ձեռք ընկածը թալանում են... երեք Զանգաղցի իշխանների բռնել՝ գիւղից 7—800 հարիւր ոսկի փող են պահանջում...

—7-800 ոսկի, բացականչեցին բոլորը։

—Այո՛, սաղ Բասէնը ծախես, այդքան չ՝արժէ... մերոնցից էլ Սերգօին բռնել են և վրանները տարել...

—Ա՛խ... բացականչեցին բոլորը—արդեօք մեզնի՞ց ինչ են ուզում...

Խաթ-Սաբան նստեց, ցուպը ոտքերի մէջն առաւ, պահ մի սրա-նրա երեսին նայեց, յետոյ շոյեց իւր կողքին պառկած գամփռին և ժպտելով ասաց։

—Ես իսկապէս չը գիտեմ թէ լոմերից ի՞նչ են պահանջում, բայց Սերգօին բռնել են, ոտները ու ձեռները կապել, մի խրճիթ են դրել ու Զանգաղցւոց հետ փակել այնտեղ... մենք մտադիր էինք վաղը առաւօտեան հեռանալ Զիւրինից, բայց այլ ևս չենք կարող, Սերգօին պիտի ազատել։ Այդ այդպէս. մեր ետ մնացող ընկերներն էլ դեռ չեն երևում, վախենում եմ որ նրանց էլ բռնած լինին դաշտի մէջ... ինչպէս երևում է լոմերը հրացանների պէտք պիտի ունենան, եթէ չեն կամենում իրանց տաւարները առաջին հանդիպած զինւորների խմբին թողնել և իրանք նորէն խոտ ուտելով սար ու ձոր ընկնել քաղցած... Խաթ-Սաբան տաւար չի տալ ոչ ոքի, քանի կենդանի է, Լոմ-Հասանը նորան սովրեցրեց, որ հողը Աստծոյ է, քրտինքը աշխատողին և աշխատողի ունեցածը ոչ ոք խլելու իրաւունք չունի, Լոմ-Հասանը սովորցրեց նորան, որ պէտք է հող ունենալ, վարել, ցանել և հնձել, ինչպէս անում են ամէնքը, սովորցրեց, որ մարդը վատ բան է, իսկ աշխատելը Լոմի միակ փրկութեան միջոցն է... Նորա մեռնելուց յետոյ տարիներ անցան և Լոմը դեռ տեղ չունի, հող չունի, բայց աշխատել է և իւր աշխատանքը վայելել, վա՛յ նրան, ով կ՝ուզենայ Խաթ-Սաբայի խումբից խլել նորա ունեցածը...

Նա լռեց. ժպտում էր և ձեռքի ցուպը երբեմն ուսին և երբեմն ծնկների վերայ էր դնում. ամէնքը գլուխները կախած՝ լսում էին նորան։

—Տղէրք, գոչեց Խաթ-Սաբան պահ մի լռելուց յետոյ, դաշտից մեր վառած կրակները երևում են, բոլորը գիտեն այժմ որ Զիւբինի դիւզի վերայ էլ բնակիչ կայ... հիմա այնպէս ժամանակ է որ բէգերը ճրագով մարդ են փնտռում, որ հարկ և տուրք առնեն... թող մի քանի հոգի տաւարները քաշեն լեռների մէջ արածելու. մի անգամ երբ առանց տաւարի մնացինք, մեզնից էլ տուրք չեն կարող առնել, հող չունինք, տաւար էլ չենք ունենայ։ Շարժւեցէք, վաղը առաւօտեան կարելի է հարկահանը մտնէ այստեղ։

—Որտե՞ղ տանենք տաւարները, հարցրեց Մուրադը։

—Ասացի որ լեռների մէջ... մէկ լաւ ձոր գտէք և թողէք այն տեղ արածելու. երեք հոգի հերիք է դրա համար. էգուց երեկոյեան մէկը թող գայ մեզ մօտ որ եղածը իմանայ... ա՛յ, կ'ուզես Մուրա՛դ, գնացողներից մէկը եղիր դու... շատ վախկոտ ես, հանգիստ կը փուռես խոտերի մէջ և ընկերներիդ հեքիաթներ կը պատմես...

—Ե՞ս վախկո՞տ, գոչեց Մուրադը, ո՞վ տեսաւ իմ վախկոտութիւնը։

—Լա՛ւ, լա՛ւ, ծիծաղեց Խաթ-Սաբան-քեզ բոլորն էլ ճանաչում են. զինւորներին մաղի ծակերից ես նայում, թովջիին [1]) քարի եռևից, հրացանին ձեռք չես կարողանում տալ, թէ ի՞նչ է քեզ կը խփես... լա՛ւ, պատասխան պէտք չէ, դու և երկու հոգի վերկացէք, տաւարները ժողովէք և մի լաւ տեղ արածելու տարէք...

Այդ ասելուց յետոյ, Խաթ-Սաբան ոտքի ելաւ, իրան շրջապատողներին նայեց և հարցրեց։

—Հասանը ո՞ւր է...

—Դաշտի կողմն է պահպանում, պատասխանեց մի ծերունի...

—Հ'ըմ... հրացան ունի՞ հետը։

—Ունի, քո հրացանդ է առել...

—Օղիշուի՞ս մօտ ով է մնացել ուրեմն։

—Վարդիկենց տունն է Օղիշուն...

Հասանը Խաթ-Սաբայի որդին էր 35 տարեկան մի տղամարդ։ Բացի Հասանից, Խաթ-Սաբային մեռած անդրանիկ որդուց մնացել էր 17 տարեկան որբ Օղիշուն. իսկ միջակ որդին բաժանւել

---

[1]) Հարկահան։

իրանից՝ ամուսնացել էրզրում էր գնացել ընդ միշտ։ Լոմ-Հասանը վաղուց – 40 տարի էր, որ մեռել էր և Ծերունի 70-ամեայ Խաթ-Սաբային մնացել էին միայն մի առոյգ երիտասարդ որդի և մի սիրուն թոռ, որոնց նա չափազանց սիրում էր։

Լոմ-Հասանի մահուան մասին համարեա ամեն բոշա ասում է, որ նա քիւրդերի հետ կռուելու ժամանակ 101 գնդակի վերքեր ստացաւ, 300 քիւրդ կոտորեց, յետոյ իւր հրացանը իւր կողքին կանգնած կնոջը—Խաթ-Սաբային տուաւ և ընկաւ... իւր ընկնելով նա ջախջախեց 301-երրորդ քիւրդին, որը կամենում էր նրան դաշոյնի մի հարուած տալ...

Ինքը Խաթ-Սաբան ոչինչ չէր պատմում իւր քաջ ամուսնոյ մահուան մասին և դորա համար իսկ շատ բոշաներ կարծում էին թէ Լոմ-Հասանը կենդանի է և մի օր պիտի գայ իրանց օգնութեան, երբ Խաթ-Սաբան այլ ևս անկարող լինի և ժողովուրդը անգլուխ մնայ...

Առ այժմ Խաթ-Սաբան բոշաների այդ խմբի ցեղապետուհին էր, նրանից դողում էր իւրաքանչիւր բոշա, որովհետև Խաթ-Սաբան քաջ էր, խիստ և յանդուգն. նա միայն մի ցուպով մի անգամ ջախջախել էր չորս քիւրդերի, որոնք դաշոյններով նորա վերայ էին յարձակւել... նա ինքը շատ անգամ հրամայում էր պահապաններին քնել և միայնակ իւր գամփռի հետ, ցուպը ուսին դրած՝ գիշերն 'ի բուն անդադար ման էր գալիս և պահպանութիւն անում։

Երբեմն յանկարծ Խաթ-Սաբան ամբողջ օրը կամ ամբողջ գիշերը անհետանում էր, գամփռն իսկ չէր տանում հետը. սկզբում այդ բացակայութիւնը սկսեց անհանգիստ անել բոշաներին, նոքա հարցնում էին նորա ուր լինելու մասին. բայց Խաթ-Սաբան չուզեց պատասխանել, իսկ երբ սկսեցին՝ նա ձախ ձեռքով մի ուժգին ապտակ խփեց մէկին, ոտով երեք քայլ հեռու շպրտեց երկրորդին և ցուպը այնպէս տատանեց ու միակ աչքը պլորեց՝ որ բոլորը լռեցին և խոհեմութիւն համարեցին այլ ևս չը հետաքրքրւել։

Խաթ-Սաբան երկու աչք ունէր, ձախ աչքի կուրութեան մասին ոչ ոք մի բան չը գիտէր։ Այդ այսպէս էր պատահել։

Մի օր Խաթ-Սաբան ցուպը ուսին դրած անհետացել էր և երբ երկու օր բացակայութիւնից յետոյ վերադառնում էր, ձախ աչքը

կապած էր մի քիւրջով։ Մի ամսից յետոյ քիւրջը արձակուեց և նորա տակում տեսնուեց միայն մի կոյր աչք առանց սպիտակուցի և բիբի, կարծես փորուած հանած էին այդ մասերը։

Երբ հարցրել էին, նա ցուպը բարձրացրել և

—Ձե՞զ ինչ, գոչել էր—Խաթ-Սաբայից միայն մի Լոմ-Հասանը կարող էր հաշիւ պահանջել, և այդ Լոմ-Հասանն էլ այժմ մեռաւ...

Եւ ամենքը սոիպւեել էին լռել։

Ե.

ՄԱՐԴՈՍ

Էրզրումի «Ղաւաղի դրան» կողմը, եկեղեցւոյ ուղղութեամբ 100 քայլ ցած գտնուում են մի շարք տներ, որոնց ետևում փռուում են բանջարանոցներ, կողքից անցնում են կեղտոտ ջրերի առուակներ և առջևումը տարածուած է թիւրքաց մեծ գերեզմանատունը։

Այդ տների մէջ միայն մէկը երկյարկանի էր սորանից 7 տարի առաջ. միւսները միայարկ գծուած շէնքեր էին փոքրիկ լուսամուտներով, ամուր դռներով և ցեխով կամ կովի աղպով ծեփած պատերով։

Երկյարկանի տունն իսկ մի այլանդակ կերպարանք ունէր. նորա առաջին յարկի պատերի վերայ գունդ գունդ ծեփուած էին թաց քակուի կտորներ. կողքին գտնուող փոքրիկ հրապարակում դարսուած էին կոյտ կոյտ քարեր, փոքր ինչ հեռու աղպի դեզեր. դռան առջև փոքրիկ երկու մարդու կանգնելու չափ մի պարտէզ երեք մանր ուռենի ծառերով միայն զարդարուած և միջից երկուսի բաժանուած այն առուակով, որի միջով անցնում էր Էրզրումի կոյանոցի ջրի մի մասը և գնում ջրում էր բանջարանոցները։

Տան վերի յարկը երեք անփեղկ, անապակի լուսամուտներ միայն ունէր. բայց շինուած էր քարից, իսկ ներքին յարկը, ուր բնակւում էին տանտէրը իւր ընտանիքով, կազմուած էր մի կլոր լայն սենեակից, որի մի անկիւնում կանգնեցրած կար տախտակեայ մեծ թախտ, մի կողմումը ծխում էր թոնիրը, մի ուրիշ անկիւնում դիզուած կար լաւաշ հաց, կողքին ունենալով ալիւրի մեծ դարանը։ Անկողին, պղնձեղէն, կարասներ, փոքրիկ մերկ մանուկներ, աւելներ և ջրի

ամաններ խառնել էին միմեանց. մի կին մինչև կէս մէջքը կարմիր շալէ մի գոգնոց կապած՝ անց ու դարձ էր անում այդ կահ կարասիքների միջով, գոգնոցով հովահրում էր թոնիրի կրակը, կեղտոտ ձեռքերով սրբում էր աչքերից, ծուխի պատճառով հոսող արցունքը, երբեմն մի կիցով լռեցնում էր մանուկներից մէկի ճիչը, մի կոոր հաց տալով հեռացնում էր իւր փէշից բռնող երկրորդին և մի տարօրինակ հայերէն հայհոյանք էր արձակում դէպի երրորդ մանուկը, որը գլուխը կոխել էր կարասներից մէկի մէջ և երգելով աշխատում էր պոկել կարասի կողքերին ամուր կպած դաւուրմայի կոորները։

Իսկ բարձր տախտակեայ թախտի վերայ պառկել էր մի տղամարդ, իւր չիբուխի կծու ծուխը խառնում էր թոնիրի դարշահոտ ծուխին և բոլորովին անհոգ էր վերաբերւում դէպի իւր շուրջը կատարւած իրողութիւնները։

Դա տանտէրն էր. 30-ից անց մի գեր տղամարդ, ցորենագոյն դէմքով (Թիւրքա-Հայաստանում շատ քիչ կարելի է տեսնել սպիտակ դէմքեր, մանաւանդ տղամարդկանց մէջ), հագած մի կորտւած շալէ լայն վարտիկ, կապոյտ մահուտից՝ կարկտնած բաճկոն, մէջքին տաստարի կարծես ջրի երես չը տեսած՝ Պարսկաստանի մի մեծ շալ, գլուխը մի իւղոտ ֆէս՝ զզզւած եաղմայով փաթաթած, ոտքերին մի գուլպա, որի տակը կաշի էր կարւած և աւելի հաստ էր, քան մի զինւորական կօշիկի տակը... կուրծքը բաց՝ երևում էր նորա ջղուտ թիկունքը և մազոտ լանջը...

Նա ծխում էր։ Նորա երկար չիբուխի գլուխը դրւած էր դեղին պղնձեայ մի մոխրամանի մէջ, որի կողքին կար մի սև տուփ մէջը շորի մնձուր, սևացած կայծահանը և կայծաքար. դա նոցա լուցկին էր, լուցկի, որից այժմ դեռ ևս գործածւում է Թիւրքա-Հայաստանի շատ կողմերում։

Իսկ երբ մանուկները սկսեցին շատ աղմուկ հանել և նոցա մայրը իւր տարօրինակ հայհոյանքները ասոիճանաբար խստացրեց, այն ժամանակ միայն տանտէրը չիբուխի ծայրը բերանից հանեց և գոռաց. այժմ սկսեց մայրը.

—Զայներդ!—Մանուկները իսկոյն լռեցին։

—Զա՛յնդ... գոչեց նրան ևս տանտէրը։

Եւ մայրն էլ լռեց։

—Մարիա՛մ, ասաց փոքր ինչ յետոյ տանտէրը, ծուխդ քոռացնում է ինձ, շուտ արա՛...

—Ես ի՞նչ անեմ, ճչաց կինը—անիծած աթարները թաց են, մէկ շնորհքով արև էլ չ'եղաւ, որ լաւ չորանան... ցախն էլ երեկուայ անձրևից թրջուել է և չի վառւում, գոնէ փոքր ինչ գեաւան բերէիր սարից...

—Չէ՛ մէկ... դէմքը ծռմռեց տանուտէրը—այս քաղցած փորովս գնամ լեռը քեզ համար գեաւան բերեմ... ա՛յ, այն հին աւելներով վառիր թոնիրը... կերակո՞ւրը երբ կը լինի։

—Դեռ տեսնում ես որ թոնիրը չի իջել... թէ շատ քաղցած ես, քեզ հաց ու պանիր՝ կեր ու գնա՛։

—Նա՛տ մի խօսիլ կնի՛կ, ես այսօր սարը երթացողը չեմ... քեզ ետոյ Գէորգ աղան պիտի գայ քար առնելու։

Մարիամը երբ այդ լսեց, յանկարծ գործը թողեց, գոգնոցի ծայրով աչքերը սրբեց և ասաց աղաչաւոր ձայնով։

—Ի՞նչ կը լինի, Մարդո՛ս, Գէորգ աղայի փողերիցը մէկ 50 ղուրուշ տուր Ակօին որ իրան հագուստ առնի...

—Էլի՞, գոռաց էրիկը բարկացած— էլի՞ Ակօին հագուստ. նոր չէ՞ր որ մի ձեռք հագուստ առի։

—Վա՛յ... ե՞րբ էր այդ, անցեալ տարի ձմեռը նո՞ր ես համարում... խեղճի վերայ մի շնորհքով վարթիկ էլ չի մնացել... կօշիկները խօ, հաղար կարկատան ունի վրան... Մարդոսը առանց պատասխանելու մի քանի կում ծխեց, չիբուխի գլխի մօտից կախուած սրածայր երկաթով խատնեց ծխանոցը և ծանր ծանր ու իւրաքանչիւր բառը շեշտելով ասաց։

—Հը՛մ... հարիւր հատ քար ծախեմ՝ ասենք թէ մեծերից՝ այս քեզ 200 ղուրուշ, իսկ եթէ փոքրերից՝ 100 կամ 150 ղուրուշ... ցորենի՞ տամ, պանիրի՞, իւղի՞ թէ Ակօին... դեռ Զիթողցի խոտ ծախողն էլ առաւօտեան Դէօլ-Բաշիում բողազիցս բռնել իւր 40 ղուրուշն էր ուզում... չէ՛, ախպէ՛ր... Ակօն թող սպասի դեռ... Ստուած ողորմած է, հալբաթ էլի քար առնող կը լինի, հիմա եափու շինել տուող շատ կայ...

—Մա՛րդ, աղաչեց կինը—խեղճ Ակօն բոլորովին մերկ է մնացել... ասում է թէ վարժարանում վարժապետները միշտ կռւում են հետը... ընկերները ծաղրում են...

—Ը՛մ... ահագին էշ է դարձել, ծաղրելուց էլ է վախենում, կասես 10 տարեկան տղայ լինի... չէ՛, էգուց-էլօր վարժարանից պիտի հանեմ ու հետս քար կտրելու տանեմ... քսան տարեկան կը լինի շուտով...

—Ի՞նչ անի խեղճը որ ուշ ենք ուսումի տալ... ինքը քի՞չ է ամաչում, որ տաս տարեկան տղաների հետ է նստում... միտդ չէ՞ ինչ հալ քաշեցի, մինչև որ ընդունել տի. ասում էին մեծ է... մեծացել է, բան չի սովորիլ... խե՛ղճ Ակօն, տեսնէիր երէկ ինչպէս Պօղոս պատուելին գովում էր... ասում է թէ «շատ լաւ է սովորում, համեստ է, միշտ եկեղեցի է գալիս... վարժարան մտնելիս գնում վարժապետների ձեռքն է համբուրում, սկի չի խաղում, հենց միշտ կարդում է»... ա՛յ, գնա դուրսը տես, քարերի եռևը նստել է ու գիրք է կարդում...

—Լա՛ւ, լա՛ւ, վարժապետ խօ չի՞ դառնալու... կանչիր գայ մէկ տեղ ուղարկեմ...

Մարիամը դուռն մօտեցաւ, գլուխը դէպի փողոցը պարզեց և գոռաց.

—Ակօ՛, Ակօ՛...

Քարերի կոյտերի եռևից դուրս եկաւ մի երկարահասակ դեղեցկադէմ պատանի, խոշոր սև աչքերով, սև մազերով, թանձր յօնքերով... բեխերը նոր սկսել էր բուսնել. վայելուչ ուղիղ հասակ ունէր, սիրուն լայն դէմք, կոկ կարմիր այտեր, փոքրիկ կանացի բերան... մի խօսքով Ակօն—Մարիամի միակ եղբայրը—մի դեղեցկադէմ պատանի էր, թաղի բոլոր աղջիկները շատոնց իրանց աչքը նորա վրան էին ձգել, տաճիկ աղաները կանգնում և նորան էին նայում երբ անցնում էր և փոքր ինչ հեռու Մ. Կիրակոս աղայի քոյրը միշտ նորա հետ խօսակցութիւն էր մտնում, երբ սա դպրոցից տուն էր վերադառնում գրքերը կռնտակին։

Եթէ հարցնէին Ակօին մի կանոնաւոր հագուստ, թաղի մէջ ամենագեղեցիկը պիտի համարուէր. սակայն նորա վրայի բաճկոնը, ֆէսը և վարտիկը հազար ծակեր ունէին, կօշիկը մի հօխա ծանրութիւն՝ իւր վերայ կրող այլանդակ կարկատաններից, մազերը խոնջ և կեղտոտ, ձեռքերը ճաքճքած և կեղտի տաւթ կապած, իսկ դէմքը թէև միշտ լւանում էր, սակայն կամ կը թանաքոտէր և կամ ա-

նուշադրութեամբ կը սեւացնէր եկեղեցւոյ սեւ պատերը համբուրելու ժամանակ։

Երբ քոյրը կանչեց, Ակօն ծալեց ձեռքի գիրքը և մօտեցաւ. քոյրը գգւանօք նորան նայեց և

—Քեզի ղուրբա՛ն, Ակո՛, ասաց, փեսադ քեզ տեղ պիտի ուղարկի, կերթա՞ս։

—Կերթամ, ասաց Ակօն խոնարհութեամբ և քրոջ հետ ներս մտաւ։

Երբ ներս մտան՝ տանուտէրը թողել էր չիբուխը և մատներով հաշիւ էր տեսնում։

—Ակո՛, գոչեց նա խիստ ձայնով, դնա հաջի Մկրտիչ աղայի օդան և ասա որ քարերը եկել են... բայց, այդ ի՞նչ է հագուստներդ, փի՛նթի, դեռ երէկ էր որ նոր հագուստ հագար, ո՞վ գիտէ ինչ չափխնութիւններ [1]) ես անում...

Ակօն լռութեամբ գլուխ կախեց։

—Մա՛րդ, գոչեց կինը—խեղճ Ակօն ի՞նչ անի, որ իւր վրայի շորը մի տարիից աւելի չի դիմանում։

—Զա՛ղնդ, գոռաց տանուտէրը, յետոյ դարձաւ Ակօին և ասաց—գնա՛, շո՛ւտ արի...

Ակօն տեղիցը չը շարժուեց։

—Հ՛ը, գոռաց Մարտո՛սը,—քարացե՞լ ես ի՞նչ է, չես լսում, գնա և շուտ արի...

—Ձեմ գնա՛... ինձ ծեծում են տաճարի փողոցում...

—Ծիծում ե՞ն, ծիծաղեց Մարդոսը—վա՞յ իշի լակոտ վա՛յ, ահագին եզ ես դարձել ու ծե՞ծ էլ ես ուտում։

—Ի՞նչ անեմ, թոթովեց Ակօն, Կարապետ պատուելիի հինգ տղերքը փայտերով վրաս են թափվում ու ծեծում թէ ի՞նչ է, ես նրանց դասը չեմ սովորեցնում։

—Ի՞նչի չես սովորեցնում, բոշայի լակո՛տ։

—Ես ինքս եմ սովորում։

—Հա՛յտէ, գնա՛, էդպէս քարոզներ շատ ենք լսել, թամբա՛լ... ասա, որ քարերը եկել են... շո՛ւտ...

---

[1]) Սրիկայութիւններ։

Ակօն դողդողալով դուրս գնաց և նստեց փողոցի դռան վերայ ու սկսեց լաց լինել, իսկ քոյրը մէկ նորան և մէկ ամուսնուն էր նայում...

—Կորսուի՛ր, գոռաց նորա վերայ Մարտոսը ձրի հաց ուտել գիտե՞ս, Թամբալ, շուտ թէ չէ հոգիդ կը հանեմ, և խլեց պատին կոթնեցրած չիբուխը—տես քեզ ինչպէս կ'ուղարկեմ...

—Ակօն ոտքի ելաւ, Սաբան չը գնաց։

—Ձեռ լսում հա՞, գոչեց Մարդոսը։

Հազաւ կօշիկները ու ցած իջաւ չիբուխը բարձր բռնած, հրեց իւր դէմը կանգնած աղաչաւոր կնոջը և փողոց դուրս եկաւ...

Բայց այդ միջոցին պարտիզի պատի մօտ նստած մի երկարհասակ կին, որը, ոտերի մէջ առած մի ահագին ցուպ, կողքին ունենալով մի մեծ գամփռ, ննջում էր, գրաւեց Մարդոսի ուշադրութիւնը, նա մոռացաւ Ակօին, որը հեռու կանգնած դիտում էր, և մի քայլ արեց դէպի կինը։

Այդ ցնցոտիներով, բայց խոշոր մարմնով կինը գլուխը ձեռքերի մէջ առել, յայտնի չէր իսկապէս թէ քնած էր կամ արտասուում էր։

Երբ Մարդոսը մօտեցաւ, գամփռը գլուխը բարձրացրեց և մռմռաց. կինը ցնցուեց, ձեռքերը ետ քաշեց և դէմքը ցոյց տուաւ։

Միականի էր։

—Խաթ-Սաբա՛... գոռաց Մարդոսը ետ ետ քաշուելով...

Զ.

ՄԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Մարդոսը Խաթ-Սաբայի երկրորդ որդին էր, որ բաժանուել էր իւր ցեղից, եկել Էրզրում պսակուել էր մի ուրիշ բոշայի աղջկայ վերայ և քարհատութիւնով էր զբաղւում։

Մարդոսը թէև բոշա էր ինքը, թէև բոշայի աղջիկ էր առել, բայց մոռացելով այդ «նախաստական» անունից բոլորովին ազատուել, այսպիսի փոփոխութիւններ էր սկսել մտցնել իւր տան մէջ։

Կնոջը հրամայել էր, որ իւր ազգականների հետ երբէ՛ք յարաբերութիւն չ'ունենայ. որդիներին հայկական զուտ անուններով էր

յորջորջում, բոշաների երեսին երբէ՛ք չէր նայում և բացի իրանից ոչ ոք չը գիտէր թէ ինքը հայր-մայր ունի՞ թէ ոչ և եթէ ունի ի՞նչ ցեղից են. երկչարկանի տներ շինեց, բոշայական բոլոր սովորութիւնները վերցրեց իւր տնից, հրամայեց իւր կնոջ այլ ևս իրան «բոշայի աղջիկ» կոչելու թոյլ չը տալ և որ առաւելն է, իւր որդիներին սովորցնում էր ծաղրել երբեմն քաղաքում թափառող բոշաներին, վազել նոցա ետևից, քարեր ձգել, «մուռատաս բոշա» կանչել և «բոշան եկաւ, քեզ կը տանի» բառերից աւելի սարսափել, քան «թիւրքը եկաւ կամ բողբոջը քեզ կը տանի» բառերից... Աւելի քան տաս տարի էր, որ Մարտոսը մացրել էր իւր տան մէջ կրթութեան այդ ձևը, այնպէս, որ կինը այժմ վարժուել էր այլ ևս «բոշա» ասելով շնից ցած արարած հասկանալ, «բոշայի լակոտ» լսելով վիրաւորուել սաստիկ, վարժուել էր իրանց տունը եկող մաղ ծախող բոշաների վերայ կասկածանքով նայել և զգուշանալ, որ բան չը գողանան, մոռացել էր բոշայական առանձին շեշտը և լեզուն, սովորութիւններն իսկ սկսում էր կամաց կամաց փոխել և Մարտոսը տաս տարի աշխատելուց յետոյ յաջողուել էր բոլոր քաղաքից ճանաչուել զուտ հայ... այդ էր նորա փափագը, այլ ևս ոչ ոք գիտէր, որ թէ ինքը և թէ կինը բոշա էին, որովհետև կնոջ ծնողները մեռել էին և միայն Ակօն էր մնացել նրանցից...

Եւ եթէ Ակօին էլ դպրոցում «բոշայի լակոտ» էին անուանում, այդ նրանից էր, որ Ակօն շատ սէր ունէր թափառելու, անդադար գերեզմանատան ծառերի տակ գնում նստում էր, կիւրակի օրերը օրն ի բուն շրջակայ լեռները, Կըրք-Դէյիրման, Փալան-Թէօքանի, Լուսաւորչայ վանքի և այլ լեռների մէջ մենակ թափառում էր, բանջարներ էր ժողովում քաղաք բերում և ծախում էր իւր թղթի և գրքի համար փող ճարելու, դպրոցի մէջ ահագին առաւտուր էր դարձնում-գրչի ծայրեր, կոթեր, թուղթ, հին գրքեր էր առնում և ծախում, փողը հաւաքում քրոջն էր տալիս, սակայն ոչ ոք չը գիտէր, որ Ակօի այդ զումարը գործադրում էր ուսման պարագաների համար, պարագաներ, որոնցից ամեն տեսակից և շատ՝ պահանջել գիտեն թիւրքահայոց ռասուցիչները...

Այդ բանի համար Ակօին «բոշայի լակոտ» էին անուանում։

Ակօն լսելով այդ նախատական ածականը գանգատում էր,

ծիծկուտուում, լաց էր լինում և հազիւ մի քանի տարի յետոյ վարժեցրել էր իւր ընկերներին այլ ևս իրան «բոշայի լակոտ» չը կոչել...

Եւ այսպէս Մարտոսը լիովին հասել էր իւր փափագին, այլ ևս նա և իւր ընտանիքը բոշաներ չէին, այլ միայն Էրզրումի փոշ. Մահալէի հայ բնակիչներից ամենահարուստը և երկչարկանի տներ ունեցող Կարապետի որդի Մարտիրոսը—կարճ բառով—Կրպօինց Մարտոսը...

Նա արդէն մտածում էր, որ իւր մայրը մեռած կը լինի և ցեղակիցները աշխարհի, ո՞վ գիտէ, որ ծայրը կը լինին։

Ուստի, քարացաւ, երբ Ակօին չիբուխով ծեծելու ժամանակ իւր դրան մօտ տեսաւ իւր մօրը-Խաթ-Սաբային զինուած սհագին վիզով և գամփռի հետ։

Խաթ-Սաբան նրան նայեց, ոտքի ելաւ և ասաց խուլ ձայնով և բոշայական բարբառով։

—Սիսորո՞վի է (ա՞յս է տունդ)։

Ու մի քայլ յառաջացաւ դէպի դուռը։

Մարտոսը թողեց մօտենալու դրան, բայց երբ մայրը կամենում էր մտնել, մի ոտիւն գործելով փակեց նորա դէմը և կմկմալով ասաց.

—Այդ չէ իմ տունը։

Ա՛խ, այդ չէ՞, ուրեմն ո՞րն է տունդ, ներս գնանք, մայրդ յոգնել է, բայց կը խմի մի դաւաթ ջուր և քեզ կասէ իւր ասելիքը, որի համար նա երեք օրւայ ճանապարհ է կտրել և եկել է Էրզրում...

Մարտոսը շփոթւել էր և չը գիտէր ինչ անել. այդ միջոցին կինը դրան վերայ երևաց և տեսնելով, որ իւր ամուսինը մի բոշա կնոջ հետ խօսում է, իսկ Ակօն ազատ, հեռուից դիտում է, ժպտեց և ասաց.

—Մարտո՛ս, կերակուրը պատրաստ է, արի հաց ուտենք։

—Ա՛, գոչեց Խաթ-Սաբան—ուրեմն այս է եղել տունդ և դու ինձ խաբում ես, իսկ սա էլ կի՞նդ է... հը՛մ, վատ կին չի երևում, բայց շատ թոյլ է... ներս մտնենք։

Եւ առանց այլ և այլութեան ներս մտաւ, կանչեց գամփռին իւր մօտ, նստեց թոնիրի կողքին փռուած փսիաթի վերայ, ցուպը ծնկների վերայ դրաւ ու դառնալով տանտիկնոջ՝ ասաց.

—Հա՛րս, թէ թան ունիս մի քիչ թան տուր, թէ չ՚ունիս, մի ման ջուր տուր...

Մանուկները, որոնք մինչև Խաթ-Սաբայի խօսելը լռութեամբ դիտում էին այդ տեսարանը, յանկարծ ծափահարեցին և մօտենալով գոչեցին.

—Վ՚այ, բոշա է եղել...

—Մէկ աչք ունի, ծիծաղեց երկրորդը։

Մարտոսը երկու ուժգին հարուածներով կորեց նրանց խօսքը և հրեց մի կողմ։

Սակայն Խաթ-Սաբան արդէն լսել էր ամէն ինչ... կատաղութեամբ աչքերը ոլորեց, դունաթափուեց, ցուսպը բարձրացրեց, բայց նորէն ցած ձգեց և գլուխը խնարհեցնելով մռմռաց։

—Ի՞նչ կայ, բոշա եմ և մի աչք ունիմ... ի՞նչ վատ բան է այդ...

—Իրա՞ւ է, ասաց այդ միջոցին Մարիամը մօտենալով Խաթ-Սաբային մի թաս թանով—դու բոշա՞ ես։

Խաթ-Սաբան առաւ թասը, ոտքից մինչև գլուխ չափեց հարսին և ասաց խստութեամբ։

—Իսկ դու՞, երի՞կդ և տղանե՞րդ բոշա չէ՞ք։

—Մենք բոշա չենք պատասխանեց Մարիամը և ձեռքը դէպի նա պարզելով աւելացրեց... թասը ետ տուր, շուտ արա՛, չը դնես տոպրակի մէջ...

—Կնի՛կ... գոռաց Մարտոսը։

Խաթ-Սաբան դէն շպրտեց թասը և կաս-կարմիր կտրած վեր թռաւ տեղից, գամփռը ատամները ցոյց տուեց և սկսեց մռմռալ և Մարիամը մի ճիչ արձակելով ետ ետ քաշուեց։

—Մա՛րդ, այս բոշային ինչո՞ւ ներս թողիր, գոչեց նա—հիմա տղաներիս մէկը կը տանի կամ մի բան կը գողանայ...

—Կնի՛կ... որոտաց Մարտոսը—ձայնդ կտրի՛ր...

—Չէ, չէ՛, ասաց Խաթ-Սաբան—թող որ բոլորը ասի... աւա՛, սիրուն հարսս, էլ ինչ ասելիք ունիս...

—Դուրս գնա՛, ճչաց Մարիամը—մարդուս խելքին ասա, որ քեզ ներս թողեց...

—Ա՞յդ է բոլորը, պատասխանեց Խաթ-Սաբան—լա՛ւ, այժմ բեր ինձ նորից մի ման թան և գիտցի՛ր, որ բոլորդ էլ ինձ նման

բոշաներ էք, եթէ ես տղայ փախցնող եմ, դուք էլ էք, եթէ գող եմ, դուք էլ գող էք...

Նորից նստեց, մի շանթահար ակնարկ ձգեց որդու վերայ և ասաց բոշայական լեզուով։

—Եթէ մեր ցեղի օգուտը չը լինէր, այս կնոջդ թոնիրը, իսկ տղաներիդ կարասների մէջ կը խոթէի...

—Ների՛ր, ասաց Մարտոսը—չը գիտեն...

Մարիամը, որ մի քիչ հասկանում էր այդ լեզուն, զարմացաւ բոշա կնոջ յանդուգն խօսքերի և իւր մարդու «ներիր» բառի վերայ. լռութեամբ մի թաս թան տուաւ, յետոյ տղաներին իւր կողքին հաւաքեց և մի անկիւնը քաշուեց, իսկ Ակօն փողոցի դռնից ներս մտել կծկւել էր ալիւրի դարանի կողքին և լռութեամբ դիտում էր այդ տեսարանը։

Խաթ-Սաբան տեսաւ նրան։

—Ո՞վ է այն, հարցրեց նա իւր որդուն։

—Կնոջս եղբայրն է...

—Հը՛մ... գեղեցիկ տղայ է... իսկ երե՞ք որդի ունիս։

—Այո՛, երեք...

—Երե՞քն էլ բոշաներին ատում են։

Մարտոսը չը պատասխանեց։

—Եւ դո՞ւ, դո՞ւ էլ ատում ես քո ցեղակիցներիդ...

—Ե՞ս, թոթովեց Մարտոսը—ինձ համար բոլորն էլ մէկ են, հայ, թուրք կամ բոշա, բոլորն էլ մարդիկ են...

—Լաւ բոշան այդպէս չի ասիլ, այլ կ'ասի... ես բոշա եմ... իմ բարեկամներս նրանք են, որոնք չեն ատում բոշաներին, թշնամիներս նրանք՝ որոնք հանգիստ չեն թողնում նրանց... բայց դո՛ւ, երևի այլ ևս բոշա չես, ով գիտէ թիւրքացել ես... երանի հայ լինէիր, հայը գոնէ մեզ նման ճնշուած մի խեղճ ժողովուրդ է և հասկանում է բոշայի ցաւերը... իսո չե՞ս թիւրքացել։

—Ես Աստուածապաշտ եմ...

Խաթ-Սաբան ուշադրութեամբ նորան նայեց, յետոյ Մարիամին դարձաւ, հեգնութեամբ մի ակնարկ ձգեց նորա վերայ և ասաց.

—Հա՛րս, գիտե՞ս որ մարդդ իմ որդին է... դու իմ հարսն ես և որդիներդ իմ թոռներն են...

Իբր պատասխան դրան թոռներից մէկը գլուխը դուրս հանեց մօր թևի տակից, միջահատեց տատի խօսքը և գոռաց։

—Շո՛ւն բոշա...

Խաթ-Սաբան գունատափուեց, աչքը փայլեց, մի ոտիւն գործեց դէպի թոռը, բայց այնտեղ կանգ առաւ, չորս կողմը մի ակնարկ ձգեց, եկաւ որդու առջևը կանգնեց և գոռաց.

—Այս դո՞ւ ես սովորեցրել սրանց... 'ի հարկէ դու ես սովրեցրել...

Մարտոսը չը գիտէր ինչ անել, կատաղի ակնարկներ էր ձգում որդիների վերայ և մռմռում էր։

—Փողոցիցն են սովորել... փողոցիցը...

—Հայրի՛կ, գոչեց այն կողմից երկրորդ որդին—ես էլ ասե՞մ «շուն բոշա»...

Խաթ-Սաբան ցուպը ձեռք առաւ, քայլեց դէպի դուռը, յետոյ դարձաւ և ասաց որդուն...

—Հասան-Ղալայի բէգը մեր ցեղից 10 մարդ բռնել բանդն է դրել, մեր տաւարները քիւրդերը տարել են, լոմերը քաղցած են և խեղճ, ինձ ասացին, որ դու բէգի հետ բարեկամ ես, ոչինչ չե՞ս կարող անել ցեղակիցներիդ համար...

Այս սառնութեամբ ասուած խօսքերին Մարտոսը պահ մի չը կարողացաւ պատասխանել. կարմրեց, հազաց և կմկմաց.

—Թէև շատ բարեկամ եմ բէգի հետ, բայց չեմ կարող անել, որովհետև նա չը գիտէ որ ես էլ բոշա եմ...

—Հը՛մ, գիտէի որ այդպէս էր... ա՛յժմ, մնաս բարև... լոմերը մի կերպով կ'ազատուեն... բայց սկսած քո մօրից մինչև յետին Լոմը անիծում է քեզ՝ լինի նա ազատ կամ բանդարկուած... վախեցիր նրանց անէծքից, որովհետև մօրդ անէծքը խառնում է նրանց հետ... մնաս բարև... գնա մզկիթումդ աղօթիր, դրանդ առջևը հաւաքուած շներին հաց ցրի՛ր [1]) և սովրեցուր թոռներիս, որ իրանց տատին «շուն բոշա» կոչեն... անիծուի՛ս դու տնովդ տեղովդ...

---

[1]) Մահմեդականները այդպէս են անում. չաբաթը մի քանի անգամ շների համար լաւակապէս հաց են առնում և հաւաքելով նոցա կտրտում նոցա առջև։ Երզրումի Մուստաֆայ փաշան նշանաւոր էր այդ բանի մէջ։

Մի քայլ արաւ դէպի դուռը և երբ կամենում էր դուրս ելնել, տեսաւ Ակօին, կանգնեց նորա մօտ, պահ մի դիտեց նորա պատենական սիրուն դէմքը, յետոյ ձեռքը պարզեց դէպի նա և ասաց.

—Տղա՛յ, սիրեցի քեզ, ձեռքդ տուր տեսնեմ...

Առաւ ձեռքը, պարզեց դէպի նա և ասաց.

—Կը գա՞ս ինձ հետ, թէ չէ դու էլ դրանց պէս մեզ «շուն բոշա» ես կոչում... կը գա՞ս...

Ակօն քրոջը և փեսային նայեց։

—Ա՛խ, հասկացայ, ժպտեց Խաթ-Սաբան-դրանք քո տէրերն են... դու լա՛ւ ապագայ ունիս, եթէ երբէք կամենաս քո ցեղակիցներիդ միանալ՝ գնա՛ Թորթո՛ւմ, Լոմ-Գրիգորին հարցուր և կը հասնես նպատակիդ...

Ասաց, մի քայլ արեց դէպի դուռը, այնտեղ կանգ առնելով դարձա՛ւ, ձեռքը բարձրացրեց...

—Վա՛յ քե՛զ... գոչեց և արագութեամբ դուրս գնաց...

Գամփռը նոյնպէս դարձաւ, ատամները ցոյց տուեց Մարտոսին, մռմռաց և վազէ՝ի վազ հետևեց Խաթ-Սաբային, որը արագ քայլերով դէպի Ղաւազի դուռն էր գնում առանց ետ նայելու...

Է.

ՏՈՊՐԱԿՆԵՐԻ ՏՈՒՐՔ

Դաշտի մէջ ետ մնացող երեք այր, երեք կին և չորս մանուկ բոշաներ հարկահան զինուորներից բռնուել և բանդարկուել էին Զանգազուր, դեռ ևս պատճառը յայտնի չէր։ Լեռնում քիւրդերը խմբով յարձակուել էին բոշաների նախիրի վերայ, սպանել էին երկու բոշաների և տաւարները տարել. միայն Մուրատը կարողացել էր փախչել և Զիւինի դիւզում սպասող բոշաներին իմաց տալ իրանց կրած այդ մեծ հարուածը։

Բոշաների խումբը մնում էր անօթի, հազիւ տաս օրւայ պաշար ունէին. փորձեցին գիւղերն իջնել, բայց իջնողը բռնում էր և բանտարկում. դաշտը զինուորներով լիքն էր. բոշաները վախից գիշերները կրակ անգամ չէին վառում. սկսել էին բանջարեղէններով

կերակրելը, ամենքի ունեցածը մէջ տեղ բերին և հասարակաց բաժին դարձրին, բայց ծերունիները արդէն սկսել էին մտածել ապագայի համար և մի գիշեր ժողով կազմելով՝ Խաթ-Սաբայի վրանը մտան։ Խաթ-Սաբան ինքն էլ մտածում էր։ Խորհուրդը նրանով վերջացաւ, որ Խաթ-Սաբան ցուպը ձեռքն առաւ, գամփռին սուլեց և գնաց Էրզրում. նա գիտէր, որ իւր մեծ որդին Հասան-զալայի բէգի մօտ բարեկամն էր, թէև կասկածում էր որ Մարտոսը բոշաների համար մի բան անէր, բայց ուզեց փորձել և եթէ չը յաջողէր, մտադիր էր Էրզրումի մէջ յայտնի բարեսիրտ հայ ծերունուն դիմել...

Եւ երբ Խաթ-Սաբան Էրզրումումն էր, Զիւինի մէջ լցուած զինուորներից մի խումբ պատահմամբ Զիւինի դիւզից անցնելով բոշաների տեղը երևան հանեց։

Խումբը շրջապատեց բոշաներին և իրանցից մէկին ուղարկեց դաշտ՝ Զանգաղում նստած բէգին իմաց տալու, որ տուրքի նոր աղբիւրներ են գտնուած...

Միւս օրը առաւօտեան, Հասան-զալայի բէգը քսան զինուած ձիաներով Զիւինի դիւղը եկաւ և իջաւ ամենալաւ վրանի տակ։

Բոշաները դողդողալով սպասում էին, կանայք չէին երևում, իսկ մանուկները խումբ առ խումբ թաքնուած խոտերի մէջ դիտում էին նոցա։

Բէգը հրամայեց բոշաներին, որ իւր մօտ կանչեն իրանց ցեղապետին։

—Ո՞վ է ձեր ցեղապետը, հարցրեց նա բոշաներից։

Մեր ցեղապետը այստեղ չէ, պատասխանեց մի ծերունի բոշա մօտենալով։

—Որտե՞ղ է։

—Էրզրում է գնացել։

—Ի՞նչ է նորա անունը։

– Խաթ-Սաբա։

Բէգը մի քրքիջ արձակեց և նորա դրագիրը ու հարկահանը պարտք համարեցին նոյնպէս ծիծաղել։

—Այդ ի՛նչ այլանդակ անուն է, զոչեց բէգը։

—Զարմանալի անուն, վրայ տուաւ դրագիրը։

—Անասունի անուն է, աւելացրեց հարկահանը—դրանց ցեղա-

պետը կամ մի շուն կը լինի և կամ մի խոզ, չէ՞ որ սրանք հայ-բոշաներ են...

Եւ բոշաները լսում ու հասկանում էին այդ բոլորը։

—Ասա՛, ծիծաղեց բէգը ճաշակելով իւր առջև դրուած կարագը, որը գտել էր մի զաբթիէ տակն ու վրայ անելով ամբողջ օրան և մորակի հարուածներ տալով կանանց և մանուկներին—ապա՛ ասէք տեսնենք, ձեր ցեղապետը ի՞նչ տեսակ ջէնէրէր է...

—Կին է, ասաց ծերունին։

—Կի՞ն, գոչեց զարմացմամբ բէգը։

—Կի՞ն, առանց բեխե՞րի, բերանը բաց արեց գրագիրը։

—Եւ շրջազգեստո՞վ ու երկար մազերով—վեր թռաւ տեղից հարկահանը։

—Հեռաքրքրիր է, ասաց գրագրին և հարկահանին դառնալով բէգը։

—Էւէտ [1]) էֆէնդի՛մ... գիտեց գրագիրը խոնարհելով։

—Սահէ բույուր ուրսունուլ [2]) աւելացրեց հարկահանը նստելով—բայց ափսոս որ այստեղ չէ...

Եւ լռեցին, որովհետև բէգն էլ լռել՝ կարագ էր ուտում և աչքի տակով հեռուում պատկառանօք կանգնած բոշաներին էր նայում։

Զինուորները ձիերից իջել, նոցա ոտները կապել և արածելու էին թողել, իսկ իրանք երբ վրանները մտնելով ու մորակներով մի քանիսներին ծեծելուց յետոյ, ուտելու ոչինչ չէին գտել՝ իրանց պայուսակից հանել էին կապոցներով հաց, միս և փոխինդ՝ փուել էին վոսկի եզերքը և ճաշում էին քաղցած բոշաների աչքի առջև, որոնցից կը խլէին յետին ուտելիքը, եթէ սոքա ունենային։

Երբ բէգը բաւական կերաւ, դարձաւ իւր գրագրին և ասաց.

—Համով կարագ էր...

—Էւէտ, էֆէնդիմ, պատասխանեց գրագիրը.

—Դեռ այսօրուայ կարագ է... աւելացրեց հարկահանը և կողքին դրուած մի հատ տեսրակ ձեռքն առաւ։

—Հա՛, խօսեց բէգը—Ալլէդին էֆէ՛նդի, կարծո՞ւմ ես, որ այս խեղճ բոշաները տաւարներ ունենան։

---

[1]) Այո։

[2]) Ճշմարիտ էք հրամայում (ասում)։

—Ունին, դիտեց հարկահանը—այս կարագը նոր էր։

—Շատ էլ նորը չէր, դիտեց բէգը։

—Ի հարկէ նորը չէ, ասաց գրագիրը շոշափելով մնացորդ կարագը...

—Այո՛, շատ էլ նոր չէ, աւելացրեց հարկահանը ճաշակելով կարագից մի կտոր, այնուամենայնիւ կունենան տաւար, թող հարցնեմ... Յետոյ դարձաւ բոշաներից մի Ծերունիի և ասաց կոպտութեամբ.

—Մօտ արի. Ծերո՛ւնի։

Ծերունին մի քայլ մօտեցաւ։

—Անունդ ի՞նչ է։

—Սախակ...

—Քա՞նի տղայ ունիս...

—Տղաներս մեռել են։

—Քանի՞ կնիկ ունես։

—Մէկ հատ...

—Բէգը միջահատեց և ասաց հարկահանին։

—Ի՞նչ աւելորդ հարցեր են դրանք։

—Ճիշտ էք հրամայում, էֆէնդիմ, բայց ես գիտեմ սրանց հետ խօսելու ձևը... նախ սրտացաւ կ'երևամ, որ ինձնից բան չը պահեն...

—Ծերո՛ւնի, դարձաւ նա բոշային—քանի՞ տաւար ունիս։

—Տաւար չունիմ...

—Իսկ այս միւսնե՞րը...

—Ոչ մէկս էլ չունենք։

—Սո՛ւտ է, գոռաց բէգը։

—Այո՛, սուտ է, գոչեց գրագիրը...

—Աղա՛, ասաց բոշաներից մէկը մի քայլ յառաջանալով դէպի վրանը—ի՞նչու սուտ խօսենք... քիւրդերը վրայ տուին և մեր նախիրը բոլորը քշեցին տարան... քսան կով, 20 ոչխար, 4 էշ և 6 ձի... բոլորը տարան...

—Գրի՛ր, Ահմէդ էֆէնդի՛, ասաց հարկահանը գրագրին-քանի՞ ոչխար ասացիք, դարձաւ նա բոշային 18՞ հատ։

—20 հատ... բայց այժմ մի հատ էլ չը մնաց։

—Այդ իմ գործը չէ... յետոյ, 4 հ՞շ... գրում ե՞ս Ահմեդ էֆենդի՛... 6 հատ էլ ձի... լաւ յիշողութիւն ունիմ...

Եւ ժպտեց գոհութեամբ։

—Է՛, ասաց նա բոշային դառնալով-ուրեմն յիսուն հատ տաւար ունիք, հը՛մ, լա՛ւ...

—Զունինք այժմ մի հատ էլ, աղա՛, գոչեց Ծերունին-քիւրդերը տարան, մեզ քաղցած թողին, հիմա մենք խոտերով ենք կերակրուում...

Բէգը թիկն տւած՝ ծխում էր, գրագիրը գրչի կոթով ականջն էր խառնում, իսկ հարկահանը տետրակն էր քրքրում...

—Լա՛ւ, դարձաւ նա Ծերունի բոշային-50 տաւար ունիք, իսկ քանի՞ տղամարդ կայ ձեր օբայի մէջ...

—Ութ հոգի ենք, երկուսին քիւրդերը սպանեցին...

—Գրի՛ր, Ահմեդ էֆենդի—տասը նիւ ֆիւս։

—Տասը չենք, նորէն մէջ մտաւ Ծերունին—երկուսին քիւրդերը սպանեցին։

—Ե՞ս ինչ անեմ, ուսերը թոթուեց հարկահանը—լա՛ւ, այժմ ասա ինձ, քանի կին-մարդ կայ օբայում։

—Երեսունից աւելի կան...

—Վա՛հ, գոչեց բէգը-այդչափ շա՞տ։

—Նրանց մարդիկը դաշտումն էին, դուք բռնել էք ու բանդարկել, ասաց Ծերունին...

—Ա՛, ծիծաղեց հարկահանը—նրանք ձերոնցի՞ց էին... լա՛ւ, գրի՛ր Ահմեդ էֆենդի՛, 35 կամ 40, (՝ի հարկէ 40 կը գրես) կին և մարդկանց վերայ աւելացուր 15 հոգի... Ծերո՛ւնի, դարձաւ նա բոշային, բռնուածները 15 հոգի են և ոչ 10-ը... ես լաւ յիշողութիւն ունեմ, սուտ էլ խօսել չը գիտեմ... գրեցի՞ր, Ահմեդ էֆենդի... այժմ ջէմ արա...

—Իսկ սրանք մանուկներ չունի՞ն, հարցրեց բէգը յօրանջելով։

—Մանուկները չենք հաշուել, խեղճ են, դիտեց հարկահանը-մանուկներին մեծանալու ժամանակ կը հաշուենք... տեսնո՞ւմ ես, Ծերո՛ւնի, դարձաւ նա բոշային-ես գութ էլ ունեմ... լա՛ւ... այժմ մի բան ճնաց... ջէմ արի՞ր, Ահմեդ էֆենդի։

—Արեցի, դիտեց գրագիրը-քսան կով, հատը 3 դուրուշից՝ 60

ղուրուշ, քսան ոչխար, հատը 2 ղուրուշից 40 ղուրուշ, 4 էլ և 6 ձի-հատը 5 ղուրուշից՝ 50 ղուրուշ՝ այդ քեզ 150 ղուրուշ... շատ եղաւ, բայց ճիշտը այս է... 25 տղամարդ, հատը 18 ղուրուշից՝ 450 ղուրուշ, 40 կնիկ, հատը 4 ղուրուշից 160 ղուրուշ... բոլորը միասին... շատ չէ, միայն 760 ղուրուշ, 40 ղուրուշ էլ գրագրի և թովչիի վարձը՝ 800 ղուրուշ... ինչին գումար, սրա համար չարժէր էլ երկու ժամուայ ճանապարհ ելնել գալ...

—Սպասի՛ր, գոչեց հարկահանը— մի բան մոռացել էինք, սրանք բոլորը միասին 55 կամ 60 հոգի չե՞ն, ամեն մէկը մի մուրացկանութեան տոպրակ կ՚ունենայ, ինչպէս որ ամեն մի «չինդէնէ» ունի... դեռ մանուկներինը չեմ հաշուում... հատը 30 ղուրուշից քանի՞ կ՚անի։

—Ա՛յ, այդ լաւ, ժպտեց գրագիրը-այժմ գումարը մեծացաւ... և հաշուելով՝ ասաց-ընդամենը 2600 ղուրուշ... մի կլորիկ գումար... 60 տոպրակ հաշուեցի... հը՛, ի՞նչպէս է, լաւ թուաբանութիւն գիտե՞մ...

Այդ միջոցին բէգի աչքերը փակուել էին և նա արդէն քնել էր գլուխը դրած թուի վերայ։

Բոշաները սարսափմամբ լսում էին այդ հաշիւները և, երբ գումարը լսեցին, մի բարձրաձայն քրքիջ արձակեցին։

—Ի՞նչ է այն, գոչեց բէգը վեր թռնելով։

—Ի՞նչ պիտի լինի, աղա՛, ասաց մի ծերունի բոշա—այս աղաները հաշուեցին, որ 2600 ղուրուշ պիտի տանք...

—Հ՛ը, ի՞նչ կայ, ասաց բէգը—բերէք վճարէք, ելնենք երթանք, թէև քնելու համար վատ տեղ չէ այստեղ...

Եւ նորէն պառկեց։

—Իսկ մեր սպանուածնե՞րը, թալանուածնե՞րը, բանդարկուածնե՞րը...

—Գլուխ էք ցաւացնում, գոչեց բէգը պառկած տեղից—հեռացէ՛ք, կորէ՛ք և թողէք փոքր ինչ քնեմ...

Գրագիրը և հարկահանը դուրս եկան վրանից, մօտեցան վատակին, կուցով փոքր ինչ ջուր խմեցին և այնտեղ իսկ մէջքի վերայ փուեցին գետին...

Քիչ յետոյ թէ՛ բէգը, թէ գրագիրը, թէ հարկահանը և թէ զինուորները՝ բոլորն էլ քնել էին. արևը արդէն շատ տաքացել էր. նեռն իսկ վրանների հովանու տակ պառկած մրափում էին...

(Կը շարունակուի)

ՀԷՆՅԷ'ից

ՋԱՒԱԴ ԲԱԼՈՒՂԵԱՆՑԻ

VI

„Jch will meine Seele tauchen
Jn dem Kelch der Lilie hinein...

Երբ կընկղմեմ ես իմ հոգին
Շուշան ծաղկի կոկոնում՝
Թող շուշանը սիրուս մասին
Մի երգ շընչէ զողանջիւն։
Եւ թո՛ւլ երգը թըլպըլտալով,
Ելնէ՛, ինչպէս այն պաչիկ,
Որ նա տըւեց, դողդողալով,
Ինձ մի գիշեր երջանիկ։

VII

„Es stehen unbeweglich
Die Sterne in der Höh'...

Աստղերն անշարժ փայլում են —
Երկնից մեխած բիւր դարեր,
Միմեանց տըխուր նայում են,
Ասես, սրգում իրանց սէր։
Նրանք խօսում են իրար հետ
Քաղցրը, հարուստ մի լեզուով,

Որը ո՛չ մի լեզուագէտ
Չի՛ ըմբռնի իւր խելքով։
Բայց ես շատ շուտ կարդացի
Եւ երբէք մոռանում—
Ես այդ լեզուն սովրեցի
Շնորհիւ եարիս աչերուն։

VIII

„Warum sind denn die Rosen so blass,
Warum sind denn im grünen Gras
O sprich, mein Lieb, warum?
Die blauen Veilchen so stumm"!

Ինչո՞ւ վարդը գունատէ այնքան,
Ասա՛, իմ քաղցրիկ, ասա՛, սիրական,
Ինչո՞ւ է համբը և անխօս ծաղկում
Կապուտ մանուշակն կանաչ դաշտերում։
Ինչո՞ւ է փրչում Բալասան ծաղկից
Այդպիսի մի հոտ, ասես, դիակից
Եւ ո՞ւմ է այնքան թախծագին երգով
Արտուտը կանչում, վերև ճախրելով։
Ինչո՞ւ է դաժան, ցուրտ ու խրստագին
Արեգի տրուած լոյսը մարգերին...
Եւ ինչո՞ւ, ինչո՞ւ մրռայլէ այնքան
Սմայի աշխարհն, ինչպէս գերեզման։
Ինչո՞ւ ես ինքս հիւանդ եմ, տրրտում,
Ասա՛, դու իմ սէր, սրրտիս տնձկալին—
Ինչո՞ւ, օ, ինչո՞ւ յուսահատ օրում
Թողեցիր դու ինձ, հեռացար, անգին։

«Ես սիրելեմ վատ ընկերին։
«Զերթա՛ս և դու նոյն շաւղով։...»

Ասա՛ ինձ, ինչո՞ւ չար դարձայ այսպէս.
Ինչո՞ւ մաշեցաւ իմ մատաղ հոգիս.

Ինչո՞ւ աշխարհը ընկել է աչքես.
Տէր իմ, ախար, ի՞նչ պատահեց սրբոտիս։
Ինչո՞ւ անմեղ բառ, մի չընչին վարմունք
Կասկած է այժըմ իմ մէջը ծընում...
Ո՞ւր է այն սէրը, ո՞ւր է սրփոփանք,
Որ ըզգում էի մարդկանց շրջանում։
Այս ո՞ւրեմ փախչում, ո՞ւր, անհաշտ հոգւով,
Ե՛ւ ինձ, և՛ կեանքին անէծք կարդալով...
Ինչո՞ւ այս սատղեր, ինչո՞ւ այս լուսին
Վաղւան հրապոյրը ինձ համար չ'ունին։
Ինչո՞ւ աղջըկայ հայեացքը մեղմիկ
Զըզւանք է միայն իմ վերայ ազդում...
Ինչո՞ւ այն դիւթիչ ժըպիտը քաղցրիկ
Առաջւայ նըման չի ոգևորում։
Տէր իմ, չեմ եղած երբէք մարդատեաց...
Սակայն ինչո՞ւ ես, ասես, ցընորւած
Կ'ուզէի խեղդել ջոկ-ջոկ ամենքին,
Որ հանգիստ առնէր հիասթափ հոգին։...
Անազնիւ ընկեր, ինչո՞ւ քեզ այնպէս
Սիրում էի ես, անվերջ հաւատում...
Ինչո՞ւ իմ սիրտը հանեցի կըրծքէս
Եւ դըրի մի պէղծ Յուդայի սըրտում։
Այն իդէալը—զըզւած ու շոյած
Երկար և անքուն կէս-գիշերներին...
Սիրած մի անուն, մըտքերը փայփայած...
Այժմ փողոցում... մատնած ծաղրանքին...
Կեղտել, հայհոյել այն սրբբատեղին,
Ուր մենք ծընկաչոք կ'ողբայինք գետնին...
Եւ ով... ընկերըդ—այն «ազնիւ ընկերն»—
Նոյն իդէալի, նոյն մըտքի ընկերն...

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐՈՒԱՆԴ ՂԱԶԱՐԵԱՆԻ

Այս տարուայ «Աղբիւր»-ի № 4-ի մէջ պ. Աղայեանցը մի փոքրիկ արշաւանք գործեց «Մուրճ»-ի դէմ։ Ասում եմ փոքրիկ, որովհետև պ. Աղայեանցի յօդուածը՝ «կիսապատասխան» վերնագրով, ճշմարիտ որ շատ փոքր էր համեմատութեամբ այն խնդրի հետ, որ հեղինակը ցանկացել էր քննել և բացատրել այդ կիսապատասխանի մէջ։ Որովհետև հարցը վերաբերում էր իմ յօդուածին, որ տպագրուեց «Մուրճ»-ի № 3 ի մէջ, «Մանկական ընթերցանութիւն» վերնագրով, և որի մէջ ես մի թեթև նկատողութիւն էի արել պ. Աղայեանցի մանկական հէքիաթների առիթով, ուստի այդ պ. Աղայեանցի արած արշաւանքը իսկապէս իմ դէմ էր, իմ յայտնած մըտքերի և կարծիքների դէմ էր, հետևաբար և նրան պատասխանելու պարտականութիւնն էլ միանգամայն ինձ վերայ էր դրուած։ Բայց ես, հաւատալով պ. Աղայեանցի խոստմանը, անդադար սպասում էի որ նա լիովին յայտնէ իւր կարծիքները այդ խնդրի առիթով, որովհետև իւր կիսապատասխանի մէջ նա ասում է՝ թէ այդ յօդուածը առ ձեռն և շտապով գրուած մի բան է... Սակայն իմ սպասելը իզուր անցաւ, պ. Աղայեանցը իւր առձեռն և շտապով յայտնած մտքերի վերայ էլ ոչինչ չ՚ուզեց աւելացնել և ես այժմ երկար սպասելուց յետոյ, ստիպւած եմ հաշիւ տեսնել նորա կիսապատասխանի հետ... ինչ արած, լաւ է ուշ, քան ոչ երբէք։ Այնուամենայնիւ, ես անկարող եմ հասկանալ՝ թէ ինչու պ. Աղայեանցը խոյս է տալիս իւր մտքերը պարզ և որոշ յայտնելուց. ինչու նա ցանկանում է բաւականանալ մի քանի կցկտուր և անորոշ, մետաֆիզիքական դարձուածքներով, առանց որոշելու իւր ընթերցողների համար իւր մանկավարժական հասկացողութիւնները, առանց բացատրելու թէ ինչ մանկավարժական-դաստիարակչական սկզբունքներով է նա ղեկավարւում իւր մանկական գրուածքների մէջ։ Չէ որ այս խնդիրը մեր հասարակական ամենակարևոր խնդիրներից մէկն է, չէ որ պ. Աղայեանցի ուղիղ կամ սխալ կարծիքը այդ մասին, շատ հետաքրքիր է մեզ համար, շատ անհրաժեշտ է, թէ ընթերցող հասա-

բակութեան և թէ նոյն իսկ մամուլի, գրականութեան մէջ գործողների համար։ Փոխանակ լուրջ կերպով քննելու դաստիարակչական ամենագլխաւոր խնդիրներից մէկը—մանկական ընթերցանութեան խնդիրը,—փոխանակ պարզ, որոշ, հասկանալի և համոզեցուցիչ դատողութիւններով ու օրինակներով բացատրելու, որոշելու իւր դաստիարակչական հասկացողութիւնները և սկզբունքները, կրկնում եմ, փոխանակ այս խելացի օգտակար աշխատանքի, պ. Աղայեանցը մի քանի կարճ և դժուարհասկանալի վերացական դրութիւններով աշխատում է հաւատացնել իւր ընթերցողներին, որ «Մուրճ» ամսագիրը սխալւում է իւր կարծիքների մէջ, որ նրանում տպագրւած լուրջ յօդւածները «թերհաս մտքի արտադրութիւններ են», որ իւր գրած մանկական հէքիաթները ոչ թէ վնասակար, այլ շատ օգտակար են և արժանի են թէ մանուկների և թէ մեծերի ընթերցանութեան նիւթ լինելու։ Թողնելով մի կողմ այն էական և կարևոր նկատողութիւնները, որ ես արել էի իմ յօդւածում պ. Աղայեանցի երկու հէքիաթների—Եղեղնոյի և Ջանգի-Ջրանգի,—առիթով, զգուշութեամբ խոյս տալով իմ յայտնած գլխաւոր մտքի դէմ վիճելուց, պ. Աղայեանցը ամենայն եռանդով աշխատում է ապացուցանել, կամ աւելի լաւ է ասել՝ աշխատում է «զոռով հաւատացնել» իւր ընթերցողներին, որ հէքիաթները առհասարակ վնասակար չեն երեխաների համար, որ հէքիաթական գրւածքները կարող են ծառայել որպէս մանկական ընթերցանութեան նիւթեր, կարող են կրթիչ ազդեցութիւն անել երեխաների զգացմունքների և երևակայութեան վերայ։ Բայց միթէ ես հակառակ եմ դրան, միթէ ես իմ յօդւածում («Մանկական ընթերցանութիւն» «Մուրճ» № 3) յայտնել եմ այն մտքը, որ հէքիաթները, առհասարակ, ինչ տեսակ էլ որ լինին,—վնասակար են մանուկների համար։ Եթէ իրաւ ես հակառակ լինէի ամեն տեսակի և ամեն բովանդակութեան հէքիաթներին, եթէ հէքիաթական տարրը միանգամայն ես վնասակար համարէի երեխաների ընթերցանութեան համար, այն ժամանակ էլ ինչու միևնոյն իմ յօդւածում կը խօսէի յունաց միթոլոգիական հէքիաթների մասին, ինչու կը վիշտի Պրոմեթէոսի կարճառում բովանդակութիւնը, իբրև օրինակելի և արժանի ընթերցանութեան հէքիաթ։ Միթէ պ. Աղայեանցը չի վիշում իմ յօդւածի այդ կտորը. եթէ չի վիշում՝ ես ուրախութեամբ կը վիշեցնեմ նրան։ «Պատահում են, ճշմարիտ, այնպիսի հէքիաթներ, որտեղ մարդիկ՝ դիւցազնական, բոլոր անհասանելի ոյժերով, ֆանտաստիկական վառ պատկերներով և շլացնող, ապշեցնող հսկայական քաջութեամբ՝ կատարում են վսեմ իդէալական գործեր, մարդասիրական, կամ հայրենասիրական աղնիւ յաղթութիւններ. այսպիսի հէքիաթային հերոսներ են յունաց միթոլոգիայի մէջ՝ Հերկուլէսը, Թէզէոսը, Պրոմեթէոսը և այն։ Պրոմէթէոսը մարդկային ազգը փրկելու համար՝ երկնքից խլում է աստուծային հուրը և տալիս է մարդոց... իսկ ինքը, այդ զարհուրելի յանդգնութեան և մեծ «չարագործութեան» համար, արժանանում է աստուածների

ամենախստ պատժի։ Ձևսի հրամանով նրան չղթայական դամում են Կովկասի բարձր լեռների վրայ, որտեղ գիշակեր անդը պէտք է լաւիտեանս տանջէ նրան՝ անդադար կոցահարելով նորա սիրտը։ Սա էլ է մի հէքիաթ. բայց այստեղ հէքիաթի տարօրինակ ֆանտաստիկական ձևը այն է անում, որ ներքին բարձր դաղափարը, այդ ձևի մէջ արտայայտելով, ամենազօրեն և խոր տպաւորութիւն է անում մարդու վերայ և երևխան՝ այդ դաղափարի ուժեղ տպաւորութեան տակ՝ ամենևին չի էլ նկատում, արտաքին ձևի տարօրինակ և անբնական լինելը։ Այդպիսի հէքիաթը, ուղիղ որ, կարող է կրթել երևխային, կարող է զարթեցնել նորա մէջ, բարձր, աստուածային զդացմունքներ»։

Սրանից պարզ երևում է, որ միչեալ չօդուածում՝ իմ խօսքը եղել է ոչ թէ հէքիաթական լոկ ձևի մասին, որ ես բողոքել եմ ոչ թէ առհասարակ բոլոր հէքիաթների դէմ, ինչպէս ուզում է հաւատացնել պ. Աղայեանցը, այլ ընդհակառակ այդ հէքիաթներից որոշ տեսակի, որոշ ուղղութիւն և տենդենցիա ունեցողների դէմ, որոնց կարգին պատկանում են և պ. Աղայեանցի երկու իմ առաջ բերած հէքիաթները՝ Եղեգնուհի և Ջանգի-Ջրանգի։ Այս երկու հէքիաթները քննելով, նրանց վնասակար և մոլորեցնող լատկութիւնները ցոյց տալով, ես ընդհանրացրել եմ իմ խօսքը բոլոր այդ տեսակ հէքիաթների մասին, իսկ որպէս զի ցոյց տամ պ. Աղայեանցին թէ էլ ինչ տեսակ ուրիշ հէքիաթներ կարող են լինել, ես մատնացոյց եմ արել, լաբն առաջին պատահած օրինակ, լունայ դիցաբանական հէքիաթներից մէկի վերայ։ Ուզեցել եմ ասել, որ հէքիաթ անունը չը պէտք է վերաբերել միայն պ. Աղայեանցի գրածներին, որ այդ գրածներից զատ կան նաև ուրիշ հէքիաթներ, որոնք հիմնովին տարբերվում են այդ հէքիաթներից իրանց ներքին դաղափարական արժանաւորութիւններով։

II

Իսկապէս ինդրի էական և ամենադլխաւոր մասը հենց նրանումն է, որ պ. Աղայեանցը ոչ մի նշանակութիւն չէ տալիս հէքիաթի ներքին, դաղափարային արժանաւորութեանը։ Նորա կարծիքով՝ բաւական է, որ հէքիաթը լինի միմիայն հէքիաթ, որ նա կրէ «հէքիաթի առասպելական, հնութեան դրոշմը»՝ ուրիշ ոչինչ. Իսկ թէ այդ առասպելական և հնութեան դրոշմի տակ ինչ դաղափար է ծածկված—այդ բոլորովին միևնոյնն է պ. Աղայեանցի համար։ Նա մինչև անդամ չի էլ մտածում այդ մասին, նորա համար, կարծես, այդ գլխաւոր և ամենամեծ պայմանը—հէքիաթի բովանդակութեան, դաղափարի պայմանը չը կայ ամենևին։ Այս տեսակ զուտ ոլիմպիական սառը և չեղոք տրամադրութեամբ պ. Աղայեանցը որոնում, գտնում է հին առասպելներ, հէքիաթներ, աւանդութիւններ, գրի է առնում այդ բոլոր հնութեան մնացորդները և ինքնաբաւական ուրախու-

թեամբ առաջարկում է այդ բոլոր խամՃ-ը հալ երեխաներին, որպէս ընթերցանութեան օգտակար և դաստիարակիչ նիւթ։ Եւ ահա դուրս են գալիս «Աղբիւր»-ի մէջ «Եղեղնուհի» «Զանգի-Զրանգի» և սրանց նման հրեշաւոր հէքիաթներ, որտեղ ընթերցողի երևակայութեանը ներկայանում են ֆանտաստիկական այլանդակ տեսարաններ, սատանաների, դևերի, գայլերի և չների անմիտ և անբովանդակ համբախաղութիւն (пантомима)։ Այդ չորքոտանի, երևելի և աներևոյթ կենդանի «քեանդրբազները» պ. Աղալեանցի բանաստեղծական քնարի եղանակով սկսում են պար գալ մեր առաջ, սկսում են իրանց բոլոր անասնական, սատանայական, դիւական և քաջքաջին ճարպիկութիւնները ցոյց տալ մեր երեխաներին... Սատանաները թռչկոտում են միմեանց չալակ, թափ են տալիս իրանց պոչերը, պարում են, երգում են և ամեն տեսակ «սատանայութիւններ» են անում։ Շները հաչում են սատանաների վերայ. խածոտում են նրանց «թարա» ոտները։ Յանկարծ գետնի տակից դուրս է գալիս ծծկեր երեխան, ահագին տաշտով խմորը գլխին դրած։ Սատանաները և շները լարձակւում են երեխայի վերայ, ուզում են խլել նրանից տաշտը։ Սկսում է սաստիկ կռիւ, բարձրանում է աղմուկ, ճիչ, գոռում-գոչիւն։ Այդ խառնակութեան ժամանակ մէկ էլ լանկարծ լսում է պ. Աղալեանցի բարձր և խռպոտ ձայնը.—լռութիւն։ Բոլորը ոչնչանում են մի ակնթարթում խաւարի և անլայտութեան մէջ։ Ներկայացումը վերջանում է և հետաքրքիր երեխաները լոգնած, թուլացած, ապշած և վախեցած՝ շտապով փախչում, ընկնում են իրանց ծնողների գիրկը՝ երկար ժամանակ չը կարողանալով աղատուել պ. Աղալեանցի ներկայացրած կենդանական և դիւային հրեշաւոր թատրոնի ազդեցութեան տակից...

Որպէս զի ընթերցողը ինձ չը մեղադրէ միակողմանի չափազանցութեան մէջ՝ կարծելով թէ ես դիտմամբ ինձանից հնարում եմ այդպիսի խայտառակ պատմութիւններ և «օլիններ»՝ ես նախ առաջարկում եմ նրան կարդալ պ. Աղալեանցի վերոյիշեալ երկու հէքիաթները և լետոյ լսել ինձ հետ պատահած հետևեալ իրական դէպքի պատմութիւնը։ Դեռ նոր էր հրատարակւել «Աղբիւր»-ի այս տարեալ № 2, որտեղ տպած էր պ. Աղալեանցի Զանգի-Զրանգին։ Ես մի օր, ճաշից լետոյ, լարմար ժամանակ գտայ և անկողնիս վերայ պառկած՝ հետաքրքրութեամբ սկսեցի կարդալ այդ նոր հէքիաթը, որի բովանդակութեան հետ ես ամենևին ծանօթ չէի։ Ընթերցանութիւնը տևեց մի որ և իցէ 10 րոպէ, որից լետոյ ես արդէն քնած էի... Կարդացածս հէքիաթը չարունակեց աղդել ինձ վերայ և քնած ժամանակ և ես այդ օր տեսայ զանազան այլանդակ, անբովանդակ և սարսափեցնող երազներ. խմբերով սատանաները, գայլերը և շները, մերկ երեխաները, պառաւ կանայք և այլն և այլն չարունակ անցնում էին իմ քնած երևակայութեան միջից՝ պատճառելով ինձ երբեմն ծիծաղ, երբեմն վախ ու սարսափ, երբեմն զարմանք և ապշութիւն։ Երակի խեղդող, ճնշող տպա-

տրութեան տակ՝ ես զարթնեցի և, աշխատելով գտնել այդ բոլոր տեսածիս պատճառը, մանճակալիս մօտ, աթոռի վերայ նկատեցի «Աղբիւր»-ի համարը և իսկոյն ամէն բան հասկացայ... Եթէ որ ինձ վերայ այսպիսի տպաւորութիւն արեց պ. Աղայեանցի հէքիաթը, հապա փոքրիկ երեխաների վերայ ինչպէս կ'ազդէ.—մտածեցի ես այն ժամանակ։ Այս ճշմարիտ հոգերանական երևոյթը, որ ինձ հետ պատահեց, կարելի է բացատրել, իմ կարծիքով՝ այսպէս. Զանգի-Զրանգի հէքիաթը ճիշդ այնպիսի հէքիաթ է, ինչպէս որ սիրում է ինքը պ. Աղայեանցը. այսինքն կրում է իւր վերայ «հէքիաթի առասպելական և հնութեան դրոշմը»։ Կրելով իւր վերայ այդ առասպելական և հնութեան դրոշմը Զանգի-Զրանգին չի պարունակում իւր մէջ ոչ մի բարձր գաղափար, ոչ մի ճշմարիտ մարդկային խոր և բարոյական հասկացողութիւն։ Ընթերցողը նրանից չի ստանում ոչինչ ազնիւ և բարձր ոգևորութիւն, ոչ մի խելացի, օգտակար օրինակ... Ընթերցողը երևակայում է նորա միջի զանազան հրէշաւոր արարածները, դէպքերը, երևոյթները և նորա երևակայութիւնը խեղդւում, ճնշւում է այդ տեսարանների մեքենական ազդեցութեան տակ։

Արտաքին փաստերը և երևոյթները մնում են լոկ փաստեր և անբովանդակ երևոյթներ. ոչ մի ընդհանուր գաղափար չի թուլացնում այդ հրէշաւոր անցքերի տպաւորութիւնը, ոչ մի բարձր հոգեկան ոգևորութիւն չի մեղմացնում հէքիաթի արտաքին ալանդակ տեսարանների և պատկերների ազդեցութիւնը, որովհետև Զանգի-Զրանգին միմիայն կրում է իւր վերայ հէքիաթի առասպելական և հնութեան դրոշմը... Նա գրվում և տպվում է լոկ նրա համար, որ մարդիկ կարդան և երևակայեն, պատկերացնեն նրա մէջ նկարագրւած անցքերը, դէպքերը երևելի և աներևոյթ կենդանիները, քաջքերը, մարդադալլերը, սատանաները... Շատ բնական է որ քնած ժամանակ էլ մարդու երևակայութիւնը վերարտադրէ, պատկերացնէ նոյն բանը, ինչով որ ճնշւած է եղել արթուն ժամանակ, շատ հաւանական է, որ երեխաներն էլ բացի սարսափից և վախից ուրիշ ոչ մի տպաւորութիւն չը ստանան այդպիսի հէքիաթներ կարդալուց։ Բայց պ. Աղայեանցը ամենևին չի մտածում այս բանների մասին. նա «պնդում է» որ այդ բոլորը ոչ միայն վնասակար չէ, այլ շատ և շատ օգտակար։ Նա խորհուրդ է տալիս, որ հայ հասարակութիւնը մեծից մինչև փոքր կարդայ նորա հէքիաթները և, մինչև անգամ, դեռ չնորհակալ մնայ նրանից.

III

Կամենալով հէքիաթների նշանակութիւնը բարձրացնել և նրանց դաստիարակչական արժէքը աւելի չչափելի կացուցանել ընթերցողների համար՝ պ. Աղայեանցը համեմատում է հէքիաթը մայրական կաթի հետ և ուզում է մեզ հաւատացնել՝ թէ որքան որ այդ կաթը անհրաժեշտ է

երեխայի ֆիզիկական առողջությունը կազդուրելու, ամրացնելու և կանոնաւոր ընթացքով զարգացնելու համար, նոյնքան էլ հէքիաթը (մանաւանդ Եղեգնուհին և Զանգի-Զրանգին, այնպէս չէ՞ր...) անհրաժեշտ է մարդու հոգեկան ոյժերը զարգացնելու, նորա ընդունակութիւնները և ձիրքերը սնուցանելու, բեղմնաւորելու համար։ Նա ասում է «հէքիաթը մեր երևակայութեան, մեր տաղանդի ու հանճարի կաթն է։ Այդ կաթը ինչպէս անդադար է եղել մեզանից քառասուն դար առաջ, նոյնքան անդադար կը լինի և քառասուն դար մեզանից յետոյ»։

Համեմատութիւնը, անալոգիան շատ անգամ փոխանակ պարզելու մի խնդիր՝ աւելի խճճում, աւելի անհասկանալի և մութն է դարձնում. նա. մանաւանդ երբ այդ անալոգիան սխալ և անյաջող է գործ դրած։ Պ. Աղայեանցը՝ փոխանակ մանրամասն խորհրդածութիւններով ու փաստերով բացատրելու հէքիաթի նշանակութիւնը դաստիարակութեան գործում, վերցնում և մի անյաջող համեմատութիւն է անում, որով իւր միտքը աւելի քօղարկվում, աւելի պղտոր և անմատչելի է դառնում։ Բնագիտութիւնից մեզ յայտնի է, որ կաթը ծծկեր երեխայի համար ամենասննդարար, ամենաղիւրամարս կերակուրն է։ Այդ հեղուկը, պարունակելով իւր մէջ երեխայի մարմնին անհրաժեշտ բոլոր քիմիական նիւթերը, կարողանում է լրացնել նորա մարմնի բոլոր պակասող մասերը, կարողանում է սնունդ տալ և՛ մկանունքներին, և՛ ոսկորներին, և՛ թոքերին, և՛ արտաքին մաշկին ու նորա վերայ եղած եղջրային մասերին—եղունգներին, մազերին։ Բայց միթէ միևնոյն դերը կարող է կատարել հէքիաթը հասակաւոր երեխայի հոգեկան ընդունակութեանց նկատմամբ։ Միթէ հէքիաթը կարող է կրթել, զարգացնել երեխայի և՛ մտածելու ընդունակութիւնը, և՛ երևակայութիւնը, և՛ լիշողութիւնը, և՛ բարոյական զգացմունքները և՛ դիտելու, ըմբռնելու, համեմատելու բոլոր զանազանակերպ, բարդ ընդունակութիւնները... Եթէ դաստիարակութեան գործը այդքան հեշտ և միակերպ լիներ, այն ժամանակ էլ ինչ հարկաւոր էին Եւրոպական բոլոր մանկավարժների չարչարանքը, ինչի համար էին մանկական պարտէզները, խաղերը, զրոսանքները, ընդդիտական և առարկայական դրոյցները և այլն և այլն։ Կը վերցնէին և պ. Աղայեանցի «բէցկ»-ով հէքիաթներ կը պատմէին երեխաներին՝ հէքիաթներ, հէքիաթներ և հէքիաթներ... Սակայն, դժբաղդաբար, դաստիարակութեան գործը այնքան հասարակ և պարզ չէ և պ. Աղայեանցի առաջարկած հէքիաթները չեն կարող այն դերը կատարել երեխայոց դաստիարակութեան համար, ինչ դեր որ կատարում է մայրական կաթը՝ նրանց մարմնի աճելու, զարգացնելու վերաբերութեամբ։

Այդ միևնոյն համեմատութեան մէջ պ. Աղայեանցը ասում է, որ եթէ 40 դար առաջ հէքիաթը օգտակար է եղել մարդոց դաստիարակութեան համար, միևնոյն հէքիաթը օգտակար կը լինի և մեզանից 40 դար յետոյ «Աղբիւրի» մէջ նա խօսում է կաթի մասին, հասկանալով, ի հարկէ, կաթ

խօսքի տակ՝ հէքիաթը։ Այս մի քանի խօսքի մէջ պ. Աղալեանցը արտայայտում է իւր «անշարժութեան թէօրիայի» դլխաւոր սկզբունքը։ Նա ընդունում է, որ դաստիարակութեան մէջ մարդկութիւնը ոչ մի առաջադիմութիւն չի անում, որ մեզանից չորս հազար տարի առաջ մարդկութիւնը դաստիարակվում էր նոյն հէքիաթներով, ինչ հէքիաթներով որ դաստիարակելու է նաև մեզանից չորս հազար տարի լետոյ...։ Մի գրչի հասարակ շարժումով պ. Աղալեանցն ոչնչացնում է ամբողջ գիտութիւնը, ամբողջ դարերով հաւաքւած ու բարդւած մարդկային մտքի բոլոր արտադրութիւնները՝ իրանց հանճարեղ ներկայացուցիչներով՝ սկսեալ Արիստոտէլից մինչև անդլիացի մեծ բնագէտը-Դարվինը։ Պատմական ամենահին դարերից՝ գիտութիւնը և փիլիսոփայութիւնը անցնելով հազար տեսակ փոթորիկների, վտանգների միջից, ենթարկւելով բազմաթիւ նեղութիւնների, արգելքների և հալածանաց՝ անդադար զարգացել, անդադար հարստացել կազդուրւել են մինչև որ կարողացել են հասնել այն բարձրութեանը, այն հսկայական ուժեղութեանը, ինչ որ մենք տեսնում ենք ներկայումս։ Դարերով զարգացած, կազդուրւած և ամրնացած եւրոպական գիտութիւնը, իւր վերջին ամենամեծ փիլիսոփայական եզրակացութիւնը տւեց բնութեան և մարդկային կեանքի բոլոր երևոյթների վերաբերութեամբ՝ Դարվինի հռչակաւոր և անմահ թէօրիայով, որը մեզ ուսուցանում է բնութեան և կեանքի զարգանալու, կատարելագործւելու, առաջադիմելու օրէնքները։

Այդ մեծ թէօրիայի հիման վերայ՝ ինչպէս որ բնութեան մէջ ամեն արարած՝ թէ չնչաւոր և թէ անշունչ՝ նոյնպէս և մարդը, ենթարկւած է մշտական, փոփոխութեան, մշտական և անընդհատ կատարելագործւելու, զարգանալու, բարդւելու, առաջադիմելու օրէնքին։ Առաջադիմութեան, պրոգրէսսի օրէնքը մշտական է, անփոփոխ է բոլոր մարդոց, բոլոր ազգերի և ցեղերի համար, ինչպէս որ ընդհանուր է նաև բոլոր կենդանի և անշունչ արարածների համար։ Մարդկային ազգը մեզանից չորս հազար տարի առաջ այն չէր, ինչ որ այժմ է. այժմեան մարդը, իւր ֆիզիկական և հոգեկան բոլոր ուժերով, ընդունակութիւններով, իւր մտաւորական հասարակական յարաբերութիւններով, սովորութիւններով, ինստինկտներով ու հակումներով բոլորովին տարբերվում, զանազանվում է պատմական-հեռաւոր ժամանակներում ապրող մարդկանցից։ Պատմական մարդոց գիտութիւնը, նրանց բարոյական համոզմունքները, նրանց ընտանեկան և հասարակական յարաբերութիւնները՝ ամենևին պարտաւորական չեն մեզ համար, ամենևին չեն կարող օրինակ լինել այժմեան մարդոց կեանքի գործունէութեան մէջ։ Ամեն ժամանակ, ամեն պատմական շրջան ունի իւր սեփական, յատուկ պահանջները, իւր խնդիրները, իւր ձգտումները և իդէալները։ Պատմական ժամանակների փորձը մեզ օգտակար է այնչափով, որչափով որ այդ հարկաւոր է մեր այժմեան կեանքի թերութիւնները,

սխալները և մոլորութիւնները դրստելու, նախատելու և հասկանալու համար։ Իսկ լիովին, առանց փոփոխութեան, առանց նորադոյն հասկացողութեանց, դաղափարների և պահանջների ներդաշնակ միաւորութեան, պատմական աւանդութիւնը, տրադիցիան ոչ միայն օգուտ չէ մեզ, այլ և չատ վնաս է, մոլորեցնող է, բթացնող է... Նոյնը, աւելի մեծ չափով, կարելի է ասել և դաստիարակութեան մասին։ Ինչ հոգեկան և ֆիզիքական պահանջներ որ ունէր մարդը այն ժամանակ, նոյնը չունի խօ և ներկայումս։ Հետևաբար և դաստիարակութեան միջոցները չատ խոր և հիմնական կերպով զանազանվում են միմիանցից. այն մաքերը, դաղափարները, զգացմունքները և սովորութիւնները, որոնցով մարդիկ դաստիարակւել են մի քանի հազար տարի առաջ, ներկայումս գուց է բոլորովին վնասակար, անբարոյական են համարվում... Այն հէքիաթները, պատմութիւնները, առակները ասացուածքները, որոնցով կրթւել, դաստիարակել են Հայկ նահապետը, Կիւրոսը, Աղէքսանդր մակենդանացին և այլն՝ այդ միևնոյն հէքիաթները և պատմութիւնները, իսկ թեամբ. առանց փոփոխութեան, առանց նոր պահանջներին յարմարացնելու՝ բոլորովին անյարմար վնասակար, հակամանկավարժական են ներկայ սերնդի կրթութեան, դաստիարակութեան համար։ Որովհետև ամեն ժամանակ ունի իւր առանձին պահանջները, և դաստիարակութեան թէ եղանակը, թէ նիւթերը և թէ նպատակները անդադար փոխվում են ժամանակների ընթացքում, ինչպէս որ փոխվում, զարդանում, կատարելագործվում են մարդու թէ ֆիզիքական և թէ հոգեկան ուժերը, ընդունակութիւնները։ Այս հասարակ, արմատական և ընդհանուր մարդկային ճշմարտութիւնը պ. Աղայեանցը հերքում է երկու «կարճ և աղդու» նախադասութիւններով...

IV

Ցուցածիս երկրորդ գլխում ասացի, որ պ. Աղայեանցը ոչ մի նշանակութիւն չի տալիս հէքիաթի ներքին, դաղափարային արժանաւորութեանը։ Եւ ճշմարիտ, պ. Աղայեանցի երևակայած հիքիաթային հերոսները ունին ամեն տեսակ վիթխարի յատկութիւններ. ահագին ֆիզիկական ուժ, մեծ քաջասրտութիւն և այլ տեսակ ուժեղ յատկութիւններ, բացի մարդասիրական զգացմունքից, բացի ներքին բարոյական, դաղափարային ուժից։ Իւր «կիսապատասխանի» մէջ պ. Աղայեանցը հետևեալ եղանակով է որոշում հէքիաթային հերոսների բարոյական արժանաւորութիւնը. «էլ ինչ Հերքուլէս, եթէ նորա սպանած վիշապը պէտք է մի հասարակ օձ լինի և ոչ մի հիդրա բաղմագլուխ, որ երբ մի գլուխը կտրեն, միւսը տեղը բանի։

Եթէ այդ վիշապը զարհուրելի է, որքան առաւել հիանալի է Հերքիւլէսի սիրտը, նորա անվեհերութիւնը, նորա քաջութիւնը, նորա հնարա-

րագիտութիւնը»։ Ոչ ոք չի կարող վիճել, որ քաջութիւնը, անվեհերութիւնը, արիութիւնը լաւ յատկութիւններ են, որ այդ հոգեկան ընդունակութիւնները կարեւոր են, անհրաժեշտ են մարդոց համար, որ դաստիարակութեան մէջ երեխայոց պէտք է ոգեւորել այդպիսի վսեմ հոգեկան ոյժերով։ Բայց մթթէ դաստիարակութեան գլխաւոր, վերջնական նպատակը այդ է, մթթէ քաջութեան, արիութեան, հնարագիտութեան զաղափարներով է առաջադիմում մարդկութիւնը, այդ զաղափարներով է զարգանում հասարակական կեանքը, մարդկային ընկերական յարաբերութիւնները, ընտանեկան քաղաքացիական, ազգային և ընդհանուր մարդկային զգացմունքները... Մթթէ քաջութիւնը, անվեհերութիւնը, հնարագիտութիւնը, կարող են բաւականացնել մեր բարոյական պահանջմունքները, մթթէ այդ յատկութիւններով ենք չափում ներկայումս մարդոց արժէքը, նրանց իսկական՝ և ոչ խաբուսիկ, շողոքորթական՝ յարգը և պատիւը։ Քեարիմ աւազակապետը ոչնչով պակաս չէ պ. Աղայեանցի երևակայած հերոսներից՝ քաջութեան, անվեհերութեան, արիութեան, հնարագիտութեան կողմանէ։ Բայց ո՞վ կը համարձակուի նորա կատարած «քաջութիւնների» պատմութիւնը առաջարկել երեխայոց, որպէս կրթութեան, դաստիարակութեան միջոց, ո՞վ կը ոգեւորուի այդ աւազակի արած ամենայանդուգն, ամենավստահ, ամենամարդկային և հնարագէտ գործերով, յաղթութիւններով... Ընդհակառակ Խրիմեան Հայրիկը, որ թէ քաջութեան, թէ անվեհերութեան և թէ, մանաւանդ, «հնարագիտութեան» կողմից ոչնչով յայտնի չէ մեզ՝—այդ մարդը գրաւել է ոչ միայն մեր, հայերիս, այլ և շատ օտար ազգերի անկեղծ ոչը և բուռն համակրութիւնը։ Ինչո՞ւմն է կայանում Խրիմեան Հայրիկի գլխաւոր ոյժը, նորա հոգեկան ընդունակութեան էական և ամենաերևելի կողմը. ինչ մագնիսական ոյժով նա կարողացել է գրաւել, կաչկանդել միլիոնաւոր ամբոխի սիրտն ու հոգին...։ Խրիմեան Հայրիկի գլխաւոր և ամենամեծ ընդունակութիւնը՝ նորա սիրելու ընդունակութիւնն է, նորա չափազանց ինքնուրաց և խորը ժողովրդասիրութեան ոգին է։ Սիրել ժողովուրդը, ամբոխը իւր անձից աւելի, տալ այդ ամբոխի բարեկեցութեանը ամեն բան—աշխատանք, փող, առողջութիւն և կեանք՝—ահա Խրիմեան Հայրիկի ընաւորութիւնը, ահա նորա բարոյական ոյժը և կարողութիւնը։ Եւ այդ մարդասիրական բարձր զաղափարը, որ մարմնացել, շունչ և ոգի է ստացել Հայրիկի մեծ անձնաւորութեան մէջ, այդ զաղափարը տալիս է նորա իշխողին, այն վսեմ, իդէալական բարձր նշանակութիւնը, այն բարձր դիրքը և անսահման հեղինակութիւնը, որ այժմ վայելում է Խրիմեան Հայրիկը։ Այդպէս են և բոլոր պատմական երևելի մարդիկ։ Վարդան Մամիկոնեանը, Գարիբալդին, Վաշինգթոնը երևելի են, սուրբ են մեզ համար՝ ոչ թէ իրանց քաջութեան, արիութեան, հնարագիտութեան պատճառով՝—(նրանցից շատ առաւել քաջ մարդիկ պատմութեան ալիքների մէջ կորել են) այլ իրանց սիրելու ընդունակութիւնով,

այն բարձր քրիստոնէական գաղափարով՝ որ ստիպում է մարդոց ուրանալ իւր սեպհական անձը՝ ուրիշներին երջանկացնելու, պաշտպանելու, աղատելու համար։ Դէորդ Վաշինգթոնի հոգեկան ազնուութեան, առաքինութեան օրինակներով դեռ մինչև այժմ դաստիարակւում են Ամերիկայի մեծ հանրապետութեան զաւակները։ Հետեւեալ փոքրիկ պատմութիւնը, Վաշինգթոնի երեխայութեան կեանքից, իբրև մի կրօնական աւանդութիւն, սերնդէ սերունդ կրթում, ազնւացնում, ոգեւորում է ամերիկացիներին։ «Վաշինգթոնը դեռ փոքրիկ երեխայ էր։ Հայրը նրան ընծայեց մի նոր և փայլուն կացին։ Վաշինգթոնը, ցանկանալով նմանուել ուրիշ աշխատաւորներին՝ վեր առաւ և այդ սուր կացնով կտրեց իրանց պարտիզում մի ամենաընտիր խնձորենի։ Հայրը, որ մեծ հոգս էր տանում այդ խնձորենու զարգացման վերայ՝ տեսնելով, որ պարտիզում խնձորենին կտրուած, վայր է գցած, սաստիկ բարկացաւ և զայրոյթը չը կարողանալով զսպել՝ անդադար որոնում էր, թէ ով է կտրել իւր ծառը։ Ցեսնելով հոր սաստիկ բարկութիւնը, Վաշինգթոն անմեղ հեզութեամբ մօտեցաւ նրան և ասաց.—Հայրիկ, ես չեմ ուզում ծածկել իմ յանցանքը. ես եմ կտրել քո խնձորենին...» Այս փոքրիկ և հասարակ պատմութիւնը, որից երեւում է Վաշինգթոնի ճշմարտասիրութեան և ազնուութեան չափը, դեռ փոքր երեխայական հասակից՝ ամերիկացիների ընտանեկան և հասարակական դաստիարակութեան անկիւնաքարն է համարւում։ Վաշինգթոնի մեծ անունը և մեծ գործերը ամերիկացիք կապում են նորա հոգեկան բարձր ազնուութեան, նորա իդեալական մարդասիրութեան հետ... Ուրեմն մարդոց քաջութիւնը, հնարագիտութիւնը, որքան էլ դրաւիչ և ոգեւորիչ յատկութիւններ լինեն, բայց, զարձեալ, այդ յատկութիւնները չեն կազմում նրանց բարոյական գլխաւոր գինը և արժէքը, առանց որ և է բուն մարդկային սիրոյ և առաքինութեան բարձր գաղափարի, առանց հասարակական ազնիւ և օգտակար ուղղութեան։

Քաջութիւնը օգտակար է, վսեմ է, ոգեւորիչ է երբ այդ ընդունակութիւնը գործ է դրւում որ և է մարդկային բարձր ճշմարտութիւն պաշտպանելու համար, երբ նրանով կատարվում են հայրենասիրական, կամ մարդասիրական ազնիւ յաղթութիւններ։ Միմիայն այս բարձր հասարակական օգուտի նպատակով գործ դրւած քաջութիւնը, անվեհերութիւնը, հնարագիտութիւնը կարող են իսկապէս ոգեւորել մարդոց, կարող են դաստիարակել, ազնւացնել նոր առաջացող սերունդը։

Իսկ պ. Աղալեանցը առաջարկում է զարմացնել, վախեցնել և սարսափեցնել մեր երեխաներին երեւակայական հերոսների մեծ ուժով, հսկայ կերպարանքով, սարսափելի մահուան տանջանքներով... Նրան չէ հետաքրքրում հէքիաթալին հերոսի արած գործը, այդ գործի բարոյական արժանաւորութիւնը. նա ուզում է, որ Հերքիւլէս այնպէս չմեռնի, ինչպէս

հասարակ մահկանացուք են մեռնում, այլ «այնպիսի տանջանքներով, որ մարդուս երևակայած բոլոր տանջանքներից վեր լինի»։ Եւ այս միայն նորա համար, որ երեխան սարսափի, վախենալ, դողալ այդ մահուան պրոցէսը տեսնելիս, որովհետև, պ. Աղալեանցի կարծիքով, երեխային սրտոտ և չը սարսափող դարձնելու համար, պէտք է նրան ցոյց տալ ամենասարսափելի օրինակներ և դէպքեր, ինչպէս որ ինքը անում է իւր վերոյիշեալ դիւական-սատանայական հէքիաթների մէջ... Պ. Աղալեանցը ամենևին չէ էլ ուզում մտածել, որ քաջութիւնը, անվեհերութիւնը, սրտոտութիւնը գործնական, պրակտիկական ընդունակութիւններ են և զարգանում են մարդու մէջ ոչ թէ գրքեր կարդալով, հէքիաթներ լսելով, հէքիաթների մէջ երևակայութեամբ սարսափելով, դողալով ու վախենալով, այլ ընդհակառակ իսկական, կենդանի գործեր կատարելով, բէալական աշխարհի ուժերի և հանգամանքների հետ մշտական և անմիջական շփումով, վարժութիւնով։

Սակայն բաւական է։ Ամփոփելով իմ այս ցօղուածում պաշտպանած մտքերը՝ ես դալիս եմ հետևեալ եզրակացութիւններին։ Նախ պ. Աղալեանց իղուր է ինձ մեղադրում, որ իբր թէ ես հերքում եմ հէքիաթների դաստիրակչական նշանակութիւնը։ Ես հակառակ եմ ոչ թէ առհասարակ բոլոր տեսակ հէքիաթներին, այլ միայն «Եղեղնուհի», «Զանգի-Զրանգի» և այլ սրանց նմաններին, որոնց մէջ աչքի են ընկնում լոկ արտաքին հրէշաւոր և անբնական դէպքերը, որոնց մէջ մասնակցում են զանազան երևելի և աներևոյթ կենդանիները, առանց արտայայտելու որ և է մարդկային խորը, օգտակար, լուրջ և բարոյական դաղափար։ Իմ կարծիքով՝ հէքիաթը, ինչ տեսակ էլ որ լինի, ինչ ուղղութեան էլ պատկանի, ամենից առաջ պէտք է արտայայտէ մի դաղափար, մի կրթիչ, ազնուացնող ու բարոյապէս մարդու բարձրացնող իդէա։

Մանկական ընթերցանութեան համար չի կարելի առաջարկել ամեն տեսակ հին ժամանակներից մնացած հէքիաթ, կամ աւանդութիւն, լոկ ուշադրութիւն դարձնելով այդ հէքիաթների արտաքին կազմութեան վերայ. բաւական չէ որ հէքիաթը հին լինի, որ կրէ իւր վերայ «հնութեան և առասպելական դրոշմը»։ Գլխաւորապէս հէքիաթը պէտք է հասկանալի լինի մանուկների համար, պէտք է թէ արտաքին ձևով և թէ ներքին բովանդակութիւնով համապատասխանէ մեր ժամանակի ոգուն, մեր դարի մտաւոր-բարոյական համոզմունքներին։ Հին պատմական ժամանակներից մնացած հէքիաթները կամ առասպելները լոկ այն դէպքում կարող են օգտակար լինել մեր երեխաների համար, երբ նրանք պարունակում են այնպիսի բարոյական դաղափար, այնպիսի միտք, որ հասկանալի է մեզ համար, որ կարող է բարոյական խորը տպաւորութիւն անել մեզ վերայ։ Սատանաների, դևերի, քաջքերի և վիշապների դաղափարը հակառակ են մեր ժամանակի ոգուն, մեր մտաւոր-բարոյական համոզմունքներին. մենք չենք կարող հաշտուել այդ երևակայական մտացածին պատկերների հետ և, այդ

պատճառով, հէքիաթների մէջ պէտք է խոյս տալ նրանցից, պէտք է երեխաների թարմ երևակայութիւնը չը թունաւորել այդ մոլորութիւններով... Բարոյական կրթութեան գործում պէտք է ոգևորել մանուկներին ոչ թէ լոկ քաջութեան, անվախութեան, հնարագիտութեան և այլն գաղափարներով, այլ հարկաւոր է գլխաւորապէս նրանց ուշադրութիւնը դարձնել մարդոց բարոյական կատարելութեան վերայ, պէտք է ոգևորել մանուկներին մարդասիրական, հայրենասիրական գաղափարներով, պէտք է ցոյց տալ նրանց մարդկութեան ապագայ ընդհանուր երջանկութեան, հնդհանուր հաւասարութեան և եղբայրութեան իդէալը։ Ահա այն գլխաւոր մտքերը, որոնք իմ կարծիքով ուղիղ են, օգտակար են և արժանի են ընթերցողների ուշադրութեանը։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՈԳՈՒ ԻՆՔՆՈՒՐՈՅՆՈՒԹԻՒՆԸ

(Համառօտութիւն Ենայի համալսարանի տեսչի ճառի)

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՐԹՈՒՂԱՐԵԱՆՑԻ

I

Մեր համալսարանի պաշտաւոնական բարերարներն 60 տարի սորանից առաջ որոշեցին, որ իւրաքանչիւր նոր Տեսուչ իւր գործունէութեան ասպարէզը մի ճառով բանայ, այն նպատակով, որ տեսուչին միջոց տրուի համալսարանի անդամների հետ ազատ և համարձակ ճեմարանական կեանքի նպատակի ու պայմանների վերայ խօսալու։ Նոքա վայելս էին, որ դորանով տեսուչն, ուսանողների հետ մտերիմ յարաբերութեան մէջ գտնուելով, ճեմարանի գաղափարը նոցա մէջ աւելի կ'ամրացնէ։ Այսպիսի մի որոշման բարձր նշանակութեան մասին ոչ ոք չէ կարող կասկածել, սակայն դուցէ ոմանք հարցնեն՝ ինչու համար է այս ճեարանութիւնը, ինչու է հարկաւոր կաւալարութեան միջնորդութիւնն այս դէպքում և այլն։ Ով այսպիսի հարցեր է առաջարկում, նա չէ ճանաչում ժողովրդական և պետական նոր կեանքը, չէ ճանաչում այն բարձր զարգացման տէր մարդկանց, որոնք այդ ոգու աղդեցութեան ներքոյ մտածում են համալսարանի ժամանակակից կեանքի վերանորոգման վերայ։

Ի հարկէ մեր համալսարանները չունին նախկին քաղաքական ինքնուրոյնութիւնը, նոքա չեն կարող այլ ևս այդ վերջինն ունենալ, վասնզի նոքա միացել են պետական կեանքի գաղափարի հետ. սակայն նոքա ունին մի այլ ինքնուրոյնութիւն և կարող են դորա մէջ աւելի կատարելագործուել, մի ինքնուրոյնութիւն, որ քաղաքականից աւելի զօրեղ է։ Ես աչքի առաջ ունեմ գիտական ինքնուրոյնութիւնն և դորանից կախումն ունեցող հասարակական կարծիքն։

Որն է գերմանական համալսարանների ինքնուրոյնութեան էութիւնը և որ միջոցներով կարող ենք այդ ինքնուրոյնութիւնը պահպանել։ Այդ

հարցին պատասխանելու համար թույլ տէք ինձ մի նկատողութիւն անել. մի տարբեր հանգամանք է ստիպել ինձ այս նիւթի մասին ճառախօսել։ Այդ տարբեր հանգամանքն է Գերմանիայի այժմեան բաղաւոր վիճակն և նորան սպառնող վտանգը, եթէ ազգի քաղաքական ինքնուրոյնութիւնը մտաւոր ինքնուրոյնութեան հետ չը կապենք։ Մեր ազգային բոլոր հիմնարկութեանց նպատակն է այդ վերջինի ձգտումն, սակայն համալսարաններն իրանց վերայ են առել ամենաբարձր պարտականութիւնը, վասն զի նոքա կանչուած են, բարձր զարգացում մատակարարելով, գիտական ինքնուրոյնութիւնը պահպանել, որից կախումն ունի ժողովրդեան ոգու ինքնուրոյնութիւնը։

Նախ ես պէտք է խօսեմ գիտական ինքնուրոյնութեան վերայ, ապա մի հայեացք ձգեմ նորա պատմական զարգացման վերայ ճեմարանական կեանքում։

Գերմանական համալսարանների ոգու գիտական ինքնուրոյնութիւնը պէտք է լինի երկու տեսակ՝ ներքին և արտաքին։ Ներքինը պէտք է երեք կերպով արտայայտի, հետազօտութեան եղանակով, նպատակով և ծաւալով կամ բովանդակութեամբ։ Գիտական հետազօտութեան եղանակի վերաբերեալ կարելի է համալսարանական ոգին այն ժամանակ ինքնուրոյն կամ անկախ համարել, եթէ գիտութեան ընդհանուր սկզբունքներն իրանից է քաղում, այսինքն անմիջապէս մարդկային խոհականութիւնից, բոլոր ճշմարտութիւնների սկզբնական աղբիւրից և միևնոյն ժամանակ պատերազմ մղում սխալ սկզբունքների դէմ, այնպիսի պատերազմ, որի նպատակն է որ մեր հոգեկան կեանքը չը թմրէ, այլ միշտ զարթ ուժով դէպի յաւիտենականութիւնն ընթանայ։

Գիտութեան ծաւալի վերաբերմամբ այն տեսակէտից պէտք է համալսարանի գիտական գործունէութիւնը ինքնուրոյն լինի, որ բոլոր գիտութիւններն ի միասին մի ամբողջութիւն, մի մարմին կազմեն, որի ոչ մի մասը չը պէտք է բացակայ լինի, որի անդամներն ի միասին կախումն ունենան ամբողջութիւնից։ Համալսարանը չը պէտք է ինչպէս միւս հիմնարկութիւնները ճշմարտութեան մասերն առանձին պաշտպանէ, այլ իւր ձգտումն պէտք է ուղղած լինի դէպի ճշմարտութեան ամբողջ ծաւալը։

Գիտական գործունէութեան նպատակի վերաբերմամբ այն ժամանակն է հանդիսանում համալսարանի ոգին ինքնուրոյն, երբ նա այդ նպատակն իւր մէջն է որոնում, իւր մէջ ապրող մարդկութեան կատարելագործման մէջ։ Համալսարանական ուսմանը մարդ զանազան նպատակներ է տալիս, ինչպէս օրինակի համար նա պէտք է չանաչեր լինի ուսում առնողի համար և որը սակայն նորա բարձրագոյն արժէքը, նորա կոչումը պէտք է մարդկութեան ընդհանուր զարգացման մէջ որոնել։

Ինչ արտաքին կամ ընկերական յարաբերութիւններին է վերաբերում, այն ժամանակը միայն կարող է համալսարանն իւր ինքնուրոյնութիւնը

պահպանել, եթէ իւր ձգտումները՝ մարդկութեանը օգնել՝ նախ այն ժողովրդին վերաբերի, որի մէջ նա ապրում է։ Առանց ժողովրդականութեան դառնում է նորա ձգտումն կամ դատարկ ընդհանրութիւն կամ կորցնում է նա իւր կեանքի ոյժը արկղի մէջ՝ ներփակուած օտարի նման սահմանափակելով։

Համալսարանների նպատակն աւելի պարզ որոշելու համար գիտենք պատմական փաստերի։ Գիտական կեանքի սկիզբն ինքնուրոյնութեան հետ միացած գտնում ենք Յոյների մէջ, որից և լուսաւորեցել է բոլոր եւրոպական զարգացումն։ Ասիական ժողովրդները թէև ունէին շատ զարմանալի արժանի գիտելիքներ, սակայն նոքա չէին շարժողական, այլ աւանդական, նոքա չէին ժողովրդի ընդհանուր սեփականութիւն, այլ սեփականութիւն կղզեացած դասակարգի։ Յունաստանում ձեւականութիւնը մուտք չէր գործել, մտածող ոգու համար ոչ գիրն էր արգելք հանդիսանում, ոչ էլ օրէնքը. իմաստութիւնը արկղի մէջ չէր ամփոփուած։ Այն մեծ բարեկամական միութիւնն որ Պիթագորասը հաստատեց դատաստութեան և կրթութեան, բարի սովորութեան, չափաւորութեան և արդարութեան և առհասարակ ընկերութեան ոգու ներդաշնակ զարգացման համար, կարելի է ճեմարանական կեանքի սկիզբը համարել։ Պիթագորասի լաջորդն էր Սոկրատէսն, որ մի կողմից պատերազմ մղելով իմաստակների չահասիրական սկզբունքի դէմ՝ չեշտում էր մարդկային ոգու ինքնուրոյնութիւնը հետազօտութեան նպատակի վերաբերմամբ իւր աշակերտներին ոգեորում էր ճշմարտութեան, գեղեցկութեան և բարութեան համար, միւս կողմից հասարակ և պարզ խօսքերով կեանքի իմաստութիւն գիտնականների նեղ շրջանից աշխատում էր մտցնել ժողովրդի ամբողջ կեանքի մէջ։ Պլատոնը աւելի կատարելագործեց այս գիտնական կեանքը իւր տրամաբանութիւնով (դիալեկտիկա)—իմաստասիրութեան գործադրութեան միջոցով պետական կեանքի համար, իսկ Արիստոտելը միացրեց գիտութեան բոլոր ճիւղերն միասին, դարձնելով այդ վերջինը մի ամբողջութիւն, մի մտքին։ Որքան և մեծ լինի լոյների ծառայութիւնն իրանց գիտնական կեանքով մարդկային զարգացման համար այնուամենայնիւ չէին կարող նոքա այդ խնդիրը լուծել, որ գերմանական ժողովուրդը իւր ճեմարանական կեանքով պէտք է լուծէ, վասն զի ոչ լունական կրօնն ունէր բարոյական խորութիւն և աստուածանաչութիւն, ոչ պետական կեանքն անձնական դնահատութիւն, ոչ մասնաւոր կեանքն ընտանեկան սէր և ոչ էլ մարդկային աշխատութիւնը քաղաքատնտեսական նշանակութիւն։ Գերմանական կեանքն ունի մեծ առաւելութիւններ, որոնք առաջացել են քրիստոնէութեան և զարգացած գերմանականութեան միջոցով։ Հռոմայեցիք աւելի թոյլ էին մեր համալսարանական կեանքի գաղափարն իրագործելու համար, վասն զի նոքա ունէին նոյն թերութիւնները, ինչ լոյներն ունէին և, բացի այդ, լունական պետական կեանքի վերջին նպատակը չէր սէրը դէպի իմաստութիւն և ճաշակի զարգացումն, այլ բարբարոսական լաղթութիւնը։

Յունական և Հրոմէական ազգերի անկումից յետոյ գերմանական ժողովրդական կեանքին էր վիճակուած մարդկային կրթութեան մեծ գործն իւր մէջ առնել և մշակել։ Սակայն մինչև մարդասիրութիւնն իւր սերմերը Գերմանիայի հողի մէջ ցանէր, Գերմանիային վիճակուած էր դարերի մի չարք բարբարոսութեան զոհ լինել, ուստի և ինչպէս իւրաքանչիւր անհատի այնպէս էլ մեր ժողովրդի երեխայական և հասակն առած կեանքի մէջ տեղ նկատելի է մի ժամանակի տարածութիւն, որ թէև խոհականութիւնն արթուն է, սակայն դեռ իշխանութիւն չէ ձեռք բերել նորա երեւակայութեան և սովորութեան, կասկածների և թերութիւնների վերայ։ Մեր ժողովուրդն այժմ գտնւում է տղամարդու հասակում և իւր գիտնական կեանքի գլխաւոր նպատակն է ճշմարտութեան պարզաբանելն պատերազմ մղելով սխալ սկզբունքների դէմ, ուր համալսարաններն գլխաւոր պատերազմ մղող ուժն են հանդիսանում։

Եթէ ցանկանում ենք գերմանական ժողովրդական կեանքը կատարեալ բարոյական բարենորոգման ենթարկել, պէտք է օտար տարրը մեզանից հեռացնենք, որի մէջ արմատացել են վատ սովորութիւններ և դորա փոխարէն ընդունենք ժողովրդի սեպհականութիւն դարձած գերմանական ոգու անկախութիւնը։ Այս է անհրաժեշտն ու ամենանաւորը գիտական կեանքի համար։

Ժողովրդի սեպհականութիւն դարձած ինքնուրոյնութիւնն երեան է գալիս այնտեղ, երբ մեր ամբողջ ձգտումն՝ մարդկային կեանքը զարգացնելու և վսեմացնելու գործում նախ մեր ազգի մասին ենք մտածում— Եթէ ուզում ենք ձեռք բերել ժողովրդի ոգու ինքնուրոյնութիւնն, ապա պէտք է նախ հոգանք նորա արտաքին ինքնուրոյնութիւնը՝ մեր ազգի անկախութիւնը օտար ժողովրդների տրամադրութիւնից։

Մեր համալսարանի նպատակն է այն ճանապարհը մաքրել, որ տանում է դէպի գիտական ինքնուրոյնութիւնը։ Նոյն որոշման հետեւել են միւս լարգւած գերմանական համալսարանները 16 դարու կիսից սկսած, որոնք դասականութեան (Altertdum) ինքնուրոյն ոգին իրանց մէջ ընդունելով, գերմանական, քրիստոնէական, յունական տարրերի մէջ փոխադարձ լարաբերութիւն մտցնելով, գերմանական գիտութիւններն են հաստատել։ Գերմանացիք սկսել են գիտական պատերազմ մղել մտաւոր ինքնուրոյնութեան համար այն ժամանակներում, երբ մեր համալսարանն է հիմնուել։ Մի իշխան, որ այս վսեմ գաղափարի համար ոգեւորւել էր և իւր աշխարհական ուժը կոչնելուց յետոյ գործադրել է իրան մնացած չնչին կարողութեան մի մասը այս ճեմարանի հիմնարկութեան համար։ Անգութ մահը վաղ խլեց նորան մեր համալսարանից, սակայն նորա յաջորդները նոյն ուղղութեամբ և նոյն խմաստութեամբ հոգս տարան այդ հիմնարկութեան վերայ։ Գլխաւորապէս պէտք է մեր համալսարանը այն ժամերը բաղտաւոր համարէ, այն աղատութեան պատերազմի ժամանակ, երբ նորա ներքին և

արտաքին հանգամանքները վերանորոգման ենթարկուեցան։ Մեր ճեմարանի զարգացումն տեղի է ունեցել ոչ թէ միմիայն ժամանակի և իշխանական հոգեցողութեան ներքոյ, այլ նաև այն երկրի աղգեցութեան ներքոյ, որի մէջ նա գտնուում է։ Գերմանիայի միջակէտը լայտնի է իւր պտղաբեր հողով և բարեխառն բնութեամբ։ Ցիւսիսի չոգերը հաւասարաչափ խառնուած են հարաւի ցրտի հետ։ Այստեղ մուտք չեն գործել արևմտեան ալեկոծող օդն ու արևելեան չոր քամիները։

Բարձրանանք այն կէտը, ուր Տիւրինգիայի և Բոհեմիայի սարերն միանում են և որը կազմում է Գերմանիայի կենտրոնը, ահաւասիկ այդ բարձրութիւնից կը տեսնենք՝ գետերի աղբիւրներ, որոնք զանազան ուղղութեամբ հոսալով ճանապարհին զանազան համալսարանական քաղաքներին իրանց աղջոյնն են մատուցանում, բայց ոչ մի համալսարանական քաղաք այնպէս մօտ չէ Գերմանիայի միջակէտին, ինչպէս Ենան։

Ինչպէս ըստ տարածութեան, այնպէս էլ հոգեպէս մեր ժողովրդի սրտին ամենամօտն է Ենայի համալսարանը։ Ոչ մի այլ համալսարան այնպէս չէ զգում երակալարկն, ինչպէս մերն։ Աւելացրու սորան նաև քաղաքական դիրքը, Տիւրինգեան, որին նախ մեր գործունէութիւնն ուղղուած, քաղաքականապէս աւելի կտոր կտոր է եղած, քան մեր հայրենիքի միւս մասերն։ Այստեղ կառավարում են չատ իշխաններ, Տիւրինգիան Գերմանիայն է միայն փոքր դիրքով։ Տիւրենգիայի մասերի բաժանուելն այն տեսակէտից օգտաւէտ է, որ զարգացած մարդ իւր հայեացքն ուղղում է ժողովրդի աւելի մեծ շրջանի վերայ. դորանից է, որ Տիւրենգիայում աւելի գերմանական կեանք կայ, քան միւս գերմանական երկիրներում։ Այս մասերի բաժանուած երկրից է առնում մեր համալսարանների գերմանական ազգային զգացումն իւր թարմ սնունդը։

Բացի Աստուծոյ ողորմածութիւնից և այս բաղտաւոր հանգամանքներից Ենայի համալսարանը չնորհակալ է իւր մէջ պարունակող չը թառամող երիտասարդական ոյժից, որ նա թէև մի փոքրիկ երկրի համար է որոշուած, սակայն մի բարձր նշանակութիւն է ստացել թէ ամբողջ գերմանական կեանքի և թէ ամբողջ երկրագնդիս համար և գլխաւորապէս գիտական անկախութեան համար մղած պատերազմում մարդկային գիտութեան ճիւղերի, գլխաւորապէս փիլիսոփայութեան և աստուածաբանութեան մէջ ամենազորձունեայ դինուորն է եղած։ Ենայի համալսարանի ղեկավարներն են հետեւեալ երեք հեղինակութեանց ոգիները. Սոկրատէս, Լութեր և Կանտ։ Սոկրատէսն էր առաջին ժողովրդական փիլիսոփան, Լութերն էր այն անձնաւորութիւնը, որ ժողովրդի բոլոր դասերին էլ բարձրագոյն կրթութիւնը մատչելի դարձրեց։ Գերմանական ոգին երեք դար Լութերի մոքով ճշմարտութեան դանձերն իւր մէջ հաւաքել էր և ապա Կանտի քննողականութիւնն տուիթ եղաւ այդ դանձերն գործադրելու։ Կիսնիգսբերգի իմաստասէրի գլխաւոր սկզբունքների գործադրողն էր Ենայի

համալսարանը. Ենալի համալսարանի մէջ ձգեց քննադատական փիլիսոփայական ուղղութիւնը իւր ամուր արմատը։ Մեր համալսարանն ոչ մի ժամանակ չէ կուրացել նոր երեակայական սիստէմներից, որոնց հետևողներն իրանց հմտութիւնքները փոխում են, ինչպէս մոդային հետևող թեթեամիտ երիտասարդներ։

Մեր համալսարանի նպատակի և նշանակութեան մասին խօսալուց յետոյ դառնանք դէպի ձեզ, յարգելի բարեկամներ՝ Ենալի ճեմարանական քաղաքացիներ. իմ ցանկութիւնն է, որ դուք ևս ձգտէք դէպի գիտական ինքնուրոյնութիւնը թէ ձեր ուսումնասիրութիւնների և թէ ձեր ընկերական կեանքի մէջ, որպէսզի արժանի լինէք կոչուել Ենալի համալսարանի քաղաքացիներ։ Ինչ ձեր ուսումնասիրութիւններին է վերաբերում նախ զգուշացնում եմ նոցա, որոնք գիտութիւնների հետ զբաղւում են օգտի համար և ոչ այլ նպատակ ունին իրանց աչքի առաջ, ինչպէս թեանչանը քննութեան ժամանակ, պետական (քաղաքական) ծառայութեան վարձատրութիւնը կամ թէ գործնականութեան նիւթական օգուտ։ Թէև ուսանողը պէտք է նաև վերոյիշեալի մասին մտածէ, վասնզի տէրութեան, եկեղեցու և ազգի համար ծառայելիս պէտք է նա ապահով լինի, բայց ուսանողի մտքի չրջանը պէտք է միանայ այնպիսի տարրերի հետ, որոնք ոչ թէ զղայարանից և փորձից կախումն ունին այլ ինքնուրոյն են, իրանց արժողութիւնն իրանց մէջն է։ Այդ տարրերն են ճշմարտութեան, գեղեցկութեան և բարոյ զգաստարները։ Այսպիսի ուսումնասիրութիւնով իւրաքանչիւր մասնագիտութիւն կը վսեմանայ և հոգեկան ոյժը կ'ամրանայ, սխալ չէ ասում Շիլլերը. «Նեղ չրջանում նեղանում է մարդուս միտքը» և մի այլ դէպքում՝ մարդս աճում է իւր մեծ նպատակներով։ Գիտական ինքնուրոյնութիւնը պահանջում է նաև հոգեկան ինքնագործունէութիւն։ Այս վերջինն է այն երկրորդ առաքինութիւնն, որ ձեր մտերիմ բարեկամը պէտք է լինի։ Ուսանողի ոգին չը պէտք է մի մեռած թերթ հանդիսանայ, այլ ուսուցչի վերահսկողութեամբ դիտելիքներն ինքն իրանից յառաջացնէ։ Ոչ թէ լիչողութիւնը լցնելով և թուղթակի նման արտայայտելով, այլ դատողութեան ոյժի վարժութիւնով և համոզմունքի զօրութիւնով, ոչ թէ մեռած գիտնականութիւնով, այլ կենդանի իմաստութիւնով կը հասնենք գիտական անկախութեան։ Դորան է պատկանում նաև գիտական ուսումնասիրութեան բազմակողմանի լինելն. ոչ մի ուսանող չը պէտք է բոլոր գիտութիւններն ուսումնասիրէ, այլ իւրաքանչիւրը կարող է և պէտք է ճանաչէ իւր գիտութեան ընդհանուր յարաբերութիւնն և կախումն միւս գիտութիւններից և սովորէ օտար գիտութիւնները դնահատել։ Որտեղ իւրաքանչիւրն իւր կարճատեսութեամբ միայն իւր մասնագիտութիւնն է զովում և ցանկանում, որ զարդանայ, այնտեղ չը կայ համալսարանական ոգի։ Այդ վերջինը ներկայ է միայն այնտեղ, որտեղ տեղի է ունենում մարդկութեան ամբողջ զարգացման ոգեորութիւնը։ Եթէ դուք, բարեկամներս,

իմ որոշած ուղին ընտրէք, այն ժամանակ աւելի կը կատարելագործուէք ժողովրդի արտայայտած պահանջներին աւելի կարող էք դոհութիւն տալ, դուք կը յարգէք և կ'օգտուէք օտար գիտնականութիւն, եթէ այդ վերջինը մեր ազգի և ամբողջ մարդկութեան զարդացման օգտակար է։ Զեղանից այն ժամանակ հեռու կը լինի թեթև չատագիտութիւնը։ Մի քանի խօսք ևս ուսանողական կեանքի ընկերական հանգամանքների մասին։

Երբ երեսնամեայ պատերազմից յետոյ գերմանական ազգային զգացումն ճնշուած էր և մեր ազգի հասարակական կեանքը մեռած էր, ազատութիւն կարելի էր գտնել միմիայն համալսարաններում։ Երեք ճեմարանական տարիներն էին այն ժամանակամիջոցն ուր գերմանացին ազատ չնչել կարող էր, քաղաքական ազատութեան բացակայութիւնից ստիպուած զարգացաւ համալսարաններում բուրսական կեանք։ Սակայն համալսարանը առանձնացած չէր կարող իւր ճշմարիտ էութիւնը պաշտպանել, ուսանողական կեանքի մէջ ևս պէտք է մտնէին ճնշուած ժողովրդի սխալմունքներն։ Երբ ազատութեան պատերազմից յետոյ գերմանական ազգային զգացումն կրկին արթնացաւ և այն երիտասարդներն, որոնք հայրենիքի համար պատերազմելուց յետոյ կրկին համալսարան վերադարձան, գիտակցութիւն ստացան և սկսեցին մի այլ տեսակ պատերազմ ներքին անկարգութիւնների դէմ։ Այսպիսով գոյութիւն ստացաւ ուսանողական ոգին։ Սակայն այդ ուսանողական բարենորոգութիւնները պէտք է կանգ առնէին, վասն զի հաստատ հիմքի վերայ չէր շինուած։ Ուսանողական կեանքի ներքին վերանորոգումն այն ժամանակ միայն կարող էր իւր նպատակին հասնել, եթէ ուսանողների և նոցա մէջ, որոնք կոչուած են հիմնարկութիւնը կառավարելու փոխադարձ հաւատարմական յարաբերութիւն տեղի ունենար. եթէ բոլորքեանք, որոնք թէ ուսանում, թէ ուսուցանում և թէ կառավարում են ազատ արտայայտէին իրանց կարծիքն կարիքի ժամանակ։ Ես ահա առանց քաշուելու պէտք է արտայայտեմ այն վատ տարրերն, որոնք ձեր ընկերական կեանքի մէջ արմատ են ձգել։ Ես ուզում եմ Ձեզ հետ խօսել ինչպէս բարեկամը բարեկամի հետ։ Ուսանողի ընկերական կեանքն ազատութեան պատերազմից զէս բաւականին բարենորոգման է ենթարկուել, սակայն որքան և դուք, սիրելի բարեկամներ, աշխատել էք ուսանողական կեանքը բարենորոգելու, այնուամենայնիւ չէք հասել ձեր նպատակին. ձեր ոգին պէտք է մի մեծ խնդիր լուծէ, վասն զի տգիտութեան այն ծառն, որ դուք ձեր խոհականութեան հարուածով տապալել էք, թողել է ընկերական կեանքի խորքերում մի քանի արմատներ։ Դա է մենամարտութիւնը։

Դորա վնասը չէ կայանում նորա մէջ, որ ուսանողները յաճախ վտանգաւոր վէրքեր են ստանում կամ ստիպուած են իրանց կեանքը զոհաբերել, այլ նորա մէջ, որ կառավարութեան օրէնքների դէմ է, որ ուսուցչի ուսանողի մէջ ոչ թէ հաւատարմութիւնն և մտերմութիւնն է իշխողն, այլ

կասկածն և ստախօսութիւնը, որ երկու կողմից ստիպված են արտաքին ցոյցեր անել, որ բարոյականութեան իրաւունքի և պատուի գաղափարները մթութեան մէջ տատանուում են, որ դորանով անհետանում են գիտական և այլ վսեմ ձգտումների համար կարևոր ուժերն և, որ արգելում է զբաղմունք և վերջապէս որ արմատախիլ է անում ճեմարանական ազատութիւնը։ Իմ նպատակը չէ այդ սոսկալի հիւանդութեան էութեան և նորան բուժելու միջոցների մասին խօսալ. ես չեմ ուզում ձեզ ցոյց տալ, թէ ինչ ունիք դուք կատարելու, որպէս զի գերմանական ուսանողական կեանքի ինաստակար տարրերն ոչնչացնէք, այլ ուզում եմ, որ ինչ դուք գործում էք գիտական ինքնուրոյնութեամբ գործէք։

Դուք չը պէտք է այս կամ այն դէպքում կուրօրէն հետևէք դասախօսութիւնների գործողութիւնների, այլ դուք պէտք է գիտական մտածողութիւնով ձեր մէջ սեփական դատողութիւն և համոզմունք լառաջացնէք։ Ահաւասիկ մեր նիւթի վերաբերեալ ունիք օժանդակիչ միջոցներ. պատմութիւն և խոհականութիւն։ Նոքա, որոնք կարծում են թէ մենամարտութեան նպատակն է քաջութիւն ձեռք բերելն և պատուոյ զգացման գոյութիւն տալն, պէտք է աչքի առաջ ունենան այն դէպքն, որ պատմութեան մէջ չենք գտնում ոչ մի օրինակ, ուր լոյներն, հռոմայեցիք և գերմաններն պատուոյ մենամարտութիւններ ունեցած լինէին։ Դա լառաջացել է միջին դարերում դալլերից։ Երբ ժողովրդից խլել էին ազատութիւնը, իրաւունքը, երբ համայն գերմանական զինակրութեան վերջ տրեց, և զէնք կրելու իրաւունքն ձեռք բերաւ մի զինուորական խումբ. այն ժամանակ անհետացաւ ժողովրդի պատիւն և նորա տեղը միջնորդեց զինուորների պատիւն (point d'honneur) և միայն դորան էր ծառայում մենամարտութիւնը։ Ժողովրդի մեծամասնութիւնը, որ այդ զինուորական դասին չէր պատկանում, կոչւում էր canaille և չունէր պատիւ։ Այդ պատուոյ խնդիրն զինուորական դասից անցաւ երևնամեալ պատերազմից լետոյ ուսանողական դասը։ Զարմանալին այն է, որ ուսանողական մենամարտութիւնը այնպիսի մի ժամանակ է ոտ դրել Գերմանիայ, երբ այդ վերջինը ամբողջապէս անկման էր ենթարկուած։ Տասնիններորդ դարի երկրորդ տասնամեակում զարթնում է գերմանական ազգի մէջ երկար քնածութիւնից լետոյ ազգային զգացումն և պատիւը և միայն վերջիններով և ոչ թէ նորանով, ինչ կոչւում են esprit du corps n'apoint d'honneur Լայպցիգի, Վատերլոյի և վերջապէս Մեցի և Սեդանի լաղթութիւնները տեղի ունեցան, որով և մեր ազգը կատարեալ ազատութիւն ձեռք բերաւ։

Ուսանողական մենամարտութեան անհրաժեշտութիւնը կասկածելու համար պէտք է աչքի առաջ առնել միւս գերմանական ժողովրդների պատմութիւնը, ինչպիսիք են անգլեացիք, Հոլլանդացիք, Զուիցերիացիք, որոնք թէև մեր համալսարանների նման կատարելագործուած ճեմարաններ չունին, սակայն հասել են զարգացման մի որոշ աստիճանի։

Ինչով կարելի է ուսանողական ընկերական հանդամանքները բարեկարգել։ Ես կը պատասխանեմ մի քաղաքացէտի խօսքերով. «Եթէ ինձ յաջողուեց օգտակար ձեռնարկութիւններ հիմնարկել և որի միջոցով ես ժողովրդականութիւն ձեռք բերեցի դորա սկզբնապատճառը այն էր, որ ոչ թէ միմիայն քաղաքական երևոյթներն էին իմ նպատակը, այլ նաև այդ երեսոյթի գաղափարի գիտակցութեան մէջ ամուր պահելն և դորան միշտ հետեւելն, այդ գաղափարի յառաջանալու համար պարտական եմ Կանտի քննողական ուղղութեան». Ես ևս «սիրելի բարեկամներ, առաջարկում եմ ձեզ այդ աղբիւրից սնունդ առնել, ինչպէս վերոյիշեալ քաղաքացէտը։ Այդ աղբիւրն է խոհականութիւնը, որից և յառաջացել են փիլիսոփայական քաղաքական գիտութիւնները։ Միմիայն այդ աղբիւրի մաքուր ջրով կարող էք տպիտութիւն ունենալ և ձեր մտաւոր չրջանը կեղեցիկ մարդագետնի փոխադրել։ Ես չեմ ասում, որ Կանտի երկասիրութիւնների մէջ պէտք է օրէնքներ որոնել, որոնք անմիջապէս վերանորոգման գործի մէջ կարող են գործադրելի լինել, այլ իմ ցանկութիւնն է, որ դուք ևս այն ուղին ընտրէք, որ Կանտն է հիմնել, դա է քննողականութեան (Kriticismus) ուղին, որն և միևնոյն ժամանակ գիտական ինքնուրոյնութեան, հոգեկան ազատութեան ուղին է։ Այդ ուղիով գնալիս նախ պէտք է ձեր մտածողութիւնը դէպի Ձեզ ուղղէք մի սուր հայեացքով ձեր ձգտումներն և գործողութիւններն ուսումնասիրելու և ապա ձեր հետազօտութիւնը դէպի ձեր ազգի յառաջադիմող ոգուն ուղղելու։ Այն ժամանակ կը ներկայանայ ձեր առաջ այն վսեմ գաղափարն, որ ձեր և ձեր ժողովրդի վսեմ ձգտումների ղեկավարողն է՝ դա է ժամանակակից զարգացած ոգին՝ հասարակութեան և պատուոյ գաղափարն, մենամարտութեան ոսնակոխ և արմատախիլ անողն։

Այդ վսեմ գաղափարին հետևելով ձեր գործունէութեան ժամանակ սարսափով չէք հարցնիլ. «ինչ պէտք է սա կամ նա ասէ, այս իմ գործի մասին», այլ դուք կը գործէք ինքնուրոյնութեամբ. ըստ ձեր խղճի ձայնի, ձեր կրօնի, բարոյականութեան, ճշմարտութեան և պարտականութեան պահանջների։ Դուք կը լինէք այն ժամանակ քաջ, ձեր հաստատ կամքը վստահութեամբ կը կռւի ինքնուրոյնութեան ինքնակար տարրի դէմ. այս վսեմ գաղափարին հետևելով կը լարդէք նաև օտարների և գլխաւորապէս համայն հասարակութեան կարծիքը։ Այդ վսեմ գաղափարին հետևելով կը միանաք եղբայրական բարեկամութեամբ և շատ հաղիւ կարող է պատահել, որ իրարից բաժանուէք և, երբ ձեր մէջ տարաձայնութիւններ տեղի ունենան, այն ժամանակ ոչ թէ բռունցքի, այլ խոհականութեան զէնքով կարող էք դորան վերջ տալ, ոչ թէ պատահականութեամբ այլ ճշմարտութեան և իրաւունքի օրէնքով, մի խօսքով ձեր ուշադրութիւնը կը դարձնէք ուսանողական պատուոյ դատարանի կառուցման և վերանորոգման.

Եթէ դուք գիտութեան զէնքով մտածէք ձեր ընկերական հանդամանքների վերայ, այն ժամանակ կը վարժեցնէք ձեր ձեռքը ոչ թէ ձեր

հարազատ եղբայրների մի արտաքուստ երևացող պատի դէմ, այն ժամանակ դուք կ'աշխատէք հայրենիքի պատի համար պատերազմ մղել թէ արտաքին և թէ ներքին թշնամիների դէմ, նոցա դէմ, որոնք հակառակ են ձեր հայրենիքի սովորութիւններին, բարիքներին, լեզուին, մտաւոր հարստութեան։

Երիտասարդ բարեկամներս, վերջացնում եմ ճառս, ցանկալով, որ դուք հոգու ինքնուրոյնութեամբ մտածէք և գործէք։

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱԼԻՇԱՆ, ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ, միաբան Մխիթարեան.—«ԱՅՐԱՐԱՏ, բնաշխարհ Հայաստանեայց (պատկերազարդ քարտէզով)։ Վենետիկ, Ս. Ղազար, 1890 թ., մեծ քառածալ Ը+590 երես, տառ № 10, գինն է 40 ռուբլի։

Հայր Ղեւոնդ Ալիշանի այս գործը նորա ցայժմ հրատարակած գրուածքներից ամենամեծն է թէ իւր մեծութիւնով և թէ մանաւանդ իւր առարկայով, հետևաբար և բովանդակութիւնով։ Այս, ոչ միայն մեր հայ, այլ և նոյն իսկ օտար ու շատ հարուստ գրականութիւնների համար պանծալի համարելի մեծ գործի սկզբնապատճառը՝ նորա մեծայարդ հեղինակի հայրենասիրութիւնն է։ «Այլ ոչ առատանօր բարեկամաց և ոչ բարեկամաց, զի իմ միտք և բարք՝ որպէս և վիճակ և կենիք՝ հայրենասիրութիւն խնդրեն զխաղաղականն. այնպէս սիրեմ և համբուրեմ զհայրենիս՝ որպէս ի մանկութեանս զհայր և զմայր, և ո՞ եւ որպիսի՞ ոք ըստ գիւտ լիցի ապստամբել սիրելութեան. և ոչ գիտեմ որպիսի՞ ինչ մոռաք կամ կարծեաք՝ վայրապար կասկածանս և խծրծիծս լուցիցէ լանձին լիւրում և լօտարս, մինչև լաւագամեծար ատեանս, որոց պատկառել և լարգել՝ պարտք են մեր։ Սակայն, եթէ կրօնական և քաղաքական օրէնք ուսուցանեն լնձ և ամենայն զգաստից՝ տալ զկայսերն՝ կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ, ոչ և ընդարձակս ազգումն ողջախոհակ՝ թելադրիցէ հաստուցանել զՀայրենեացն՝Հայրենեաց»։

Հայր Ալիշանի այս խօսքերը մենք պէտք է ընդունենք բառացի իմաստով, հազիւ թէ հաղարաւոր վերստեր հեռու ապրող և իւր պատմական հայրենիքը աչքովը չը տեսած մէկը կարողանար մի որ և է այլ դրդումից մի այնքան հոյակապ գործ ստեղծել մի կիսաւեր երկրի համար քան այն հայրենասիրութիւնը, որից մի հին ազգի մեծ կենսական ուժգնութիւնը միայն կարող էր պահպանել դեռ ևս այնքան զօրեղ կայծեր մինչ մեր գարուս վերջը, որ այդ երկրի աւերակներն ու դալկացած ներկայ կեանքը կարող լինէին ա-

ռարկայ դառնալ այնքան ուշամիտ ու մանրակրկիտ տեղագրութեան, որպիսիք տալիս են «Շիրակ», «Սիսուան» և ահա այժմ «Այրարատ»։ Այդպիսով հայր Ալիշանի չարք հրատարակութիւնների առաջին մեծ տպաւորութիւնը հայրենասիրութեան զգացմունքին է վերաբերում, որը արթնանում է և միևնոյն ժամանակ շողոքորթւում։

«Այրարատ»-ի մասին հեղինակը սակայն, յայտնում է, թէ սխալ են նոքա, որոնք յայտարարել են այդ գիրքը իբր ծնունդ քառասուն տարուայ աշխատութեան։ Այրարատը գրուած է 1878 մինչ 1880 թուականը, դեռ աւելի էլ առաջ, «Սիսուանը» 1880-ից դէս մինչ տպագրութեան վերջանալը՝ աւելցրած են, ինչ հեղինակը կարողացել է նոր բան գտնել։

Գրքի մէջ խօսւում է Արարատեան աշխարհի աշխարհագրութեան, բոյսերի և բերքերի, հին և նոր շինութիւնների, կիսակենդան աւերակների, բնակիչների ազգաբանութեան, բարք ու վարքերի, կրօնի և պատմական անցքերի մասին, բայց ոչ լիակատար կերպով, այլ որքան այդ ներել են հեղինակի միջոցները։ Գիրքը ինքն ըստ ինքեան մի լաւ դասաւորած հաւաքածու է այդ երկրի մասին գրականութեան մէջ արդէն յայտնուած տեղեկութիւնների։ Նիւթեր, գիրքը չարադրելու համար, աւել են ամենից առաջ հայ պատմիչները, յետոյ՝ եւրոպացիների ճանապարհորդական հրատարակութիւնները, և յետոյ միայն նորագոյն հայ ճանապարհորդական և տեղագրական գրականութիւնը։

Գրքում ամփոփուած տեղեկութիւնների մէջ հեղինակը ինքը մատնանիշ է լինում երկու գլխաւոր թերութիւնների վերայ. դոցանից մէկն է՝ երկբայութիւնը կամ անստուգութիւնը բնակիչների վիճակագրութեան և երկրորդը, որ մանաւանդ խէթ է եղած հեղինակին՝ մի քանի նկարագրած տեղերի դիրքի անճշտութիւնն է, որ առաջացած է քարտէզների և տեղագրողների անճշտութիւնից։ Վիճակագրութեան վերաբերեալ հայր հեղինակը դանդատում է, որ այն գրեց՝ ինչ գտաւ գրականութեան մէջ, բայց որ թէև շատերը գիտէին հեղինակի փափագը և պէտքերը՝ ոչ ոք նոր տեղեկութիւն այդ մասին չը հաղորդեց։ Իսկ ինչ վերաբերում է ամեն մի տեղի դիրքը որոշելու դժուարութեանը, այդ բացատրւում է նաև նիւթի մեծութիւնով, որովհետև գրքի մէջ վիշատակած բնական կամ շինական տեղերի անունների թիւն է մօտ 2.500։ Նկարագրութիւնների մէջ ի հարկէ, գլխաւոր ուշքը դարձրած է պատմական նշանակութիւն ունեցող տեղերի վերայ. արդ, հին և, որպէս հեղինակն է ասում՝ հայրենասուշ տեղերի անուններից շատերի մասին այժմ իսպառ կորել են վիշատակները. բայց հեղինակը ջանք է գործ դրել յայտնի եղածները զանց չառնել, մանաւանդ որոնց մասին երկարօրէն է խօսւած գրքի մէջ.

Գրքի բնաւորութիւնը հայր Ալիշանը որոշում է այս խօսքերով իր աշխատութեան նպատակի մասին՝ «Նպատակ ինձ եղեալ, որպէս և ալլուր ծանուցի, ոչ այնքան տեղագրա-

նել բնագրութեամբ, որքան պատմաբանել իրագրութեամբ». և յետոյ՝ «առաւել քան ի վայրն՝ ի վայրաբնակն յառեալ, ի մարդն, և յաւէտ ի Հայ մարդ, յայն՝ որ նախ եկաց, գործեաց և էանց, կամ դեռ ևս կայ առ ետեղ ի բնին իւրում երկրի. զորոյ նախընծայ ժառանգական և նուիրական անուն՝ անհնար է ջնջել ի մտաց և ի գրոց՝ երիկածնօք ոմամբք և եկամուտ օտարատեսք»։ Ահա թէ ինչու ուր որ հեղինակը իւր տեղագրութեան առիթով հանդիպել է մի որ և է «վեհակերպ ոմն և մեծագործ անձնաւորութեան» (օրինակ Երիցն Վանանդացի կամ քրիստոսադրօշ խմբի առաջնորդներից անդրանիկը՝ Տրդատ) նա այնտեղ և կանգ է առել։ Նոյնը և ուր նա մեծութիւն է գտել կարևոր պատմական անցքերի կամ կարգերի մէջ, բայց որոնց մասին ցայժմ մթութիւն էր տիրապետում։

Իւր տեղագրական նիւթի դասաւորութեան նկատմամբ հայր Ալիշանը հետևել է հին քաղաքական աշխարհագրութեան, այսինքն նա տեղագրել է Այրարատ աշխարհի հին հայկական գաւառները, հին աշխարհագիրներին հետևելով՝ արևմուտքից սկսելով՝ Երասխ գետի ընթացքով և վերջացնելով երկու եփրատական գաւառներով։ Եւ որովհետև հին գաւառներից ոչ բոլորի սահմանների մասին կան ճիշդ տեղեկութիւններ, ուստի հեղինակը, հիմնուելով հաւանականութեան վերայ, կազմել է հետևեալ քսան գաւառների ցուցակը՝ Բասեն Վերին, Ստորին, Հաւնունիք, Աբեղեանք, Գաբեղեանք, Արշարունիք կամ Երասխաձոր, Վանանդ, Շիրակ, Ձակատք, Արագածոտն, Նիգ, Վարժնունիք, Կոտայք, Մաղազ և Ոստան, Ուրծ և Արածծ, Շարուր, Մասեաց Ոստն, Կոգովիտ, Ծաղկոտն, Բագրևանդ։ Դոցանից Շիրակ գաւառը, որպէս յայտնի է, տեղագրուած է առանձին գրքով հայր Ալիշանից, բայց և այնպէս տեղ է գտել նաև ներկայ գրքի մէջ։

Այրարատի մէջ տեղ գտած տեղերի թիւը հասնում է մօտ 2.500-ի, անձերի կամ տոհմերի անունների թիւը՝ մինչ 1200։ Գիրքը առատ է լուսաբանող պատկերներով, որոնց մէջ և մի մեծ քարտէզ Արարատեան աշխարհի։ Առհասարակ բոլոր մեծ և փոքր պատկերների թիւն է 214, որոնց մէջ մենք գտնում ենք նաև մեր մի քանի նշանաւոր ժամանակակիցների պատկերները՝ իշխան Բեհբութեան, գեներ. Շելկովնիկեան, Մուխտար փաշա, Լոռիս-Մելիքեան, Ներսէս V կաթողիկոս, Աբիխ, Խ. Արովեան, Տէր-Ղուկասեան գեներալ, եւրոպական ճանապարհորդների պատկերները, որպէս Շարդէն, Տուռնեֆոր, Դիւբուա դը Մոնպէրիէ։ Բոլոր պատկերները, որպէս և բնագիրը ինքը տպուած են ամենամեծ մաքրութեամբ, որպիսին մեզանում միայն Մխիթարեան տպարանը արտադրել կարող է։

Այսքանով մենք բաւականաչափ ծանօթացրած ենք համարում ընթերցողներին հայր Ալիշանի նորագոյն գրուածքի հետ։ Աւելին պէտք է թողնել ժամանակին, որը գրուածքի թերութիւնների հետ թերևս գտնի նորանոր առաւելութիւններ այս՝ մեր տեղագրական գրականութեանը պատիւ բերող հոյակապ գրքի մէջ։

Ա. Ա.

ՊԱԼԱՍԱՆԵԱՆ ՍՏԵՓԱՆՆՈՍ.—«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» սկզբից մինչև մեր օրերը։ Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի, 1890 թ., հրատարակութիւն Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերութեան (№ 26), փոքր քառածալ, 9+496+1.Զ երես, № 12. գինն է 1 ր. 50 կոպ։

Հայոց Պատմութիւնը սպասում է իւր երկրորդ Խորենացուն, որպէս հայոց պատմութեան երկրորդ Մեսրոպին։ Այն ժամանակից ի վեր, երբ եւրոպական քննադատական ոգին սկսեց մտնել նաև հայերի մէջ, երբ ամէն բանի վերաբերեալ քննադատական աչքով նայելը պարտականութիւն դառաւ լուսաւորուած դասակարգի համար՝ հայոց հին դարերի պատմութիւնն էլ այնպէս, ինչպէս այն աւանդել է Մովսէս Խորենացին սկզբից մինչ V դարն և ինչպէս նա չարունակեց աւանդել մինչ այժմ՝ Խորենացուն կուրօրէն հետևող պատմագիրների միջոցով՝ այլ ևս սկսեց բաւականութիւն չը տալ քննադատական աչքով զինուած նոր սերունդների հարցասիրութեանը։ Հայոց հին դարերի պատմութիւնը այդ իսկ պատճառով մեծապէս կորցրեց իւր հետաքրքրութիւնը նոր շաւղով ընթացողների, նոր ուղղութեան հետևող ընթերցող հասարակութեան համար։ Ամբողջ սերունդներ կան այսօր, որոնք տեղեակ չեն հայ ազգի չենք անում պատմութեանը, այլ պատմագրութեանը։ Դորա գլխաւոր պատճառը եղած է այն, որ, Խորենացուց դէս՝ ոչ մի հայոց պատմագիր չի եղած պատմաբան, այսինքն պատմութեանը նոր քննադատական մեթոդներով դրող մարդ, հեղինակ, որը պատմելով՝ հետաքրքրէր ընթերցողին իւր դիտողութիւններով, իւր հետազօտութիւններով, նոր լուսաբանութիւնով, մի խօսքով մի հեղինակ, որի գրութեան մէջ երևար հեղինակի ինքնուրոյնութիւն, բայց այնպիսի ինքնուրոյնութիւն, որ կարողանար հաչտուել եւրոպական գիտութիւններից ստացած քննադատական և հարցասիրական ոգու հետ։

Եւ մի հանգամանք, որ վերին աստիճանի կաչկանդում է հայ պատմագիրներին մեր ասած ուղղութեամբ վարուելու,—այդ այն է, որ հայոց պատմութիւնը, որի հետաքրքրութիւնը անխզելի կերպով կապած է հայ ազգի հայրենասիրական զգացումների հետ, քննադատական տեսութեան պակասութիւնից՝ ժամանակի ընթացքում դառել է ժողովրդի մասսայի համար մի տեսակ հայրենասիրական պաշտամունք, նման կրօնական դաւանանքին։ Եւ այն աստիճան ճշմարիտ է այդ, որ անուններ, որպէս Հայկ, Արամ, Տիգրան և այլն նոյնքան սուրբ են դառած, որքան և անժխտելի պատմական անձեր, որպէս Վարդան Մամիկոնեան, Ներսէս Շնորհալի, Ներսէս V կաթողիկոս և այլն։

Մասսայի վերաբերեալ իշխող այդ նիրկանութեան բնաւորութիւնը հաղորդել է նաև մեր պատմագիր հե-

ղինակներին, որոնք երբեք չեն կարողացել դուրս գալ այն լծի տակից, որ ծանրացրել է նոցա վերայ Մովսէս Խորենացու բարձր հանճարը, միակը մեր պատմագիրներից, որը կարողացել է մեր հին պատմութեան համար ճիշդ թէ անճիշդ, բայց մի որ և իցէ միութիւն ստեղծել և մի այնպիսի միութիւն, որը կարողանար ժամանակակիցների երևակայութեանը և հայրենասիրական պահանջներին բաւականութիւն տալ։ Եւ ահա մասամբ ինչով պէտք է մեկնել, որ հայոց՝ պատմութեան աղբիւրները թերահաւատ քննութեան տակ գցելու փորձերը բղխած են ոչ թէ հայերից, այլ օտարներից. հայ առանդապահական պատմաբաններին դերը այս գործում եղած է և դեռ ևս շարունակում է մնալ այս՝ պաշտպանել մեր նախնական պատմագրութիւնը նորա ճշդութեան վերայ կասկածներ գցողներից։

Մենք չենք գնում այնքան հեռու, որ պնդենք թէ հայ ոգին չի թոյլ տալիս որ և է քննադատութիւն մեր առանդական պատմութեան և Մովսէս Խորենացուն. բայց մենք պնդում ենք, որ քննադատութեան գործը հայերից չէ բղխում և որ հայ պատմագիրները այս գործում գլխաւորապէս պաշտպանողական դիրք են բռնած, մանաւանդ Մխիթարեանները։

Բայց որպէս զի հայկական պատմութիւնը նորից կարողանայ գրաւել և թողնել Խորենացու ցոյց տուած ճանապարհը, հարկաւոր է, որ նորա պատմագրութեան ճշդութիւնը և նոյն իսկ Մար-Աբաս Կատինայի գոյութիւնը հերքողները այնքան նոր գիւտեր արած լինեն, որ կարելի լինէր մի ամփոփ պատմութիւն գրել, որը իւր միութիւնով կարողանար Խորենացու պատմութեան ամփոփութեան տեղը տալ։ Արդ, ոչ Ֆրիդրիխ Դուդչմիդի քննադատութիւնները և ոչ իսկ բնեռագիր գրութիւնների գիւտը և ընթերցումը այնքան նիւթ են տալիս, որ նոցանից կարելի լինի մի նոր տեսութիւն ստեղծել հայոց հին դարերի պատմութեան համար, թող թէ Ասորեստանի թագաւորների սխրագործութիւնները պատմող բեւեռագրութիւնները դեռ ևս լիապէս հաւաստի աղբիւրների տեղ ընդունելու համար՝ պէտք էր գոնէ չը գիտենալ, թէ որքան պարծենկոտ ոճ գիտէին բանացնել Ասորեստանի գոռոզ թագաւորները։

Այս բոլոր հանգամանքների հետևանքը այն է, որ հայոց հին դարերի պատմագրութիւնը մնում է այն շրջանակների մէջ, որ նախագծել է Խորենացին. և այն բոլորը, ինչ մեր դարը կարողացել է հին արձանագրութիւններից քաղել հայոց պատմութեան համար, առ այժմ մնում են իբր նոր տեղեկութիւններ, առանց որ մի որ և է պատմաբան կարողացած լինի նոցա վերայ մի նոր պատմագրութեան չէնք կառուցանել։

Նոյն այդ բնաւորութիւնը կրում է նաև հանգուցեալ Ստեփաննոս Պալասանեանի նոր հրատարակած Հայոց Պատմութիւնը։ Հին դարերի վերաբերեալ այդ գործը նորութիւն չի պարունակում ոչ նիւթի և ոչ հայեացքների կողմից։ Ճիշդ է, հեղինակը ջանացել է հաշուի առնել նո-

բագիւտ անձանագրութիւնները, բայց դոքա օրդանապէս չեն կապուում պատմութեան հետ, այլ միայն առանձին դրած են, իբր մի պատմութիւն ըստ բեեռագիր անձանագրութիւնների։

Բայց մի բան, որ չը պիտի սպասէր հեղինակից, այդ այն միամիտն է, որով նա պատմում է հին դարերի պատմութիւնը, կարծես սրբապղծութիւն համարելով մի որ և իցէ քար վերցնել այն շինութիւնից, որ կառուցել է Խորենացին և որին հետևել են մեր բոլոր quasi—պատմաբանները։ Մի ճեմարանի ուսուցչի բոլորովին անվայել վարմունքով նա հաստատում է, հալն չողոքորթող զանազան անվաւերական վկայութիւնների համաձայն թէ «Հայաստանը մարդկային ազգի որորոցն է»։ Ջըրհեղեղը, Նոյը իւր տապանով և այլն՝ բոլորը իւր կարգով։ Ինչ խօսք, որ Հայկ, Արամ և այլն—բոլորն էլ ներկայացուած են նաև այս գրքում բոլորովին այն ձևով, ինչ ասել և կըրկնել են մեր բոլոր պատմագիրները սկսած 5-րդ դարից։

Այս կերպ պատմութիւնը սկսելով, հեղինակը նախապաշարում է քննադատին իւր դէմ, որը այլ ևս չի սպասում գտնել պատմական նիւթի որքան և իցէ ինքնուրոյն մշակութիւն գրքի բազմաթիւ գլուխների մէջ։

Լինելով միևնոյն ժամանակ և գլխաւորապէս մի դասագիրք, հեղինակը իւր այս պատմութեան մէջ աւելի ջանք է դրել նիւթի դասաւորութեան և լեզուի վերայ, առանց մի քայլ առաջ տանելու հայոց պատմագրութիւնը։ Ինչ խօսք, որ այն, ինչ սովորապէս հայոց պատմութեան մէջ մինչ այժմ չէր աւանդուում, ուշադրութիւն չի դոնում և այս գրքում։ Օրինակ, նորագոյն պատմութեան մէջ (աւելի հեռուն չենք գնում) ոչ մի խօսք չը կայ հողային և դասակարգային օրէնքների, բեֆորմների և հանդամանքների մասին ոչ Ռուսսա, ոչ Ցաճկա և ոչ Պարսկա-Հայաստանում, մինչդեռ մի ազգի թէ գոյութեան և թէ կացութեան գլխաւոր պայմաններից են նոքա։ Առհասարակ նորագոյն, այն է՝ 19-երորդ դարու պատմութեանը նուիրած են ընդամենը մօտ 60 երես։

Բայց և այնպէս հեղինակը աշխատել է իւր այս գրքի մէջ ամփոփել բոլոր մնացած պատմական դէպքերը, որոնց հետ զուգընթացաբար նա տալիս է տեսութիւն գրական երևոյթների թէ հին և թէ նոր ու նորագոյն ժամանակների համար. այնպէս որ գիրքը իսկապէս մի անհրաժեշտութիւն պէտք է համարուի ամեն մի ընթերցող հայի գրադարանի համար, նամանաւանդ որ նոյն իսկ իւր բոլոր այն մասերում, որոնց վերաբերում են մեր վերև արած քննադատական նկատողութիւնները՝ ներկայ գիրքը դերազանց է մեր ցայժմ ունեցած Հայոց Պատմութիւններից, թէև, կրկնում ենք, աւելի բարձր պահանջներին նա բաւարարութիւն չի տալիս։

Ա. Ա.

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

ԱՂԱՆԵԱՆՑ, ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՑ.—«Ցօմար և Ցենացոյց Հայաստանեայց սուրբ, եկեղեցւոյ, Հայոց թեմական դպրոցների և հայ եկեղեցւոյ պաշտօնեաների համար։ Վաղարշապատ, ի տպ. Ս. Կաթուղիկէ Էջմիածնի, ՌՉԼԹ—1890. գինն է 50 կոպ.։

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ, ԿՈՆՍՏԱՆՏԻՆ.—«Ուղեցոյց գործնական չերամապահութեան»։ Հրատարակութիւն «Թիֆլ. Ընկ. հալերէն գրք. հրատարակութեան»։ Թիֆլիս, տպ. Ց. Մարտիրոսեանցի, գինն է 40 կոպ.։

BARCHUDARIAN, Johannes, D-r phil. Ein Ausflug von Jena nach Armenien, Vorgetragen in Akademisch-Internationalen Verein zu Iena. (Separatabdruck aus der Zeitung „Deutschland") Weimar, Vansesche Verlagshandeung, 1890.

(ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ, ՅՈՎՀԱՆՆԷՍ, ԴՐ.—«Մի կրօսանք Ենալից դէպ Հայաստան. կարդացած միջազգային-ակադէմիական ընկերութեան մէջ Ենալում». Արտատպած Դէյտշլանդ («Գերմանիա») լրագրից։

Effertz, Otto.—Arbeit und Boden. Grundlinien einer ponophysiokratie, Band I. allgemeiner theil. Zweite vermehrte Auflage. Berlin. 1890.

Туманяцъ, Г.—Начальная книга русскаго языка для армянскихъ школъ. Тифл. Тип. М. Вартанянца, հրատարակութիւն Ն. Տէր-Ղևոնդեանցի. 1890, գինն է 25 կոպ.։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անցեալ անգամ մենք մեր ընթերցողներին զբաղեցրինք անգլո-գերմանական դաշնադրութիւնով վերաբերեալ Աֆրիկայի։ Մենք տեսանք, որ, ապագայում սպասելիք տարաձայնութիւնների և զուցէ պատերազմների դէմն առնելու համար, Գերմանիան և Անգլիան իրար հետ համաձայնութիւն կայացրին, որով Աֆրիկայի արևելեան մասում մինչ այժմ ունեցած անգլիական և գերմանական երկիրները, իրար զիջումներ անելով, նոր սահմաններ ստացան և իրար այդպիսով սահմանուած երկիրները երկու կողմից ընդունուեցին, իբր ապագայում անվիճելի երկիրներ՝ քաղաքական տիրապետութեան տեսակէտից։

Մեր անցեալ անգամուայ յօդուածում յիշատակեցինք և այն, որ Անգլիան, Գերմանիայի հետ համաձայնութիւն կայացնելուց յետոյ, բանակցութիւններ էր սկսել նաև Ֆրանսիայի հետ, որպէս զի Անգլիայի և Ֆրանսիայի տիրապետութեան սահմանները Աֆրիկայում փոխադարձ համաձայնութեամբ որոշուեն, որպէս զի Անգլիան Ֆրանսիայի հետ և Ֆրանսիան՝ Անգլիայի հետ վէճ չը ծագեցնեն իրանց ներկայ և ապագայ տիրապետութեան և իրաւունքների մասին Աֆրիկայում։

Խնդիրը ահա ինչումն է։ Անգլո-գերմանական դաշնադրութեան համաձայն՝ Գերմանիան ընդունում է Անգլիայի հովանաւորութիւնը (ասել է թէ նաև ապագայ գրաւումը) Զանզիբար կղզու վերայ։ Բայց Զանզիբարի մասին 1862 թուականին Անգլիայի և Ֆրանսիայի մէջ համաձայնութիւն էր կայացել, որ դոցանից ոչ ոք իրաւունք չ՝ունենայ այդ կղզին տիրապետելու առանց փոխադարձ համաձայնութեան։ Այդ պատճառով Անգլիան իրաւունք չ՝ունէր Գերմանիայի համաձայնութեան հիման վերայ՝ իւր հովանաւորութիւնը հաս-

տաուած համարել Զանզիբար կղզու վերայ, որը նկատենք մի անգամ ևս, Արևելեան Աֆրիկայի առևտրի գլխաւոր պահեստը և շուկան է։

Միւս կողմից, Ֆրանսիան այս վերջին տասնեակ տարիներում, ի միջի այլոց, ձեռք է բերել զէնքի ոյժով, հովանաւորութիւն ոչ միայն Տունիսիայի, այլ և Մադագասկար մեծ կղզու վերայ։ Այժմ Ֆրանսիան ընդունեց Անգլիայի հովանաւորութիւնը Զանզիբարի վերայ, իսկ Անգլիան, իւր կողմից, ընդունեց Ֆրանսիայի հովանաւորութիւնը Մադագասկար կղզու վերայ, խոստանալով այդ կղզում ընդունել Ֆրանսիայի իրաւասութիւնը, մինչդեռ մինչ այժմ նա այդ չէր անում և ամեն կերպ խրախուսում էր տեղացի հովանաներին և նոցա թագուհուն՝ ընդդէմ Ֆրանսիայի։

Բացի դորանից, Ֆրանսիայի իրաւունքին է թողած Ալժիրիայի և Տունիսիայի յետևի երկիրը. այսինքն Սահարայի անապատը մինչ Նիգեր մեծ գետը, որտեղից (Սահի աւանից) մինչ Զադ լճի Բարուա աւանը մի գիծ պէտք է քաշուի, որպէս հարաւային սահմանը Ֆրանսիայի տիրապետութեան Աֆրիկայի Հիւսիս-Արևմտեան մասում, ուր, բաց առած Մարոկկոն, այժմ կազմել է մի ընդարձակ ֆրանսիական տիրապետութիւն՝ Միջերկրական ծովի, Ատլանտեան Ովկիանոսի և Նիգեր գետի ու Զադ լճի միջև տարածութիւն, որի մէջ գտանում է Սահարայի ընդարձակ անապատը և որի ափերը կազմում են Ալժիրիան, Տունիսեան և Սենեգամբիան, որոնք բոլորն էլ այժմ ֆրանսիական են։

Այդ իւր աֆրիկական տիրապետութեանը համապատասխան կենդանութիւն տալու համար, Ֆրանսիան այժմ արծարծել է Սահարայի միջով երկաթուղի շինելու գաղափարը, որի գլուխ բերելը կարելի են համարում մինչ 200 միլլիոն ֆրանկով։ Երբ այդ գլուխ կը գայ, Սահարայի գիծը կը դառնայ համաշխարհային առևտրական երակներից մէկը։

Անգլիան, իւր հաշիւները Գերմանիայի և Ֆրանսիայի հետ վերջացնելուց յետոյ, վերջացրեց իւր հաշիւները Աֆրիկայի նկատմամբ նաև Պորտուգալիայի հետ։ Այդ համաձայնութեան մանրամասնութիւնների մէջ սակայն մենք չենք մտնում, որովհետև նոքա մեր ընթերցողների համար առաջինների կարևորութիւնը չունին։

Այսպիսով մենք ականատես ենք լինում՝ ներկայ ժամանակում Աֆրիկայի մեծ ցամաքի բաժանմանը Եւրոպական տերութիւնների մէջ։

Ունի՞ արդեօք այդ գործողութիւնը որ և է քաղաքական մեծ նշանակութիւն թէ ոչ։

Այդ գործողութիւնը՝ Աֆրիկայի բաժանումը, կը պատասխանենք մենք, ոչ միայն ահագին քաղաքական նշանակութիւն ունի, այլ և, մենք համարձակւում ենք այդ ասել, մեծ պատմական-քաղաքական էվոլիւցիայի, որ պատրաստւում է և որը զարգանալու է մօտ ապագայում։

Ահա ինչումն է բանը։ Ամերիկան, որպէս արդէն քանիցս «Մուրճ»-ը դորա վերայ իւր ընթերցողների ուշքն է դարձրել, Ամերիկան, ասում ենք, ձգտումն ունի՝ տնտեսապէս և մասամբ նաև քաղաքականապէս միանալու։ Համա-ամերիկական կոնգրեսը ցոյց տւեց, որ այդ ցնորք չէ, այլ իրականութիւն։ Արդ՝ անցեալ յունիս ամսին Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում ընդունեց Մակ-Կինլէյի հռչակաւոր օրինագիծը, որով այդ մեծ պետութիւնը այնքան դժւարացնում է Եւրոպայից իրանց մօտ ապրանք ներմուծելը, որ Եւրոպան իրան տեսնում է գրեթէ վռնտուած ամերիկական շուկայից։ Եթէ դա լինէր Ամերիկայի կողմից միմիայն մի ժամանակաւոր օրէնք, դորա վերայ այն ուշքը չէր դարձնիլ վտանգւած Եւրոպան։ Բայց ոչ. հարիւր տարի է արդէն, որ Ամերիկան գնում է այդ շաւղով և այժմ նա չի վախենում իւր տենդենցիաները համարձակօրէն յայտնել ամբողջ աշխարհին։ Եւրոպան ոչ մի միջոց չունի Ամերիկային ստիպելու, որ նա այդպէս չը վարւի, որովհետև Ամերիկայից Եւրոպան ստանում է միայն այնպիսի իրեղէններ (հում նիւթեր), որ ինքը Եւրոպան արտադրել անկարող է իւր պահանջներին բաւականութիւն տալու համար.— մինչդեռ Եւրոպան ուղարկում է Ամերիկա այնպիսի իրեղէններ (ֆաբրիկատ), որ Ամերիկան ինքը կամ արդէն պատրաստում է, կամ կարող է իւր մէջ զարգացնել դոցա համար հարկաւոր բոլոր արհեստները։ Եւրոպան չի կարող պատասխանել Ամերիկային նոյնով, ինչպէս սա է վերաբերւում դէպի Եւրոպան. մի խօսքով Եւրոպան անզէն է Ամերիկայի դիմաց։

Ամերիկան ուրեմն ձգտում է կազմել իւր համար մի առանձին աշխարհ, շատ թէ քիչ Եւրոպայից ջոկնւած։ Այդ դրութիւնը,

աւելի ու աւելի սաստկանալով, կը տևի շատ երկար, այնքան երկար, որ Եւրոպան չի կարող «սպասել» որ նա փոխուի, այլ ստիպուած է իւր գլխի ցաւի համար այժմից իսկ դարման գտնել։

Ամերիկան, բացի դորանից, ունի այլ քաղաքական կազմակերպութիւն և այլ քաղաքական ոգի, քան Եւրոպա. այնպէս որ Եւրոպայի ազդեցութիւնից դուրս գալը և նորանից ջոկուելը ոչ թէ յեսադիմութեան պէտք է վերագրել, այլ երկու ցամաքների տարբեր քաղաքական ուղղութիւններին, որոնց իւրաքանչիւրի իւր ձևով զարգանալը երկու տեսակ զարգացած կուլտուրաներ է պատրաստում ապագայ մարդկութեան համար։

Ամերիկայի և Եւրոպայի մէջ տեղի ունեցած այդ յարաբերութիւնները ներկայումս զբաղեցնում են եւրոպական մամուլին որպէս երբէք սորանից առաջ։ Մակ-Կինլէյի մաքսային օրէնքը ահագին աղմուկ է գցել Եւրոպայում այս վերջին երկու ամիսները, բայց, ինչպէս ասացինք, Մակ-Կինլէյի օրէնքը մի հետևանք է համաամերիկական կոնգրեսի վճիռների, և այս վերջինս էլ հետևանք է այն տրամադրութեան, որի արտայայտիչն է դեռ ևս քսանական թուականներին արտայայտուած Մոնրոէ'ի դոքտրինի։ Եւ այս բոլորի համար մենք կը խնդրէինք մեր ընթերցողներին վերայիշել «Մուրճ»ի մէջ այդ մասին լոյս տեսած քաղաքական յօդուածները։

Գանք այժմ այս միւս հանգամանքին, որ Եւրոպայից բաժանում է ոչ միայն Ամերիկան, այլ և Ռուսիան և սորա հետ նաև Ասիայի մի ահագին մասը։ Ռուսիայի յարաբերութիւնները Արևմտեան Եւրոպայի հետ յայտնի են։ Բոլորովին հասկանալի և արդէն քանիցս անգամ բացատրուած պատճառներով այս րոպէին Ռուսիայի դէմ եւրոպական տէրութիւններից գործում են՝ Գերմանիան, Աւստրո-Ունգարիան, Իտալիան, և որպէս հասկանալի է նաև Անգլիան։ Հեռու պահել Ռուսիան Եւրոպայի գործերի վերայ վճռող ազդեցութիւն ձեռք բերելուց, չը թոյլ տալով նրան դերիշխանութիւն ձեռք բերել Բալկանիան թերակղզում և ապա Աւստրո-Ունգարիայի սլաւոնական երկիրներում—դա է նպատակը։ Միւս կողմից Ռուսիան այնքան ընդարձակուել է Ասիայում և այնքան հաւանական է որ Ասիայում քանի գնայ պիտի հզորանայ և աւելի ևս ընդարձակի Ռուսիան, որ կարելի է համարձակ ասել, Ասիան, որ այժմ արդէն մի մեծ մասով ռուսական է, ապագայում

և ս առաւել պէտք է կրէ ռուսական կամ հպատակութիւնը կամ գերիշխանութիւնը կամ առհասարակ նորա ազդեցութիւնը։

Ինչ է դուրս գալիս դորանից։ Այն, որ Արևմտեան Եւրոպային հակակիր Ռուսիան իւր ասիական ներկայ և ապագայ երկիրներով պէտք է փակուած մնայ Արևմտեան Եւրոպայի առևտրի և գաղթականութեան համար, որպէս այժմ էլ այդ արդէն մասամբ կայ։ Ասիայի նկատմամբ այս տեսութիւնից դուրս ենք համարում Չինաստանը, որի ունենալիք յարաբերութիւնները, Արևմտեան Եւրոպայի հետ ոչ մի կերպ չեն խախտում քաղաքականութեան այն հիմունքները, որ մենք գծագրում ենք ներկայ յօդուածում։

Այսպիսով մենք ինչ ենք տեսնում։ Մենք տեսնում ենք, որ Արևմտեան Եւրոպան, իբր մի ամբողջութիւն, և որպէս միատեսակ կուլտուրայի ծնունդ, հաւասար շահեր ունի պաշտպանելու համար՝ մի կողմից Ամերիկայից, միւս կողմից՝ Ռուսիայից.

Եւ ահա նոյն այդ Արևմտեան Եւրոպայի տէրութիւնները այսօր իրար հետ խաղաղական միջոցներով, այն է փոխադարձ համաձայնութիւններով վերցնում և բաժանում են իրար մէջ Աֆրիկայի մեծ ցամաքը, որը այժմ ներկայանում է որպէս մի մեծ ժառանգութիւն հին Եւրոպայի։ Եւ այսուհետ Աֆրիկան դառնալու է այն մեծ դաշտը, ուր պէտք է գործադրուեն եւրոպացու ֆիզիքական և մտաւոր ու բարոյական ոյժերը, որպէս մի ժամանակ Ամերիկան, որ այժմ հասունացել և անջատուում է իւր մայր հայրենիքից— Եւրոպայից։

Նկատեցէք, որ Աֆրիկայում ոչինչ գործ չունի այժմ ոչ Ամերիկան և ոչ Ռուսիան և որ այժմ, այս վերջին ամիսներում կատարած համաձայնութիւնների հիման վերայ՝ գրեթէ ամբողջ Աֆրիկան արդէն բաժանուած է եւրոպական տէրութիւնների մէջ և այն էլ յայտնի է, թէ չը բաժանուածներից որ երկիրը որ եւրոպական տէրութեան բաժին պէտք է ընկնի։ Մարոկկոն վերապահուում է Իսպանեային, Տրիպոլիսը՝ Իտալիային, Եգիպտոսը, երևի, Անգլիային։ Իսկ այդ երկիրներից դուրս՝ մնացած Աֆրիկան գրեթէ ամբողջապէս արդէն այժմ բաժանուած վերջացած է։

Երբ մենք մեր դրած հարցին պատասխանեցինք, թէ Աֆրիկայի բաժանումը պատմական-քաղաքական, աւելցնենք այժմ, նաև, կուլտուրական մեծ էւոլիւցիայի պրոցէսներից մէկն է կազմում, ահա՛ թէ ինչ էինք հասկանում դորանով։ Եւ մենք ի հարկէ, այս մի յօդուածում կարող էինք և կամեցանք միայն այդ էւոլիւցիան իւր ընդհանուր գծերով միայն գծագրել և ընդհանուր հոսանքները միայն նշանակել։

Շ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ, որ մինչ այսօր գտանուում էր Գանձասարեան փողոց, նախկին տուն Յովհաննիսեանի, այժմ ներկայ սեպտեմբեր ամսից տեղափոխուեց Վելեամինեան փողոց, տուն № 8 Կատար. Թանդոյեանի, Պրոգիմնազի դիմաց։

ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ։ Որպէս յայտարարած էինք «Մուրճ»-ի № 6 ում, այսուհետև, ներկայ սեպտեմբերից սկսած, «Մուրճ» ը լոյս է տեսնելու ոչ թէ ամեն ամսի վերջում, այլ ամեն ամսի սկզբում, համեմատ մեր բաժանորդներից շատերից յայտնած ցանկութեան։

ՎՐԻՊԱԿՆԵՐ։ «Մուրճ»-ի անցեալ № 7-ում, «Հողային խնդիրը Անդրկովկասում» յօդուածի մէջ երես 937, տող 12-երորդ տպուած է՝ «Պետական ընդունուած է անուանել միմիայն այն գիւղացիներին, որոնք կենում են սեպհականութիւն համարուող հողերի վերայ։ սովորական լեզուում կոչւում են կալուածատիրական գիւղացիներ»։ Այդ նախադասութեան մէջ «սովորական» խօսքից առաջ բաց են թողած մի քանի խօսքեր, այնպէս որ պէտք է կարդալ՝ իսկ այն գիւղացիները, որոնք բնակւում են աղնուական կալուածատէրերի հողերի վերայ, սովորական լեզուով կոչւում են կալուածատիրական գիւղացիներ, Վլադէլչեսկիէ կրեստեանէ (Владѣльческіе крестьяне)։

ԲՂԴԷ։ Վէպ Պերճ Պռոշեանցի, որ մաս-մաս տպագրուում էր «Մուրճ» ամսագրում և որի վերջին կտորը զետեղուեց անցեալ № 8-ում, այժմ լոյս է տեսել առանձին գրքով։ Այդ վէպի մէջ հեղինակին յատուկ գիտութեան դուրս է բերուած մեր գիւղացի կապալառուների տիպարը, և որպէս այդպիսին, նա անշուշտ արժանաւոր կերպով կը դասուի նոյն հեղինակի նախկին գործքերի շարքում։ Բղդէն «Մուրճ»-ից արտատպուած եօթներորդ հրատարակութիւնն է։

ՊՐ. Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑԻ «ԽԱԹ-ՍԱԲԱ»-Ն, որ սկսելով այս համարում կը վերջանայ հետևեալ № 10-ում, մի պատկեր է հայ բոշաների, ուրեմն մեր ժողովրդի դեռ ևս չը չօշափուած

մասի կեանքից։ Այդ առիթով մենք կ'աշխատենք հետեւալ անգամ մի ամփոփ տեղեկութիւն տալ թէ արդեօք դիտութիւնը ինչ է արել մինչ այժմ այդ տարօրինակ ցեղի ծագումը և ինչ լինելը ուսումնասիրելու համար։

ՊԱՐՈՆ ՍՈՂՈՄՈՆ ԵՂԵԱԶԱՐԵԱՆՑ, որ պրոֆեսոր է Կազան քաղաքում, լայտարարում է «Մշակ» լրագրում (№ 95), որ նա նիւթեր է ժողովում մեր համքարական միութիւնների ներքին կազմակերպութեան մասին։ Իւր ձեռնարկած աշխատանքի նպատակի վերաբերեալ մենք, սակայն զարմացմամբ կարդում ենք հետեւեալը՝

«Ինչ է մեր գլխաւոր նպատակը։ Եւրոպական դիտնականները մինչև վերջին ժամանակներս էլ լայտնում են այն միտքը, թէ ցեխական հաստատութիւնները միայն եւրոպացիների քաղաքակրթութեան արդիւնք են. իսկ մենք կամենում ենք հերքել այս տեսութիւնը, ապացուցանելով, թէ համքարական միութիւնները լսականիչ էին և են նաև մեր տնտեսական, իրաւաբանական և բարոյական կեանքին»։

Մենք վստահանում ենք կարծել, սակայն, թէ եւրոպական դիտնականները ամենեին չեն պնդել, թէ Ասիայում չը կան կամ չեն եղած համքարութիւններ։ Դիտութեան մէջ մեզ լայտնի չէ ոչ մի տեսութիւն, որով բացասէր համքարական հաստատութիւնների գոյութիւնը Եւրոպայից դուրս։ Այնպէս որ պարոն Եղիազարեանցի աշխատասիրութիւնով մեր համքարութիւնների մասին չի հերքվել գիտութեան մէջ հաստատած և ընդհանուր կերպով ընդունած ոչ մի թէորիա, ոչ մի տեսութիւն այլ միայն եղած և միշտ էլ աճող գրականութիւնը համքարութիւնների մասին կը հարստանայ մի նոր աշխատասիրութիւնով։ Այդ էլ գնահատելի գործ կը լինի, անշուշտ, բայց այդ գործին տալ այն դիտական նշանակութիւնը, ինչպիսին լայտարարում է պ. Եղիազարեանցը — այդ չի կարելի։ Այդպիսի չափազանցումը պ. Եղիազարեանցի կողմից մենք դանում ենք նայն իսկ պախարակելի, քանի որ նորա բերանցի հարցմունքին՝ կայ արդեօք հնդկական ուրեմն ասիական համքարութիւնների մասին մի աշխատութիւն, մենք նրան պատասխանելենք, թէ մեր նախկին ակադեմիական դերմանացի ընկերը գր. Մայերը (հանրածանօթ էնցիկլոպեդիական բառարանի հրատարակողի որդին) պատրաստում էր Հնդկաստան գնալու լատկապես հնդկական սոկերիչների համքարութիւնը ուսումնասիրելու համար։ Ուրեմն հենց այդ իրողութիւնից պէտք է լայտնէր, որ եւրոպացիներին անլայտ չէ, թէ Ասիայում կան համ-

քարութիւններ, էլ չը խօսած հանդուցեալ Իւրի Հախուերդեանի ուսերէն գրած բրոշիւրի մասին՝ Թիֆլիսի համբարութիւնների վերաբերեալ!

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՄԱՆԳԼԻՍՈՒՄ։ *Հարկ ենք համարում ծանուցանել հայ հասարակութեանը, որ այս ամառ, ձեռնտուութեամբ տեղական հայ հասարակութեան և ամառանոցաւորների, Մանգլիս կոչուած աւանում հանդանակուեց մի գումար՝ այնտեղ հիմնելիք մի հայոց միաբանական եկեղեցական ծխական ուսումնարանի համար։ Այդ ուսումնարանը պէտք է ծառայէ թէ Մանգլիսում բնակւող հայ հասարակութեան զաւակներին և թէոչ-հեռու գտնւող Մեծ Թանէթ և Փոքր Թանէթ վիրախօս հայ ազգաբնակութեան համար։ Յիշեալ ուսումնարանը պահպանելու համար պարտաւորուեցին ամսական օժանդակութիւններ տալ երկու դրամատէրեր՝ պպ. Աւետիք Զեթոզեանց և Արտեմ Թէմուրազեանց, առաջինը 25-ական, երկրորդը՝ 15-ական ռուբլի ամիսը։ Տեղական հասարակութիւնը, սակայն, համախօսական վճռով յանձն առաւ պահպանել ուսումնարանը նաև այն ժամանակ, երբ այդ խոստացուած օժանդակութիւնը երբ և իցէ պակասելու լինի։ Ուսումնարանը բացելու հարկաւոր թոյլտուութիւնը ստանալու հոգսը, համախօսական վճռով, յանձնուեց «Մուրճ»-ի խմբագիր պ. Ա. Արասխանեանցին, որը օգոստոսի 22-ին այդ համախօսական վճիռը ներկայացրեց թեմիս առաջնորդ սրբազան Մամբրէ եպիսկոպոսին, որը խոստացաւ անյապաղ ներկայացնել խնդիրքը բարձրագոյն հայ հոգևոր իշխանութեան։ Թոյլտուութիւնը ստացուեց սեպտեմբերի 4-ին։ Նոյն համախօսական վճռով յանձնուեց «Մուրճ»-ի խմբագրին հանդանակութեան ժապաւինուած և կնիքով դրոշմուած տետրը, իսկ դանձապահ ընտրուեց վերոյիշեալ պ. Արտեմ Թէմուրազեանցը մինչև հոգաբարձական ընտրութիւնները։ Ցանկացողները, ուրեմն, օժանդակել Մանգլիսի ուսումնարանին, թող բարեհաճեն դիմել պ. Աւետիք Արասխանեանցին, «Մուրճ»-ի խմբագրատանը։ Մինչ այժմ հանդանակուած և կանխիկ ստացուած գումարն է 166 ռուբլի, իսկ դեռ ստանալու դրամների հետ միասին՝ 226 ռ.։ Հանդանակուած գումարի չափով իրաւունք տրուեց տեղաբնակ պ. Մարտիրոս Լազարեանցին լրացնել այն կիսաւարտ շինութեան պակասները, որ նա կառուցել էր տարիներ առաջ տեղի Ս. Գէորգ եկեղեցու դաւթում՝ ապագայ ուսումնարանի համար։ Սորանով յայտարարւում է նաև, որ ցանկացողները Մանգլիսի ուսումնարանում ուսուցչութեան պաշտօն վարելու, թող վաղօրօք յայտնեն իրանց ցանկութիւնը։*

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

ՄՈՒՐՃ»-Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ.

	Ր.	Կ.
«ՄՈՒՐՃ» *ամսագիր*, 1889 *թ.*, *երկու հատորով*. . .	12	—
ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ ԱՒ. — «*Ազգաբնակութիւնը և ազգաբնակչական շարժումները*»	—	40
ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿ. — «*Հոգատիրութիւնը և հասարակութիւնը*»	—	40
ԲՕԿ *բժիշկ*. — «*Ֆիզիքական և մտաւոր զարգացման մասին*»	—	30
АРАСХАНІАНЦЪ А. — „Закавказская хлѣбная торговля“.	—	75
„ „ — „Закавказскіе шелкометальные заводы“	—	80
ՊՈՕՇԵԱՆՑ ՊԵՐՃ. — «ՅԵՅԵՐ» — (*վէպ*)	1	—
ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ ԴԱՍՊԱՐԻ (*Ղզլարցի*)՝ *Մանկատածութիւն*.	—	50
ԱՏՐՊԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ. — «ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ» — *վէպ հայ-կաթոլիկների կեանքից*	1	—
ԼԷՕ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» — (*վէպ*)	—	50
ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ, *բժշկ*. (*Ղզլարցի*)՝ «ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ. ՄԻ ՔԱՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ»	—	5
ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ ՍՈՂՈՄՈՆ. — «ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ՍԵՒ ՕՐԸ» (*կեանքից պատկեր*)	—	40

Ճանապարհածախսը խմբագրութեան վերայ է։ Դրամի տեղ կարելի է ուղարկել պօստի մարկաներ։

TECHNIKUM MITTWEIDE

ՏԵԽՆԻԿՈՒՄ ՄԻՏՎԱՅԴԷ

Սաքսոնիայում

ԴԻՐԵԿՏՈՐ՝ **ԻՆԺԵՆԵՐ Կ. ՎԷՅՅԵԼ**

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ-ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ-ԴՊՐՈՑ.-ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ
ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑ

23-ԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Այս դպրոցը, որը գտնվում է Միտվայդէ քաղաքում, Գերմանիայում, (Թագաւորութիւն Սաքսոնիա), տալիս է մի ամբողջացրած կրթութիւն ՄԵՔԵՆԱՆԵՐ շինելու և դորա ամենամօտ առարկաների հետ ծանօթացնելու համար. որպիսիք են՝ էլեքտրո-տեխնիկ և ջրաղացների շինութիւն։

Սիստեմական ուսումով այդ հիմնարկութիւնը պատրաստում է հետեւեալ մասնագիտութիւնների համար.

1. Ինժեներներ և կոնստրուկտորներ՝ մեքենաներ շինելու, էլեքտրոտեխնիկի և ջրաղացներ շինելու համար։

2. Ապագայ մեքենաների գործարանների տէրերին, որոնք իրանց ստորադրեալների չափ պէտք է հասկացողութիւն ունենան, այդ դպրոցը տալիս է պատշաճաւոր կրթութիւն։

3. Ամեն ուրիշ տեսակ գործարաններ ունենալու համար, ուր հարկաւորւում է մեքենաների սարք ու կարգ, որպէս՝ թղթի, փայտենի թերի գործարաններ, շոգի և ջրի աղացներ, մանելու, գործելու, ապակու, կրախմալի, շաքարի, ասեղների, պողպատէդրիչների, կահ-կարասիների, քիմիական գործարաններ, գազի, լուցկիի գործարաններ և այլն և այլն։

4. Դիրեկտորներ և կառավարիչներ պատրաստելու համար վիշեած գործարանների համար։

Արհեստանոցների վարպետների դպրոցը պատրաստում է վարպետներ՝ այդ բոլոր տեսակ մեքենաները շինելու համար։

Ընդունելութիւնը լինում է ամեն տարուայ ապրիլի և հոկտեմբերի միջին։

ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ *ուսման առաջին դպրոցում, նայած աշակերտի նախապատրաստութիւններին, լինում է* $2^1/_2$ *կամ* 3 *տարի, երկրորդ դպրոցում* $1^1/_2$ *տարի։*

ՏԱՐԻՔԸ *ընդունուելի պէտք է լինի* 16 *տարեկանից ոչ պակաս։*

Սոյն $18^{89}/_{90}$ *թուականին բոլոր աշակերտողների թիւն է* 886, *որոնցից Ռուսաստանից՝* 66 *հոգի։*

Դպրոցի բոլոր միւս մանրամասնութիւնների համար կարելի է դիմել՝ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ ԹՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ, *ուր ի միջի այլոց կարելի է իմանալ ծրագրի, ամեն տեսակ ծախքերի և Միտվայդէի կեանքի, և դպրոցի վարչութեան պահանջմունքների մասին։*

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱՏԻՐ ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ Յ. ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻ

Ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց, Գործատիր Մնայուն Յանձնաժողովս պատիւ ունի հրաւիրել այն հեղինակներն ու բանաստէրներն՝ որք ազգային դպրութեան և Պատմութեան վերաբերեալ ո՛ր և է աշխատութեամբ մը կը փափաքին մասնակցիլ Սահակ-Մեսրոպեան գրական Մրցանակաբաշխութեան, հաճին իրենց աշխատութիւններն յուղարկել մինչև յառաջիկայ 1891 տարուց Յունվարի վերջ առ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրն, Յանձնաժողովոյս Հասցէին։

Տպագրեալ աշխատութիւնք պէտք է երեք օրինակ յուղարկուին. լոկ ձեռագիրք բնաւ յետ չեն դարձուիր։

РЕСТОРАНЪ ПУРЪ-ГВИНО

На Головинскомъ проспектѣ, въ домѣ князя Багратіонъ-Мухранскаго (подъ Тифлисскимъ собраніемъ).

Ежедневно приготовляютъ кушанья Европейской и Азіятской кухни. Спеціальность гурійскихъ блюдъ. Обѣды по-мѣсячно изъ 2-хъ блюдъ отъ 12 руб Отпускаются также и на домъ.

Напитки и вина изъ лучшихъ фирмъ кн. И. К. Багратіонъ-Мухранскаго и другихъ фирмъ отъ 40 коп. бутылка и дороже. Пиво мѣстныхъ заводовъ, а также одесское и жигулевское.

При ресторанѣ отдѣльные семейные кабинеты. Билліарды русскій и французскій, нардъ и шахматъ. Получаются журналы и газеты мѣсячныя и столичныя. Для пріѣзжихъ меблированныя комнаты отъ 50 коп. до 1 р. 50 коп. по-суточно и отъ 12—30 руб. по-мѣсячно. Русскій билліардъ пріобрѣтенъ на кавказской выставтѣ, гдѣ получилъ первую награду.

ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

(ԹԻՖԼԻՍ, ՄԻՔԱՅԵԼԵԱՆ ԿԱՄՈՒՐՋԻ ՎԵՐԱՅ)

Տրուում են հայերէն գրքեր։ Ամսական վճարը 20 կոպէկ է։ Սկզբնական դպրոցների աշակերտները և աշակերտուհիները վճարում են 10 կոպէկ։

Գրադարանը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 2, և երեկոյեան 5 ժամից մինչև 8 ժամը, իսկ կիրակի օրերը առաւօտեան 9—12 ժամը։

ԹՂԹԵՐԻ ՊԱՀԵՍՏ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ

ԴԻՏԵԱԿՈՎՍԿՈՒ ԹՂԹԻԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ։

Ունի մեծ քանակութեամբ պօսմի, գրելու, գրքերի, լրագրական, ծխախոտի, զոյնաւոր, փաթեթների և այլ թղթերի՝ գործարանական ձևերով, որպէս նաև մեծ ասորտիմենտ գրասեղանի իրեղէնների։

Հասցէն նամակների համար՝ Тифлисъ. Дворцовая ул., д. Дворянскаго банка, складъ Дитяковск. фабрикъ.

Հեռագրերի համար՝ Тифлисъ. Дитятковское Общество

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ

„ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՑԱԾ

աշխարհի մէջ կարեմեքենաների բոլոր ցուցահանդէսներում

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

Կարևոր ընկերները տան տիկիններին և աղնիւ օդնականներ բոլոր արհեստաւորների համար։

ԳՏՆՒՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում։ Զինգերի ընկերութեան կենդրոնական պահեստում, Գոլովինսկի պրոսպեկտի վերայ, Մելիքմանովի տան և նրա բաժանմունքների մէջ։

Բագուում։ Մելքայելեան փողոցում, Մերզա Աւագեանի տ.
Քութայիսում։ Բուլվարի դէմ, Զերեկովի տ.

Բաթումում։ Պոլիցիական փողոցում, Թէրզի օղլու տ.
Թէհրանում։ Մարշ-Մէյդանի դէմ, բուլվարի վերայ։

Եւ նրանց ճանապարհորդող գործակալների մօտ

ՄԻԶԻՆ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐ. ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ

Գ. ՆԷՅԳԼԻՆԳԵՐ

արտօնուլիւն ստացած

ասիական մասամբ

ԶԻՆԳԵՐԻՍՅԱՆ

Գնողները կարող են, եթէ կամենում են, դրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, այն է՝ շաբաթով կամ ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ գրաւականով դրամը վճարելու համար։

Ց. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստանոցում գտնւում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են. ասեղները, թել, մետաքս և այլ մեքենային պատկանելի իրեղէններ ամենաշափաւոր գներով։

„ՄՈՒՐՃ“

ԱՄՍԱԳՐԻ

1890 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է։

Տարեկան բաժանորդագրումը	10 ր.	
Կէս տարուանը	6 ր.	
Երեք ամսուանը.	4 ր.	
Մի դրքակը	1 ր.	50 կ.

Ընդունուում է բաժանորդագրութիւն նաև մաս-մաս տասնմի կիսամեակում ամբողջը վճարելու պայմանով։

Ուսուցիչները, վարժուհիները և բարձրագոյն դպրոցների ուսանողները վայելում են զիջումներ, համեմատ տասանձին ստած յայտարարութեան։

«ՄՈՒՐՃ»-ի ծաւալը տարեցտարի մեծացնելը մի անգամայն կախուած է բաժանորդագրութեան յաջողութիւնից։ Ծաւալին և կախուած նիւթերի հարստութիւնը։ Այդ պատճառով մենք յորդորում ենք մեր ներկայ բաժանորդներին՝ իրանց կողմից հարկաւոր ջանքը չը խնայել «Մուրճ»-ը իրանց ծանօթի շրջաններում տարածելու համար։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ

Ամսական մի երեսի համար.	10 ր.	
„ կէս երեսի համար	6 ր.	
„ քառորդ երեսի համար	4 ր.	

Դրքերի յայտարարութիւնների համար կարելի է վճարել նաև յայտարարուած դրքերով՝ ստացա գների համաձայն։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“. Խմբագրատունը գտնուում է փոքր Վելիամինովի տան № 8 Թանդօյեանի (Вельяминовская улица, домъ № 8 Ек. Тандоевой), բոլորովին մօտ Երևանեան հրապարակին, Պրոլիմնազի դիմաց։

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue «MOURTCH»,